

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ԲԱՔՎԻ ՀԱՄԱՐ

(1917 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ - 1918 Թ. ԱՊՐԻԼ)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ԲԱՔՎԻ ՀԱՄԱՐ
(1917 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ – 1918 Թ. ԱՊՐԻԼ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Մ 490

Տպագրության են երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտական խորհուրդները:

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ պ. գ. դ.,
պրոֆեսոր **Ա. Հ. Սիմոնյան**

Գրախոսներ՝ պ. գ. դ., պրոֆեսոր **Գ. Ս. Ստեփանյան**
պ. գ. դ., պրոֆեսոր **Վ. Ռ. Բալայան**

Մելիքյան Վահան
Մ 490 Պայքար Բաքվի համար (1917 թ.- 1918 թ. ապրիլ)- Եր.: ԵՊՀ հրատ., 2018, 224 էջ + 8 էջ ներդիր:

Մենագրության մեջ սկզբնաղբյուրների լայն հենքի վրա և Անդրկովկասի 1917 թ. հետհոկտեմբերյան քաղաքական իրադարձությունների համատեքստում լուսաբանվում է 1918 թ. Բաքվի մարտյան գոյապայքարի և հարակից հիմնահարցերի պատմությունը: Աշխատությունը նախատեսվում է պատմաբանների, քաղաքագետ-միջազգագետների, քաղաքական գործիչների, մանկավարժների, ուսանողների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-2323-7

© ԵՊՀ հրատ., 2018
© Մելիքյան Վ., 2018

Մենագրությունը նվիրված է
1918 թ. Բաքվի մարտյան գոյամարտի
100-ամյակին:

Աշխատանքը նվիրում եմ հայրիկիս՝
անվանի պատմաբան և հասարակական-
քաղաքական գործիչ, պատմագիտության
դոկտոր, պրոֆեսոր ***Հենրիկ Մելիքյանի***
պայծառ հիշատակին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 17
1.1. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՎ ԲԱՔՎՈՒՄ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ 17
1.2. ԲԱՔՎԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՆԱԽԱՔԱՅԼԵՐԸ 26
ա) Կովկասյան ռազմաճակատից նահանջող ռուսական զորամասերի զինաթափումն ու կոտորածները. Ելիզավետպոլի նահանգի իրադարձությունները 26
բ) Սարիղամիշի բոլշևիկյան կենտրոնի և զորամասերի գործունը 52
գ) Անդրկովկասյան կոմիսարիատի արտակարգ միջոցառումները 58
1.3. ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 69

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԲԱՔՎԻ ԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ... 84
2.1. ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ԵՎ ԲԱՔՎԻ՝ ՈՐՊԵՍ ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԻ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1914-1918 ԹԹ. 84
2.2. ԲԱՔՎՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՈՒ ՄՈՒՍԱՎԱԹԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ 102
2.3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ - ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐ - ՄՈՒՍԱՎԱԹ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 118

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԲԱՔՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ 140
3.1. ԲԱՔՎՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 140

3.2. ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ. ՄԱՐՏԵՐ ԲԱՔՎԻ ՀԱՄԱՐ 151
3.3. ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԲԱՔՎՈՒՄ 164
3.4. ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ՆՈՐ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՄԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1918 Թ. ԱՊՐԻԼԻՆ..... 174
3.5. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԲԱՔՎԻ ԴԵՊՔԵՐԻՆ ԵՎ ՀՅԴ-ԲՈԼՇԵՎԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ 193

ՎԵՐՋԱԲԱՆ 211

ՀԱՎԵԼՎԱԾ 216

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 219

ՆԱԽԱԲԱՆ

«Բաքվի իրադարձությունները հայ-թաթարական բախումների բնույթ չեն կրել, կռիվների ամբողջ ընթացքում թուրքերը ձեռք չէին տալիս թրքական թաղամասերում և տներում ապրող հայերին: Իսկ հայկական զորամասերը փրկեցին և ապաստան տվին ավելի քան 14.000 մահմեդականների, որոնց հետ վերադարձրին պարսից հյուպատոսի միջոցով»:

Հաջի Զեյնալ Աբդին Թաղիև

Ժամանակակից ադրբեջանական հանրապետության իշխանությունների կողմից հակահայկական լայնածավալ քարոզչության հանգուցային թիրախներից մեկը Բաքվի 1918 թ. մարտյան իրադարձություններն են:

Որպես հիմնահարցի խորքային քաղաքական պատճառներ՝ մի կողմից հանդես են գալիս 1917 թ. Ռուսաստանյան Փետրվարյան հեղափոխությունն ու բոլշևիկյան հոկտեմբերյան հեղաշրջումը, մյուս կողմից՝ դրանց արդյունքում պանթուրքիզմի աննախադեպ ակտիվացումը Անդրկովկասում:

Ազատվելով ռուսական դարավոր գերիշխանությունից՝ Կովկասի թաթարական ազգայնամոլ, հիմնականում խոշոր կալվածատիրական միջավայրում 1917 թ. գարնանից սկսեց ձևավորվել թյուրքական կամ մահմեդական, ազգային անկախ պետության ստեղծման գաղափարը: Այն ուղղակիորեն սնվում ու աջակցություն էր ստանում Օսմանյան Թուրքիայի կողմից և դիտարկվում էր որպես պանթուրքիզմի իրականացման առաջին ու կարևորագույն հանգրվանը: Քանի որ գաղափարի կրողները՝ Մուսավաթի ղեկավար գործիչները, բոլշևիկյան հեղաշրջումից հետո ակտիվորեն ներգրավված էին խորհրդային իշխանությունը չճանաչող Անդրկովկասյան կոմիսարիատի կազմում, ուստի նաև իշխանական կուսակցության, հետո էլ Սեյմի խմբակցության կարգավիճակով անմիջականորեն նպաստում էին ցեղակից ու կրոնակից Թուրքիայի շուտափույթ ներգրավմանը

Անդրկովկասի ներքին ազգային-քաղաքական հիմնախնդիրների լուծմանը: Այդ քաղաքականությանը մեծապես նպաստում էին նաև վրացական ս.-դ. մենշևիկյան կուսակցության ղեկավար կազմի հետ համագործակցության վճռորոշ գործոնը, որի վերջնական նպատակը Ռուսաստանից անջատումն էր, ինչպես նաև Անդրկովկասում հայկական տարրի թուլացումը, իսկ պանթուրքիզմի համատեքստում՝ օբյեկտիվորեն նաև նրա վերացումը:

Հասկանալի է, որ կովկասյան թաթարները միայնակ, առանց աջակցության ի զորու չէին իրականացնել իրենց «ազգային» նպատակները: Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում, երբ դեպի Անդրկովկաս թուրքական ներխուժման միակ իրական խոչընդոտը, ի դեմս ցարական Ռուսաստանի, այլևս չկար, երբ Կռիլովի հայտնի առակի կրկնությամբ իբր թե երկրամասային միացյալ կառավարություններում բոլշևիզմի դեմ միավորված Անդրկովկասի երեք ազգային կուսակցությունները միանգամայն առանձին, երբեմն իրարամերժ խնդիրներ էին փորձում լուծել, ու հատկապես հայության ու նրա գլխավոր ազգային-դեմոկրատական կուսակցության՝ Դաշնակցության դեմ ձևավորվում ու ամրապնդվում էր դարձյալ թուրքական քաղաքականության կողմից սնուցվող վրաց-թաթարական տանդեմը, բացվում էին բոլոր հնարավորություններն Անդրկովկաս ներխուժելու, Թիֆլիսն ու Բաքուն գրավելու համար:

Պանթուրքիզմի համատեքստում Բաքուն նոր նշանակություն էր ձեռք բերում: Այդ նավթային քաղաքը ոչ միայն Օսմանյան Թուրքիայի ու կովկասյան թաթարների, այլև խորհրդային իշխանության ուշադրության կենտրոնում էր հայտնվել: Բոլշևիկների կողմից այն դիտարկվում էր որպես երկրամասը խորհրդայնացնելու, այլ խոսքով՝ այդ ճանապարհով կայսերական ռուսական տարածքները վերադարձնելու գլխավոր միջոց: Մուսավաթի համար քաղաքը վերածվում էր «ազգային իդեալի» հավաքական կենտրոնի: Այս կիզակետում բախվում էին պանթուրքիզմի ու խորհրդային իշխանության շահերը: Ու քանի որ Բաքվի խորհրդային իշխանությունը, ի դեմս Ստեփան Շահումյանի և մյուսների, ապրիլից էլ Կոմունան թուրք-թաթար-վրացական եռյակի կողմից մեկնաբանվում էին իբրև հայամետ ազգային

գործոն, ուստի և Բաքվի համար պայքարը 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին ստանում էր նաև ազգային, իսկ հայության համար՝ գոյապայքարի նկարագիր:

Խոսելով Բաքվի շուրջ դեպքերի զարգացման աշխարհագրության մասին՝ հարկ է նշել, որ բացի Բաքու քաղաքից՝ այդ գործընթացում ակտիվորեն ներառված էին նաև Բաքվի, Ելիզավետպոլի (Գանձակ) նահանգները, Հյուսիսային Կովկասը, Իրանական Ատրպատականը, Անդրկովկասի գլխավոր հաղորդակցության ուղին՝ Թիֆլիս–Բաքու երկաթուղագիծը, Շամախիի, Նուխիի շրջանները, Ղարաբաղը:

Ինչ վերաբերում է հիմնահարցի ժամանակագրությանը, ապա «1918 թ. մարտյան իրադարձություններ» ասելով՝ անհրաժեշտ է նկատի առնել 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. ապրիլի սկիզբն ընկած ժամանակահատվածը: Բաքվի համար մեծ պայքարի նախերգանք պետք է համարել Անդրկովկասյան երկաթուղու երկայնքով 1917 թ. դեկտեմբեր - 1918 թ. հունվար ամիսներին Կոմիսարիատի կողմից կազմակերպած հակառուսական ու հակահայկական բռնությունները, Շամխորի նախճիրը, Երևանի նահանգի հակահայկական թուրքական ու քրդական խռովությունները, Ատրպատականի հայկական կոտորածները, Արևելյան Անդրկովկասի ռուս, հայ-հրեա ազգաբնակչության էթնիկ զտումները և վերջապես՝ Անդրկովկասում իշխանության համար մղվող բազմաշերտ ու անզիջում պայքարը, Թիֆլիսի գրավման հիմնահարցը:

1918 թ. Բաքվի մարտյան ընդհարումների հիմնահարցը առավել քան երբեք քաղաքականացվել է խորհրդային պատմագրության կողմից: Վերջինիս ներկայացուցիչները, տվյալ դեպքում՝ Ե. Տոկարժևսկին[1], Ա. Սուրգուլաձեն[2] և ուրիշներ, Բաքվի դեպքերի մեկնաբանման ելակետ են ընդունում քաղաքացիական պատերազմի հիմնադրույթը, և այստեղից էլ՝ հակամարտող կողմերի տարանջատման

---

[1] **Токаржевский Е. А.**, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1927.

[2] **Сургуладзе А. Н.**, Закавказье в борьбе за победу социалистической революции, Тбилиси, 1971.

խնդիրը, այն է՝ մի կողմից խորհրդային իշխանություն և մյուս կողմից՝ մուսավաթական ուժեր և «Վայրի դիվիզիա»:

Այն դեպքում, երբ որպես իրադարձությունների լուսաբանման թելադրող մեկնակետ հանդես է գալիս գերմանո-թուրքական իմպերիալիզմի և խորհրդային իշխանության միջև եղած առճակատումը, պարզ է, որ լիովին անտեսվում է Բաքվի և Արևելյան Անդրկովկասի հայկական գործոնի մասնակցությունը, առավել ևս բոլշևիկներ-Դաշնակցություն համագործակցության փաստը: Հեղինակների մոտ ընդգծվում է հենց այս հանգամանքը. խոսք չի գնում հայկական ազգային դեմոկրատական ազդեցիկ կուսակցության մի շարք անվանի գործիչների և Բաքվի խորհրդի ղեկավարության, մասնավորապես Ստ. Շահումյանի հետ կնքած համաձայնության ու համատեղ գործողությունների մասին: Եվ դա հասկանալի է, քանի որ հիմնահատակ փլուզվում է արհեստածին պատմագիտական հայեցակարգը, որտեղ չեն տեղավորվում Դաշնակցություն-բոլշևիկներ համագործակցության երևույթը, Ստ. Շահումյանի՝ տվյալ դեպքում որպես ազգային գործչի կեցվածքը, Բաքվի և շրջակա գավառների հայ ազգաբնակչության ինքնապաշտպանության հիմնահարցը և այլն: Ուստի և Դաշնակցության կողմից իբր հայ-թաթարական ազգամիջյան կոտորածներ սանձազերծելու խնդիրը մղվում էր առաջին պլան:

Բաքվի դեպքերը՝ որպես զուտ ազգամիջյան բախում, փորձել են ավելի ուշ մեկնաբանել օտարազգի՝ անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի և թուրք հեղինակներ, ինչպես՝ Մ. Լարշեն, Ի. Պոմյանկովսկին, Ռյուշտուն, Ու. Ալլենը և ուրիշներ[3]:

1918 թ. մարտյան դեպքերը քաղաքականացվում են նաև մեր օրերում: Ադրբեջանական վեբկայքերում ադրբեջանական, թուրքական և «համախոհ» այլ պատմաբանները՝ Թ. Աթանը, Ա. Էյվազը, Ա. Բալանը, Ա. Իգոլկինը, Է. Իսմայիլովը, Մ. Սմիթը, Զ. Ալիզադեն և ուրիշներ, փորձում են Բաքվի ներքաղաքական զարգացումներին զուգահեռ ներկայացնել «այն բոլոր չարչարանքները, որ բաժին հասան ադրբեջանցի ժողովրդին»[4]:

---

[3] Տե՛ս **Токаржевский Е. А.**, նշվ. աշխ., էջ 51-53:

[4] Տե՛ս **Հովհաննիսյան Մ. Ս.**, ՀՅԴ-բոլշևիկ հարաբերություններն Անդրկովկասում 1917-1918 թ., թեկն. ատենախոսության սեղմագիր, Երևան, 2009, էջ 14-15:

1918 թ. իրադարձությունների տարելիցի կապակցությամբ 2011 թ. մարտին Ադրբեջանի ԶԼՄ-ը, ՌԴ-ում Ադրբեջանի դեսպանությունն ու այլ կազմակերպություններ իրականացրին ևս մի անամոթ ու ստահոդ արշավ: Բաքու հրավիրված Իսրայելի լրագրողներին և քաղաքագետներին հրամցվեց այն իրողությունը, որ 1918 թ. մարտին և մայիսին Դաշնակցությունը բոլշևիկների հետ միասին Բաքվում իրականացրել է ոչ միայն ադրբեջանցիների, այլև հրեաների կոտորածներ: 1998 թվականից այդ օրը՝ մարտի 31-ը, Ադրբեջանում համարվում է ազգային սգո օր[5]:

Անգլիացի լրագրող-ուսումնասիրող Թոմաս դե Վաալն իր «Սև այգի» աշխատասիրության մեջ ընդգծում է այն էական հանգամանքը, որ 1918 թ. մարտի 31-ի և «ցեղասպանություն» եզրույթի միավորումը վկայում է այն մասին, որ «հիշատակի օրը ոչ այնքան անցյալին է վերաբերում, որքան մերօրյա քաղաքականությանը: Եթե ցեղասպանության օր ունեն հայերը, ինչո՞ւ Ադրբեջանը նույնպես չունենա,– նշում է հեղինակը»[6]: Իրադարձությունների զարգացման հեռանկարի առումով Թ. դե Վաալը միանգամայն սթափ եզրահանգման է գալիս՝ նշելով, թե «օգտագործելով եզրույթը՝ Ալիևը մենամարտ սանձազերծեց երկու ժողովուրդների միջև»[7]:

Պաշտոնական Ադրբեջանի մոլագար երևակայությունը հասել է այն աստիճանի, որ ըստ «Թուրան» գործակալության հաղորդման՝ Հ. Օրուջևը շրջանառության մեջ է դրել ադրբեջանցի «ցեղասպանված» զոհերի ապշեցուցիչ մի թիվ՝ իբր «2,5 միլիոն ադրբեջանցի է զոհ գնացել 20-րդ դարում հայերի իրականացրած ցեղասպանությանը»[8]:

1918 թ. մարտյան իրադարձությունների ընթացքում կրոնական տոն Մահերրամը կամ հայտնի Շահսեյ-Վահսեյը դարձավ Ադրբեջանական ազգայնականության մոդել: Այն օգնեց Բաքվի մահմեդական

---

[5] Տե՛ս «Новое Время», Ереван, 2011, 29 марта, №1997, 31 марта, № 1998, 5 апреля, № 2000, նաև՝ **Թոմաս դե Վաալ**, Սև այգի, Երևան, 2007:
[6] **Թոմաս դե Վաալ**, Սև այգի, էջ 146:
[7] Նույն տեղում, էջ 146-147:
[8] Նույն տեղում, էջ 147:

թաթարների՝ իրենց պատմական ինքնության ճանաչման, քաղաքական համախմբման և ազգային նոր հանրության ձևավորման գործընթացին: Մուսավաթականների համար այն դարձավ ադրբեջանական «ողբերգական ինքնության» կառուցման գլխավոր տարրերից մեկը, ինչն այսօր հետևողականորեն թմբկահարվում է[9]:

Նույն՝ 2011 թ. հոկտեմբերին, պատասխանելով Ս. Տարասովի համացանցային հոդվածաշարի մի նյութին, Բաքվի պետական համալսարանի պրոֆեսոր Էլդար Իսմայիլովը, «Ինչպես Շահումյանը Լենինին կանխամտածված թյուրիմացության մեջ էր գցում» ակնարկում Ստ. Շահումյանին մեղադրում էր, որ նա, Լենինի հետ միասին ձախողելով «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի իրականացումը, գալիս է Բաքու և այն «նոր հայկական քաղաք դարձնելու նպատակով կազմակերպում է ադրբեջանական բնակչության վակխանալիա»[10]: Ամեն քայլափոխի կեղծելով և՛ իրադարձությունների ժամանակագրությունը, և՛ փաստերը, անգամ նույնացնելով 1918 թ. մարտի և օգոստոսի դեպքերը՝ կեղծարար-պատմաբանը նշում է, որ «Բաքվի արյունոտ դեպքերի ընթացքում Շահումյանը հեռացվել է Արտակարգ կոմիսարի պաշտոնից», և դա հիմնավորվում է Ստալինի՝ 1918 թ. ապրիլի 1-ի նամակով[11]: Փաստենք միայն այն հանգամանքը, որ ապրիլի 1-ին Ստ. Շահումյանը դեռ իր գործունեության գագաթնակետին էր և ապրիլի 12 (25)-ին գլխավորում էր Բաքվի կոմունան:

Ադրբեջանական կեղծարարության ակնառու դրսևորումներից պետք է համարել Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտաշխատող Զահիդա Ալիզադեի հեղինակած «Քաղաքական հարաբերությունները Ադրբեջանի և Հայաստանի միջև 1917-1918 թթ. համացանցային նյութը»:

---

[9] Տե՛ս **Казинян А.**, Полигон “Азербайджан”, Ереван, 2011, с. 269:

[10] **Исмаилов Э.**, Как Шаумян преднамеренно вводил Ленина в заблуждение, http://regnum.ru/news/fd-abroad/armenia/1447229.html#ixzz1ZF69ayGO, «վակխանալիա» բառը թարգմանվում է «անզուսպ խրախճանք», «շվայտանք», «ցոփ գինարբուք»:

[11] **Исмаилов Э.**, նույն տեղում:

Նախ նշենք, որ հավակնոտ վերնագիրը ամենևին չի համապատասխանում եղած նյութին ու հարցադրումներին, ապա՝ և այն, որ հեղինակին հետաքրքրող ժամանակահատվածում նույնացնել Հայաստանը արհեստածին «Ադրբեջան» հասկացության հետ ինքնին կեղծարարություն է: Երբեմն առերես «օբյեկտիվ» ձևակերպումների միջոցով նա ևս մի քանի գլխավոր խնդիր է հետապնդում՝ կեղծել 1918 թ. մարտի Բաքվի դեպքերի պատճառներն ու հետևանքները, «հիմնավորել» Ադրբեջան պետության ստեղծման նախադրյալները, Բաքու քաղաքը դիտարկել այդ պետության «մայրաքաղաք» և, ի վերջո, «ադրբեջանցիների» կոտորածների մեջ մեղադրել հայերին ու բոլշևիկներին:

Զ. Ալիզադեն, նշելով, որ «բոլշևիկների երազանքի քաղաքն էր Բաքուն», իր կարծիքով՝ խորամանկում է և փորձում անցկացնել հենց իրենց՝ ադրբեջանցիների ցնորամիտ երազանքը, այն է՝ «ազերիների մայրաքաղաքի» գաղափարը[12]: Անընդմեջ շեշտելով բոլշևիկ-դաշնակցական համագործակցության փաստը, հասկանալի է, նկատի ունենալով Ստ. Շահումյանին՝ հեղինակը, չգիտես ինչու, մոռացության է մատնում ծագումով թաթար-ադրբեջանցի բոլշևիկներին, «Հումմեթ» բոլշևիկյան կուսակցությունը, Մ. Ազիզբեկովին, Ն. Նարիմանովին ու տասնյակ այլ գործիչների:

Իբր ճշմարտախոս՝ Զ. Ալիզադեն գրում է. «Ազերիների մեծ չափերի հասնող ծայրահեղությունները 1918 թ. մարտին թույլ տվեցին բոլշևիկներին և դաշնակներին Բաքվում որոշ ժամանակով իշխանության գալ: Հանգամանքները նրանց օգտին չէին, և նրանց քաղաքական հեռանկարները տարածաշրջանում հօդս ցնդեցին: Դաշնակների և բոլշևիկների դաշինքը երբեք չհասավ իր ռազմավարական նպատակին, և արդյունքում ձևավորվեց ադրբեջանական ազգային շարժումը»[13]:

---

[12] **Alizade Zakhida,** Politikal realations between Azerbaijan and Armenia in 1917-1918, տե՛ս
www.ca-c.org/c-g/2008/journal_eng/c-g-2/14.shtml :

[13] Նույն տեղում:

Նախ՝ Դաշնակցություն կուսակցությունը Բաքվում իշխանության չի եկել և այդպիսի նպատակ երբեք չի հետապնդել: Էականն այն է, որ երիտասարդ գիտաշխատողը պարզապես չի կարողանում թաքցնել ուրախությունը, որ այդ դաշինքը ձախողվել է, բայց թաքցնում է գլխավորը, այն, որ Բաքուն ընկավ թուրքական արշավանքի հետևանքով, և Բաքվում 1918 թ. սեպտեմբերին թուրքերի ու իրենց ցեղակից թաթար-ադրբեջանցիների կողմից բնաջնջվեց 30 հազար հայ ազգաբնակչություն:

Ինչ վերաբերում է 1918 թ. մարտին հայերի ու բոլշևիկների կողմից իբր 12 հազար թաթարների կոտորածի ստահոդ փաստին, ապա խորհուրդ ենք տալիս այս և ադրբեջանցի մյուս հեղինակներին հիշել իրենց անվանի հայրենակից Զ. Թաղիևի երախտիքի խոսքը՝ ուղղված Բաքվի հայությանն ու նրա ազգային կազմակերպություններին:

1918 թ. մարտյան իրադարձությունները մուսավաթական խռովության արդյունք էին և նպատակ ունեին՝ Բաքվում տապալելու ժողովրդավարական սոցիալիստական խորհրդի իշխանությունը, գրավելու քաղաքը և այն հռչակելու թաթարական արհեստածին հանրապետության մայրաքաղաք: Եվ քանի որ երկրամասի գլխավոր նավթարդյունաբերական կենտրոնում գերիշխող էր հայկական տարրի և ազգային կազմակերպությունների ու հաստատությունների ազդեցությունը, ուստի այդ իշխանության ու Բաքվի համար պայքարը վերածվեց Բաքվի և նահանգի հայ ազգաբնակչության գոյապայքարի:

1905-1907 թթ. հայ-թաթարական ընդհարումներից հետո Բաքվի 1918 թ. մարտյան դեպքերը, փաստորեն, հայկական տարրի թուլացման ու վտարման երկրորդ փուլ կարելի է դիտարկել: Նշված համատեքստում կայացավ նաև հայկական բոլոր հոսանքների ու կուսակցությունների համատեղ հանդես գալու աննախադեպ համերաշխության ու փոխգործունեության երևույթը:

Համամիտ չենք այն տեսակետին, որ Բաքվի հայության ֆիզիկական անվտանգության պահպանման հարցում միայն Հայոց ազգային խորհուրդն ու Դաշնակցություն կուսակցությունն էին մտահոգված և ավելին՝ չէին հետապնդում քաղաքական նպատակներ:

Բաքվի ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկը՝ գեներալ Հ. Բագրատունին, 1919 թ. փետրվարի 17-ին այդ փառահեղ հերոսապատումը ներկայացնում էր ազգային, հայկական շահի տեսանկյունից: «Բաքվի պաշտպանությունը ունեցավ մեծ նշանակություն Ռուսաստանի սահմանների, բայց հատկապես բացառիկ նշանակություն նա ունեցավ հայության համար: Ինձ համար պարզ էր,– գրում էր նվիրյալ ազգային գործիչը,– որ թուրքերը, գրավելով Բաքուն (հայերի համար բոլոր հնարավոր հետևանքներով), կիշխեն փրկված հայկական շրջաններին՝ Ղարաբաղ, հետո էլ՝ Երևան, ինչը մեր ժողովրդի համար կնշանակի լիակատար ցրում, ֆիզիկական կործանում: Ահա թե ինչու ես մշտապես պաշտպանել եմ Բաքվի պաշտպանության մտքի անհրաժեշտությունը՝ զուտ հայկական տեսանկյունից (չէ՞ որ Բաքվի պաշտպանների գերակշիռ մասը հայերն էին), որպեսզի թուրքերին թույլ չտրվի վերջնականապես բնաջնջել հայերին: Բաքվի հերոսական և փառահեղ պաշտպանությունը (բանակի ոչ լիարժեք կազմակերպվածության, նրա թույլ ղեկավարման, չկարգավորված մատակարարման պարագայում) հսկայական դեր խաղաց հայ ժողովրդի մնացորդների փրկության գործում: Այդ մեծագույն խնդրի իրականացման գործում հսկայական դեր խաղաց Համազասպի 3-րդ բրիգադը՝ թվապես ամենամեծը, զուտ հայկական, բոլորից լավ կազմակերպվածը, սկզբից մինչև վերջ դիրքերում մնացածը»[14]:

Բաքվի 1918 թ. մարտյան իրադարձությունները Անդրկովկասի համար ունեցան խոշոր և բեկումնային քաղաքական նշանակություն: Խոսքը վերաբերում էր ոչ միայն «Վայրի դիվիզիան» զինաթափելու, մուսավաթական խռովությունը ճնշելու, այլև նախ և առաջ պանթուրքիզմի վճռական գրոհը կանխելու մասին: Մեծ բախումը վկայում էր երկրամասում իշխանության համար անզիջում պայքարի և Անդրկովկասը խորհրդայնացնելու խնդրի մասին: Դա հաստատվեց հետագայում. Բաքուն սեպտեմբերի 15-ին գրավելուց հետո Նուրի փաշան անմիջապես մի թռուցիկ-ելույթով սպառնաց Ղարաբաղի

[14] Տե՛ս ՀԱԱ, Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 49:

հայերին, և մի շաբաթ անց 6.000 մարդուց բաղկացած թուրքական բրիգադը մտավ Շուշի:

Նշված գործընթացը շարունակվեց 1989-1993 թթ., երբ Սումգայիթով, Բաքվի հայության 1990 թ. հունվարյան կոտորածներով ավարտվեց Բաքվի և Արևելյան Անդրկովկասի հայաբնակ շրջանների հայաթափման գործընթացը:

Մեր խնդիրն է այս աշխատությամբ նախ լուսաբանել Բաքվի 1918 թ. մարտ-ապրիլ ամիսների ռազմաքաղաքական իրադարձությունների ամբողջական զարգացումը, ապա և վեր հանել այդ գործընթացի ներսում տեղի ունեցող միաժամանակ մի քանի շարժումների փոխկապակցված և առանձնահատուկ բնույթը: Դրանք են. 1. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Բաքվում իշխանության համար սկսված պայքարի զարգացումը, 2. թուրքական արշավանքի հետևանքով ներքին քաղաքական պայքարի, ինչ-որ առումով՝ քաղաքացիական պատերազմի վերածումը արտաքին ագրեսիայի դեմ դիմադրության, 3. Բաքվի հայ ազգաբնակչության, կուսակցությունների համար այդ պատերազմի վերածումը ազգային-ազատագրական, ինքնապաշտպանական շարժման, 4. այդ ողջ գործընթացի մեջ ոչ միայն տեղային, այլև Անդրկովկասի հայության ազգային շահի բացառիկ ու աննախադեպ զուգակցումը երկրամասում իշխանության համար պայքարի առաջնահերթ խնդրին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

1.1. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՎ ԲԱՔՎՈՒՄ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1917-1918 թթ. Անդրկովկասում ծավալված իշխանության համար պայքարի հարցն ուղղակիորեն կապվում է 1917-1921 թթ. երկրամասի քաղաքական պատմության, Արևմտյան Հայաստանի հիմնահարցի, ազգամիջյան հարաբերությունների, ազգային անկախ պետությունների տարածքային բազմաշերտ խնդիրների հանգույցի հետ: Այդ խնդրի կիզակետում են Բաքվում խորհրդային իշխանության այլընտրանքային մարտահրավերի և այդ գաղափարն ու ռազմավարությունը կրող կուսակցությունների, անվանի գործիչներ Ստեփան Շահումյանի, Ռոստոմի (Ստ. Զորյան), Հակոբ Բագրատունու, Արամ Մանուկյանի (Սարգիս Հովհաննիսյան), Համազասպ Սրվանձտյանի, Հակոբ Զավրիյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի և մյուսների համաձայնեցված գործողությունները:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ՌՍԴԲ(բ)Կ Թիֆլիսի երկրամասային կոմիտեն բանակի նվաճման համար մղվող պայքարում հատկապես մեծ նշանակություն էր տալիս տեղի կայազորին:

Պետրոգրադի ապստամբության օրերին Թիֆլիսում շարունակում էր աշխատել Կովկասյան բանակի բոլշևիկյան զինվորական կազմակերպությունների խորհրդակցությունը: Հոկտեմբերի 26-ից սկսած՝ քաղաքի տարբեր զորամասերում տեղի ունեցած հանրահավաքները իրենց աջակցությունն էին հայտնում կենտրոնի գործողություններին: Հոկտեմբերի 28-ին հրավիրվեց Թիֆլիսի կայազորի պատգամավորների ժողով, որը, ըստ էության, բոլշևիկյան զորամասերը ներկայացնող խորհուրդն էր՝ գործող խորհրդին զուգահեռ: Ստացվեց այնպես, որ 1917 թ. հոկտեմբերի վերջին և նոյեմբերի

սկզբին պատգամավորական ժողովը Թիֆլիսում դարձավ քաղաքական պայքարի հանգուցակետ[15]:

Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծման պահից՝ 1917 թ. նոյեմբերի 15-ից, բոլշևիկների կողմից Թիֆլիսում իշխանության գրավման հարցը դարձավ թե՛ կովկասյան երկրամասային կենտրոնի և թե՛ Բաքվի խորհրդի առաջնահերթ խնդիրը: Այդ գործընթացի առաջին փուլում՝ 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, հիմնահարցն առավելապես բարձրացվում էր «հակահեղափոխության դեմ» բոլշևիկների տարած հաղթանակի համատեքստում: 1918 թ. հունվար-մարտ ժամանակահատվածում, երբ որոշակի դարձավ երկրամասային իշխանության վրաց-թաթարական մեծամասնության կողմից հայությանն ու ՀՅԴ-ն մեկուսացնելու միտումը, ու նաև ի դեմս Ստ. Շահումյանի՝ Բաքվի խորհրդային իշխանությունը տապալելու խնդիրը, Բաքվի իշխանության մյուս հայ գործիչների և նրանց տրամադրության տակ եղած ռազմական ուժի հետ համագործակցությունը ձեռք բերեց թեև ժամանակավոր, բայց ազգային նկարագիր:

Սկզբում Կոմիսարիատի գործողությունները արդարացված էին. ամեն ինչ արվում էր, որպեսզի Թիֆլիսում չեզոքացվի բոլշևիկների ազդեցությունը: Դրան կարելի էր հասնել, եթե քաղաքից հեռացվեին բոլշևիկյան զորամասերը, վերահսկողություն հաստատվեր Արսենալի (Զինապահեստ) վրա, և վերացվեր բոլշևիկների կազմակերպությունը: Առաջին հարցի կապակցությամբ հետևյալ իրավիճակն էր ստեղծվել: Երբ Թիֆլիս ժամանեց Կարսյան գունդը, այն անմիջապես բոլշևիկյան քարոզչությունը հասցրեց Կոմիսարիատի տապալմանն ուղղված կոչերի մակարդակի: Գունդը մնաց քաղաքում, իր ներկայացուցիչներին հիմնականում ուղարկեց ազգային զորամասեր՝ նրանց աջակցությունը ստանալու կամ գոնե չխոչընդոտելու հանձնարարականներով[16]: Թիֆլիսի բանվորական և զինվորական պատգամավորների (այսուհետև՝ բ. և զ. – Վ. Մ.) խորհրդի դեկտեմբերի 4-ի նիստում Ն. Ժորդանիան հայտարարեց, թե նոյեմբերի 23-

[15] Տե՛ս **Մելիքյան Հ. Ս.**, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Երևան, 1970, էջ 303-311:
[16] Տե՛ս **Жордания Н. Н.**, За два года, Доклады и речи, Тифлис, 1918, с. 58:

ին երկրամասային կոմիտեի բոլշևիկ լիազորներից մեկի կողմից հեռագիր է ուղարկվել Պետրոգրադ՝ իշխանության գրավման բովանդակությամբ: Խոսքը Վ. Լենինին ուղղված Ստ. Շահումյանի երկու՝ նոյեմբերի 23-ի և 25-ի հեռագրերի մասին էր: Նախ՝ Ստ. Շահումյանը Թիֆլիսի կոմիտեի լիազոր անդամ չէր, ապա և՝ ոչ անհայտ մարդ Կովկասում, որպեսզի նրա անունը չտրվեր խորհրդի նիստում: Աղավաղվում էր նաև հեռագրի օրը ու դրա հետ կապված՝ բովանդակությունը. «Մենք կարող ենք բանակի օգնությամբ ստիպել կոմիսարիատին՝ ճանաչել ժողովրդական կոմիսարների իշխանությունը: Խնդրում ենք անհապաղ հայտնել, թե ինչպես վարվել»,– հայտնում էր Ստ. Շահումյանը առաջին հեռագրում: Երկրորդում նա ընդգծում էր այն հանգամանքը, որ Կովկասյան բանակի զորամասերը Կոմիսարիատի գործողությունը դիտում են որպես անջատում Ռուսաստանից, ուստի և կրկնում էր գլխավոր հարցադրումը. «Զորքերի և Բաքվի սովետի վրա հենվելով կարելի է տեղական իշխանությանը հարկադրել ճանաչելու ձեր իշխանությունը»[17]: Ստ. Շահումյանն այդպես էլ Վ. Լենինից հստակ պատասխան և աջակցություն չստացավ: Այս հարցի պարզաբանման հարցում մեզ ինչ-որ չափով օգնում է հենց Ն. Ժորդանիան, որը Թիֆլիսի խորհրդի վերոհիշյալ նիստում հավելում էր. «Երկրորդ հեռագրում ասվում էր, թե ապարատի մոտ սպասում ենք պատասխանի»[18]: Ավելացնենք, որ պատասխան և կենսական աջակցություն Ստ. Շահումյանը չստացավ նաև 1918 թ. օգոստոս-սեպտեմբեր շրջանում, որի հետևանքով տապալվեց Բաքվի կոմունան:

Չհավատալով բոլշևիկների երկրամասային կոմիտեի մեծամասնության հավաստիացումներին, թե վերջիններս զինված ելույթի մտադրություն չունեն, և նախընտրությունը տալով Բաքվում խաղաղ ճանապարհով իշխանության գրավման եղանակին՝ Կոմիսարիատը՝ Ն. Ժորդանիայի և մյուս մենշևիկ առաջնորդների գլխավորությամբ, միևնույն է, տագնապ էր ահազանգում: «Երբ մենք իմացանք այդ հե-

---

[17] **Շահումյան Ստ.**, ԵԼԺ, հ. 4, Երևան, 1978, էջ 45, 47:
[18] **Жордания Н. Н.**, նշվ. աշխ., էջ 59:

ռագրերի մասին,– ասում էր Ն. Ժորդանիան,– պարզ դարձավ, որ Թիֆլիսում պատրաստվում է զինված ելույթ»[19]:

Նոյեմբերի 26-ին մենշևիկների երկրամասային և Թիֆլիսի գործադիր կոմիտեի բյուրոն կանխարգելիչ միջոցներ ձեռնարկեց, կազմակերպվեց «Կարմիր գվարդիան»: Հաջորդ օրը հրավիրվեց բ. զ. և գ. (գյուղացիական) պատգամավորների խորհրդի, երկրամասային կենտրոնի և Թիֆլիսի բ. և զ. պատգամավորների խորհրդի միացյալ արտակարգ նիստ. նոյեմբերի 28-ին Թիֆլիսը հայտարարվեց ռազմական դրության մեջ[20]: Սա իշխանությունը պահելուն ուղղված առաջին քայլն էր:

Նույն երեկոյան Կարսյան գնդին հայտարարվեց, որ նա պետք է անհապաղ հեռանա Հյուսիսային Կովկաս, ինչն էլ իրականացվեց նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը, քանի որ բոլշևիկյան գունդը զգաց Գործադիր կոմիտեի վճռականությունը[21]: Դա մենշևիկների առաջին հաղթանակն էր և իշխանությունը պահելուն միտված երկրորդ ձեռնարկը: Հաջորդը Թիֆլիսի Արսենալի գրավման հարցն էր: Անդրկովկասյան կոմիսարիատին և Թիֆլիսի քաղաքային դումային լրջորեն անհանգստացնում էր գլխավոր զինապահեստի խնդիրը, որի բոլշևիկյան ղեկավարությունը չէր ենթարկվում իշխանություններին և զենք չէր տրամադրում Կոմիսարիատին: Վտանգն առավել իրական դարձավ, երբ ռազմաճակատից սկսեցին վերադառնալ բոլշևիկացած զորամասերը: Իշխանությանը ենթակա զորամասերը զինելու նպատակով Գործադիր կոմիտեն զենք պահանջեց և այդ առթիվ գրավոր հրահանգ ուղարկեց Արսենալի հրետանային պահեստին: Գործադիր կոմիտեն, իհարկե, գիտեր, որ Արսենալը հսկում էին բոլշևիկ-զինվորները, որոնք չէին համաձայնվի հրամանի հետ. դա առիթ էր՝ արդարացնելու հետագա գործողությունները:

Ինչպես և սպասվում էր, Արսենալի պաշտպանները հրաժարվեցին հանձնել զենքը: Մենշևիկյան գվարդիան գիշերը հարձակվեց և

---

[19] **Жордания Н. Н.**, նշվ. աշխ., էջ 59:

[20] Տե՛ս НАГ (Национальный архив Грузии), ф.1838, оп. 2, д. 68, л. 108, նաև՝ «Известия совета рабочих и солдатских депутатов гор. Тифлиса», Тифлис, 1917, № 198:

[21] Տե՛ս **Жордания Н. Н.**, նշվ. աշխ., էջ 59:

գրավեց հրետանային պահեստը: Դեկտեմբերի 4-ի նիստում Ն. Ժորդանիան հայտնում էր, որ նոյեմբերի 28-ին Գործադիր կոմիտեն Արսենալից պահանջել էր 2000 հրացան և ստացել էր մերժում[22]: Արսենալը գրավելու նպատակով մենշևիկյան կենտրոնը շտապ կարգով ձևավորեց հավաքական ջոկատ՝ կազմված «Կարմիր գվարդիայից», վրացական, հայկական գնդերի զինվորներից: Նոյեմբերի 30-ին բոլշևիկյան 218-րդ գնդի 4-րդ գումարտակի 150 զինվորներ հակահարձակում իրականացրին, սակայն չստանալով լուրջ աջակցություն՝ վերադարձան իրենց զորանոցները[23]: Իրադարձությունների նախաձեռնող Ն. Ժորդանիան այդ ամենից եզրակացրեց, որ «Գործադիր կոմիտեի ջոկատը այդպիսով գնում էր խորհրդային իշխանության դեմ, որ հռչակվել էր Թիֆլիսում»[24]: Բոլշևիկյան երկրամասային կենտրոնը հերթական պարտությունը կրեց: Նույն օրը մենշևիկները Թիֆլիսում ավերեցին «Кавказский рабочий», «Брдзола» (Պայքար – Վ. Մ.) և «Բանվորի կռիվ» («Борьба рабочего») թերթերի խմբագրությունները, ձերբակալեցին աշխատակիցներին[25]: 218-րդ գունդը հեռացվեց քաղաքից՝ Տրապիզոն–Էրզրում ուղղությամբ:

Մեկ անգամ ևս վերադառնալով դեկտեմբերի 4-ի նիստին՝ նշենք, որ Ն. Ժորդանիան այդտեղ մտադրվել էր վերջնականապես վարկաբեկել Ստ. Շահումյանին: Իր ձեռքում թափահարելով Վ. Լենինին ուղղված հայտնի հեռագրերը՝ նա Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Մ. Պրժևալսկու, ամերիկյան հյուպատոս Ֆ. Սմիթի, ազգային զորամասերի ղեկավարների և մյուսների ներկայությամբ բոլշևիկներին, մասնավորապես Ստ. Շահումյանին մեղադրում էր «դավաղրության», «բոնապարտիզմի» մեջ: Նիստում հանդես եկած Ստ. Շահումյանը, չժխտելով, որ, իրոք, հիշյալ հեռագրերի հեղինակն ինքն է, միաժամանակ, այն արժեքավոր բացահայտումն արեց, որ Թիֆլիսում գտնված «խոշոր» և «լավ զինված» զորամիավորումների

---

[22] Տե՛ս **Жордания Н. Н.**, նշվ. աշխ., էջ 59-60:
[23] Տե՛ս НАГ, ф. 1844, оп. 2, д. 67, л. 155:
[24] Տե՛ս նույն տեղում:
[25] Տե՛ս **Сургуладзе А. Н.**, նշվ. աշխ., էջ 82:

ներկայացուցիչները այդ օրերին բոլշևիկյան երկրամասային կոմիտեին առաջարկեցին «երկու օրում ցրել ամբողջ Կոմիսարիատը»[26]:

Բոշևիկների մտադրությունը պարզ էր, սակայն միայն Արսենալի դեպքերը վկայում են, որ նախահարձակ են եղել հակաբոլշևիկյան ուժերը, հատկապես վրացական մենշևիկները, որոնք համակարգված և նպատակային գործողություններով, փաստորեն, կարողացան կանխել Թիֆլիսի գրավման երրորդ փորձը:

Ինչ վերաբերում էր բոլշևիկներին, ապա Արսենալի գրավման կամ հանձնման խնդրում առկա են երկու մոտեցումներ. ա) այն, որ բոլշևիկների երկրամասային և Թիֆլիսի կոմիտեները սխալ էին թույլ տվել, ըստ որի՝ իշխանության գրավումն Անդրկովկասում, մասնավորապես Թիֆլիսում, հնարավոր էր իրագործել խաղաղ ճանապարհով, ինչպես Բաքվում, և բ) ելնելով նրանից, որ Անդրկովկասում իշխանության գրավման առաջին փուլը շարունակվում էր մինչև դեկտեմբեր՝ մինչև Արսենալի գրավումը և 1918 թ. փետրվարին բոլշևիկյան ցույցի գնդակոծումը Ալեքսանդրյան այգում, հետևաբար Արսենալը համեմատաբար հեշտ հանձնելու փաստը պետք է բացատրել ոչ թե բոլշևիկների ղեկավար խմբի մի մասի մարտավարական սխալներով, այլ այդ ժամանակ երկրամասում առկա մի շարք օբյեկտիվ հանգամանքներով[27]: Կարևորում ենք նաև Ստ. Շահումյանի նոյեմբերի 23-ի և 25-ի հարցումները՝ Թիֆլիսում զինված ելույթի անհրաժեշտության մասին: Որո՞նք են Կովկասի թիվ 1 բոլշևիկի հարցման պատճառները: Խնդիրն այն տարաձայնությունների մեջ է, որը խորանում էր երկրամասային ու Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեներում: Երբ հնարավոր չէր տեղում լուծել զինված ելույթի հարցը, Շահումյանը դիմում էր Վ. Լենինի միջամտությանը: Թիֆլիսում չստանալով ղեկավար բոլշևիկների մեծամասնության աջակցությունը՝ Ստ. Շահումյանը, որը հենց նոյեմբերի 23-ին էր Ելիզավետպոլից հասել Թիֆլիս, աշխատում էր իրագործել զինված ապստամբության իր ծրագիրը: Հիմնահարցի գիտակ պրոֆ. Հ. Մելիքյանի կարծիքով՝ Ստ. Շահումյանի

---

[26] Տե՛ս **Дубинский-Мухадзе И.**, Шаумян, Москва, 1965, с. 277:

[27] Տե՛ս **Сеф С. Е.**, Революция 1917 г. в Закавказье (Документы и материалы), Тифлис, 1927, էջ 337:

հարցումները չէին լինի, եթե Թիֆլիսում բոլշևիկների ղեկավար խմբի մեծամասնությունը պաշտպաներ զինված ելույթի անհրաժեշտությունը: Եթե դա մարտավարական քայլ լիներ, ապա վճռական պահին պետք է ոտքի հանվեին կայազորն ու բոլշևիկամետ բանվորները, և թույլ չտրվեր գրավել Արսենալը[28]:

Թիֆլիսի բոլշևիկների «սխալները» այլ հիմնավորում էլ ունեն. այստեղ մեկ անգամ ևս դրսևորվում է ազգային գործոնի դերը: Բոլշևիկյան կուսակցության նման միակուռ կառույցն անգամ ճեղքեր էր տալիս Անդրկովկասում: Ոչ միայն վրացի մենշևիկներն էին ազգայնական, այլև վրացի բոլշևիկները: Ստ. Շահումյանի գլխավորությամբ և Կովկասյան բանակի՝ հիմնականում ռուս զինվորների աջակցությամբ Թիֆլիսի գրավումը և Կոմիսարիատի իշխանության տապալումը դիտվում էին որպես հակավրացական քայլ, առավելապես ոչ այնքան բոլշևիկների, այլ նախ և առաջ հայկական գործոնի հաղթանակ: Թիֆլիսն ուներ Բաքվի փորձը և ճիշտ ժամանակին կարողացավ կանխել պարտությունը: Փաստորեն, Ստ. Շահումյանի դեմ պայքարում և իշխանության գրավման առաջին փուլում վրացական մենշևիկներն ու բոլշևիկները հանդես եկան համատեղ: Ստացվում է, որ վրացական ազգայնականությունն այս պատմական փուլում հաղթեց: Միտումնավոր կերպով, իհարկե, չօգտագործվեցին նաև Կովկասյան բանակի բոլշևիկացող զորամասերի վճռական դերակատարությունը և նվիրվածությունը Անդրկովկասում իշխանության գրավման գործին: Ավելին, նահանջող այդ զորամասերի նկատմամբ մշակվեց և իրականացվեց վճռական բիրտ քաղաքականություն:

Բաքվում իշխանության փոխակերպումն ընթացավ հետևյալ կերպ: 1917 թ. հոկտեմբերի 26-ին, երբ այստեղ ստացվեց Պետրոգրադում հաղթած զինված հեղաշրջման լուրը, խորհրդի գործկոմը կուսակցությունների, արհմիությունների, կայազորի ներկայացուցիչների մասնակցությամբ և ազգային ու սոցիալիստական կուսակցությունների պնդմամբ որոշեց ձևավորել իշխանության բարձրագույն

[28] Տե՛ս **Մելիքյան Հ. Ս.**, նշվ. աշխ., էջ 428:

մարմին՝ Հասարակական անվտանգության կոմիտե: Տեղի բոլշևիկները չհամաձայնեցին նման որոշմանը և պահանջեցին իշխանությունը հանձնել բանվորների ու զինվորների պատգամավորների խորհրդին: Նրանք միաժամանակ պահանջեցին ընդլայնված խորհրդի հրավիրում: Հոկտեմբերի 27-ին հակաբոլշևիկյան ուժերին հաջողվեց կրկին մերժել իշխանությունը խորհուրդներին հանձնելու վերաբերյալ բոլշևիկների պահանջը: Հաջորդ օրը Բաքվի բոլշևիկյան կոմիտեն կոչով դիմեց աշխատավորներին և պահանջեց պաշտպանել Պետրոգրադի բանվորների, զինվորների և նավաստիների ելույթը, դատապարտել էսէռների, մենշևիկների, դաշնակցության հակաբոլշևիկյան վարքագիծը: Բոլշևիկյան կոչերը արդյունք տվեցին, և ամսի 29-ին ցույցի դուրս եկան Կասպիական ռազմական նավատորմի նավաստիները, որոնց շրջանում բոլշևիկները նկատելի ազդեցություն ունեին: Հանրահավաքում հնչում էին կոչեր բոլշևիկներին պաշտպանելու բովանդակությամբ: Միաձայն ընդունվեց բոլշևիկյան բանաձև՝ իշխանությունը խորհուրդներին հանձնելու առաջարկով: Քվեարկելով բանաձևի օգտին՝ զինվորներն ու նավաստիները քվեարկեցին նաև Բաքվում իշխանությունը խորհրդին հանձնելու օգտին: Նույն օրը կայազորի հանրահավաքում նույնպես ընդունվեց բոլշևիկյան բանաձև[29]: Այդ կարևոր իրադարձությունն ըստ արժանվույն գնահատվեց Ստ. Շահումյանի կողմից: Արժևորելով բոլշևիկների շուրջը բանակի համախմբման իրողությունը՝ Շահումյանը վճռական հետևություններ արեց ոչ միայն Բաքվի կայազորի, այլև ողջ կովկասյան բանակի վերաբերյալ[30]:

Հոկտեմբերի 31-ին խորհրդի ընդլայնված նիստում բոլշևիկները հաղթանակ տարան. որոշվեց իշխանությունը հանձնել բ. և զ. պատգամավորների խորհրդի ձեռքը և վերացնել հասարակական անվտանգության կոմիտեն[31]:

---

[29] Տե՛ս «Бакинский рабочий, Баку», 1917, № 73, 1 ноября:
[30] Տե՛ս **Շահումյան Ստ.**, ԵԼԺ, հ. 4, էջ 20-22:
[31] Տե՛ս **Մելիքյան Հ. Ս.**, նշվ. աշխ., էջ 297:

Նոյեմբերի 2-ին խորհրդի ընդլայնված նիստում (խորհրդակցություն), որտեղ բոլշևիկներն ունեին մեծամասնություն (486-ից 344 ձայն), քննարկվեց իշխանությունը խորհրդին հանձնելու հարցը:

Թվով 124 մարդ աջ էսէռներից, մենշևիկներից ու դաշնակցականներից հեռացան խորհրդից: Այդ բեկումնային քայլից հետո Ստ. Շահումյանը բարձրացրեց քաղաքի զինված ուժերի նկատմամբ լիակատար վերահսկողություն կիրառելու հարցը: Ընտրելով գործկոմի նոր կազմ՝ որոշվեց «բանվորների և զինվորականների պատգամավորների սովետը» վերանվանել «բանվորների և զինվորների պատգամավորների սովետ»: ***Խորհրդի գործադիր կոմիտեն հռչակվեց Բաքվի բարձրագույն իշխանություն***[32]:

Նոյեմբերի 4-ին Բաքվի խորհրդի «Տեղեկագրում» լույս տեսավ խորհրդի գործկոմի դիմում՝ ուղղված Բաքվի ամբողջ բնակչությանը, զինորներին ու նավաստիներին: Դիմումում նշվում էր, որ խորհրդի գործկոմը հենվում է Բաքվի հեղափոխական կայազորի վրա[33]: Այնուհետև դրան հետևեց Կասպիական ռազմական նավատորմի համագումարում նոյեմբերի 6-ին ընդունած բանաձևը, որը ողջունում էր Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեին և պատրաստակամություն հայտնում՝ պաշտպանելու խորհրդային իշխանությունը Բաքվում: Նոյեմբերի 10-ին բոլշևիկամետ բանաձև ընդունեց նաև Բաքվում տեղակայված 156-րդ Ելիզավետպոլյան հետևակային գունդը[34]: Այսպիսով՝ Բաքվի կայազորի և Կասպիական ռազմական նավատորմի բոլշևիկացած զինվորների ու նավաստիների վճռական աջակցության արդյունքում Բաքվի զ. և բ. պատգամավորների խորհուրդը ընդունեց բոլշևիկամետ բանաձևեր, այսինքն՝ ճանաչելով Պետրոգրադի բոլշևիկյան խորհրդային կառավարությունը՝ հայտնեց իր լիակատար աջակցությունը:

---

[32] Տե՛ս **Մելիքյան Հ. Ս.**, նշվ. աշխ., էջ 300:
[33] Տե՛ս «Известия Бакинского Совета», Баку, 1917, № 178, 5 ноября:
[34] Տե՛ս նույն տեղում, № 199, 2 декабря:

1.2. ԲԱՔՎԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՆԱԽԱՔԱՅԼԵՐԸ

ա) Կովկասյան ռազմաճակատից նահանջող ռուսական զորամասերի զինաթափումն ու կոտորածները. Ելիզավետպոլի նահանգի իրադարձությունները

1917 թ. նոյեմբերի վերջից Կովկասյան ռազմաճակատի ռուսական զորամասերի զանգվածային նահանջի պայմաններում այդ զորամասերը հանդիպեցին հետևողական ու նպատակային խոչընդոտների, մի կողմից՝ Անդրկովկասյան կոմիսարիատի վրաց-թաթարական ղեկավար մեծամասնության, գ. և բ. պատգամավորների խորհրդի երկրամասային հակաբոլշևիկյան կենտրոնի, իսկ մյուս կողմից՝ Մուսավաթի գլխավորությամբ ղեկավարվող Մահմեդական ազգային կոմիտեի հակառուսական գործողություններին: Այդ զորամասերը փոխադրող էշելոնները կանգնեցվում էին Անդրկովկասյան երկաթուղու Բաքու–Թիֆլիս տեղամասի գլխավոր հանգույցներում, արձանագրվում էին զենքի բռնագրավման և զինվորների զանգվածային կոտորածների փաստեր[*]:

Անդրկովկասի քաղաքական ուժերի աջ և ձախ խմբավորումների միջև իշխանության համար մղվող պայքարը, բոլշևիկյան հեղաշրջումից հետո թևակոխեց անհաշտ մրցակցության և ոչ խաղաղ զարգացման փուլը: Կոմիսարիատի ձևավորումից հետո հատկապես այդ բազմակողմ պայքարն ի վերջո հանգեցրեց բոլշևիկացած ռուսական ռազմաճակատային զորքերի երկրամասից հեռանալուն, ինչը կազմալուծեց ճակատը, և դատարկվեցին նրա պաշտպանական գծերը:

1917 թ. դեկտեմբերի 1-ի տվյալներով գործող զորքերում հաշվվում էր 253 գումարտակ, 238 հեծյալ հարյուրակ և էսկադրոն, 42 ին-

---

[*] Տե՛ս **Մելիքյան Վ.,** Իշխանության հիմնահարցն Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր-1918 թ. փետրվար), Երևան, 2010, էջ 181-211, **Меликян В. Г.,** Грузино-татарские антироссийские мятежи в районе Закавказской железной дороги и армянская позиция (ноябрь 1917 - март 1918), «Историческое пространство», № 1, Москва, 2010:

ժեներային վաշտ, 3 ավիաջոկատ, 298 թեթև և 243 լեռնային հրանոթ, 69 հաուբից,1533 գնդացիր: Մարտակազմում առկա էր 7351 սպա, 117970 հետևակային, 25632 հեծյալ և 6744 սակրավոր զինվոր, ընդամենը՝ 157697 մարդ: Նրանցից 101891 մարտիկները (որից 4790 սպա) տեղակայված էին Առանձին կովկասյան գործող բանակում, մնացած 55806-ը՝ պարսկական հատվածում[35]: Կովկասյան ռազմաճակատում մնացել էին նաև կազակային 3 դիվիզիա, 2 բրիգադ, 2 գունդ (պարսկական հատվածում), որոնք աստիճանաբար պետք է դուրս բերվեին Իրանի տարածքից[36]:

Երկու ամսվա ընթացքում Կովկասյան ռազմաճակատի զորքերի մարտակազմը նվազել էր 28016 մարդով, Առանձին կովկասյան բանակի մարտակազմը՝ 25225 մարդով, պարսկական հատվածում այն չնչին թիվ էր կազմում՝ 2791: Կովկասյան ռազմաճակատի զինվորականության ընդհանուր թիվը պակասել էր 200 հազարով՝ կազմելով մոտ 400 հազար մարդ: Ռազմաճակատի պահեստազորում գտնվում էր 36566 զինվոր, որը գործող զորքի 23%-ն էր կազմում. այն տեղաբաշխված էր ճակատի մերձակա թիկունքում[37]:

Անձնակազմի 40-42 %-ը կազմում էին ռուսները, մոտ 30 %-ը՝ ուկրաինացիները, 10 %-ը՝ հայերը, 8 %-ը՝ վրացիները, 4,5 %-ը՝ ռուսահպատակ գերմանացիները, 1,5 %-ը՝ լեհերը և այլն: Սպայակազմի ազգային նկարագիրը որոշակիորեն տարբերվում էր. 60 %-ը ռուսներ էին, 10 %-ը՝ ուկրաինացիներ, 8-9 %-ը՝ հայեր, 8-9 %-ը՝ վրացիներ, 3-4 %-ը՝ լեհեր, 3 %-ը՝ գերմանացիներ և այլն[38]:

Կովկասյան գործող բանակի հրամանատարը, կատարելով Անդրկովկասյան կոմիսարիատի ռազմածովային նախարարության գծով կոմիսար էսէռ Դ. Դոնսկոյի հրահանգը, 1917 թ. դեկտեմբերի 1-ին կարգադրեց ճակատի հայկական հատվածի 5 կորպուսներում և կայազորներում ձեռնարկվել ազգային վաշտերի ու գումարտակների

---

[35] Տե՛ս РГВИА (Российский государственный военно-исторический архив), ф. 2100, оп. 1, д. 72, л. 270, ըստ՝ **Նազարյան Ա.**, Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թթ.), Երևան, 1999, էջ 140:
[36] Տե՛ս РГВИА, ф. 2100, оп. 1, д. 72, л. 93, ըստ՝ նշվ. աշխ., էջ 139:
[37] Տե՛ս НАГ, ф. 1838, оп. 2, д. 5, л. 301:
[38] Տե՛ս **Նազարյան Ա.,** նշվ. աշխ., էջ 140:

կազմավորումը: Գործնականում այդ օրվանից սկսվեց Կովկասյան ռազմաճակատի զորքերի համատարած ազգայնացման գործընթացը[39]:

Անդրկոմիսարիատի դեկտեմբերի 11-ի որոշմամբ, բացի հայկական ու վրացական ազգային զորամասերից, թույլատրվեց կորպուս ձևավորել նաև երկրամասի մահմեդական կազմակերպություններին: Դրա համար նախատեսվեց օգտագործել Կովկասյան «վայրի դիվիզիայի» զինվորության մի մասը, որն այստեղ էր բերվել արևմտյան ճակատից, ինչպես նաև երկրամասի մահմեդական բնակչությունից կամավորագրյալներ[40]:

Կովկասյան ռուս-թուրքական ճակատում ազգային-տարածքային սկզբունքով նոր բանակի ձևավորման աշխատանքների համաձայնեցման նպատակով 1917 թ. դեկտեմբերի 22-ին Թիֆլիսում Կոմիսարիատի ռազմածովային նախարարության գծով կոմիսարիատին կից կազմվեց Ազգամիջյան զինվորական խորհուրդ (ԱԶԽ): Այն սկզբնական շրջանում ներկայացնում էին երկրամասի 8 ազգային խորհուրդների և կազմակերպությունների պատվիրակները: Ընտրվեց նաև ԱԶԽ-ի նախագահության կազմը՝ Ն. Ռամիշվիլի (նախագահ), Մ. Պապաջանյան (տեղակալ), Լյախնիցկի (Անդրկովկասի ռուսների ազգային բյուրոյից), Խուրամովիչ (մահմեդական), Խոմենկո (ուկրաինացի), Յարեցկի (լեհ), Սպիլիտտի (հույն), Վանեն (օս): 1918 թ. հունվարին խորհրդի նախագահության կազմը համալրեց ասորիների ազգային խորհրդի ներկայացուցիչ Բիտ-Այվազը[41]:

ԱԶԽ-ն ժամանակավորապես իրագործելու էր ազգային զորամասերի կազմակերպման ռազմատեխնիկական բնույթի հարցերի լուծումը, մինչև կկայանար երկրամասի ազգային զորամիավորումների ներկայացուցիչների համագումարը: ԱԶԽ-ն ազգային զորքերի ձևավորման և մատակարարման հարցերով ղեկավար մարմին էր:

Ռազմաճակատային զորքերի շրջանում նույն ժամանակաշրջանում տեղի ունեցող գործընթացների հետևանքով առաջացած

---

[39] Տե՛ս РГВИА, ф. 2168, оп. 2, д. 90, л. 15:
[40] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1918, 4 հունվարի, թիվ 1:
[41] Տե՛ս НАГ, ф. 1968, оп. 1, д. 1, лл. 3, 5, ըստ՝ **Նազարյան Ա.,** նշվ. աշխ., էջ 142:

բարդ իրավիճակի մասին կարող է որոշակի պատկերացում տալ զորքերի էվակուացիայի և ազգայնացման ծրագիրը: Տրապիզոնի մարզում տեղաբաշխված 5-րդ Կովկասյան կորպուսը ուկրաինացվում էր, 2-րդ Թուրքեստանյան կորպուսը Բաքվի ուղղությամբ էվակուացվելու էր իր նախապատերազմյան ծառայության վայրը, 6-րդ կորպուսը՝ իր շտաբով, 5 և 7-րդ կովկասյան հրաձգային դիվիզիաներով, ունեցվածքով և գրասենյակով, տրվեց Մահմեդական կորպուսին, 1-ին կորպուսն ամբողջովին հանձնեցին Հայկական կորպուսին, 4-րդ Կովկասյան հրաձգային դիվիզիան ենթարկվում էր հունացման՝ Կարսի մարզում[42]: ***Ուրմիա–Վան շրջանից 7-րդ առանձին կորպուսը Երևան–Գանձակ–Բաքու երկաթուղով էվակուացվում էր Հյուսիսային Կովկաս՝ ճանապարհին իր ունեցվածքը հանձնելով Երևանի նահանգում չհավորվող հայկական և ռուսական զորամասերին*** (ընդգծումը իմն է – Վ. Մ.): Իրանի տարածքից 1-ին հեծյալ առանձին կորպուսի զորամասերը Էնզելի–Բաքու–Պետրովսկ ուղերթով փոխադրվելու էին Ռուսաստան[43]:

Հստակորեն որոշված էր նաև Կովկասյան ռազմական օկրուգի պահեստային 20 գնդերի ազգայնացման ու զորացրման ծրագիրը: Այստեղ մեզ հետաքրքրում է Գանձակում կայանած 219-րդ գունդը. այն վերածվում էր թաթարական գնդի[44]: Շարունակվում էր նաև Ռուսական կամավորական կորպուսի ձևավորումը: Նրա համալրման հիմնական կադրերը հանդիսացան բոլշևիկյան իշխանությունը չճանաչող, համառուսական պետականության շահերը պաշտպանող սպաներն ու զինվորները: Ռուսական կորպուսը համալրվում էր նաև անդրկովկասաբնակ ռուսների և գերմանացիների հաշվին: 1917 թ. վերջից երկրամասում ծավալված մահմեդական խռովություններն ուղղված էին ոչ միայն հայերի, այլև մյուս քրիստոնյա ժողովուրդների դեմ. մի հանգամանք, որը դրդեց ռուս և գերմանացի բնակչությանը դիմելու Ազգամիջյան զինվորական խորհրդին՝ իրավունք տալ ի-

[42] Տե՛ս РГВИА, ф. 2100, оп. 1, д. 72, л. 68:
[43] Տե՛ս РГВИА, ф. 2320, оп. 1, д. 216, л. 115:
[44] Տե՛ս նույն տեղում, ф. 2100, оп. 1, д. 72, л. 160:

րենց կազմակերպելու առաջին Անդրկովկասյան ռուս-գերմանական գունդը[45]: Այն ձևավորվեց ու մտավ Ռուսական կորպուսի կազմի մեջ:

Եթե թուրքական հրամանատարության գործակալները մահմեդական խռովությունների սանձազերծմամբ հետապնդում էին ռուսական, նաև թիկունքային ու նահանջող զորամասերի լիակատար կազմալուծման միջոցով նոր լայնածավալ արշավանքի կազմակերպումը, ապա Կոմիսարիատն ու երկրամասային հեղափոխական կազմակերպությունը այդ ճանապարհով աշխատում էին կանխել Բաքվի խորհրդի ու բոլշևիկացած զորամասերի համաձայնեցված գործողություններով իրականացվող իշխանության գրավման ծրագիրը:

Հովանավորվելով մենշևիկյան կենտրոնի կողմից, դրանով կարծես թե ապահովելով օրինականությունը՝ բանակի երկրամասային խորհրդի փոքրամասնությունը, փաստորեն, բոլշևիկյան մեթոդներով զավթեց խորհրդի կենտրոնական ապարատը և իրեն հռչակեց Բանակային խորհուրդ: Այդ ուժերը համարձակորեն էին գործում, որովհետև բոլշևիկյան զորամասերը Թիֆլիսից նախապես հեռացվել էին: Նոր խորհրդի առաջնահերթ գործը դարձավ ռուսական զորամասերի զինաթափումը: Թեև դա հաղթանակ էր բոլշևիզմի նկատմամբ, սակայն տվյալ հիմնահարցի շրջանակներում և ստեղծված իրավիճակում ամենևին չէր բխում հայկական բնակչության և ազգային ուժերի շահերից, քանի որ բռնագրավվող զենքն ու զինամթերքը բաժին էին հասնում գլխավորապես մահմեդական, ապա՝ նաև վրացական զորամասերին: Զինաթափումն իրականացվում էր ազգային գնդերի մասնակցությամբ. մի բան, ինչն առանց այն էլ լարված ազգամիջյան հարաբերությունների պայմաններում սադրիչ քաղաքականություն էր:

Այդ օրերին Բաքվում ստացվում է Ստ. Շահումյանի խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակվող «Տեղեկատուն» (Ժողովրդական կոմիսարների կովկասյան պաշտոնական լրագիր – Վ. Մ.), ըստ որի՝ հունվարի 1-ից Ղազախի գավառից սկսվել էր ագրարային շարժում և

[45] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1968, օп. 1, д. 1, л. 3:

տարածվել Գանձակի նահանգի մյուս շրջաններում[46]: Չի կարելի անտեսել այն էական հանգամանքը, որ 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին Ելիզավետպոլի նահանգի թաթարական միջավայրում այդ նույն խորհրդային իշխանության հռչակած հողի մասին դեկրետի ազդեցությամբ բռնկվում էին զանգվածային գյուղացիական շարժումներ, արձանագրվում էին խաների ու բեկերի, նրանց ընտանիքների բազմաթիվ կոտորածների, հողի բռնագրավումների փաստեր[47]:

Ու քանի որ նահանգի խոշոր կալվածատերերից շատերը նաև անդրկովկասյան կառավարության անդամներ էին՝ «սոցիալիստ» բեկեր ու խաներ, ուստի և հեռացող ռուսական զորամասերի նկատմամբ հրահրվող բռնությունները և ազգային գնդերի ստեղծման գործընթացն ինչ-որ չափով շեղում էին գյուղացիությանը սոցիալ-տնտեսական կենսական խնդիրների բարձրացումից: Նպատակներից մեկն էլ ադրբեջանական խանություն հռչակելն էր: Որքան էլ Կոմիսարիատը և Թիֆլիսի երկրամասային կենտրոնը թաքցնեին իրականությունը, հատկապես ազգամիջյան ընդհարումների և հակահայկական քաղաքականության բացահայտ դրսևորումները, միևնույն է, փաստերը վկայում են անհերքելին:

Առաջին աշխարհամարտի իրականության մեջ Ելիզավետպոլի նահանգն իրավամբ դիտվում էր որպես պանթյուրքիզմի կենտրոն Անդրկովկասում: Այստեղից տարածվեց մահմեդական շարժման ալիքը: Սկզբում ողջ նահանգը տարվեց զինվելու տենդով, ինչը սկսվել էր դեռ 1917 թ. ամռանից: Ազգային զորամասերի ձևավորման սկզբնական փուլում արդեն տեղ էին գտնում բազմաթիվ զինված ընդհարումներ, մի կողմից՝ մահմեդականների, մյուս կողմից՝ ռուսական և հայկական զորամասերի միջև: Ավազակությունները, թալանն ու բռնությունները Ելիզավետպոլի նահանգում սկզբում բացահայտ ազգային նկարագիր չէին կրում, և խորացող ազգամիջյան հարաբերությունները դեռևս զարգանում էին փոխադարձ անվստահության և օտարացման մթնոլորտում: Առանձնանում էր Նուխիի շրջանը, որ-

[46] Տե՛ս «Արև», Բաքու, 1918, 4 փետրվարի, թիվ 27:
[47] Տե՛ս **Ратгаузер Я.**, Революция и гражданская война в Баку, ч. I, 1917-1918 гг., Баку, 1927, էջ 124-125:

տեղ հակառուսական, ապա և հակահայկական շարժումները, բռնությունները 1917 թ. աշնանը վերաճեցին ջարդերի: Արդյունքում միայն 1917 թ. դեկտեմբերին ավերվեցին Նուխիի գավառի 11 հայկական գյուղեր, և ռուս բնակչությունն ամբողջությամբ հեռացավ Հյուսիսային Կովկաս:

1917 թ. նոյեմբերի 18-ին Ելիզավետպոլում առաջին անգամ բռնկվեցին լայնածավալ անկարգություններ, որոնք հիմնականում բացատրվում էին Թիֆլիսի ազգամիջյան ռազմական խորհրդի որոշումներով, ըստ որի՝ երկաթուղային կայարաններում տեղակայված ռուսական զորամասերի զենքն ու զինամթերքը պետք է անցներ մահմեդական զորամասերի ձեռքը[48]:

Նոյեմբերի 27-ին Կոմիսարիատը որոշեց ազգայնացնել վերը հիշատակված 219-րդ հետևակային-պահեստային գունդը, այն գունդը, որի գործողություններն ավելի ուշ իշխանությունների կողմից ներկայացվում էր որպես Ելիզավետպոլի իրադարձությունների գլխավոր պատճառը: Դեկտեմբերի 29-ին Ա. Չխենկելին Կոմիսարիատի նիստում հայտնում էր, որ մահմեդական կազմակերպությունները բողոքում են, որ հայկական զորամասերը զբաղեցրել են Կարսի ամրոցը, բացահայտ դժգոհ են այդ փաստից և ամեն գնով պայքարելու են, որպեսզի հայերը չամրանան Կարսում[49]:

Բաքվի իրադարձությունների ակունքները նաև Գանձակում էին չհավորվում: Տեղի հայ զինվորականները հրաժարվել էին թաթարներին հանձնել 269-րդ՝ Ատրպատականից տեղափոխված «Ասլանդուզի գնդի» առգրավված զինամթերքն ու գույքը: Երկաթուղու խռովությունները և այս միջադեպը գագաթնակետին հասցրին հայ-թաթարական լարվածությունը Գանձակում: Գանձակի դեպքերի վերաբերյալ Ա. Նազարյանը կարծում էր, որ «գլխավոր պատճառը պիտի համարել Անդրկովկասյան կոմիսարիատի այն կարգադրությունը, որով թույլատրվում էր թուրքերին զինաթափ անել ռուս զորքերին մահմեդական ազգային գնդերը զինելու համար: Այդ կարգադրու-

[48] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 21:
[49] Տե՛ս НАГ, ф. 1818, оп. 2, д. 141, л. 304:

թյունը ոչ միայն թուրքերի ձեռքը տվեց ահագին քանակությամբ զենք ու ռազմամթերք, որոնց թվում նաև թնդանոթներ ու գնդացիրներ, այլև այն թյուր համոզումը մտցրեց թուրք անգիտակից ամբոխի մեջ, որ երկրի կառավարությունն այդպիսով սանկցիա է տալիս իր գործելակերպին և դեմ չէ այն նպատակին, որին ձգտում է Անդրկովկասի մահմեդականությունը»[50]: Բաքվում դա առայժմ արտահայտվում էր հայ զինվորականների մեծ կուտակումների տագնապի մեջ: Ա. Գյուլխանդանյանը նշում էր. «Մենք համոզուած էինք, որ այդ կուտակուած հայ զինուորները մեծ չարիք պիտի դառնան Բագուի ժողովուրդի, մանաւանդ թաթարների համար: Այդ իսկ պատճառով Բագուի Ազգային խորհուրդը իր 36-րդ նիստի մէջ որոշեց նորից դիմել թաթար ղեկավարներին եւ հասկացնելով նրանց, որ կեղտի, քաղցի և անգործութեան ենթակայ այդ մեծ հայ բազմութիւնը, որ վերադարձել է արեւմտեան ռազմաճակատից զէնքերով, երկար ժամանակ անկարող է անշարժ մնալ այդ վիճակի մէջ, մանաւանդ որ ամէն օր լսում են լուրերը երկաթուղագծի վրայ հայերի նկատմամբ գործ դրած բռնութիւնների մասին: Պարզ էր, որ հայ զինուորների այսքան կուտակուելը Բագուում, իրապէս մեծ երկիւղ էր ազդում թաթարներին: Իրենց երկիւղը Բագուի թաթարները չէին ծածկում ու հաղորդում էին Բագուից դուրս գտնուած թաթարներին»[51]:

Բայց հիմա Գանձակի հայությունն էր մեծ երկյուղի մեջ: Արդեն տխուր ավանդույթ էր դարձել այն հանգամանքը, որ երբ մի միջադեպ էր արձանագրվում այստեղ, նրանք միանգամից հայացքը հառում էին Բաքվին՝ գիտակցելով, որ թաթարների խոցելի կետը Բաքուն է, և միայն Բաքվի հայության կազմակերպված գործողություններով կարելի էր ազդել Գանձակի թաթարների վրա: Թաթարներն էլ կիրառում էին հակառակ մարտավարությունը՝ Բաքվի դեմ ուղղելով Գանձակի և Երևանի նահանգի հայ բնակչության անվտանգության սպառնալիքը:

---

[50] «Հորիզոն», Թիֆլիս, 21 մարտի (3 ապրիլի), թիվ 60:
[51] Տե՛ս **Գիլխանդանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 88:

Սկզբում մահմեդական մտավորականները կարողացան կանխել և տեղայնացնել Ելիզավետպոլի մեծ աղետը, սակայն հետագայում, երբ դրանք հետևողական ու համակարգված բնույթ են ստացան, բռնությունների ալիքը այլևս հնարավոր չեղավ կանգնեցնել: «Ավազակային բանդաները թալանել են Ելիզավետպոլի հարևան բնակավայրերը,– գրում էր «Каспий» թերթը,– Ելիզավետպոլից մինչև Եվլախ բոլոր կայարանները թալանված են: Ելիզավետպոլում ջախջախված են զորանոցները, պարենային խանութները, պահեստները: «Վայրի դիվիզիան», որը տեղակայված է Ելիզավետպոլում, ոչ մի միջոց չի ձեռնարկել թալանն ու ավազակությունները կանխելու ուղղությամբ»[52]: Դեկտեմբերի 19-ին Գանձակից հեռախոսով Թիֆլիս հայտնում էին. «Ժամը 13:00-ին կայարանը շրջապատեց 10.000 թուրքերից կազմված մի բանակ. երկաթուղային 7-րդ վաշտը ցրվել է, կան շատ սպանվածներ ու վիրավորներ, զինվորներ, երկաթուղու ծառայողներ, թալանված է պարենավորման պահեստը: Գանձակի և Շամխորի միջև երկաթուղագիծը քանդված է: Թիվ 22 գնացքի բոլոր արժեքավոր ապրանքները հափշտակված են, շուկայի խանութներն ու մասնավոր բնակարանները թալանված և այժմ այրվում են՝ սպառնալով պետական շենքերին:

Հաջորդ օրը՝ Բաքվի բ. զ. պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեի և ռազմահեղափոխական կոմիտեի համատեղ խորհրդակցության ժամանակ, կուսակցությունների ներկայացուցիչները քննարկում են Ելիզավետպոլի դեպքերը: Չնայած Թիֆլիսից հաղորդվում էր, թե դրանք թալանի նպատակով կազմակերպված ավազակային հարձակումներ են, սակայն խորհրդակցությունը փաստում էր վերջինիս ազգամիջյան բախման բնույթը[53]: Իր հերթին Բաքվի ռազմահեղափոխական կոմիտեն, լսելով երկրամասային կենտրոնի հաղորդագրությունը՝ մինչև Ելիզավետպոլ կայարանը երկաթուղու պաշտպանության վերաբերյալ, ինչպես նաև զինվորների հաղորդումները դեկտեմբերի 19-ի (հունվարի 2) իրողությունների մա-

---

[52] Տե՛ս **Беленький С., Манвелов А.**, Революция 1917 г. в Азербайджане (Хроника событий), Баку, 1927, էջ 234:
[53] Տե՛ս նույն տեղում, էջ 235:

սին, որոշեց ուժեղացնել Բալաջարի կայարանի պաշտպանությունը, զենք հատկացնել ռազմաժողովրդական պահակազորին, ինչպես նաև կազմակերպել պատգամավորական գնացք՝ կազմված կուսակցությունների, ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից, որը զինված ջոկատի հսկողությամբ կվերահսկեր Բաքու–Ելիզավետպոլ ճանապարհը: Դեկտեմբերի 21-ին (հունվարի 3) Բաքվում ձևավորվեց Կարմիր գվարդիան, վերակազմավորվեց միլիցիան, ուժեղացվեց կայազորը, պատճառը Ելիզավետպոլի ընդհարումներն էին[54]:

Դեկտեմբերի 22-ին (հունվարի 4) Անդրկովկասյան կոմիսարիատի նիստում Ե. Գեգեչկորին առաջարկեց կազմակերպել Կոմիսարիատի հատուկ պատվիրակություն, որի կազմում, բացի մահմեդական-թաթար անդամներից, առաջարկվում էր ներգրավել «չեզոք» դեմք:

Որոշվում է որպես չեզոք ներկայացուցիչ հաստատել Ա. Չխենկելիին[55]: Դա չէր բխում վերջինիս զբաղեցրած ներքին գործերի կոմիսարի պաշտոնից, թեև այդ քայլով ևս մեկ անգամ ընդգծվում էր իրադարձությունների քրեական և ոչ թե ազգամիջյան բախումների վտանգավոր իրողությունը: Ամենևին պատահական չէր, որ մի քանի օր անց ռազմածովային կոմիսարի պաշտոնում Դ. Դոնսկոյին փոխարինեց ևս մի վրացի՝ Վ. Գոբեչիան: Մահմեդական-թաթարական, բեկական վերնախավը, ինչպես և Կոմիսարիատի թաթար պաշտոնյաները գործնականում այսպես փորձում էին իրականացնել նախ հայկական տարրի թուլացման, ոչնչացման, ապա՝ նաև Բաքվի խորհրդային իշխանության դեմ ակտիվացող վրաց-թաթարական համագործակցությունը:

Հատկանշական է, որ Ժամանակավոր կառավարության կողմից հետևողականորեն ձգձգվող գործընթացը, երբ հայկական և վրացական ազգային զորամասերին զուգահեռ չէր խրախուսվում մահմեդական գնդերի ձևավորումը, իրականություն դարձավ բոլշևիկյան հե-

---

[54] Տե՛ս **Беленький С., Манвелов А.**, նշվ. աշխ., էջ 236-237:
[55] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 141, л. 292:

դաշրջումից հետո՝ չնայած այն հանգամանքին, որ մահմեդական ազգային զորամասերի գլխավոր թիրախը հենց բոլշևիկյան Բաքուն էր և Կովկասյան բանակի նահանջող բոլշևիկացած զորամասերը:

Ելիզավետպոլում պատվիրակությունը հանդիպեց թաթարական «վայրի դիվիզիայի» պետ, ազգությամբ վրացի գնդապետ իշխան Լևան Մաղալովին և մահմեդականների այլ ներկայացուցիչների, որոնք համատեղ ժողով անցկացրին: Լ. Մաղալովը հայտարարեց, որ եթե «մահմեդականները համոզված լինեին բանակի խաղաղ անցման հարցում, ապա նրանց կթողնեին զինված շարունակել ճանապարհը»[56]: Ա.-Բ. Սաֆիքյուրդսկին ավելի անկեղծ էր իր արտահայտություններում: Նա ներկաներին հիշեցնում էր, որ պատերազմի ողջ ընթացքում ռուսական բանակը ծաղրում էր մահմեդականներին՝ «հաճախ կրակելով մահմեդականների փափախներին»[57]: Սպանդը և զենքի հափշտակումը թաթար ղեկավարները հիմնավորում էին հետևյալ կերպ. քանի որ մահմեդականներն իրավունք են ստացել ունենալ իրենց բանակը՝ Մահմեդական կորպուսը, ուստի և նրանք պետք է և զենք ունենան: «Մահմեդականները մեղավոր չեն,– ասում էր Ա.-Բ. Սաֆիքյուրդսկին,– որ ստիպված բռնի կերպով են հայթայթում զենքը, քանի որ Կոմիսարիատը չի իրականացնում իր պարտականությունները: Այն ժամանակ, երբ մեր փոքր եղբայրները՝ հայերն ու վրացիները, զինված են, ավագ եղբայրը՝ անդրկովկասյան մահմեդականները, զենք չունեն»[58]: Ավանդական, փորձված թուրքական շանտաժը, ի դեմս Ա.-Բ. Սաֆիքյուրդսկու, տվյալ դեպքում լիովին բացահայտում էր Անդրկովկասյան կոմիսարիատի ուղղակի մեղսակցությունը և որ ավելի կարևոր է՝ երկդիմի ու վտանգավոր քաղաքականությունը: Վերջինս հոխորտում էր, թե թաթարները լիովին իրավունք ունեն զինաթափելու էշելոնները, քանի որ ունեն Ն. Ժորդանիայի ստորագրությունը կրող երկրամասային կենտրոնի հեռագիրը,

[56] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 28, թ. 9:
[57] Նույն տեղում:
[58] Նույն տեղում:

որն «առաջարկում էր Մահմեդական կորպուսի սպառազինման նպատակով օգտվել անցնող և զինաթափվող էշելոնների զենքից»[59]:

«Кавказское Слово» թերթը նշում էր. «Հեղինակավոր աղբյուրները մեզ հայտնել են, որ էշելոնների զինաթափման որոշումը կայացվել է երկրամասային կենտրոնի կողմից, որը ռազմածովային նախարարության գծով կոմիսար Վ. Գոբեչիային հանձնարարել էր այն ի կատար ածել»[60]:

Դեկտեմբերի 29-ին Կոմիսարիատը լսեց արտակարգ լիազորություններով օժտված Ա. Չխենկելիի զեկուցումը ելիզավետպոլյան իրադարձությունների մասին: Նա «անկարգությունների» պատճառ և սկիզբ համարում էր 219-րդ պահեստային գնդի զինաթափումը: Պարզվեց, որ այդ զինաթափումն իսկապես իրականացվել էր Թիֆլիսից ստացված «հակասական հրամանների» պարագայում, երբ չգիտես ինչու այդ զինաթափումը սկսեցին իրականացնել հարևան գյուղերից կայարան ներխուժած զինված թաթարական ջոկատները: Ա. Չխենկելին, ինչպես և սպասվում էր, հերթական անգամ ժխտում էր իրադարձությունների ազգային ենթաշերտը, չնայած որ միանգամայն ակնհայտ էր վայրագությունների առայժմ հակառուսական ուղղվածությունը: «Չեզոք» նախագահ Ա. Չխենկելին զայրույթ էր հայտնում, որ «թաթարների նկատմամբ մի քանի ինքնաղատաստան է իրականացվել», և դա այն դեպքում, երբ նահանգի գյուղերում բնաջնջվում էր ռուսական բնակչությունը: Նա եզրակացնում էր նաև, որ այդ իրադարձությունների մեջ պատվիրակությունը համակարգում չի նկատել, և որ գլխավոր պատճառը «վայրագություններ իրականացնող էշելոնների» դեմ առաջացած վրեժն էր[61]: Ամբողջ հարցը նրանում էր, որ նահանջող զինվորների զայրույթը և անգամ անարխիկ ելույթները պատասխան էին Կոմիսարիատի վրացի և թաթար կոմիսարների իրականացրած առայժմ ոչ բացահայտ գործողություններին, որոնք իրենց գագաթնակետին հասան Ճամխորի դեպքերի առթիվ:

---

[59] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 28, թ. 9:
[60] Նույն տեղում:
[61] Տե՛ս НАГ, ф. 1818, оп. 2, д. 141, л. 292:

Անվանի գեներալ Ա. Կուլեբյակինը լրացնում էր, որ Մուսավաթը իր քաղաքական դրոշի վրա սոցիալիստական կարգախոսներ էր զետեղում այնքանով, որքանով դրանք կարող էին նպաստել Կովկասի այլ ազգերի միջավայրում հեղափոխության (Փետրվարյան – Վ. Մ.) բոլոր նվաճումները մահմեդականների համար կիրառելի դարձնելու գործին. Մուսավաթը հետևողականորեն ձգտում էր տարանջատել մահմեդականներին քրիստոնյաներից: Շամխորի դեպքերից հետո մասնավորապես, երբ թուրքերը, հունվարի 30-ին խախտելով զինադադարը, վերսկսեցին հարձակումը, թաթարները դադարեցին թաքցնել նախկին զգուշավոր մարտավարությունը և իրենց ուժերը լարեցին մեկ նպատակի հասնելու համար, այն է՝ զինել անդրկովկասյան բոլոր մահմեդականներին և պայքար հայտարարել քրիստոնյաների դեմ[62]:

Քաղաքական պայքարի, իսկ հայերի պարագայում՝ Հայրենիքի պաշտպանության համար զենք էր հարկավոր, և Կռիլովի հայտնի առակի հերոսների նման յուրաքանչյուր ազգային, քաղաքական ուժ իր կողմն էր ձգում սայլը՝ իր շահն առաջ տանելով: Մահմեդական-թաթարներին ձեռնտու էր Գանձակի մոտ՝ գյուղացիական խռովությունների կենտրոնում, զինաթափել ռուս զինվորներին՝ կալվածատեր-բեկերի դեմ ուղղված տարերային ընդվզումը ճնշելու, Բաքվի օտար խորհրդային իշխանության և հայ բնակչության դեմ պայքարելու համար, վրաց մենշևիկներին այդ նույն զենքն անհրաժեշտ էր առավելապես Թիֆլիսը խորհրդայնացման իրական հեռանկարից զերծ պահելու համար: Դաշնակցությունն էլ, առաջնությունը տալով ստեղծված կացության անմիջական, երևացող կողմին, ռազմաճակատը պաշտպանելու նպատակով նպատակահարմար էր համարում զենքն առգրավել և դրանով զինել ազգային զորամասերը և այս արդարացված հարցում հակադրվում էր Ստ. Շահումյանի բոլշևիզմին: Ինչ վերաբերում էր ռուս զինվորներին, ապա նրանք շտապում էին տուն՝ արդեն բոլշևիկյան Ռուսաստան: Ռուսաստանից անջատվելը, նոր իշխանությունը չճանաչելու հանգամանքը, Կոմիսարիատի փաս-

[62] «Հորիզոն», 1918, 24 հունվարի, թիվ 16:

տացի հակառուսական գործողությունները, Ելիզավետպոլի ու Շամխորի սպանդը համարժեք պատասխան արձագանք էին ստանում, ինչն էլ փորձում էր օգտագործել Ստ. Շահումյանը և բոլշևիկացած զորամասերի աջակցությամբ տապալել Կոմիսարիատի վրացմենշևիկյան իշխանությունը:

Ազգամիջյան զինվորական խորհուրդը, որի իրավասության մեջ էր մտնում ազգային զորամասերի կազմակերպման և մատակարարման գործը, Ելիզավետպոլ ուղարկեց զրահապատ գնացք՝ ռազմաճակատից վերադարձող զինվորների զենքը բռնագրավելու և այն վրացական կորպուսին հանձնելու նպատակով: Քանի որ զինվորները հրաժարվեցին զինաթափվել, զրահագնացքի պարտիզանական ջոկատի վրացի հրամանատար, շտաբի կոմիսար Աբխազավան, հենվելով Թիֆլիսից ստացված հայտնի հեռագրի բովանդակության վրա, դիմեց մահմեդականների գնդին և մահմեդական բնակչությանը՝ աջակցություն ստանալու ակնկալիքով: Դա դարձավ էշելոնների վրա հարձակվելու ազդանշանը: Զավեշտալի է, բայց այդ վրացի հրամանատարը առաջիններից մեկը սպանվեց, երբ ուշացած փորձում էր կանխել հարձակումը[63]:

1918 թ. հունվարի 8-12-ին Ելիզավետպոլի և Շամխորի մոտ տեղի ունեցավ ռուս զինվորների զարհուրելի սպանդ, որին զոհ դարձավ ու վիրավորվեց մոտ 2000 անզեն զինվոր: Գրավվեց 15.000 հրացան, 20 հրանոթ և 70 գնդացիր: Ողջ մնացած զինվորները փախան Բաքու: Հարձակումներ տեղի ունեցան նաև Աղստաֆա, Դոլլար, Ջուլֆա, Եվլախ, Խաչմաս, Ալաբաշլի և այլ կայարաններում: Զարդերի անմիջական ղեկավարները մահմեդական ազգային կոմիտեի անդամներն էին՝ Ա. Զիաթխանովը, Ա.-բ. Սաֆիքյուրդսկին, իշխան Լ. Մաղալովը, Մ.-բ. Ռուստամբեկովը (Խ.-բ. Խաս-Մամեդովի տեղակալը) և ուրիշներ: Խ.-բ. Ռաֆիբեկովը, Ն.-բ. Ուսուհեգովը, Ա.-բ. Խաս-Մամեդովը (կոմիսարի եղբայրը – Վ. Մ.), գնդապետ Էֆենդիևը, ռոտմիստր Ուլու-

[63] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 21:

բինը նաև 1905-1907 թթ. հայկական կոտորածների ակտիվ մասնակիցներ էին[64]:

Ելիզավետպոլի և Շամխորի իրադաձությունների վրա նոր լույս է սփռում և մի շարք էական մանրամասներ պարզում Կոմիսարիատի հունվարի 14-ի նիստը[65]: Անդրկովկասյան կառավարությունը լսում էր օդաչու, պորուչիկ Տեր-Մարտիրոսյանի զեկույցը, որը Կոմիսարիատի հանձնարարությամբ թռիչք էր իրականացրել Ելիզավետպոլի և շրջակայքի վրա և այժմ ներկայացնում էր իր անմիջական տպավորություններն ու դիտարկումները:

Տեր-Մարտիրոսյանը նկարագրում էր, որ Աղստաֆայի մոտ կանգնած էր 3 էշելոն, իսկ մինչև Շամխոր կայարանն ընկած երկաթուղուն կից բնակավայրերը բռնկված էին հրդեհով, բոլոր կայարաններում երևում էին վագոնների բեկորներ[66]: Նա փաստում էր նաև, որ աէրոպլանի վրա կրակելու հետևանքով ինքը հարկադրաբար վայրէջք էր կատարել ոչ թե Ելիզավետպոլի մահմեդական թաղամասում, ինչպես նախատեսված էր, այլ Գանջինկա գետի ափին: Սպանված շտաբ-ռոտմիստր Աբխազավայի ջոկատի պրապորշչիկից նա տեղեկացել էր, որ ինչպես կոմիսար Մալխազովը, այնպես էլ թաթարական գնդի գնդապետ Լ. Մաղալովը ստացել էին էշելոնները զինաթափելու վերաբերյալ Ազգամիջյան խորհրդի հրամանները: Այստեղից էլ պարզվեց նաև, որ հայկական ազգային զորամասերին այդպիսի կարգադրություն չէր տրվել:

Մինչ Կոմիսարիատի հունվարի 14-ի նիստին վերադառնալը անդրադառնանք Բաքվի պատգամավորության խնդրին:

ՀՀԴ Բաքվի «Արև» թերթը շարունակաբար իր երկու համարներում ավելի չեզոք դիրքերից էր փորձում լուսաբանել այդ պատգամավորության առաքելությունը: Պարզվեց, որ պատգամավորությունը նպատակ ուներ այցելելու ոչ միայն Գանձակ, այլև Թիֆլիս, ինչը

---

[64] Տե՛ս **Շահումյան Ստ.**, նույն աշխ., էջ 113-114, նաև՝ «Հորիզոն», 1918, 22 հունվարի, թիվ 15:
[65] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1818, օп. 2, д. 12, лл. 30-32:
[66] Նույն տեղում, թ. 30:

մտնում էր Ստ. Շահումյանի հեռահար ծրագրերի մեջ[67]: Խումբը Հաջի-Կաբուլում, Քյուրդամիրում, Եվլախում, Զազալի քանդված կայարաններում հանդիպումներ, ժողովներ էր անցկացնում թաքար բնակչության հետ, փորձում պարզել գավառի կարիքները, բացատրել երկաթուղու կարևորությունը: Մահմեդական ազգային կոմիտեի նախագահ Ն.-Բ. Ուսուբբեկովն իր հերթին փաստում էր, որ հայկական ազգային խորհուրդը մերժել էր էշելոնների զինաթափման որոշումը, և որ 12 հազար հրացաններից և ոչ մեկը չէր անցել թաքարական կոմիտեի ձեռքը, իբր այն ամբողջությամբ առևանգել էր ամբոխը, որին «հիմա ինքը՝ կոմիտեն, չէր կարողանում սանձահարել»: «Շամխորի և Դոլլարի միջև այդ ուժերը յարձակեցին զինուորների վրայ և ստեղծեցին արեան բաղնիք»,– վկայում էր թաքար առաջնորդը[68]:

Թիֆլիսում պատգամավորությունը հանդիպեց Անդրկովկասյան կոմիսարիատի անդամների հետ: «Արևի» վկայությամբ, նախ պարզ դարձավ, որ «Կոմիսարիատն իր ամբողջ կազմով դեռ գոյություն ունի, և որ Կոմիսարիատը մասնակցություն չի ունեցել և հրաման չի տվել զինաթափել էշելոնները Գանձակում»[69]:

Հունվարի 20-ի երեկոյան երկրամասային կենտրոնի նիստը քննեց նաև Ելիզավետպոլի դեպքերը՝ լսելով Վ. Գոբեչիայի «թեթևամիտ զեկուցումը»: Նման որակման պատճառն այն էր, որ այդքանից հետո ռազմածովային կոմիսարը վրացական մենշևիզմի քաղաքականության պատճառ էր համարում այն, որ «մի զինուոր քաշեց թնդանոթի բանալին և արձակած ռումբը փշրեց զրահապատ գնացքը. այդ պատահական դէպքն էր, որ պատճառ դարձաւ արիւնահեղութեան»[70]:

Համընդհանուր տագնապի և իշխանությանը սպառնացող վտանգի մասին էր վկայում Կոմիսարիատի հունվարի 31-ի որոշումը, որով նախագահ Ե. Գեգեչկորիին տրվում էին Թիֆլիսի, Անդրկովկասի, ինչպես նաև երկրամասում գտնվող բոլոր զինված ուժերի վրա

---

[67] Տե՛ս «Արև», 1918, 30 հունվարի, թիվ 22:
[68] Տե՛ս նույն տեղում:
[69] Տե՛ս նույն տեղում, 31 հունվարի, թիվ 23:
[70] Նույն տեղում:

վերահսկելու լիազորություններ, փաստորեն՝ դիկտատորի պարտականություններ[71]:

Եվս մեկ մասնավոր փաստ խոսում է այն մասին, որ Թիֆլիսի կառավարությունը սարսափով էր սպասում էշելոններին, որոնց անձնակազմը, բացի բոլշևիկներին հարելուց, արդեն վրեժով էր լցվել իշխանությունների հանդեպ: Հունվարի 31-ին Թիֆլիսի քաղաքային դումայի նախագահ Ա. Լոմտատիձեն ընդառաջ գնաց քաղաքին մոտեցող էշելոններին՝ 300 վերստի վրա (300 կմ-ից ավել – Վ. Մ.)՝ զինվորների հետ զրուցելու նպատակով: Հանրահավաքում նա փոխշահավետ առաջարկ արեց, այն է՝ քաղաքային ինքնավարությունը զինվորների տեղաբաշխման և պարենային կարիքները կլուծի՝ դրա փոխարեն խնդրելով քաղաքում հեղափոխական կարգի պահպանում և բնակիչների հանդեպ խաղաղ վերաբերմունք: Զինվորական կոմիտեն Ա. Լոմտատիձեին հայտարարեց, որ «զինվորները խաղաղ բնակչության հանդեպ ոչինչ չունեն, բայց անհրաժեշտ են համարում Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանության տապալումը»[72]:

Ելիզավետպոլի իրադարձությունները լուսաբանելիս, մեր կարծիքով, անպայման պետք է հաշվի առնել նահանգում տիրող սոցիալ-տնտեսական անմխիթար իրավիճակը, ինչը բոլշևիկյան հեղաշրջման ու անիշխանության խորացման պայմաններում մահմեդական բնակչությանը ոտքի հանեց միաժամանակ ռուսների ու նրանց հետ նույնացվող բոլշևիկ զինվորների դեմ:

1918 թ. հունվարի 4-6-ի ընթացքում Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի տասնյակ թաթարաբնակ գյուղերի զինված գյուղացիներ անխնա հաշվեհարդար տեսան 4-րդ տեղամասի շուրջ 30 կալվածատերերի, մասնավորապես Զյուլգադարովների, Կարաբեկովների, Շամխորսկիների հետ: Նրանցից շատերը սպանվեցին, կալվածքները հրկիզվեցին, թալանվեցին: Ելիզավետպոլի կոմիսարի հունվարի 21-ի հաղորդագրությունը հայտնում էր, որ Կարաբեկովների ընտանիքից սպանվել է 21 մարդ: Զյուլգադարովների հետ հաշվե-

[71] Տե՛ս «Кавказское Слово», 1918, 2 февраля, № 26:
[72] Տե՛ս նույն տեղում:

հարդարին մասնակցում էին 500 զինված գյուղացիներ: «Բարձրացել է ագրարային շարժումը,– Անդրկովկասյան կոմիսարիատին տագնապով հայտնում էր Թաուզի կալվածատեր Իսկենդերբեկովը,– մորթվել են Զյուլգադարովների, Կարաբեկովների ընտանիքերը, մնացածը շրջապատված են, պաշտպանություն ենք խնդրում»[73]:

«Հունվարի 9-12 դեպքերի օրերին,– գրում էր ականատես Ստ. Շահումյանը,– Ելիզավետպոլի ամբողջ հայ բնակչությունը, Շուշիի, Ղազախի և այլ գավառների հայ գյուղացիությունն ապրում էին կոտորածի սպասումի մղձավանջային օրեր: Հունվարի 10-ին Ելիզավետպոլում մուսուլմանները հանձնել են սպանված հայերի 13 դիակ: 12-ին նորից հարձակումներ են եղել հայերի վրա, որի հետևանքով մի քանի տասնյակ սպանվածներ են եղել»[74]:

Մահմեդական բնակչության ագրեսիվ վարքագիծը հարկադրեց հայ բնակչության մի մասին (ոչ բանակին – Վ. Մ.) ներքաշվել այդ ընդհարումների մեջ: Բոլշևիկների կողմից ղեկավարվող ռազմական գործողություններում մահմեդականները տվեցին 3000, հայերն ու ռուսները՝ 1200 զոհ: Չեզոք կողմի վկայությամբ՝ գիտակից հայերը, ամեն կերպ խուսափելով ընդհարումները ազգամիջյան ջարդերի ոլորտ ներքաշելու հեռանկարից, փորձում էին կանխել աղետը:

1917 թ. դեկտեմբերի կեսերից մահմեդական խռովությունների, ավազակային հարձակումների ալիքը հասավ Ախալցխա՝ ևս մի երկաթուղային կարևոր հանգույցի, որը հայ-թաթարական համատեղ բնակչության շրջան էր[75]:

Անդրկովկասյան երկաթուղու խոշոր հանգույցների, Ելիզավետպոլի, Շամխորի իրադարձություններին անդրադարձան կուսակցությունները:

1918 թ. փետրվարի 26-ին Բաքվի հայկական և թաթարական ազգային խորհուրդները ձևավորեցին միասնական հաշտեցնող հանձնաժողով: Հայկական կողմը ներկայացնում էին Մ. Շաթիրյանը

---

[73] Տե՛ս **Искендеров М. С.**, Из истории борьбы коммунистической партии Азербайджана за победу советской власти, Баку, 1958, с. 184-186:
[74] Տե՛ս **Շահումյան Ստ.**, նույն տեղում, էջ 116-117:
[75] «Շարժում», Ախալցխա, 1918, 18 փետրվարի, թիվ 13:

(ՀՅԴ համակիր), Հ. Տեր-Միքայելյանը (ՀԺԿ), Հ. Մանանդյանը, (անվանի պատմաբան Հակոբ Մանանդյանը – Վ. Մ.), Գ. Մելիք-Շահնազարյանը, Գ. Եվանգուլյանը (անկուսակցականներ), իսկ թաթարականը՝ Բ.-Բ. Ջևանշիրը, Մ. Ասադուլլանը, Ա. Աշուրովը (մուսավաթականներ), Սաֆարալիբեկովը[76]: Բաքու ժամանեցին նաև Սեյմի ներկայացուցիչներ Ա. Սահակյանը, Խ. Համասփյուռը, Հ.-Բ. Շախթախթինսկին, Մ. Սեիդովը և Գ. Մախարաձեն (նախագահ)[*]: Հարկ է նշել, որ թաթարական կողմի աննախադեպ զիջումը դարձյալ բացատրվում էր Բաքվում հայ զինվորականության կուտակումներով:

Հանձնաժողովը նպատակ ուներ Գանձակում կանխելու տարաձայնությունների խորացումը և հնարավորություն ստեղծելու Բաքվում կենտրոնացած հայ զինվորների համար՝ շարժվելու դեպի Թիֆլիս: Հանձնաժողովը Բաքվից դուրս եկավ մարտի 1(13)-ին[*]: Հայոց ազգային խոհուրդը իր ներկայացուցիչներին հրահանգում էր. ա) կարգավորել հարաբերություններն այն պայմանով, որ հայ զինվորները ոչ մի պարագայում չզինաթափվեն, բ) բացել երկաթուղագծի երթևեկությունը[77], ինչը կնպաստեր Թիֆլիսից հայկական զորամասերը Արևմտյան Հայաստան ուղարկելու Ռոստոմի, Ստ. Շահումյանի, գեներալ Հ. Բագրատունու ծրագրին: Քննարկումներից հետո հայ պատգամավորները որոշեցին. ա) արդարացի համարել թաթարների պահանջը և 269-րդ գնդի գույքը հանձնել նրանց, բ) բայց նկատի ունենալ, որ այդ որոշումից հետո թաթարները 1) հրաժարվել են պաշտպանել 1914 թ. սահմանները Թուրքիայի հարձակման դեպքում, 2) հայերին խանգարում են դա իրագործել՝ փակելով հաղորդակցության ուղիները, 3) տենդորեն զինվում են, որպեսզի օգնեն թուրքական ներխուժմանը Կովկաս, 4) խանգարում են հայերին, կենտրոնական զինվորական խորհրդի որոշման համաձայն, ստանալ հասանելիք ռազմամթերքը (Բաքվի Սալյանսկի գնդի զինամթեր-

---

[76] Տե՛ս **Մելիք-Եոլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 116:

[*] **Գ. Մախարաձեն** այդ ժամանակ Թիֆլիսի զինապահեստի (Արսենալ) պետն էր:

[*] **Մ. Շաթիրյանի** վկայությամբ պատվիրակությունը Բաքվից դուրս է եկել մարտի 2-ին և հասել է Գանձակ մարտի 4-ին:

[77] Տե՛ս **Գիլխանդանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 90:

քի ստանալու հարցը), 5) թաթարները պատերազմական դրության մեջ են հայերի հետ, ուստի հայկական կողմը իրավունք ունի չհանձնել «թուրքերին» 269-րդ գնդի զենքն ու զինամթերքը: Հայկական պատգամավորությունը որոշեց 3,5 մլն ռուբլի (ոսկով) արժողությամբ զինվորական գույքը հանձնել թաթարներին, իսկ 2800 հրացանները՝ թողնել հայերի մոտ[78]: Հարկ է նշել, որ Գանձակի հայ բնակչությունը ցասումով ընդունեց այս որոշումը և առավելագույն զոհերի պարագայում պնդում էր չզիջել: Մարտի 7-ին Դաշնակցության կոմիտեի նիստում ներկա 28 հոգուց 21-ը կողմ քվեարկեց վերոհիշյալ առաջարկներին՝ մարտի 9-ին դրանք ներկայացնելով թաթարական պատգամավորությանը: Մ. Շաթիրյանի դիտարկմամբ Գանձակի հայության և նույնիսկ կուսակցական գիտակից շրջանների մոտ դրսևորվեցին վտանգավոր ու հակահասարակական մտքեր, որոնց «հետեւանքը սովորապէս լինում է անիշխանութիւնը»: Նրա կարծիքով՝ մեծ քանակությամբ զենքի հանկարծակի հայտնվելը հայերի ձեռքին առաջացրել էր քաոսային տրամադրություն, որը, դեպքերի մասնակցի վկայությամբ, զսպվեց երկու խմբապետների միջոցով: Առաջինը «Բարի լույս» մականունով արևմտահայ գործիչն էր, որն ուներ 220 զինվոր, մյուսը՝ Ղարաբաղցի Օհաննեսը՝ 160 ղարաբաղցի ձիավորներով[79]: Բանակցություններից հետո մարտի 9-ին հաշտություն կնքեց և անգամ պայմանագիր ստորագրեց. որոշվեց զենքը և զինամթերքը թողնել հայերին, իսկ ոչ ռազմական գույքը հանձնել թաթարներին: Դրա դիմաց թաթարները Սեյմի պատվիրակության միջնորդությամբ Թիֆլիսի զինապահեստից պետք է ստանային 500 հրացան[80]:

Թեև Գանձակում ազգամիջյան հարաբերությունները ժամանակավորապես խաղաղվեցին, սակայն երկաթուղագիծը չբացվեց, ինչպես նաև չվերականգնվեց հաղորդակցությունը: Պայմանագրի հայկական նախագծին ավելացվեցին կետեր՝ նվիրված Երևանի նա-

---

[78] Տե՛ս **Շաթիրեան Մ.**, Դրուագներ մօտիկ անցեալից, «Հայրենիք», Պոսթըն, 1923, թիվ 7, մայիս, էջ 118:
[79] Տե՛ս նույն տեղում, էջ 120:
[80] Տե՛ս **Մելիք-Եօլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 116:

հանգի և Կարսի մարզի ճանապարհների և թուրքական գյուղերի տեղահանության հարցերին[81]: Դրա փոխարեն թաթարների կողմից Հայոց ազգային խորհրդին տրվեցին առաջարկներ, ըստ որի՝ հայ զինվորները փակ վագոններով և մահմեդական պահակախմբի ուղեկցությամբ պետք է հեռանային Գանձակից: Առերևույթ հոգատարության տակ թաքնված էր հայության հանդեպ ատելության և ծաղրանքի գործոնը, ինչու չէ, նաև Շամխորի նման նրանց կոտորելու հեռանկարը: Թաթարական առաջարկներից մեկը այսպիսի բովանդակություն ուներ. ***«Դուք՝ որպէս աւելի լաւ կազմակերպուած ու քաղաքակրթուած ազգ, պարտական էք օգնել մեզ, որ մեր ժողովուրդը նոյնպէս կազմակերպուի քաղաքականապէս ու թողնէ իր աւազակաբարոյ հակումները»***[82] (ընդգծումն իմն է – Վ. Մ.): Պարզ էր, որ Բաքվի թաթարական ղեկավարները Գանձակից արդեն հատուկ հրահանգ էին ստացել՝ չբացել ճանապարհը և թույլ չտալ Բաքվի հայ զինվորներին անցնել Երևանի նահանգ ու Կովկասյան ռազմաճակատ: Հայոց ազգային խորհրդին մնում էր հեռագիր հղել Սեյմի նախագահությանը, բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին, Կոմիսարիատին՝ հայկական, վրացական, ռուսական ազգային խորհուրդներին՝ նկարագրելով Բաքվի իրադրությունը, Շամախիի, Գյոքչայի, Նուխիի, Արեշի և այլ շրջանների հայ բնակչության կոտորածները[83]: Հասկանալի է, որ այս ամենը ոչ մի դրական արդյունք չտվեց: Մարտի 14-ին պատվիրակությունը վերադարձավ Բաքու՝ իր հետ տանելով շուրջ 300 հայ կանանց ու երեխաների[84]:

«Մեծ դժվարությամբ կարողացանք Գանձակի արիւնահեղութեան առաջն առնել,– գրում էր Մարտին Շաթիրյանը,– եւ մեզնից ով կարող էր գուշակել, որ միայն մի շաբաթ յետոյ՝ ամսի 18-ին, պէտք է բռնուէին Բագուի սոսկալի կռիւները»[85]:

---

[81] Տե՛ս **Մելիք-Եոլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 123:
[82] Նույն տեղում, էջ 115:
[83] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2000, էջ 18:
[84] Տե՛ս **Շաթիրեան Մ.,** նշվ. աշխ., էջ 123:
[85] Նույն տեղում:

Միանգամայն հիմնավոր ենք համարում էսէռների դիրքորոշումը, երբ Շամխորի դեպքերը դիտարկվում էին որպես «Կովկասյան բանակի դեմ ուղղված քաղաքական միջոց»[86]: Բացի այն, որ եզրահանգումը հենվում էր Կոմիսարիատի և երկրամասային կենտրոնի վրացական մենշևիկների մեծամասնության վարած հետևողական հակառուսական քաղաքականության երկամսյա վերլուծության վրա, էսէռական ռուսամետ կողմնորոշումը հիմնավորվում էր առավելապես նրանով, որ կազմակերպված սպանդն ուղղված էր ռուսական՝ առայժմ բոլշևիկյան զորամասերի դեմ: Փաստորեն՝ այս արմատական հարցում էսէռների և Կովկասի բոլշևիկների, մասնավորապես Ստ. Շահումյանի մոտեցումները համընկնում էին և միմյանց փոխլրացնում: Էսէռները ևս Շամխորի դեպքերը կապում էին երկրամասում իշխանության հարցի, ավելի կոնկրետ՝ Սարիղամիշի բոլշևիկյան զինվորական-հեղափոխական կոմիտեի կողմից Անդրկովկասյան կոմիսարիատին ներկայացված վերջնագրի հետ: Հայտնի է, որ Կոմիսարիատի տապալման և Անդրկովկասը խորհրդայնացնելու ծրագիրը պաշտպանում էր հենց Ստ. Շահումյանը: Միաժամանակ Կովկասի էսէռներն էլ մոռանում էին կամ անտեսում, որ իրենց կուսակիցները՝ Դ. Դոնսկոյը, Վ. Գոբեչիան*, եթե ոչ նախաձեռնող, սակայն զինաթափման հարցում նախապատրաստված համերաշխ աշխատանք էին տարել մենշևիկների հետ:

Անդրկովկասի կոմիսարիատը դեկտեմբերի 22-ի նիստում հանձնարարեց ռազմածովային նախարարության գծով կոմիսարին շուտափույթ կերպով կանոնավորել զինվորական էշելոնների երթևեկությունը և թաթարական զորամասերին ռազմամթերք տրամադրել: Հաստատվեց նաև թաթարական կորպուսի կազմակերպման նախագիծը, որը ներկայացվել էր թաթարական զինվորական ազգային կենտրոնական խորհրդի կողմից[87]:

---

[86] Տե՛ս «Աշխատավոր», Թիֆլիս, 1918, 2 փետրվարի, թիվ 14:

* Անդրկովկասյան կոմիսարիատի ռազմածովային նախարարության գծով կոմիսարներ:

[87] Տե՛ս «Հորիզոն», 1917, 24 դեկտեմբերի, թիվ 271:

Ամփոփելով՝ եզրակացնում ենք, որ Ելիզավետպոլի մահմեդական գյուղացիական խռովությունները, ապա և Բաքվից մինչև Թիֆլիս երկաթուղային հանգույցների մոտ կատարված ոճրագործությունները առավել մեծ ու համապարփակ հիմնահարցի՝ երկրամասում իշխանության խնդրի բաղկացուցիչներից են:

Կովկասյան ռազմաճակատից հեռացող ռուսական զորամասերի զենքն ու զինամթերքը Անդրկովկասյան կոմիսարիատին և զ. ու բ. պատգամավորական խորհրդի երկրամասային՝ էսէռա-մենշևիկյան հակաբոլշևիկյան կենտրոնին նախ և առաջ անհրաժեշտ էին Բաքվի խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար: Թեև վրացական մենշևիզմը և Ն. Ժորդանիան զորամասերի զինաթափումը հիմնավորում էին՝ ելնելով գարնանը սպասվող թուրքական արշավանքին դիմագրավելու և այդ նպատակով ազգային զորամասերը զինելու նկատառումներից, սակայն առաջնայինը մնում էր Կոմիսարիատի իշխանության պահպանման հարցը ու այդպիսով նաև բոլշևիզմի դեմ պայքարը: Անցնելով առաջ՝ նշենք, որ 1918 թ. գարնանը վրացական զորքը գրեթե դիմադրություն ցույց չտվեց այդ թուրքական արշավանքին, իսկ հայկական զորամասերը, որոնք Շամխորի մոտ չէին գնդակահարում ռուս զինվորներին ու առևանգում զենքը, միայնակ իրականացրին ռազմաճակատի պաշտպանության գործը:

Ելիզավետպոլն ու Շամխորը, փաստորեն, դարձան 1917 թ. նոյեմբերից սկսված իշխանության համար մղվող լարված, առայժմ ժողովրդավարական պայքարի վայրագ հանգուցալուծումներից մեկը, երբ զենքի համար պայքարը վերաճեց քաղաքական և ազգամիջյան բացահայտ առճակատման: Սկիզբ դրվեց մի գործընթացի, որն ավարտվեց միայն 1918 թ. սեպտեմբերին՝ թուրքերի կողմից Բաքուն գրավելուց հետո: Շամխորի սպանդից հետո է, որ Ստ. Շահումյանը գաղտնի անցավ Թիֆլիս և առաջին անգամ փորձեց Դաշնակցության զորամասերի աջակցությամբ համատեղ իրականացնել իր ծրագիրը՝ Կոմիսարիատի տապալումը:

ՌՍԴԲ(բ)Կ Թիֆլիսի կոմիտեն 1918 թ. փետրվարի 10-ին Ալեքսանդրյան այգում սպանվածների թաղման կապակցությամբ հանդես եկավ կոչով: Մեզ համար կարևոր է այն, որ քննադատելով

Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականությունը՝ կոչում ընդգծվում էր, որ «այդ կառավարության խղճի վրա է Շամխորում, Խաչմասում, Սանդարում սպանված անմեղ զինվորների արյունը»[88]:

Գ. Խաչապուրիձեն նշում էր՝ «Ն. Ժորդանիայի և Ն. Ռամիշվիլու անմիջական կարգադրությամբ Գյանջայի և Թիֆլիսի միջև, Շամխոր կայարանի մոտ այդպիսի մի զինաթափման ժամանակ տեղի ունեցավ բոլշևիկամետ ռուս զինվորների՝ իր դաժանությամբ բացառիկ գնդակահարություն: Մենշևիկները, որոնք արյունով ճանապարհեցին զինվորներին, բարձրացան դավաճանության նոր աստիճանի»[89]:

Ուշադրության է արժանի այն մոտեցումը, որ ազգությամբ վրացի, կոմունիստ հեղինակ Գ. Խաչապուրիձեն մեղադրանքն ուղղեց հենց վրաց ազգայնական, մենշևիկ ղեկավարների դեմ. խոսք անգամ չէր ասվում Կոմիսարիատի կազմում ՀՅԴ գործիչների մասին, չէր դրվում հավասարության նշան:

Իրադարձությունների զարգացումն անհերքելիորեն ապացուցում էր, որ Ելիզավետպոլի և Շամխորի արյունոտ դեպքերի գլխավոր մեղսակիցները վրացական մենշևիզմի առաջնորդներն էին և մահմեդական ազգային կոմիտեն, այսինքն՝ Անդրկովկասի կոմիսարիատում իշխանությունը զավթած վրաց-մահմեդական ազնվականական-խանական մեծամասնությունը: Այդ իբր «արդարացված», բայց հանցավոր գործն իրականացնում էին ոչ թե «ավազակները», այլ մահմեդական բնակչության հսկայական զինված ամբոխը, որոնց ղեկավարում էր մահմեդական ազգային կոմիտեն, և որոնք վստահ էին, որ այդ ամենը կատարվում է անդրկովկասյան իշխանությունների հրամանով:

Ի դեպ, Վրաստանի առաջին հանրապետությունում շրջանառվում էր ևս մի մոտեցում:

1915 թ. հոկտեմբերին Բաքվում կայացած ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների խորհրդակցության ընդունած «Կովկասում

---

[88] Տե՛ս **Хачапуридзе Г. В.**, Борьба за пролетарскую революцию в Грузии, Очерки, 1917-1921, Тбилиси, 1936, с. 398-399:
[89] Նույն տեղում, էջ 91:

ազգությունների միջև հարաբերությունների մասին» բանաձևում նշվում էր. «Վրացական և մահմեդական ազնվականությունը, որը սովոր էր Կովկասում ռուսական իշխանության առաջին լակեյների դերին, չէր կարող հաշտվել փոխարքայի վրա հայկական բուրժուազիայի գերակշիռ ազդեցության հետ, ուստի և դաշինք կնքելով՝ ձգտում էր վարկաբեկել հայերին…, նրանք ձգտում էին իրենց դասակարգային մրցակցության մեջ ներգրավել ժողովրդական զանգվածներին և մահմեդականների ու վրաց ժողովրդի մեջ վառել չարություն և ատելություն ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ»[90]:

Կարևորում ենք այն հանգամանքը, որ խորհրդակցությունը նախագահում էր Ստ. Շահումյանը, որը Թուրքիայի դեմ հայկական կամավորական շարժման կազմակերպման աղետալի հետևանքների հարցում անխնա քննադատության էր ենթարկում նաև հայ բուրժուազիային ու Դաշնակցությանը, բայց միաժամանակ կարողանում էր հասնել նման հայանպաստ բանաձևի ընդունմանը: Ավելին, այս հատվածն իր մենագրության մեջ դեռ 1936 թ. մեջբերել է վրաց հեղինակ Գ. Խաչապուրիձեն, որի օբյեկտիվ գնահատականը վրաց-թաթարական հակահայկական դաշինքի հարցում իր գագաթնակետին հասավ 1917-1918 թթ. ընթացքում:

1920 թ. Թիֆլիսում լույս տեսավ «Ղարիբի» կեղծանունով Պյոտր Գելեշվիլիու «Կարմիր գիրքը», որը Գրիգոր Չալխուշյանի հանրահայտ «Կարմիր գրքի» քննադատության մի փորձ էր: Այն մեր օրերում նույնիսկ կարելի է վերահրատարակել որպես Հայոց պատմության կեղծարարության «դասական» քրեստոմատիա: Ս.-դ. մենշևիկ Պ. Գելեշվիլին ոչ միայն կեղծում, լուտանքներ էր թափում հայ ժողովրդի, նրա ազգային-քաղաքական ուժերի, մասնավորապես Դաշնակցության հասցեին, այլև ի հայտ էր բերում քաղաքական անգրագիտության մի աննախադեպ ներկապնակ, որն այսօր նպատակահարմար է հրամցնել հենց վրաց ընթերցողին:

Հպանցիկ կերպով, մեկ-երկու պարբերությամբ անդրադառնալով նաև Շամխորի դեպքերին՝ նա, կեղծելով նույնիսկ 1917-1918 թթ.

---

[90] Տե՛ս **Хачапуридзе Г. В.**, նշվ. աշխ., էջ 34, 375:

իշխող քաղաքական ու հանրային կարծիքը, եզրակացնում էր, որ այդ ամենը բոլշևիկների և ռուս զինվորների ձեռքի գործն էր: «Լքելով մարտական դիրքերը՝ զինվորը, զենքը ձեռքին, գլուխը կորցրած, թալանում ու ոչնչացնում էր ամեն ինչ իր ճանապարհին, ամրություններ-ը, գործող երկաթուղին»[91],– գրում էր նա:

Իր իսկ հարցադրմանը, այն է՝ «ինչպե՞ս որոշակի հունի մեջ դնել այդ մոլեգնող տարերքը, ինչպե՞ս զինաթափել այն և փրկել երկրամասը կործանումից»[92], նա չի պատասխանում և, փաստորեն, լռելյան արդարացնում է իր կուսակից առաջնորդների և մուսավաթականների բարբարոսությունը: Այս առումով տեղին է Ստ. Շահումյանի հարցադրումը՝ «այդ ի՞նչ «բռնի» զինաթափում էր, ինչո՞ւ էր այն կատարվում ոչ թե Թիֆլիսում, այլ Աղստաֆայում ու Ելիզավետպոլի նահանգում, և ինչո՞ւ էր «բռնի» զինաթափության համար Թիֆլիսից զրահապատ գնացք գնում»[93]:

Այսօր Ստ. Շահումյանին կարող ենք պատասխանել. այդ ամենը կատարվում էր, որպեսզի մահմեդական-թաթարների ձեռքով և աջակցությամբ իրականացվեր այն դժվարին գործը, ինչը վրացիներ-ը չէին կարող իրագործել. Թիֆլիսից հեռու պահեին և շեղեին բոլշևիկացած Կովկասյան բանակի զորամասերի նահանջի ուղին, որպեսզի թույլ չտային Կոմիսարիատի տապալում և վերջապես պահպանեին ձեռք բերած հեգեմոնիան երկրամասում: Եվ եթե Ստ. Շահումյանը տարակուսանք էր հայտնում Դաշնակցության կապակցությամբ, որի կոմիսարներն այդ նույն իշխանության անդամներ էին, ապա մեզ համար գոնե պարզ է այն հանգամանքը, որ միասնական, սոցիալիստական կոչվող կառավարության կազմում հայ ազգային-դեմոկրատական կուսակցությունը և գոնե նրա ղեկավար մեծամասնությունը հակաբոլշևիկյան անթաքույց անհանդուրժողականության ալիքի վրա օբյեկտիվորեն աջակցում էր վրաց-մահմեդական խմբավորմանը՝ էապես թուլացնելով ազգային շահի պաշտպանության գործը:

---

[91] Տե՛ս Карибы, Красная книга, Тифлис, 1920, с. 124:
[92] Տե՛ս նույն տեղում, էջ 125:
[93] **Շահումյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 111:

բ) Սարիղամիշի բոլշևիկյան կենտրոնի և զորամասերի գործոնը

1917 թ. նոյեմբերի վերջից Կոմիսարիատի իշխանության դեմ պայքարի կենտրոն դարձավ նաև Սարիղամիշը, որտեղ ի հաշիվ Կովկասյան ռազմաճակատից թիկունք վերադարձող զորամասերի՝ գնալով ավելի ու ավելի մեծ թվով բոլշևիկացած զորքեր էին կենտրոնանում:

Սարիղամիշի զինվորների պահանջների մեջ առանձնանում էր այն կետը, ըստ որի՝ մինչև իշխանության վերջնական ամրապնդումը անընդունելի էր համարվում բանակի ցրումը: Այդ բանաձևի հայանպաստ ուղղվածությունը նրանում էր, որ այդպիսով հնարավոր էր դառնում թեկուզ և բոլշևիկացած բանակի մի մասը պահել Անդրկովկասում՝ նախ՝ ռազմաճակատը չդատարկելու, թուրքական արշավանքին դիմակայելու և երկրորդ՝ Կոմիսարիատի դեմ պայքարելու նպատակով: Բացի Սարիղամիշից՝ Անդրկովկասյան կառավարության դեմ էին արտահայտվում նաև Ալեքսանդրապոլի, Կարսի, Կաղզվանի և այլ շրջանների զինվորները: Թիֆլիսի իրադարձությունների զուգահեռ դրանց նախօրեին Էրզրումում ևս կանխվեց բոլշևիկների հաղթանակը: Նոյեմբերի 19-ին (դեկտեմբերի 2) տեղի ունեցավ Էրզրումի կայազորի զորամասերի, կուսակցությունների, բանակային կոմիտեի ներկայացուցիչների արտակարգ նիստ, որն ընդունեց հակաբոլշևիկյան որոշում. խորհրդակցությունը անթույլատրելի համարեց զինված ելույթը[94]:

Ուժերի հարաբերակցության տեսանկյունից Էրզրումից ավելի նպաստավոր վիճակ, հօգուտ բոլշևիկների, չէր կարելի ենթադրել, սակայն չունենալով դարձյալ կենտրոնից եկող վճռական գործողությունների վերաբերյալ ցուցում՝ տեղական բոլշևիկները վարանեցին, Պետրոգրադի, Մոսկվայի համեմատ անվճռականություն դրսևորեցին, առավել ևս, որ արդյունքում Թիֆլիսում մի քանի օր հետո դրության փաստական տերը դարձան մենշևիկները:

---

[94] Տե՛ս РГВИА, ф. 2168, g. 1, գ. 485, թ. 112:

Ռազմաճակատի գծում այդ «անվճռականությունը» կարելի է բացատրել նրանով, որ թեկուզ զանգվածային բոլշևիկացման պայմաններում, այնուամենայնիվ առկա էր համապետական շահի, տվյալ դեպքում՝ հսկայական տարածքներ գրաված Կովկասյան բանակի պահպանման ու ռազմաճակատի պաշտպանության գործոնը: Գոնե ռուսական բարձր հրամանատարության համար դա առայժմ հասկանալի, առաջնային և մոտակա խնդիր էր և գերակայում էր երկրամասում իշխանության գրավման հարցի նկատմամբ: Այլ խոսքով՝ ռազմաճակատային գործոնն ազդում էր անգամ զինվորական զանգվածների վրա. որոշակի կարգապահություն էր պահպանում:

«Վրաստանի արմատական-դեմոկրատական գյուղացիական կուսակցության» օրգան «Չվենի Ռեսպուբլիկա» (Մեր հանրապետությունը) լրագիրը նշում էր, որ «Վրաստանը շրջապատուած է մահմեդական երկրներով, դրանք են՝ Պարսկաստանը, Թուրքիան, Ղրիմը, չեչէնների, չէրքեզների և լեզգիների երկրները», և այդ հանգամանքից դրդված՝ եզրակացվում էր, որ «Վրաստանը պէտք է մերժէ ռուսական օրիենտացիան և ամուր կապ հաստատի Կովկասի մահմեդականների ու իր դրացիների հետ: ***Այժմեան մահմեդականները հների նման չեն, որովհետեւ ժամանակը մեղմացրել է դրանց բարքերը»*** (ընդգծումը մերն է – Վ. Մ.)[95]:

Առանձնացնելով Կովկասի թաթար-մահմեդականներին վրացական այս կուսակցությունը ևս Կովկասի մահմեդականների հետ դաշնակցելու նպատակ էր առաջադրում՝ նախ անջատվելով Ռուսաստանից, քանի որ «Վրաստանի ձեռքը այնքան երկար չէ, որ այդ երկրների վրայով հասնի մինչև ռուսները»[96], ապա և «դրացի» կոչվող, բայց անունը չտրվող հայերի դեմ հանդես գալ թաթարների հետ համատեղ: Ստ. Շահումյանի մոտ լրջագույն տագնապ էր առաջացնում այն հանգամանքը, որ հեղափոխական-սոցիալիստական կուսակցություններից ձևավորված Կոմիսարիատը «փքվում էր նրանով, թե նա «սովետական» իշխանություն է հանդիսանում»[97]: Նա նկատի

[95] Տե՛ս РГВИА, ֆ. 2168, ց. 1, գ. 485, թ. 112:
[96] Նույն տեղում:
[97] Տե՛ս **Շահումյան Ստ.,** նշվ. աշխ., էջ 70:

ուներ խորհուրդներում էսէռների և մենշևիկների մեծամասնության գործոնը, ինչը բանակային, ինչպես և երկրամասի բանվորական պատգամավորական խորհրդի համագումարների ընդունած բանաձևերում արմատապես փոխվեց՝ հօգուտ ձախ էսէռների ու բոլշևիկների: Ստ. Շահումյանի կուսակցական մոտեցումը միանշանակ էր. «Կոմիսարիատը տեղին կը լինէր, եթե նա ճանաչեր ժողովրդական կոմիսարների խորհուրդը»[98]: Նման վստահությունը բխում էր համագումարում ձախ էսէռների ու բոլշևիկների ազդեցությունից: Ընթացիկ քաղաքական իրադրության հարցի մասին ընդունվեց նրանց բանաձևը, որը մերժում էր Կոմիսարիատի իշխանությունը և ճանաչում Ժողկոմխորհի իշխանությունը: Դեկտեմբերի 21-ին այդ բանաձևի ընդունումով, փաստորեն, համագումարը երկրամասում հռչակեց խորհրդային իշխանություն: Ընտրվեց 100 հոգուց բաղկացած երկրամասային նոր խորհուրդ՝ հայազգի բոլշևիկ Գ. Ղորղանյանի (Կորգանով) նախագահությամբ: Իշխանության համար մղվող խաղաղ, բայց անզիջում պայքարի մասին է վկայում ձայների հարաբերակցությունը. խորհուրդը ներկայացնում էին 52 բոլշևիկներ ու ձախ էսէռներ և 48 հակաբոլշևիկյան ներկայացուցիչներ: Դեկտեմբերի 28-ին Բանակային խորհուրդն ընտրեց գործադիր մարմին՝ Ռազմահեղափոխական կոմիտե՝ դարձյալ Գ. Ղորղանյանի գլխավորությամբ: Քաղաքական հենարան ունենալու նպատակով ՌՀԿ-ն գործելու էր Բաքվում[99]: Միաժամանակ հայտնի է, որ Կոմիսարիատը ձեռնամուխ էր եղել նախահարձակ գործողությունների, մասնավորապես Թիֆլիսում: Ինչպես այժմ, այնպես էլ 1918 թ. հունվար-փետրվարին, հատկապես Սարիղամիշի զորամասերի ակտիվացման շրջանում վրացի մենշևիկներին նկատելիորեն անհանգստացնում էր Թիֆլիսում Ստ. Շահումյանի ներկայությունը: Երբ համագումարում քննարկվեց Հյուսիսային Կովկասում տիրող դրության հարցը, և բոլշևիկների առաջարկով որոշվեց այնտեղ ուղարկել արտակարգ լիազորություններով օժտված պատվիրակություն, ուշագրավ է, որ մենշևիկներն ու

---

[98] Տե՛ս «Հորիզոն», 1917, դեկտեմբեր, թիվ 271:

[99] Տե՛ս **Церцвадзе М. В.**, Революционное движение в Грузии в 1914-1917 гг., часть 2-ая (1917 г.), Тбилиси, 1960, с. 297:

էսէռները պնդեցին, որ այդ պատվիրակությունը գլխավորի Ստ. Շահումյանը: Դրանով նրանք ձգտում էին ազատվել հեղինակավոր բոլշևիկ ղեկավարից և Հյուսիսային Կովկասում իրապես վտանգել նրա կյանքը: Կռահելով Ե. Գեգեչկորիի մեքենայությունը՝ համագումարը մերժեց այդ առաջարկը[100]:

Բոլշևիկների առաջարկով որոշեց նաև հեռագիր ուղարկել Բաքվի խորհրդին՝ հայտնաբերելու և բռնագրավելու 7 վագոն զենքն ու զինամթերքը, որը Կոմիսարիատն ուղարկել էր Հյուսիսային Կովկաս: Այս փաստը ևս վկայում էր, որ Անդրկովկասում իշխանության համար պայքարը սուր և բացահայտ կերպարանք էր ձեռք բերում և հասել էր իր գագաթնակետին, նաև այն, որ Կովկասյան ռազմաճակատի ու այդպես Արևմտյան Հայաստանի պաշտպանության համար «հատկացված» զենքն ու զինամթերքը Կովկասյան երկաթուղու հայտնի դեպքերի արդյունքում ուղղվելու էր բոլշևիզմի դեմ մղվող պայքարին: Այս հիմնահարցի շուրջն էր բախվում հայության շահը, ձևավորվում մեծ հակասությունը, այն, որ բոլշևիկացած զորամասերի ներկայությունը երկրամասում ու Արևմտյան Հայաստանում թեկուզ և ուղղված էին Ժողկոմխորհը չճանաչող Կոմիսարիատի ժողովրդավարական իշխանության դեմ, սակայն հենց իշխանության համար պայքարի համատեքստում բխում էին հայ ժողովրդի շահերից: Այսպես, իր առջև դրված խնդիրներն իրագործելու նպատակով ՌՀԿ-ն ռազմաճակատի առանձին հատվածներում ստեղծեց տեղական մասնաճյուղեր: Դրանք էին՝ 1. արևելա-պարսկական շրջանը, որի կենտրոնն էր լինելու Էնզելին, 2. Ուրմիայի շրջանը՝ Ջուլֆա կենտրոնով, 3. Վանի շրջանը՝ Շահթախտ կենտրոնով, 4. Էրզրում–Երզնկայի շրջանը՝ Սարիղամիշ կենտրոնով և 5. Տրապիզոնի շրջանը՝ Տրապիզոն կենտրոնով[101]:

Այսպիսով՝ Կովկասյան բանակի երկրամասային խորհուրդը և նրա նախագահությունը հռչակեց իրեն գերագույն իշխանություն՝ ռազմական կառավարման բնագավառում և բանակի լիազոր մար-

---

[100] Տե՛ս **Մելիքյան Հ. Ս.**, նշվ. աշխ., էջ 504:

[101] Տե՛ս Борьба за победу советской власти в Грузии, Документы и материалы (1917-1921 гг.), Тбилиси, 1958, էջ 178-179:

մին[102]: Հաջորդ օրը խորհուրդը հանդես եկավ Կովկասյան բանակի բոլոր խորհուրդներին, կոմիտեներին ու զինվորներին ուղղված կոչով[103]:

Սակայն, բոլշևիկների «հաղթանակը» թվացյալ էր. խորհրդի հակաբոլշևիկյան խմբավորումը, չենթարկվելով մեծամասնությանը, պառակտեց բանակային խորհուրդը, ապա և կարողացավ Թիֆլիսից հեռացնել խորհրդի բոլշևիկյան մեծամասնությանն ու գրավելով բանակային իշխանությունը՝ իրեն հռչակեց Կովկասյան բանակի խորհուրդ: Այս անգամ ևս, ինչպես և Թիֆլիսի զինապահեստի պարագայում բոլշևիկյան ղեկավարությունն ուժ չգործադրեց: Չէր բացառվում, որ կենտրոնի բոլշևիկների մարտավարության ոգով հենց համագումարի դահլիճում ձերբակալվեցին Ե. Գեգեչկորին, Դ. Դոնսկոյը, Մ. Պրժևալսկին, Վ. Գոբեչիան և ուրիշներ, սակայն ինչպես Թիֆլիսի բոլշևիկյան երկրամասային կենտրոնը, այնպես էլ բանակային համագումարի բոլշևիկյան մեծամասնությունը, տվյալ դեպքում՝ Ստ. Շահումյանը, չարեց դա:

Կարելի է ենթադրել, որ Ստ. Շահումյանը, Գ. Ղորղանյանը և մյուս բոլշևիկ գործիչները դեռ լիովին չէին հրաժարվել իշխանությունը Թիֆլիսում խաղաղ ճանապարհով գրավելու ծրագրից. խուսափում էին երկրամասում քաղաքացիական պատերազմի հնարավոր սանձազերծումից, ապա և չունեին ուժերի բացահայտ առավելություն: Այդ մասին է վկայում նաև մենշևիկների ու էսէռների նախաձեռնությամբ դեկտեմբերի 19-ին Թիֆլիսում հրավիրված բանվորական պատգամավորների խորհրդի 2-րդ համագումարը: Այն նպատակ ուներ բանակային 2-րդ համագումարին զուգահեռ և այնտեղ կրած պարտությունից հետո բոլշևիկներին հակադրելու երկրամասի խորհուրդների էսէռա-մենշևիկյան մեծամասնությունը: Հաշվի էին առնվում հաղորդակցության ուղիների քայքայված վիճակը, ինչպես նաև դրամական միջոցների բացակայության հանգամանքը, երբ Հյուսիսային Կովկասից, Բաքվից և բանվորական այլ կենտրոններից

[102] Տե՛ս «Кавказский рабочий», Тифлис, 1917, 28 декабря, N 230:
[103] Տե՛ս Борьба за победу…, էջ 176-178:

բոլշևիկյան մեծամասնություն ունեցող խորհուրդների ներկայացուցիչները չէին կարող Թիֆլիս հասնել:

Ստեղծված քաղաքական իրավիճակը բոլշևիկներին մղում էր վճռական գործողությունների: Դրանով է բացատրվում նաև Սարիղամիշի զորամասերի գրոհի անհրաժեշտությունը 1918 թ. հունվարին:

1917 թ. վերջերին Սարիղամիշը դարձավ Կովկասյան ռազմաճակատի կարևորագույն հանգույցը: Այնտեղից էին անցնում ռազմաճակատի Բիթլիս–Մուշ–Խնուս–Երզնկա–Էրզրում շրջանների զինվորները, ինչը հատկապես սրում էր Սարիղամիշի վրա բոլշևիկների ուշադրությունը կենտրոնացնելու հարցը: Այստեղ կուտակվել էր 30.000 զինվոր:

Սկզբում Սարիղամիշում գործում էին երկու կազմակերպություններ՝ զ. և բ. պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեն և ռազմահեղափոխական կոմիտեն, «որոնք չէին հաղորդակցվում և, փաստորեն, առկա էր երկիշխանություն, ավելի ճիշտ՝ լիակատար անիշխանություն»[104]:

Սարիղամիշի ՌՀԿ-ն իր առաջնահերթ խնդիրն էր համարում զորամասերի վերադարձի կանոնավորումը, հնարավոր անարխիայի կանխումը: Այդ նպատակով ներկայացուցիչներ էին ուղարկվում տարբեր ուղղություններով՝ Էրզրում, Կարս, Ալեքսանդրապոլ և այլուր, կապ էր հաստատվում այդ քաղաքների և ՌՀԿ-ների հետ:

1918 թ. հունվարի առաջին շաբաթվա ընթացքում ՌՀԿ-ն Հյուսիսային Կովկասին միանալու նպատակով 8 էշելոն զինվորներ ուղարկեց: Դրանք Աղստաֆա կայարանի մոտ ստիպված մարտի բռնվեցին մահմեդական ավազակախմբերի հետ, որոնք (12.000) գերազանցում էին Սարիղամիշից շարժվող զորամասերին: Այդ բանդաները գլխովին ջախջախվեցին նաև Ելիզավետպոլի մոտ[105]:

Հասկանալի է, որ Սարիղամիշի բոլշևիկյան զորամասերի առաջնահերթ խնդիրը Ռուսաստան վերադառնալն էր: Քանի որ Ռու-

---

[104] Տե՛ս «Кавказское Слово», Тифлис, 1918, 26 января, № 20:
[105] Տե՛ս **Մելիքյան Հ. Ս.**, նշվ. աշխ., էջ 566:

սաստանը բոլշևիկացել էր, ապա այդ զորամասերն էլ տունդարձի ճանապարհին պետք է հաղթահարեին հակախորհրդային բոլոր ուժերին, իսկ անդրկովկասյան երկաթուղու հակառուսական խռովությունների ու ջարդերի համատեքստում՝ տապալեին Անդրկովկասյան կոմիսարիատը: Պարզ է նաև, որ այդ ամբողջ զորաշարժը հատուկ հայկական քաղաքականություն չուներ: Սակայն հայամետ էր վերջինիս վրաց-թաթարական, հակառուսական դաշինքի ջլատման ու չեզոքացման ուղղվածությունը: Եթե մենշևիկներն ու էսէռները ամեն կերպ աշխատում էին այդ զորամասերն ուղղել արևելք, դրանք հեռացնել Թիֆլիսից, Սարիղամիշից, ՌՀԿ-ն, ընդհակառակը, կրճատելով Հյուսիսային Կովկաս մեկնող էշելոնների թիվը և կանոնավորելով դրանց երթը, ստեղծեց վստահելի հարվածային ուժ, որը պետք է մտներ Թիֆլիս:

1918 թ. հունվարի 16-ին Սարիղամիշում տեղի ունեցավ տեղական կայազորի հանրահավաք՝ 30.000 զինվորների մասնակցությամբ[106]: Իշխանությունը բոլշևիկների ձեռքն անցնելուց հետո ՌՀԿ ձերբակալեց հայկական զինվորական վարչության անդամներին և բանակի կոմիտեին, լիովին այրվեց երկաթուղային կայարանը[107]:

Սարիղամիշում զինվորների կողմից գրավվեց նաև փոստային-մարդատար գնացքը[108] և 1918 թ. հունվարի վերջին Սարիղամիշ–Թիֆլիս երկաթուղին փաստորեն անցավ բոլշևիկներին:

գ) Անդրկովկասյան կոմիսարիատի արտակարգ միջոցառումները

Ստ. Շահումյանի և Բաքվի խորհրդի դեմ արտակարգ միջոցներ ձեռնարկելու նպատակով Անդրկովկասյան կոմիսարիատը հունվարի 24-ին հրավիրեց հատուկ նիստ: Այն հիմնականում անդրադարձավ Կոմիսարիատին հավատարիմ հակաբոլշևիկյան ռազմական ուժերի միավորման ու մեկտեղման հարցին:

---

[106] Տե՛ս «Հորիզոն», 1918, 21 հունվարի, թիվ 14:
[107] Տե՛ս նույն տեղում, 22 հունվարի, թիվ 15:
[108] Տե՛ս նույն տեղում, 1918, 1 փետրվարի, թիվ 23:

Քննարկումները լույս են սփռում ոչ միայն երկրամասի իշխանության մարտավարության, այլև Թիֆլիսի բոլշևիկյան երկրամասային կենտրոնի տարաձայնությունների խնդրին: Հարկ ենք համարում կանգ առնել սկզբունքային բոլոր հացադրումների վրա:

Անմիջապես արձագանքելու առաջարկությամբ են հանդես գալիս նախագահ Ե. Գեգեչկորին և Վ. Գոբեչիան: Վերջինս Բաքվի խորհրդի նախագահ Ստ. Շահումյանի նշանակումը որպես Կովկասի արտակարգ կոմիսար որակում էր «հանցագործություն, որին օրենքով նախատեսած պատասխան պետք է տրվեր»[109]: Սկզբում անսովոր հանգստություն ցուցաբերեց Ն. Ժորդանիան՝ չտեսնելով անհանգստանալու առիթ: Նա անհանգստացնող էր համարում այն հանգամանքը, որ վաղուց հրապարակված բոլշևիկյան դեկրետը հայտնվում էր այսօր, և ակնհայտ էր, որ բոլշևիկները հույս էին կապում ինչ-որ օգնության հետ. հնարավոր էր, որ դա Էրզրումի հրետանին էր (այն, որ Սարիղամիշի զորամասերն ուղղում էին Թիֆլիսի վրա – Վ. Մ.): Ն. Ժորդանիայի հանգիստ տոնին հաջորդում էր թաքնված և ամենաարմատական հարցադրումը՝ «Ի՞նչն է լավ՝ ձերբակալե՞լ Շահումյանին, թե՞ չբարկացնել հրետանային զորամասերը և նրանց ուղեկցել Թիֆլիսից դուրս»[110]: Ինքն էլ եզրակացնում էր, թե «ելնելով բոլշևիկյան երկրամասային կենտրոնի առաջացած պառակտումից և դա խորացնելու անհրաժեշտությունից՝ պետք է առայժմ խուսափել ձերբակալությունից: Մեր կտրուկ միջոցառումները կարող են միավորել նրանց, ինչը վտանգ կներկայացնի Թիֆլիսին»[111]:

Ն. Ռամիշվիլիի ելույթը խարսխվում էր բոլշևիկների կողմից իրական սպառնալիքի թեզի վրա, նա գտնում էր, որ Թիֆլիսի վրա հարձակում է նախապատրաստվում: Ն. Ռամիշվիլին առաջարկում էր, փաստորեն, բոլշևիկյան կարգախոս՝ «Հարձակումը շահավետ է, պաշտպանությունը՝ կործանարար»: «Նրանց պետք է զինաթափել՝ թերթերի փակումով, առաջնորդների ձերբակալություններով և այլն:

[109] ՀԱԳ, ֆ. 1818, оп. 2, д. 12, л. 51.
[110] Նույն տեղում:
[111] Նույն տեղում:

Մեր ուժն ազգային զորամասերն են. չլինեին նրանք, այս պալատում կնստեն ժողովրդական կոմիսարների ներկայացուցիչները»[112]:

Ուշագրավ է Ն. Ռամիշվիլիի խոստովանությունն այն հարցում, թե «վրացական զորամասերը տատանվում են»: Նա համոզված էր, որ պետք է կիրառել աշխույժ գործողություններ, քանի որ «եթե Շահումյանը որոշել է, ապա նա ոչ մի բանի առջև կանգ չի առնի, մենք նրան գիտենք 16 տարի, նա ֆանատիկ է և կգնա ամեն կարգի սադրանքի»[113]: Ամբողջ հարցը նրանում էր, որ այդ «սադրանք» կոչեցյալը, եթե կործանարար էր վրացական մենշևիկների համար, ապա, մեր կարծիքով, բարենպաստ էր Կովկասի հայության համար:

Կարծիքների հաջորդ խումբը վերաբերում էր Կոմիսարիատին հավատարիմ հակաբոլշևիկյան ռազմական ուժերի միավորման ու մեկտեղման հիմնահարցին:

Պարենավորման նախարարության գծով կոմիսար, մենշևիկ Ղ. Տեր-Ղազարյանի արմատական հարցադրումը, թե «մենք կամ Շահումյանը. մի քանի օրից Թիֆլիսը, Բաքուն, Կարսը կդառնան բոլշևիկյան քաղաքներ», ավելի էր սրում առանց այն էլ տաք քննարկումը:

Առանձնահատուկ ագրեսիվությամբ էր առանձնանում Լ.-ք. Բեհբութովի խոսքը, որն իր ամբողջության մեջ Շամխորի դեպքերի բացահայտումն էր կրում: «Մեր վրա բանակ է գալիս, իսկ մենք անգործության ենք մատնված,– ասում էր թաթար ներկայացուցիչը,– ***Շահումյանի բոլոր ուժերը անխնա կերպով պետք է բռնագրավվեն. պետք է կիրառել բոլոր միջոցները. այդպիսի պասնյակ էշելոններ ենք ջարդել Շամխորի մոտ – չենք վախենում»***[114] (ընդգծումը մերն է – Վ. Մ.):

Հիացմունքի արժանի դիվանագիտություն էր ցուցաբերում Ն. Ժորդանիան, երբ տվյալ դեպքում, եսասիրական անհրաժեշտությունից դրդված, շողոքորթում էր հայերին, դաշնակցական կոմիսարներին՝ հայտարարելով որ հայկական գնդերը պատրաստ են գործո-

[112] ՀԱԳ, ֆ. 1818, օп. 2, д. 12, л. 51 об.
[113] Նույն տեղում:
[114] ՀԱԳ, ֆ. 1818, օп. 2, д. 12, л. 52 об.

ղությունների, որ նրանք առավել կարգապահ ու քայքայման չենթարկվող զորամասերն են[115]: Գովեստի խոսքերը հավասարազոր էին կշտամբանքի այն իմաստով, որ Կոմիսարիատի իրական նախագահ Ն. Ժորդանիան, Շահումյանով ու բոլշևիզմով վախեցնելով, այդ «կարգապահ հայկական զորամասերը» պատանդ էր պահում Թիֆլիսում: Հայկական գնդերի մեծ մասը, որոնք այդ պահին ավելի պահանջված էին Երզնկայի ու Էրզրումի պաշտպանության գործում, փաստորեն, իրականում պաշտպանում էին վրացական մենշևիկների իշխանությունը Թիֆլիսում: Ցավալի էր, որ հայ կոմիսարների կողմից Ստ. Շահումյանի հանդեպ դրսևորվող կուսակցական ատելությունը առայժմ ոչնչով չէր տարբերվում վրացական ու թաթարական գործիչների խոսքից ու գործից:

Վստահաբար կարող ենք ասել, որ հենց այս պահին էր որոշվում հայկական ազգային-քաղաքական շահի հիմնահարցի ճակատագիրը: Այս քննարկումներում էր վրացական մենշևիզմը հետևողական հաղթանակ շահում: Իրապես սարսափելով ու ատելով Ստ. Շահումյանին և՛ որպես հայ, և՛ որպես առավել հեղինակավոր քաղաքական գործիչ և վերջում միայն՝ որպես բոլշևիկ ու Բաքվի խորհրդի նախագահ (տվյալ դեպքում այլընտրանքային իշխանության ղեկավար Կովկասում – Վ. Մ.)՝ Ն. Ժորդանիան քամահրանքով էր վերաբերվում Ստ. Շահումյանին և ծաղրում էր նրան: Տվյալ դեպքում անհիմն էին նրա եզրահանգումները, թե «բոլշևիկների հրետանին կարող է քանդել Թիֆլիսը, բայց չի կարող իշխանություն հաստատել. ինքներս մեզ չվախեցնենք. Շահումյանը պարզապես արկածախնդիր է. Խլեստակովին իրական ռեվիզորի տեղ չպետք է ընդունել» և այլն[116]:

Արդարադատության նախարարության գծով կոմիսար Շ. Ալեքսեև-Մեսխիևը գտնում էր, օրինակ, որ «այնպիսի պահ ենք ապրում, երբ ամենափոքր հավաքական ուժը կարող է չարիք պատճառել», այսինքն՝ տապալել Կոմիսարիատի իշխանությունը[117]: Այդ առումով առավել սթափ մոտեցում էր ցուցաբերում Ն. Ռամիշվիլին, որը Բաք-

[115] ՀԱԳ, ֆ. 1818, оп. 2, д. 12, л. 52 об.
[116] Տե՛ս նույն տեղում:
[117] Տե՛ս նույն տեղում:

վում Ստ. Շահումյանի հետ տնական շփումների արդյունքում ավելի լավ էր ճանաչել այդ գործչին և մերկապարանոց ատելությամբ չէր լցված, ինչպես Ն. Ժորդանիան: «Շահումյանի արկածախնդրությունից Ն. Ժորդանիան բոլոր հետևությունները չէ, որ անում էր,– նշում էր նա,– պետք է հաշվի առնել բնակչության սրված ատելությունը: Կարող է օգտագործվել երկաթուղային, փոստային ծառայողների դժգոհությունը, ռուս քաղքենիների չարությունը, պարենային կրպակների, Քաղաքային Դումայի վրդովված դուքանչիների և այլոց կուտակված ատելությունը: Շահումյանը հիմար չէ, նա կարող է պարենային հարցի վերաբերյալ դեկրետ հրապարակել, հայտարարել բանակի զորացրում, էլ չենք ասում մասսաների վրա ազդեցություն թողնելու նրա կարողության մասին»[118]: Ակնհայտ էր բոլշևիզմի իրական վտանգի հանդեպ ունեցած մենշևիկ առաջնորդի վախը, բոլշևիկյան վարակիչ կարգախոսների ազդեցության ուժը: Միաժամանակ սարսուռ է առաջացնում և մերկացնում նրա, ի դեմս Ն. Ռամիշվիլիի, վրացական մենշևիզմի բացահայտ հակահայկական ռեպլիկը, թե «այս կամ այն տեսքով կազմակերպված ջարդը (погромчик) չի ստացվի[119]: Եվս մի մերկացում ոչ վաղ անցյալի՝ 1905-1907 թթ. հայ-թաթարական ընդհարումների պատմությունից: Ն. Ռամիշվիլին առաջարկում էր գործել անհապաղ, այլապես ուշ կլիներ. «անգործությունը կխարխլի Անդրկովկասյան կոմիսարիատի առանց այն էլ ընկած վարկը»[120]: Ա. Մալխազովն ավելացնում էր, որ «Թիֆլիսի իշխանությունը ոչ մի հեղինակություն չունի, և մեր դեմ զորամասեր հանելը դժվար չէ»:[121]

Այնուհետև ի մի է բերվում քննարկումներից բխող երեք առաջարկ՝ 1) Ն. Ժորդանիայի առաջարկը՝ չշտապել ռեպրեսիվ միջոցների հարցում, կազմակերպել պատասխան և համարժեք գործողություններ, 2) Ե. Գեգեչկորիի առաջարկը՝ ձերբակալել Ստ. Շահումյանին և 3) Ի. Կարցիվաձեի առաջարկը՝ աքսորել նրանց:

---

[118] ՀԱԳ, ֆ. 1818, оп. 2, д. 12, л. 53.
[119] Տե՛ս նույն տեղում:
[120] Նույն տեղում:
[121] Նույն տեղում:

Որոշակի հակասություն էր պարունակում Դաշնակցության դիրքորոշումը Թիֆլիսում: Մի կողմից բավական որոշակի էր հայ ազգային կուսակցության պահվածքը Կոմիսարիատի նիստում, որտեղ քվեարկության էր դրվել Ստ. Շահումյանի ձերբակալման հարցը, և դաշնակցական կոմիսարները հեռացել էին դահլիճից: Մյուս կողմից, կուսակցությունը փետրվարի 1-ին Թիֆլիսում կազմակերպել էր հայկական ազգային գնդերի շքերթ, որոնք իրենց հավատարմությունն էին հայտնել Անդրկովկասյան կոմիսարիատին: «Փետրվարի 1-ին հայկական գնդէրի զորատէս կատարվեց պալատի մոտ: Առաջնորդութեամբ շտաբ-ռոտմիստր Փիրումյանի, զորքը լավ զինուած, օրինակելի կարգապահութեամբ եւ հայկական քայլերգով հասավ պալատ, որտեղից դուրս եկան Անդրկովկասեան կոմիսարիատի նախագահ Գեգեչկորին, ֆինանսների մինիստրութեան կոմիսար ընկ. Խ. Կարճիկյանը և ուրիշներ»: Ե. Գեգեչկորին հայկական գնդերի հետ էր կապում նվաճված ազատության ապահովումը[122]:

Միանգամայն որոշակի էր դառնում, որ Կոմիսարիատի վրացքաքարական ղեկավարությունն այս պահից որդեգրում էր Դաշնակցության հանդեպ անվստահության ու այդպիսով նաև քաղաքական ասպարեզում նրա մեկուսացման քաղաքականությունը: Մանավանդ, որ Կոմիսարիատի այս նիստի սկզբում նրանք ականատես էին եղել Խ. Կարճիկյանի սկզբունքային և դիպուկ հարցապնդումներին: Վերջինս կշտամբում էր երկրամասի իշխանություններին, հատկապես այն հարցերում, որոնք անմիջապես հայկական ենթաշերտ ունեին, ինչպես օրինակ, զորակոչի մասին դեկրետը, մինչ այժմ վարչական սահմանաբաժանումների մասին դեկրետի բացակայությունը և այլն[123]:

Եվ միայն Խ.-ք. Խաս Մամեդովի «հիմնավորումից» հետո հարցը մտավ եզրափակիչ փուլ: Նա գտնում էր, որ անվիճելիորեն պետք է դիմել վճռական գործողությունների և ըստ օրենքի՝ 1416 հոդվածի, ամենափոքր ծավալի շարժման դեպքում ինքնակոչ իշխանությունը

---

[122] Տե՛ս «Հորիզոն», 1918, 3 փետրվարի, թիվ 25:
[123] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1818, օп. 2, д. 12, л. 70:

պետք է վերացվեր: Նրա կարծիքով՝ այդպիսի գործողությունների նախադեպերը առկա էին՝ գրասենյակ, հայտարարություն, հանրահավաք:

Թիֆլիսի իշխանությունները գիտակցում էին, որ Ստ. Շահումյանի և Սարիղամիշի ՌՀԿ-ի վճիռը արկածախնդրություն չէր: 1918 թ. հունվարի 18-ին Թիֆլիսի նահանգային կոմիսար Ջափարիձեն Անդրկովկասյան կոմիսարիատին հայտնում էր, որ նահանգում ռազմական դրություն էր հայտարարվել[124]: Նույն օրը երկրամասի կառավարությունը Ե. Գեգեչկորիին օժտեց արտակարգ լիազորություններով՝ նրա տրամադրության տակ դնելով Անդրկովկասի բոլոր զինված ուժերը[125]: Ներքին գործերի նախարարության գծով կոմիսար Ա. Չխենկելիին Կոմիսարիատը հատկացրեց 60 հազար ռուբլի՝ վրացական ազգային գնդերի մարտունակությունն ուժեղացնելու նպատակով[126]:

Կոմիսարիատին առանձնապես անհանգստացնում էր Ստ. Շահումյանի՝ Թիֆլիս տեղափոխվելու և արտակարգ լիազորություններով օժտելու հանգամանքը: Դրանք իշխանության գրավման ուղղակի ազդանշաններ էին:

Խորհրդահայ պատմագրությունն այդ իրադարձությանն ու բոլշևիկների կողմից իշխանության գրավման հիմնահարցին հասկանալի պատճառներով միակողմանի գնահատական է տվել: Միայն այն հանգամանքը, որ չեն օգտագործվել Կոմիսարիատի նիստերի արձանագրությունները, արդեն իսկ վկայում է այն մասին, որ խնդիրն ամբողջական լուսաբանում չի ստացել, մանավանդ որ բացակայում էին հայազգի կոմիսարների վերաբերմունքն ու դիրքորոշման լուսաբանումն այդ կապակցությամբ:

Միաժամանակ բազմաթիվ ելույթներից, ինչպես, օրինակ, արդարադատության նախարարության գծով կոմիսար Շ. Ալեքսեև-Մեսխիևի, Ե. Գեգեչկորիի, Ն. Ռամիշվիլիի և մյուսների, պարզվում էր, որ իրենք իսկ՝ Կոմիսարիատի կոմիսարները, վստահ չէին անդրկովկա-

---

[124] Տե՛ս Борьба за победу…, էջ 186:
[125] Տե՛ս «Кавказское Слово», 1918, 2 февраля, № 26:
[126] Տե՛ս նույն տեղում:

սյան իշխանության թմբկահարված ուժի վրա. մի բոլշևիկի՝ Շահումյանի Թիֆլիս մտնելու հետ էին կապում կառավարության կործանման իրական փաստը: Դրանում է կայանում և այս քննարկումների գլխավոր քաղաքական հետևությունը, այն, որ Անդրկովկասյան կոմիսարիատն իր մեծամասնությամբ, իրոք, հնարավոր էր համարում իշխանության զիջումը և մի քանի վրացի գործիչների վճռական ու բոլշևիկյան կենտրոնի անվճռական դիրքորոշումն էր, որ կանխեց այդ գործընթացը:

Ստ. Շահումյանին և Ն. Կուզնեցովին առաջարկվում էր 24 ժամվա ընթացքում լքել Անդրկովկասը, հակառակ դեպքում՝ ձերբակալել: Այս առաջարկն անցավ միաձայն[127]: Ստ. Շահումյանն անցավ անլեգալ կարգավիճակի: Փետրվարի 20-ին նա ռազմական էշելոնով վերադարձավ Բաքու[128]: Արտակարգ, ռազմական իրադրության պայմաններում Թիֆլիս կանչվեց նաև «վայրի դիվիզիան»:

Այն առանցքային հիմնահարցը, որ, ի դեմս Ստ. Շահումյանի, երկրամասային, այդ թվում և Կովկասյան բանակի բոլշևիզմը նույնացվում էր հայկականության հետ, որոշակի արտացոլում է ստացել նաև ժամանակի մամուլի օրգաններում, մասնավորապես վրացական ազգային թերթերում: «Սաքարթվելոն» գրում էր. ***«Կարող է պատահել, որ փախչող զորամասերի հետ միանալով՝ հայերը Շահումյանին ազգի առաջնորդ հռչակեն: Համենայն դեպս մենք պետք է զգույշ լինենք, որ ինտերնացիոնալիզմի դրոշի տակ գլուխ բարձրացնեն մեր հարևան ժողովրդի այն ծայրահեղ շովինիստները, որոնք Շահումյանի հետ միասին, երևի, երազում են «Մեծ Հայաստանը» ստեղծել»***[129] (ընդգծումը մերն է - Վ. Մ.):

Վրաց ազգայնականներին հատկապես սարսափեցրել էր Ստ. Շահումյանին Կովկասի արտակարգ կոմիսար նշանակելու հանգամանքը: «Էրթոբան» այն կարծիքն է վերատպում,– հայտնում էր «Հորիզոնը»,– թէ Լենինն ու Տրոցկին Կովկասում իրենց իշխանութեան տարածումը յաջողեցնելու նպատակով աշխատում են հայերի

---

[127] Տե՛ս ՀԱԳ, ֆ.1818, օп. 2, д. 12, л. 104:
[128] Տե՛ս **Բարսեղյան Խ.,** Ստ. Շահումյան, Երևան, 1968, էջ 474:
[129] «Հորիզոն», 1918, 4 փետրվարի, թիվ 26:

սիրտը շահել»[130]: Այստեղ, իհարկե, կա ճշմարտության հատիկ, երբ խնդիրը դիտարկում ենք «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի համատեքստում, սակայն խնդիրն այն է, որ վրացական ազգային շրջանակները, իրոք, այդ որոշման, այսինքն՝ բոլշևիկ ղեկավարների ու հայ ազգային-դեմոկրատական գործիչների համագործակցության մեջ իրական վտանգ էին տեսնում: Ստ. Շահումյանի ծրագրերը որակվում էին որպես «նեղ ազգայնական իղձ»[131]: Այդ խնդրին են անդրադարձել նաև «Սախալիո Սաքմեն», «Չվենի Ռեսպուբլիկան»: Մեզ համար կարևոր է վրացական այն դիտարկումը, թե «հայկական շրջաններում ասելիս են եղել, որ եթէ Շահումեանը Հայաստանում երևայ, անպատճառ կը ձերբակալեն նրան: Նա Հայաստանում երեւաց էլ, այնտեղից վերադարձաւ էլ, սակայն նրան ոչ ոք չձերբակալեց: Երևակայեցէք, ասում են հայերը, որ Շահումեանը լաւ հայ դուրս եկաւ»[132]:

Ինչ վերաբերում է Ստ. Շահումյանի նոր պաշտոնին, ապա կարելի է նկատել, որ դա նորույթ չէր Կովկասի կյանքում: Ցարական վարչակարգի ժամանակ այդ գործառույթն իրականացնում էր Կովկասի փոխարքան, ժամանակավոր կառավարության պայմաններում՝ «Պետրոգրադում Կովկասի գործերի կոմիսարը»: Արտակարգ կոմիսարի պաշտոնը այժմ երկրամասում խորհրդային իշխանության հաստատելու միջոց էր, և այդ գործը վստահվել էր հայազգի գործչի, ինչը մեր խորին համոզմամբ պետք էր միայն օգտագործել:

Դաշնակցության մի խումբ գործիչների և Ստ. Շահումյանի համագործակցության կարճատև դրվագը արտացոլվել է Ռ. Տեր-Մինասյանի, ինչպես նաև Ա. Մռավյանի և Վ. Մռավյանի հուշերում:

«26 կոմիսարների հիշատակին» ժողովածուում Ասքանազ Մռավյանը նշում էր, որ Ստ. Շահումյանը հունվարի 13-21-ի ընթացքում շրջանցիկ ճանապարհով, Գանձակի և Ղազախի գավառների, Շամշադինի, Իջևանի, Դիլիջանի, Փամբակի, Մեծ Ղարաքիլիսայի վրայով հասել է Թիֆլիս: Հունվարի սկզբին Ստ. Շահումյանը պատ-

[130] «Հորիզոն», 1918, 28 հունվարի, թիվ 20:
[131] Նույն տեղում:
[132] Նույն տեղում, 7 փետրվարի, թիվ 28:

բաստվում էր Բաքվից մեկնել Պետրոգրադ՝ Սահմանադիր ժողովին մասնակցելու նպատակով, սակայն հունվարի 7-ին նրա գնացքը Գանձակում կանգ է առել[133]: «Գանձակի հայկական մասը,– գրում էր Ռուբենը,– արդէն ինքնիշխան մի կառավարութիւն էր, որի համար «Թիֆլիսի իշխանութիւն» չկար. նա կը սպասէր հայկական իշխանութեան՝ նրան միանալու համար: Շահումեանին պաշտպանում էր Գանձակի շրջանի ղեկավար, բժիշկ Հայկ Մելքումեանը, որ հայկական գիւղերով, լեռների վրայով փոխադրում է Շահումեանին Թիֆլիս, Դաշնակցութեան «մաուզերիստների» պաշտպանութեան ներքեւ»[134]:

Թիֆլիսում երկու անգամ Դանուշ Շահվերդյանի բնակարանում (ներկա են եղել Ս. Արարատյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Հ. Ջավրիյանը, Ստ. Շահումյանը, Դ. Շահվերդյանը, Ս. Կասյանը, Հ. Նազարեթյանը, Ս. Խանոյանը, Ցինցաձեն) մշակվել է բոլշևիկ-դաշնակցական համագործակցության ծրագիրը: «Այն նույն օրը, երբ Անդրկովկասեան վարչութիւնը հրաման կը հանէր գտնել Շահումեանին և զայն ձերբակալել (Կոմիսարիատի ուղարկած միլիցիան նրան չէր գտել Կոչուբեևսկայա թիվ 24 տանը[135] – Վ. Մ.), երբ Երզնկեան և Ղազարեան Շահումեանի գլուխը կը պահանջէին Ազգային Խորհուրդից, Ազգային Խորհուրդի զինուորական ուժերի վարիչ Ռուբէն Տէր-Մինասեանը և Զաւրիեը Շահումեանի հետ գործունէութեան նախագիծ կը կազմէին, Երեւանից ունենալով եւ Արամի կարծիքները»[136]:

1918 թ. մարտի 6-ին Ա. Մանուկյանը «Վանի ընկերներին» վերտառությամբ նամակում գրում էր. «Կովկասը մեծ ճգնաժամ է ապրում. հայ-թուրքական ո՛չ թե ընդհարում, այլ պատերազմ է սկսել. Բագում և Շուշու կողմերը դրութիւնը ծանր է. դեռ ընդհարումներ չկան, բայց օրէ օր սպասում է՝ մերոնք լավ կազմակերպած են: Պոլկեր կան Շուշի, Գանձակ, Նուխի, Բագու եւ այլն[137]»:

---

[133] Տե՛ս **Բարսեղյան Խ.**, նշվ. աշխ., էջ 461:
[134] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Թեհրան, 1982, էջ 141:
[135] Տե՛ս «Հորիզոն», 1918, 27 հունվարի, թիվ 19:
[136] **Ռուբէն**, նշվ. աշխ., էջ 141-142:
[137] Տե՛ս Արամ Մանուկյան, Նամականի, Երևան, 2018, էջ 609:

Ծրագրի բովանդակությունը հետևյալն էր՝ 1. Թուրքերի դեմ դիմադրության ճանապարհով հասնել Արևմտյան Հայաստանի անկախությանը. Ստ. Շահումյանը պետք է նպաստեր ռուսական զորքերի ճակատում մնալու հարցում: 2. Անդրկովկասում ստեղծվելու էր հայկական կանտոն՝ ըստ Ա. Շահխաթունյանի սահմանաբաժանումների ծրագրի: 3. Թիֆլիսն ու Բաքուն հռչակվելու էին ազատ քաղաքներ: 4. Սարիղամիշ–Կարս հասած 39-րդ զորամասը պետք է պահվեր Հայաստանում: 5. Պարսկաստանից նահանջող գեներալ Բարաթովի զորամասերից մի զորաբաժին պետք է կանգնեցվեր Ջուլֆա–Նախիջևան հատվածում: 6. Ալեքսանդրապոլի զինապահեստներից ռազմամթերք ուղարկելու միջոցով պետք է ուժեղացվեր Գանձակի հայկական մասը: 7. Թիֆլիսում ձևավորված ղարաբաղցիների գունդը պետք է ուղարկվեր Շուշի: 8. Թիֆլիսի մոտ կուտակված զորքերը Ղազախի վրայով պետք է հասնեին Գանձակ: 9. Բաքվից, Գանձակից, Շուշիից պետք է տեղափոխվեին ռազմական ուժերը և դրանց միջոցով բացվեին Բաքու–Թիֆլիս, Բաքու–Երևան ճանապարհները: 10. Մինչև այդ գործողությունների իրականացումը բոլշևիկները չպետք է բարձրացնեին իշխանության գրավման խնդիրը: 11. Զեմլյակի ջոկատը, երրորդ հայկական գունդը, Օսիկ (Պողոս) Փիրումյանի հեծելազորը, Գ. Տեր-Մովսիսյանի հրետանին պետք է մնային Թիֆլիսում: Երբ բացվեր Շուշի–Բաքու գիծը, այդ ուժերը պետք է բռունցքվեին և բոլշևիկների հետ միասին գրավեին իշխանությունը: Այդ ընթացքում Երևանի և Թիֆլիսի հայկական շրջանակները ձևականորեն պետք է ընդդիմանային բոլշևիկյան շարժմանը և պետք է պաշտպանեին իշխանություններին[138]: Այս ծրագիրը չիրագործվեց: Բացի Ստ. Շահումյանի հետ բանակցություններից՝ Երևանում ևս արձանագրվել են այդ համագործակցության դրսևորումներ: Արամը Մոսկվա է գործուղել «դաշնակցականասէր» դարձած Պ. Մակինցյանին[*]. «Ապահով անցկացրէք: Անհրաժեշտ է: Պէտք է մենք ամէն

[138] Տե՛ս **Ռուբէն**, նշվ. աշխ., էջ 142-143:

[*] Մինչև 1906-1907 թթ. Պ. Մակինցյանը և Վ. Տերյանը ՀՅԴ անդամներ էին, հանգամանորեն տե՛ս **Էմին-Տերյան Գ.,** Վահան Տերյան, Անտիպ և անհայտ էջեր, Երևան, 2014:

կերպ միանանք Ռուստոմին (Բագուին): Մեր մէջքը թէ ամուր չլինի, կը կրկնուի 1915 թիւը»[139]: Ավելացնենք, որ հետևելով Ռուբենի հուշերին՝ խորհրդահայ մի շարք պատմաբաններ անդրադարձել են նշված խնդրին[*]:

1.3. ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Բաքվի 1918 թ. մարտյան իրադարձությունների նախերգանք պետք է համարել նաև Երևանի նահանգում կազմակերպված հակահայկական մահմեդական խռովությունները: Երևանի նահանգը և նրա վարչական կենտրոն Երևան քաղաքը կազմակերպված հակահայկական հարձակումների փուլ մտան 1918 թ. հունվարին, չնայած 1917 թ. նոյեմբերին արդեն նկատվում էին մասնակի և տեղային բնույթ կրող միջադեպեր:

1918 թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում Երևանի նահանգում մահմեդական տարատեսակ խռովություններ, ավազակային հարձակումներ, հեռահաղորդակցության ուղիների՝ երկաթուղագծերի, ճանապարհների խափանման դեպքեր տեղի ունեցան Արարատում (Դավալու), Վեղիում, Արտաշատում (Ղամարլու), Մասիսում (Ուլուխանլու), Սուրմալուում, Շարուրում, Նախիջևանում, Երևանում և այլուր[140]: Այդ կազմակերպված, սադրիչ գործողությունների գլխավոր պատճառը և նպատակը թուրքական հարձակման նախապատրաստումն էր թիկունքում և արշավանքի պայմաններում հայկական զինուժի ջլատման, բարոյալքման քաղաքականությունը: Որպես նպաստող և հարակից դրդապատճառ առկա էր նաև անիշխանության հետևանքով խորացած պարենային տնտեսական ճգնաժամը:

---

[139] Տե՛ս **Էմին-Տերյան Գ.,** նշվ. աշխ., էջ 143:

[*] Տե՛ս **Թուրշյան Հ. Գ.**, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1965, **Մելիքյան Հ. Ս.**, Հոկտեմբերյան հեղափոխությունը և կովկասյան բանակը, Երևան, 1970, **Արզումանյան Մ. Վ.**, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, **Խուրշուդյան Լ. Ա.**, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977:

[140] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 113, թթ. 1-3, 12, 16, 66, 71, 72, 117:

Երբ 1918 թ. հունվարի սկզբից թուրքերը, թաթար-մահմեդականները և քրդերը գլուխ բարձրացրին նաև Երևանի նահանգում, Երևանի հատուկ կոմիտեի, Արամ Մանուկյանի համար առանձնակի դժվարություն չէր ներկայացնում այդ շարժումն ի սկզբանե ճնշելը, մանավանդ, որ ձևավորվել էր Հայկական կորպուսը: Բայց քանի որ Թիֆլիսի հետ կապն առայժմ ամուր էր, և եկող հրամաններն էլ ենթակա էին անվերկբա կատարման, ուստի և գերակայում էր խնդրի խաղաղ միջոցներով, երկխոսության ճանապարհով կարգավորման միտումը:

Հիմնահարցին լուծում տալու խաղաղարար եղանակների առաջնության մասին են վկայում Երևանում և Թիֆլիսում հրավիրված խորհրդակցությունները:

Նախ, 1917 թ. դեկտեմբերի վերջին Երևանում փորձ արվեց հրավիրելու քաղաքի հայկական և մահմեդական ազգային խորհուրդների «համագումար», որը թաթար ավազակապետ Բաբա Վալիևի ժամանումից հետո ձախողվեց[141]:

1918 թ. հունվարի 4-ին Թիֆլիսում Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ հրավիրվեց նմանատիպ մի խորհրդակցություն, որոշվեց ձևավորվել ութ հոգուց բաղկացած մշտական գործող բյուրո: Երևանում հունվարի 14-ին (27) հրավիրվեց ևս մեկ ժողով, որը որոշեց գավառներին հեռագրեր հղելով հորդորել խաղաղության պահպանման, ինչպես նաև առաջիկայում գումարել ազգամիջյան համագումար[142]: Սակայն դրությունը չփոխվեց. հատկանշական էր այն հանգամանքը, որ թաթարներն ու քրդերը հաճախ հանդես էին գալիս միասնաբար և միասնական պահանջներով, ինչպիսին էր, օրինակ, թաթարական կորպուսի ստեղծումը: 1918 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին, այսինքն՝ թուրքական հարձակման նախօրեին, Երևանի նահանգի մահմեդական խռովությունները նոր որակ ու ծավալ ձեռք բերեցին, սկսվեց հանգուցային կայարանների և երկաթու-

---

[141] Տե՛ս **Սարգսեան Ե.**, Երեւանը 1917 թուականին, «Հայրենիք», Պոսթըն, 1950, թիւ 9, սեպտեմբեր, էջ 99-100:

[142] Տե՛ս **Զոհրաբյան Է. Ա.**, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000, էջ 29-30:

ղագծերի շրջափակումը: Հատկապես Շահթախտի փակումը հայերին զրկեց դեպի ռազմաճակատ զորքերի փոխադրման կենսական հնարավորությունից, ինչպես նաև ավելի է կազմալուծեց թիկունքը: Այդ ուղղությամբ նկատվեցին համատեղ գործողությունների մշակման փաստեր:

Հունվարի 20-ին Երևանում բացվեց ազգամիջյան խորհրդակցություն, որին մասնակցում էր հայկական և թաթարական ազգային խորհուրդներից և Երևանի նահանգային գործադիր կոմիտեից 4-ական ներկայացուցիչ: Խորհրդակցությունը որոշեց փետրվարի 4-ին Երևանում հրավիրել ազգամիջյան համագումար, որը հիմնականում քննելու էր նահանգի անիշխանության, քրդական ավազակային հարձակումների, միլիցիայի կազմակերպման, պարենավորման հարցերը[143]: Դրությունն այն աստիճանի էր սրվել, որ հայկական շրջանակներում քննարկվում էր այն հարցը, որ Հայկական կորպուսի կոմիսար Դրոն (Դրաստամատ Կանայան) թողնի իր պաշտոնը և նշանակվի «ավազակութիւնների դեմ պայքարելու համար կազմակերպվող պարտիզանական խմբերի ղեկաւար»[144]:

Հունվարի վերջին Դավալուից հաղորդում էին, որ զինված քրդերն ու թուրքերը նկատելիորեն ակտիվացել են, ինչի արդյունքում գրավել են Դավալուից հարավ ընկած շրջանը: Տագնապալի լուրեր էին ստացվում նաև Նուխիից[145]:

Կոմիսարիատի հունվարի 24-ի նիստում քննարկվում էր Հաղորդակցության ուղիների նախարարության գծով կոմիսար Խ.-Բ. Մելիք-Ասլանովի զեկույցը՝ Ուլուխանլու–Ջուլֆա և Մակուի երկաթուղային հանգույցների պաշտպանության անհրաժեշտության մասին[146]: Հրավիրվել էին տեղական թաթարների, քրդերի և ռուսների ներկայացուցիչները, նախագահ էր ընտրվել Գ. Ենգիբարյանը[147]:

---

[143] Տե՛ս «Հորիզոն», 1918, 25 հունվարի, թիվ 17:
[144] Տե՛ս նույն տեղում, 24 հունվարի, թիվ 16:
[145] Տե՛ս նույն տեղում, 1 փետրվարի, թիվ 23:
[146] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1818, օп. 2, д. 7, л. 55:
[147] Տե՛ս «Հորիզոն», 1918, 13 փետրվարի, թիվ 32:

Փետրվարի 9-ին (22) արդեն Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարը «ցանկալի և անհրաժեշտ էր համարում Երևանի, Էջմիածնի եւ Նախիջևանի գավառներում ռազմական դրութեան հայտարարումը»[148]:

1918 թ. փետրվարի 5-8-ը Երևանի քաղաքային դումայի դահլիճում կայացավ Երևանի նահանգի Ազգամիջյան համագումարը: Այն հրավիրվել էր նահանգային գործադիր կոմիտեի, Հայոց ազգային խորհրդի և Մահմեդական ազգային կոմիտեի որոշմամբ[149]:

Փետրվարի 5-ի առավոտյան նիստը բացեց Երևանի նահանգի կոմիսար Սահակ Թորոսյանը. հաստատվեցին ըստ գավառների ներկայացված պատվիրակների ցուցակները: Երեկոյան նիստում լսվեց նահանգային կոմիսարի զեկույցը՝ նահանգում ստեղծված դրության, պարենային վիճակի մասին: Ընդգծելով համագումարի առաջնահերթ նշանակությունը, այն է՝ երկու հարևան ազգությունների՝ մահմեդականների և հայերի փոխհարաբերությունների կարգավորման խնդիրը, Ս. Թորոսյանը փորձեց ՀՅԴ դիրքերից առանձնացնել մի քանի հարցադրումներ: Նրա արտահայտությամբ՝ «վերջերս մի թեթև փչացող» այդ հարաբերությունների որպես գլխավոր պատճառ նա տեսնում էր էսէռների կողմից առաջադրվող հողի սոցիալիզացիայի ծրագիրը և Մահմեդական կոմիտեի դեմ ելույթները:

Հողային խնդիրը, Ս. Թորոսյանի կարծիքով, ծնում էր դասակարգային պայքար, որն էլ «շահագրգիռ անձիք մեր երկրամասի մասսաների խավարամտության պատճառով, նպատակային ձևով ուղղորդում են դեպի ազգամիջյան պայքարի հունը»[150]: Նա համագումարին առաջարկում էր ելք գտնել և որպես ուղի էր տեսնում ազգամիջյան մարմնի ձևավորումը:

Համագումարն ընդունեց որոշում՝ Ազգամիջյան խորհրդի հիմնադրման և այն ամենալայն իրավունքներով ու լիազորություններով օժտելու վերաբերյալ:

---

[148] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1, օп. 2, д. 195, л. 2:
[149] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1861, оп. 2, д. 1, л. 487:
[150] Տե՛ս նույն տեղում:

Առավել փոթորկահույզ բնույթ կրեց փետրվարի 6-ի նիստը, որը, փաստորեն, ընթանում էր մահմեդական նոր ավազակությունների ֆոնի վրա: Ալեքսանդրապոլից Ուլուխանլու (Մասիս) ժամանած զինվորական հաշտարար պատվիրակությունը հայտնում էր, որ կայարանն այրվում էր և խնդրում էր համագումարի անունից պատվիրակություն ուղարկել՝ անկարգությունները համատեղ ուժերով հարթելու նպատակով: Պատվիրակության կազմը ներկայացնում էին Կարապետ Խաչատուրովը, Հակոբ Հայրապետովը, Աբասալի Քարիմովը և Քերբալայ Մաշեղա Սուլեյմանովը, որոնք և անհապաղ մեկնեցին Ուլուխանլու:

Համագումարն արտահերթ կերպով լսեց Ալեքսանդրապոլի պատվիրակության (Գոլովաչյով, Դուբրովչենկո, Տերտերյան, Տեր-Ներսեսյան, Մանասերյան) զեկույցը: Ռազմական բժիշկ Տերտերյանը հայտնեց, որ, բացի կայարանի շենքից, վառվում էր ողջ երկաթուղային հանգույցը, այրվում ու թալանվում էին պահեստներն ու ծառայությունների շենքերը: Որոշվեց ստեղծել ևս մեկ ազգամիջյան պատվիրակություն՝ Կ. Խաչատրյանց, Զուբյան, Քարիմով, Սուլեյմանով, Սիլչենկո, Ֆատինով և Շամշադինով կազմով, որը հաջորդ օրն առավոտյան պետք է մեկներ Ուլուխանլու:

Առաջարկվեց լսել նաև քրդական հարցին վերաբերող Խալիլ բեկ Կասումբեկովի զեկույցը, սակայն նահանգից նրա բացակայության պատճառով համառոտ զեկուցում կարդաց Հակոբ Հայրապետովը: Ցավալի է, բայց բանախոսն այդ ավազակությունների, թալանի ու սպանությունների ահագնացած չափերի պատճառ էր տեսնում ոչ թե պարենային ճգնաժամը, այլ, իր կարծիքով, այն, որ դա «քրդերի արհեստն է, սովորությունը»[151]:

Համագումարում ստացվեց նաև ռուս պատվիրակների (Շչեդրին, Սիլչենկո, Սամադուրով, Շերմով) գրավոր արտահերթ դիմումն այն մասին, որ ռազմաճակատից եկող իրենց պատկանող 500 բեռնված սայլերը թալանվել են Խանուխլյար գյուղի մերձակայքում:

[151] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1861, оп. 2, д. 1, л. 487:

Որպես կարևորագույն արդյունք՝ համագումարն ընդունեց երկու՝ մահմեդական և հայկական խմբակցությունների բանաձևերը: Կանգ առնենք դրանց առանցքային կետերին:

Մահմեդական խմբակցության բանաձևը նշում էր.

ա) համագումարը հռչակում է հայերի ու մահմեդականների համերաշխություն և հայտարարում է, որ նահանգի անհանգիստ վիճակը ընդհանուր քաղաքական անարխիայի արտացոլումն է և ոչ մի ընդհանուր եզր չունի ներազգային հարաբերությունների հետ,

բ) լսելով Անդրկովկասի մահմեդականների քաղաքական կողմնորոշման մասին զեկույցը, որն ի վերջո հավանություն է տալիս Ռուսաստանյան հանրապետության դաշնային կարգին, համագումարը ժխտում էր շահարկվող մտքերը՝ մահմեդականների անջատողականության մասին,

գ) քրդական հարցի առնչությամբ համագումարն ափսոսանք էր հայտնում լոյալ քրդերի նկատմամբ բռնությունների իրականացման կապակցությամբ,

դ) համագումարը պարտավորեցնում էր Ազգամիջյան խորհրդին.

1. անհապաղ ձևավորել հայ-թաթարական գունդ՝ հանցավոր տարրի նկատմամբ ֆիզիկական ներգործության նպատակով,

2. անհապաղ ձևավորել պետական զինված ուժերի իրավունքներով և պարտավորություններով օժտված բացառապես մահմեդական գնդեր,

3. քրդական կոմիսարների ինստիտուտի անհապաղ հիմնում, որոնք կօժտվեն գավառական կոմիսարների օգնականների իրավունքներով և կենթարկվեն նահանգային կոմիսարին[152]:

Ամփոփելով մահմեդականների տեսակետը՝ կարելի է եզրակացնել, որ առաջարկները մեկ անգամ ևս փորձում էին ամրապնդել Երևանի նահանգում թաթար-մահմեդականների և քրդերի դիրքերը: Կեղծվում էր անջատողականության մասին մոտեցումը, ինչի սկիզբը բացահայտորեն դրվել էր դեռ 1917 թ. մայիսին: Փաստորեն, չեզո-

[152] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1861, օп. 2, д. 1, л. 489:

քացվում էր թուրքական արշավանքին աջակցելու լրջագույն գործոնը:

Ինչ վերաբերում էր «զուտ մահմեդական գնդերի» հիմնահարցին, ապա դրա նախապատմությունը սկսվում է դեռ Ժամանակավոր կառավարության բացասական վերաբերմունքի օրերից: Այս հարցում ռուսական իշխանությունները և այժմ էլ Կովկասյան բանակի հրամանատարությունը զսպող դերակատարություն էին ստանձնել և հակաթուրքական պայքարում առավելապես հովանավորում էին հայկական վստահելի, ինչպես նաև վրացական ազգային զորամասերի ստեղծումը: Այդպիսի օրինակ էր Մահմեդական կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ալի աղա Շիխլինսկու կողմից Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին ուղղված մարտի 6-ի գաղտնի գրությունը՝ ազգային զորամասերի կրճատման վերաբերյալ:

Պարզ է՝ թուրքական հարձակման պայմաններում Ա. Շիխլինսկին անհնարին էր համարում Մուսուլմանական կորպուսի ապակազմավորման մասին գլխավոր հրամանատարի միջնորդությունը և հիշեցնում էր հենց այն ելակետային մոտեցումը, որ «ազգային կորպուսների ձևավորումը սկսվել է ոչ մահմեդականներից»[153]:

Հայկական խմբակցության բանաձևը հայտարարում էր.

1. արդար համարել մահմեդական զորամասերի կազմավորումը և զինամթերքով ապահովումը՝ համապետական բնույթի պարտականություններ կրելու նպատակով և այդ մասին հայտնել Անդրկովկասյան կոմիսարիատին,

2. արդար համարել քրդական ազգաբնակչությանը պարենով և հագուստով ապահովելու խնդիրը և դիմել նահանգային պարենային կոմիտեին՝ մյուս ազգերի հետ հավասար չափով քրդերին մատակարարելու և գործի կազմակերպման համար նշանակել քուրդ կոմիսար,

3. ընդունել բոլոր, այդ թվում՝ և ռազմական ուժի գործադրման միջոցները՝ անարգել երթևեկություն սահմանելու համար,

[153] Տե՛ս РГВИА, ф. 2100, оп. 1, д. 1127, л. 39:

4. կեղծ և սադրիչ լուրերի տարածումն ընկալել որպես սպառնալիք՝ ազգությունների խաղաղ համակեցության համար և

5. ձևավորել բոլոր ազգությունները ներկայացնող մշտական խորհուրդ:

Ինչպես նկատում ենք, ստեղծված իրավիճակում, երբ նահանգում մոլեգնում էր բացահայտ հակահայկական խռովությունների ալիքը, հայկական բանաձևը զիջող նկարագիր ուներ և, ինչպես ընդունված է ասել, փորձ էր «ավելի կաթոլիկ երևալ, քան Հռոմի պապը»:

Այդ տրամաբանությամբ էր առաջնորդվում նաև Ս. Թորոսյանը իր եզրափակիչ խոսքում. «Շովինիզմը նույնպես վնաս է, ինչպես կարմիր տեսություններով տարվելը: Մեր երկրամասի մուսուլմաններն ու հայերը ունեն նույն պահանջներն ու ձգտումները: Համագումարի գլխավոր խնդիրն է խավար զանգվածների վրա բարոյական ազդեցությունը թողնել»[154]:

Փետրվարի 21-ին Երևանում կայացավ Մահմեդական ազգային խորհրդի, քաղաքի և գավառի մահմեդական հոգևորականության, Երևանի գավառի մահմեդական բնակչության, Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչների, նահանգական գործադիր կոմիտեի անդամների միացյալ նիստը՝ նահանգային կոմիսար Ս. Թորոսյանի նախագահությամբ:

Քննարկվող առաջնահերթ խնդիրը երկաթուղիներն ու ճանապարհները մահմեդական, քրդական ավազակախմբերի կողմից փակելուն և դրա դեմ պատժիչ միջոցառումների իրականացման հարցին էր նվիրված: Եզրակացությունն այն էր, որ «զօրամասերի պատժիչ գործողութիւնը բացատրւում է նրանով, որ ճանապարհները փակւած էին, և աւազակները դիմադրութիւն էին ցույց տալիս ճանապարհները բանալուն զօրամասերի փոխադրութեան ժամանակ», ուստի և Միա-

[154] Տե՛ս ՀԱԳ, ф. 1861, оп. 2, д. 1, л. 489: Վրացական արխիվում պահվող այս փաստաթղթերը բնօրինակ են, ուստի և տեքստում կիրառվող «մահմեդական», «թաթար» եզրույթները՝ որպես 1918 թ. մարտին ազգություն բնութագրող անվանումներ, հիմք են հանդիսացել մեզ համար և հերթական կողմնակի, բայց և կարևոր ապացույցն են աղբբեջանական կեղծարարության դեմ:

ցյալ նիստը դատապարտում էր կատարված ամեն մի գործողություն, ում կողմից էլ լինի այդ»[155]:

Միացյալ նիստը խնդրում էր նշանակություն չտալ «պատահական, սենսացիոն լուրերին» և ճիշտ տեղեկություններ ստանալու համար դիմել անմիջապես Ազգամիջյան խորհրդին: Նիստի որոշման հիման վրա հայկական կողմը պարտավորվեց միջնորդել զինվորական իշխանության առջև՝ դադարեցնելու մահմեդականների դեմ ուղղված պատժիչ գործողությունները, իսկ մուսուլմաններն էլ պարտավորվեցին մահմեդականներով բնակեցված շրջաններում բացել խճուղիներն ու երկաթուղիները, վերականգնել փաստ-հեռագրական կապը Երևանից Ջուլֆա, Երևանից Իգդիր հատվածներում:

Որոշումը ստորագրել էին Արամը, Ս. Թորոսյանը, նահանգային Գործադիր կոմիտեի նախագահ Վանցյանը, քաղաքագլուխ Դ. Տոշյանը, Հովհ. Մելիքյանը, նահանգական ախունդ (մոլլա-պարսկերեն – Վ. Մ.) Միրզա Հուսեյն Կազիևը, Միրզա Հասանզադեն, Վահդ Քյազումովը, Միրզա Ալասքյար Ախունզադեն, Երևանի մահմեդական կոմիտեի վարչության անդամները[156]:

Խնդրի հետ առնչվող մի կարևոր փաստ ևս. վրացական ազգային արխիվի Ա. Չխենկելու ֆոնդում պահպանվում է «Մահմեդական շարժումները 1916-1920 թթ.» զեկույցը: Փաստաթղթերից մեկը վերաբերում է Երևանի ազգամիջյան համագումարին նախորդող օրերին Ախալցխայի գավառում մոլեգնող ելույթներին:

Առաջնորդվելով Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի փետրվարի 8-ի բանաձևով՝ բանակի շտաբի ռազմական ինտենդանտը (квартирмейстер) փետրվարի 12-ին անձամբ կոմիսար Ա. Չխենկելիին հույժ գաղտնի փոխանցում էր Կովկասյան ռազմական օկրուգի հակահետախուզության բաժանմունքի պետի հունվարի 17-ի զեկույցը՝ «Մահմեդական շարժումը Ախալցխայի գավառում» վերնագրով[157]:

---

[155] Տե՛ս «Վան – Տոսպ», Թիֆլիս 1918, 4 մարտի, թիվ 6, էջ 7-8:
[156] Տե՛ս նույն տեղում:
[157] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1831, оп. 1, д. 1, л. 40:

Փետրվարի 12-ին Երևան ժամանեց Կոմիսարիատի պատվիրակությունը՝ Մ. Ջաֆարով, Խ. Կարճիկյան և Շ. Ալեքսեև-Մեսխիև կազմով, որը մասնակցեց ազգամիջյան խորհրդի մի քանի նիստերին[158]: Սակայն հաշտարար բոլոր ջանքերը արդյունք չտվեցին և չէին էլ կարող տալ, քանի որ մահմեդականության նպատակները հետևողական էին, կազմակերպված ու նպատակային: Ազգամիջյան տարատեսակ խորհրդակցություններն ու համագումարը մահմեդական գործիչների կողմից հետապնդում էին ժամանակ շահելու նպատակ, ինչը նպաստում էր թուրքական առաջխաղացմանը: Մնացյալը փարիսեցիություն էր և կեղծիք:

Արշավիր Աստվածատրյանի վկայությամբ՝ համագումարում Մահմեդական ազգային խորհրդի ղեկավարությունը պաշտոնապես հայտարարում էր անգամ, որ իրենք անկարող են զսպել թաթարներին և խնդրում էին հայկական զինվորական ջոկատների աջակցությունը[159]:

Ստեղծվել էր մի իրավիճակ, որ գրեթե նույնությամբ կրկնում էր 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ընթացքը, երբ խաղաղարար, հաշտեցման նախաձեռնությունները արդյունք չէին տալիս հայկական կողմին, որը, պաշտպանվելով միայն, կորուստներ էր կրում: Այժմ՝ 1918 թ. փետրվար-մարտ ամիսներին, այդ ամենն ահագնացող վտանգ էր ներկայացնում թե՛ նահանգի և թե՛ Բաքվի և շրջակայքի հայ ազգաբնակչության համար:

Արխիվային նյութը փաստում է նաև, որ սկսած 1917 թ. դեկտեմբերի 28-ից մինչև 1918 թ. փետրվարի վերջը՝ Երևանի նահանգային իշխանությունները տասնյակ հաղորդագրություններ ու միջնորդություններ են ուղարկել Թիֆլիս՝ թե՛ Կոմիսարիատին և թե՛ երկրամասային խորհրդի Գործադիր կոմիտեին՝ Երևանի նահանգի գյուղացիական միլիցիան զինելու նպատակով[160]:

Կարևորում ենք այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Կոմիսարիատի ՆԳՆ գծով գործերի կառավարիչ Կարցիվաձեն այդ խնդ-

---

[158] Տե՛ս «Հորիզոն», 1918, 11 փետրվարի, թիվ 31:
[159] Տե՛ս Արամը, «Հայրենիք», Բոստոն, թիվ 2, 1951, էջ 33:
[160] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 113, թթ. 1-3, 12:

բանքները մերժում էր՝ դա հիմնավորվելով Թիֆլիսի պահեստներում զինամթերքի բացակայությամբ, ինչը բացահայտ սուտ էր[161]:

Ավելացնենք, որ այդ խռովությունները շարունակվեցին նաև թուրքական արշավանքին զուգահեռ 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին՝ ընդգրկելով հիմնականում Ծարուր–Նախիջևանի շրջանը, Սուրմալուի գավառը[162]:

Կարելի է եզրակացնել, որ 1917 թ. դեկտեմբեր-1918 թ. մարտ ժամանակահատվածում Երևան–Ջուլֆա–Ելիզավետպոլ երկաթուղագծի բազմաթիվ կայարաններում և հայ-մահմեդական համատեղ բնակչություն ունեցող հարակից շրջաններում թուրքական ռազմական գործակալների հրահրմամբ ու Կոմիսարիատի, ապա և Սեյմի վրացական ու թաթարական ղեկավար գործիչների նախաձեռնությամբ ու աջակցությամբ իրականացվեցին հակահայկական տարաբնույթ գործողություններ: Եթե Ելիզավետպոլի, Ծամխորի պարագայում դրանք առավելապես հակաբոլշևիզմի համատեքստում հակառուսական ուղղվածություն էին ստանում և այդպիսով օբյեկտիվորեն ուղղվում երկրամասի հայ բնակչության դեմ, ապա Երևանի նահանգում դրանք վերավոխվեցին ազգամիջյան ընդհարումների:

Հետագա իրադարձությունները վկայում են, որ այդ գործողությունները, հիմնականում հասել էին իրենց նպատակին: Հայկական նորաստեղծ զինուժը կաշկանդելով Երևանի նահանգի անարխիկ և բազմաթիվ ուղղություններով ծավալվող դեպքերի շղթայի մեջ՝ Թուրքիան հեշտությամբ գրավեց Արևմտյան Հայաստանը և մուտք գործեց Անդրկովկաս: Այս հեռատես քաղաքականության պատճառով նաև չհաջողվեց պաշտպանել Էրզրումը:

Այդ հանգույցի կիզակետում էր, իհարկե, Բաքվի մուսավաթական խռովության կազմակերպումը, ինչը հիմնական ծրագրի՝ պանթուրքիզմի իրականացման համատեքստում հետապնդում էր գերխնդիր՝ Բաքվի հայկական զինուժն ուղղել Երևանի նահանգ դրանով ձախողելով նաև Արևմտյան Հայաստանի ու միաժամանակ նաև Բաքվի պաշտպանության հիմնախնդիրը:

---

[161] Տե՛ս «Кавказское Слово», 1918, 21 февраля, № 41:
[162] Տե՛ս ՀԱԱ ֆ. 103, ց. 1, գ. 119, թթ. 1-2, 18, 23, 26, 31:

* * *

Այսպիսով՝ Անդրկովկասում 1917 թ. նոյեմբերին, ապա և 1918 թ. հունվար-փետրվար ամիսներին ստեղծվեց իշխանության գրավման իրական այլընտրանք: Առաջին անգամ բոլշևիկների կողմից իշխանությունը հնարավոր էր գրավել մինչև վրացական մենշևիկների կողմից Թիֆլիսի Զինապահեստի զավթումը, երկրորդ անգամ՝ Սարիղամիշից Կովկասյան բանակի զորամասերի առաջխաղացմամբ: Սակայն Բաքվի բոլշևիկների և անձամբ Ստ. Շահումյանի ծրագիրը չիրականացավ մի շարք պատճառներով:

1. Բոլշևիկների երկրամասային և Թիֆլիսի կոմիտեներում այդպես էլ չստեղծվեց միասնական կարծիք իշխանության գրավման հարցում: Մեծամասնությունը հակված էր մտածելու, որ հնարավոր էր Բաքվի նման, այսինքն՝ խաղաղ ճանապարհով հաստատել խորհրդային իշխանություն: Մեր կարծիքով՝ վճռական էր ազգությամբ վրացի բոլշևիկների, մասնավորապես Ֆ. Մախարաձեի էական հակազդեցությունը հայազգի բոլշևիկ Ստ. Շահումյանին և հատկապես այն ելակետային մոտեցումը, որ Բաքվի բոլշևիզմը, ի դեմս Ստ. Շահումյանի, առավելապես հայկական երևույթ էր դիտվում և առաջին հերթին ուղղվում էր վրացական ազգայնականության՝ մենշևիզմի դեմ: Այդ հակազդեցության առաջին և վճռական գործողությունները տեղ գտան Բաքու–Թիֆլիս երկաթուղու կայարաններում իրականացված հակառուսական գործնական քայլերում զինվորների սպանդով, ինչն ուղղակիորեն առնչվում էր Թիֆլիսի գրավման հիմնահարցին: Վրացական մեծամասնություն ունեցող բոլշևիկների երկրամասային կոմիտեն մերժեց նաև Սարիղամիշից Թիֆլիս շարժվող բոլշևիկյան զորամասերի ու նրանց հետ նաև բոլշևիկ ղեկավար գործիչների աջակցության գործը:

Թիֆլիսին մոտեցած զինվորական գնացքները, մի շաբաթից ավել սպասելով երկրամասային կոմիտեի կարգադրությանը, ստիպված հեռացան Հյուսիսային Կովկաս: Փետրվարի 6-ին էսէռներն արդեն Անդրկովկասում չէին[163]:

[163] Տե՛ս «Հորիզոն», 1918, 6 փետրվարի, թիվ 27:

2. Ելիզավետպոլի, Շամխորի դեպքերից հետո ակնհայտ էր դառնում, հատկապես Դաշնակցության համար, որ փոխադարձ համաձայնությամբ և ընդհանուր թշնամու՝ բոլշևիզմի դեմ ստեղծված կառավարության մեջ առկա են բևեռային տարաձայնություններ, ազգային հիմնահարցերի լուծմանը հասնելու իրարամերժ ուղիներ: «Մենշեւիկ սոցալ-դեմոկրատիայի լուծը օրէցօր անտանելի է դառնում»[164],– արձանագրում էր «Աշխատավորը»: «Յեղափոխութեան հենց առաջին օրերից մենշևիզմը կարողացաւ ճարպկօրեն յարմարուել մեր միջավայրին – նախ՝ զարդարուել «միջազգայնականութեան» գոյնզգոյն փետուրներով, ապա՝ ամէն միջոցներով չեզոքացնել Անդրկովկասի քաղաքական կեանքից բոլոր ոչ մենշևիկներին և երրորդ՝ յայտնի և գաղտնի բլոկի մէջ մտնել կալւածատէրերի հետ: Նա կարողացաւ՝ յենուելով կալւածատէրերի վրայ՝ մեկուսացնել կամ անվտանգ հեռաւորութեան վրայ պահել սոցիալիստ-յեղափոխականներին, բոլշևիկներին ու դաշնակցականներին և այդպիսով իր քաղաքական հեգեմոնիան հաստատել»[165]: Արժեքավոր էր այն, որ այս սթափ վերլուծությունն անում էր հենց Դաշնակցությունը, հատկապես Ստ. Շահումյանի կողմից Թիֆլիսի գրավման ճախողումից հետո: Գոնե խոսքով Դաշնակցությունը համոզվեց, որ տվյալ քաղաքական զարգացումների հորձանուտում հայկականության ու նաև Դաշնակցության գլխավոր հակառակորդը վրացական մենշևիզմն է: Պետք է ընդգծել, իհարկե, որ Կովկասի բոլշևիկների հետ համագործակցության փաստը դրսևորվում էր այնքանով, որքանով դրա անվիճելի ղեկավար-հեղինակություններ էին համարվում Ստ. Շահումյանը, Գ. Ղորղանյանը, այլ խոսքով՝ առավելապես ազգային գործիչները:

Գործնականում զգալով մենշևիզմի ուժը և կրելով առաջին պարտությունը 1918 թ. փետրվարի սկզբին՝ Դաշնակցությունն անգամ կոչեր էր անում, որ «փրկութեան միակ ճանապարհը բոլոր սոցիալիստական տարրերի անվերապահ ու անյապաղ միացումն է»[166]: Անհավատալի է, բայց սոցիալիստների շարքում Դաշնակցությունն այժմ տեսնում էր նաև բոլշևիկներին: «Մենշևիկները շատ լաւ են

---

[164] Տե՛ս «Աշխատավոր», 1918, 4 փետրվարի, թիվ 15:
[165] Նույն տեղում:
[166] Տե՛ս «Աշխատավոր», 1918, 4 փետրվարի, թիվ 15:

զգում՝ թե որչափ վտանգաւոր է իրենց դիկտատուրայի համար բոլշևիկների, սոց.-յեղափոխականների, դաշնակցականների և թիւրք սոցիալիստների միութիւնը, ակտիւ մասնակցութիւնը Անդրկովկասի քաղաքական կեանքին»,– գրում էր Թիֆլիսի Դաշնակցության մարմին «Աշխատավոր» թերթը[167]:

Միաժամանակ հայ ազգային-դեմոկրատական կուսակցությունը կրկին հայտնվում էր հակասության մեջ. մի կողմից՝ գտնում էր, որ «հեղափոխութեան ու Կովկասեան ժողովուրդների ազատութիւնը փրկելուն կարելի է հասնել Անդրկովկասեան սոցիալիստական ինտերնացիոնալիստական միութիւն» ստեղծելու միջոցով, մյուս կողմից՝ մի շաբաթ հետո արդեն Սեյմի կազմում կուսակցությունը միացավ այդ նույն վրացական-բեկական դաշինքին: Այդ քաղաքական վճռի կայացման գործում, մեր կարծիքով, որոշիչ դեր խաղաց նաև Ստ. Շահումյանի ռազմավարության ձախողումը: Պատահական չէ, որ մեկ ամիս անց Դաշնակցությունն առանց վարանումի նվիրվեց Բաքվի և խորհրդային իշխանության պաշտպանությանը:

3. Անկախ քաղաքական կեցվածքից՝ ռուսական Կովկասյան բանակի հեռացումն Անդրկովկասից ու Թիֆլիսից նախ և առաջ բխում էր վրացական գործիչների հակառուսական տրամադրություններից և «Մեծ Հայաստանի» հնարավոր ստեղծման տագնապից, ինչը գոնե հռչակագրի տեսքով հայտարարում էր Պետրոգրադի իշխանությունը: 1917 թ. նոյեմբերից Անդրկովկասում մենշևիկների և բոլշևիկների հակամարտությունը դրսևորվեց ոչ թե սոցիալ-դեմոկրատիայի երկու թևերի մարտավարությունների պայքարի, այլ երկու մեծ ու կարևորագույն ազգային-քաղաքական ուժերի՝ հայ-վրացի, Դաշնակցություն-մենշևիզմ, Շահումյան-Ժորդանիա առճակատման տեսքով: Բոլշևիկյան Ռուսաստանի հեռանալն Անդրկովկասից իրական հնարավորություն էր ստեղծում երկրամասում վրացական տարրի գերիշխանության հաստատման համար: Թիֆլիսի գրավումը խորհրդայնացման ճանապարհով կնպաստեր Բաքվում և Արևելյան Անդրկովկասում հայության դիրքերի կայունացմանը, կզսպեր մահմեդական խռովությունների ալիքը, միգուցե և կանխեր թուրքական

[167] Նույն տեղում:

արշավանքը: Սակայն, կար մի հիմնավոր պատճառ, որը անհնար էր դարձնում այդ ծրագրի իրականացումը, ինչը հասկանալի, օբյեկտիվ պատճառների առկայության պայմաններում չի քննարկվել նաև խորհրդահայ պատմագրության կողմից: Խնդիրը հենց Ռուսաստանում բոլշևիկյան իշխանության պահպանման հարցի մեջ է: Բրեստ-Լիտովսկի ողջ գործընթացը մի գլխավոր նպատակի էր ծառայում՝ տարածքային կորուստների գնով պահպանել իշխանությունը: Այդ մեծ քաղաքականության բաղկացուցիչներից էր նաև Վ. Լենինի և Լ. Տրոցկու հրամանով Կովկասյան բանակի զորամասերի շտապ ետ կանչը դեպի Հյուսիսային Կովկաս, ապա՝ և Ռուսաստան: Ստացվում էր, որ բոլշևիկյան կենտրոնական կառավարությունը հատուկ և ծանրակշիռ կերպով առայժմ մտահոգված չէր Անդրկովկասի խորհրդայնացման ծրագրով: Ստ. Շահումյանին օժտելով արտակարգ լիազորություններով՝ Լենինն ու Ստալինը միաժամանակ ոչ մի կարգադրությամբ, ոչ մի գործուն միջոցներով չէին ազդում երկրամասային ու Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեների վրա: Ստ. Շահումյանն իր հեղինակությամբ և Սարիղամիշի մեկ-երկու զորամասերի միջոցով պետք է իրականացներ մի բան, ինչն անգամ սեփական ուժերով չէին արել բոլշևիկները Պետրոգրադում:

Որպես երկրորդ կարևորագույն խոչընդոտ՝ հանդես է գալիս վրաց-թաթարական ամրապնդվող դաշինքը, որի հակառուսական ուղղվածությունը երկրամասի ռազմաքաղաքական զարգացումների տրամաբանության մեջ փոխակերպվում էր հակահայկական քաղաքականության: Ելիզավետպոլ–Շամխորի դեպքերը դարձան այն գլխավոր ջրբաժանը, երբ տուն վերադարձող ռուսական զորամասերը Անդրկովկասյան կոմիսարիատի վրաց-թաթարական վայրագ գործելակերպի արդյունքում ատելությամբ էին թողնում երկրամասի սահմանները, օր առաջ փորձում էին փախչել թշնամական միջավայրից:

Եվ վերջապես, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ միայն բոլշևիկյան Բաքվի և մի քանի զորամասերի միջոցով հնարավոր չէր նույն հեշտությամբ հաջողության հասնել Անդրկովկասի քաղաքական կենտրոնում՝ Թիֆլիսում, որի ազգային միջավայրում բոլշևիզմն իրոք դիտվում էր որպես օտար, անլուրջ և զազրելի մի երևույթ, որպես դեմոկրատիայի թշնամի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԲԱՔՎԻ ԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

2.1. ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ԵՎ ԲԱՔՎԻ՝ ՈՐՊԵՍ ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԻ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1914-1918 ԹԹ.

1918 թ. հունվար-ապրիլ ամիսների ընթացքում երիտթուրքական և թաթար ազգայնականների քաղաքականության գլխավոր թիրախը Կովկասում դարձավ Բաքուն: Քաղաքն ընկալվում էր որպես հայկականության, ռուսական գործոնի և, իհարկե, վերջինիս հետ նույնացվող ոչ ցանկալի խորհրդային իշխանության հզոր հենկետ: Դա մեծապես խոչընդոտում էր պանթուրքիզմի ծավալման և Ադրբեջան «ազգային» պետության ստեղծման ծրագրերին: Բաքվի գրավումը և մեկուսացումը նախ և առաջ Ռուսաստանից ենթադրում էին ինչպես արտաքին ռազմաքաղաքական, պանթուրքիստական, տնտեսական (նավթային), այնպես էլ միաժամանակ մի խումբ հիմնահարցերի ամբողջություն՝ պայքար իշխանության համար և բոլշևիզմի դեմ, ուժերի վերադասավորում՝ հօգուտ մահմեդականության և այստեղից էլ՝ հակազդեցություն հայկական տարրին ու նրա քաղաքական ու տնտեսական ուժեղ ազդեցությանը:

1889 թ. Բաքու քաղաքի ազգաբնակչության ընդհանուր թիվը կազմում էր 92600, որից, ըստ դավանանքի, շիա մահմեդականները՝ 39508 (գլխավորապես թաթեր), հայերը՝ 25897, ռուսները՝ 22693 (դրանց մեջ աննշան թիվ են կազմում վրացիները), ռուս մոլոկանները և այլ աղանդավորներ (պրիգուն, դուխոբոր, հնածես, ներքինի և այլն)՝ 970, կաթոլիկները՝ 1211, լյութերականները՝ 1919, հրեաները՝ 402: 39508 շիա մահմեդականներից թաթեր էին 29631-ը, իսկ 9877-ն ունեին թյուրքական ծագում: 1889 թ. ներկայիս Ադրբեջանի մայրաքաղաքում բնակվում էր մոտ 7000 կովկասյան թաթար, նրանք կազմում էին բնակչության 7-8 %-ը:

Հետևում է, որ 19-րդ դարի 80-ական թվականների վերջերին Բաքվում թաթերից հետո երկրորդ տեղը զբաղեցնում էին հայերը: Կովկասյան թաթարները Բաքվում ապրում էին հիմնականում քաղաքի հին հատվածում, բերդ-ամրոցի շրջակայքում և Չեմբերիքենդում[168]:

1897 թ. հունվարի 28-ի մարդահամարի տվյալներով՝ Բաքուն ուներ 111904 ազգաբնակչություն, որից հայ՝ 19.099, ամբողջ բնակչության 17,1 %-ը, երրորդը՝ թաթարներից ու ռուսներից հետո: Թաթարները կազմում էին 41155 (36,8 %), ռուսները՝ 38965 (34,8 %): Շամախիի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանցի տվյալների համաձայն՝ նույն 1897 թ. Բաքուն ուներ 45402 հայ բնակիչ[169]:

19-րդ դարի երկրորդ կեսից և դարավերջից Բաքուն Թիֆլիսից հետո դարձավ արևելահայերի տնտեսական ու մշակութային կյանքի ամենախոշոր կենտրոնը՝ առաջ անցնելով Շամախիից, Նուխիից, Շուշիից և Գանձակից:

Քաղաքաշինության բնագավառում նշանակալի էր հայազգի ճարտարապետներ Գ. Տեր-Միքելյանի, Վ. Սարգսյանի, Ն. Բանի, Հ. Տեր-Հովհաննիսյանցի (Քաջազնունի) և Ֆ. Աղալյանի ավանդը, որոնց կառուցած բնակելի տները, հասարակական ու մշակութային կոթողային շինությունները կանգուն են ցարդ և զարդարում են ներկայիս Բաքուն:

Բաքվի խոշոր ձեռնարկատերերի շարքում մեծ տոկոս էին կազմում հատկապես հայ նավթարդյունաբերողները՝ Ալեքսանդր Մանթաշյանց, Փիթոյան եղբայրներ, Ղուկասյան եղբայրներ, Ղորղանյան եղբայրներ, Օրբելյան եղբայրներ, Առաքել Ծատուրյանց, Հովհաննես Միրզոյան, Գևորգ Լիանոսյան, Մայիլյան եղբայրներ, որոնք և հիմնեցին սաղմնային վիճակում գտնվող Բաքվի նավթարդյունաբերությունը: Նավթի առաջին շատրվանը 18 սաժեն խորությունից 45 մ

---

[168] Տե՛ս Баку и его окрестности (Приложение к справочной книге стирожили «Кавказ», № 4), Тифлис, 1891, с. 63-65, 68, հանգամանորեն տե՛ս **Ստեփանյան Գ. Ս.,** Բաքվի նահանգի հայությունը XIX դ. երկրորդ կեսին, պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Երևան, 2010, էջ 109-147:

[169] Տե՛ս **Ստեփանյան Գ. Ս.,** նշվ. աշխ., էջ 109-147:

բարձրությամբ ժայթքեց Բալախանիում՝ 1873 թ. հունիսի 13-ին հայազգի «Գ. Վերմիշև և 4^0» ընկերությանը պատկանող նավթադաշտում[170]:

1890 թ. դրությամբ 226 մլն փութ նավթի հանույթի 46 %-ը պատկանում էր հայերին, 47,3 %-ը՝ ռուսներին և եվրոպացիներին, իսկ 6,7 %-ը՝ կովկասյան այլ ազգությունների[171]:

Մինչև Առաջին աշխարհամարտը Բաքուն գերմանական նվաճողական ծրագրերի կիզակետում էր և կրում էր հիմնականում երկրամասի տնտեսական գաղութացման ու յուրացման բովանդակությունը: Բոլշևիկ ղեկավարներից Գ. Զինովևը 1915-1917 թթ. ընթացքում էմիգրացիայում շարադրում է «Պատերազմը և սոցիալիզմի ճգնաժամը» ուսումնասիրությունը, որտեղ առանձին բաժին է հատկացնում «թուրքական հարցին»[172]: Նա համոզված էր, որ «թուրքական հարցը», Կոստանդնուպոլիսը դարաշրջանի համաշխարհային քաղաքականության գլխավոր հանգույցն են: «Իմպերիալիստական պատերազմների» մասին լենինյան հայեցակետից ելնելով՝ Գ. Զինովևը ևս գտնում էր, որ «գերմանական իմպերալիզմը առայժմ շահագրգռված է Թուրքիայի, այսպես կոչված, «անկախության» պահպանման հարցում: Պարզ ասած՝ նա դեմ էր Թուրքիայի բաժանման այն պլանին, որին հետևում էին հակագերմանական տրեստի իմպերալիստները»[173]: Ավելին, Գերմանիայի արևելյան-ասիական արտաքին քաղաքականությունը վերջինիս օբյեկտիվորեն մղում էր դեպի Թուրքիայի պաշտպանությունը: Դեռ 1888 թ. Կայզեր Վիլհելմ 2-րդը հռչակեց Թուրքիայի ամբողջականության պաշտպանությունը, գերմանական մի կոմպանիա ստացավ Անատոլիական երկաթուղու՝ Իսմիթ–Անկարա գծի կառուցման և շահագործման առաջին կոնցեսիան, ինչպես նաև Դիարբեքիր–Բաղդադ հատվածի իրավունքը:

---

[170] Տե՛ս **Гулишамбаров С.,** Об изменении рельефа Каспия, Общая причина изменения рельефа суши, вып. 1, Баку, 1878, с. 15-16:

[171] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թթ. 27-28 (ըստ՝ **Ստեփանյան Գ. Ս.,** նշվ. աշխ., էջ 145):

[172] Տե՛ս **Зиновьев Г.,** Сочинения, Война и кризис социализма, т. 8, Ленинград, 1926, с. 313-326:

[173] Նույն տեղում, էջ 314:

1890 թ. կնքվեց գերմանո-թուրքական առաջին առևտրական պայմանագիրը:

Երկաթուղային նախագծերից կարևորագույնը Բաղդադի երկաթուղու շինարարությունն էր: 1903 թ. այդ կոնցեսիան ստացավ գերմանական ընկերությունը, որի թիկունքում կանգնած էր Deutsche Bank-ը: Ճանապարհը ձգվելու էր փոքրասիական Քոնիա քաղաքից մինչև Բասրա: 1912 թ. արդեն պատրաստ էր Քոնիա-Էրգելի հատվածը: Ավելի ուշ սկսվեց Աղանայի ու Քիլլիսայի վրայով դեպի Դամասկոս ուղու կառուցումը, որի հարևանությամբ ձգվում էր արդեն գործող Բեյրութ–Դամասկոս Մեղինա–Մեքքա գիծը: Եվ, վերջապես, Քիլլիսայից ճանապարհը անցնելու էր Խառանի, Մոսուլի, Բաղդադի և Բասրայի վրայով, որտեղից և կապվելու էր Պարսից ծոցի նավահանգիստներից մեկի հետ: Բեռլին–Բաղդադ–Բասրա երկաթուղու կառուցումը, ըստ հեղինակի, վիթխարի ռազմավարական նշանակություն էր ստանում Թուրքիայի համար, իհարկե, և Գերմանիայի: Այն սպառնում էր Պարսից ծոցում Անգլիայի անբաժան տիրապետությանը, մասնավորապես, Գերմանիայի ու Անգլիայի միջև ժամանակակից պատերազմին բերած գլխավոր գործոններից էր, և բացում էր Առաջավոր Ասիան գերմանական կապիտալի կողմից գրավելու հնարավորությունը[174]:

Գ. Զինովևը նշում էր, որ «Ավստրիայի հանճարեղ ֆինանսների նախարար Բրուքը մտմտում էր Համբուրգից մինչև Բասրա միասնական մաքսային-տնտեսական միության ստեղծման մասին: Վերջինս Բեռլին-Բաղդադ երկու բառի մեջ անգլիական իմպերալիզմի դեմ գերմանական իմպերալիզմի քաղաքականության մի ամբողջ ծրագիր էր տեսնում: Իսկ Բեռլին-Կոստանդնուպոլիս երկու բառերը ամփոփում են վերջինիս քաղաքականությունը ռուսական իմպերալիզմի դեմ»[175]: 1898 թ. նոյեմբերին Վիլհելմ 2-րդը Դամասկոսում թատերական պայմաններում արտասանված ճառում հայտարարեց. «Թող իմանա սուլթանը, և թող իմանան 300 միլիոն մահմեդականները,

[174] Տե՛ս **Зиновьев Г.**, նշվ. աշխ., էջ 317:
[175] Տե՛ս նույն տեղում, էջ 319:

որոնք ցրված են երկրի վրա և ի դեմս սուլթանի տեսնում են իրենց խալիֆին, որ գերմանական կայսրը միշտ և անփոփոխ կլինի իրենց բարեկամը»[176]:

Անգլո-ռուսական համաձայնագրից ու հատկապես «ռևելյան» հանդիպումից հետո Թուրքիայի և Գերմանիայի «բարեկամությունը» վերջնականապես ամրապնդվեց: Թուրքական քաղաքական գործիչները ղեկավարվում էին այն մտայնությամբ, որ այժմ իրենք չեն կարող այլևս օգտագործել անգլո-ռուսական մրցակցությունը, որը միակն էր, որ թույլ էր տալիս շնչել Թուրքիային: Թուրքիային մնում էր մինչև վերջ պաշտպանվել Անգլիայի դեմ, ուստի և նա հայտնվում էր Գերմանիայի երախում[177]: Գերմանական ծայրահեղ սոցիալ-իմպերալիստներից Հ. Կունովը գտնում էր, որ «Թուրքիան մեծ տերությունների խաղալիքն է»[178]:

Գ. Զինովևը կարծում էր նաև, որ երիտթուրքական հեղաշրջումը միառժամանակ փոխեց իրերի դրությունը: Երիտթուրքերը Գերմանիայի հանդեպ առանձնակի նուրբ զգացմունքներ չէին տածում: Ավստրիական սոցիալ-դեմոկրատ Օտտո Բաուերի համոզմամբ՝ «Գերմանիան էր, որ հովանավորում էր թուրքական ֆեոդալիզմին, Գերմանիան էր օգնում խեղդել Մակեդոնիային, ***Գերմանիան էր խրախուսում հայերին արմատախիլ անելը*** (ընդգծումն իմն է – Վ. Մ.):

Բայց Թուրքիայի կախումն այնքան ուժեղ էր Գերմանիայից, որ «վերափոխված» Թուրքիան մնաց գերմանական իմպերալիզմի վասալ»[179]: Սկսած 19-րդ դարի վերջից՝ գերմանական «Deutsche Bank»-ը փորձում էր տեր դառնալ Կովկասի նավթային կենտրոնին, ինչն ինքնին ենթադրում էր Բաքուն ռուսական ազդեցության ոլորտից խլելու ենթատեքստ: Նոբելի խոշորագույն նավթարդյունաբերական ընկերության միջոցով, ինչպես նաև հայազգի Ս. Լիանոզովի (Ստե-

---

[176] Տե՛ս **Зиновьев Г.**, նշվ. աշխ., էջ 319:
[177] Տե՛ս նույն տեղում, էջ 320:
[178] Նույն տեղում:
[179] **Otto Bauer**, «Der Balkankrieg und die deutsche Weltpolitik», Berlin, 1912, s. 45, ըստ՝ **Զինովև Գ.**, նշվ. աշխ., էջ 320:

փան Լիանոսյան) «Նավթի արտադրության Լիանոզովի ընկերության» աջակցությամբ, 1913 թ. սկսած, «ռուսական» նավթը սկսեց հոսել Գերմանիա: Տեսակարար կշռով զիջելով անգլո-ֆրանսիական կապիտալին՝ գերմանական ձեռնարկատերերը փորձում էին նաև իրենց վերահսկողությունը հաստատել երկրամասի լեռնահանքային արդյունաբերության վրա: «Սիմենս» ընկերությունը, օրինակ, ստացավ Գետաբեկի պղնձահանքերի շահագործման բաժնեմասը[180]: Այս գործընթացը հասունացնում էր Բաքուն և ամբողջ Կովկասը զենքի ուժով գրավելու ծրագիրը:

Ուշագրավ է, որ արդյունքում նախատեսվում էր ստեղծել «Թիֆլիսի փոխարքայություն»: Այդ մասին է վկայում դեռ 1907 թ. Գերմանիայում լույս տեսած Ռուդոլֆ Մարտինի «Բեռլին-Բաղդադ» աշխատությունը: Ձևավորվում էր հզոր լրտեսական ցանց, քայքայիչ գործունեության կենտրոններ էին դառնում Անդրկովկասի գերմանական գաղութներ Եկատերինենֆելդը և այլն: Լրտեսական հետախուզական աշխատանքների կենտրոն էր դառնում Թիֆլիսը, որտեղ գործում էր հանրահռչակ կոմս ֆոն Շուլենբուրգը, նկատելի դեր ունեին Կարսի հյուպատոս Անդերսը և գերմանական այլ դիվանագետներ[181]:

Այս կապակցությամբ համառոտ ներկայացնենք նաև Առաջին աշխարհամարտի նախօրեին թուրք-վրացական մերձեցման հիմնահարցը:

«Վրաստանի փրկության կոմիտե» կազմակերպության անվան տակ մի խումբ վրաց ազգային գործիչներ 1914 թ. ամռանը թուրքերի հետ Գերմանիայի հավանությամբ կնքեցին համաձայնություն, որը ըստ էության, հակառուսական բնույթ էր կրում և հետապնդում էր այդ դաշինքի արդյունքում Վրաստանի անկախության հռչակում: Անկախ Վրաստանի սահմանը անցնելու էր ուղիղ գծով մինչև Սևանա լիճը, որի հյուսիսային մասը պատկանելու էր Վրաստանին, այնտե-

---

[180] Տե՛ս **Токаржевский Е. А.**, Бакинские большевики в борьбе против германо-турецких интервентов в Азербайджане в 1918 году, Труды, IV, Баку, 1947, с. 9:

[181] Տե՛ս Германские оккупанты в Грузии в 1918 г. (Сборник документов и материалов), Тбилиси, 1992, с. 10-11:

ղից էլ՝ մինչև Կաղզվան ու Արդանուճ[182]: Նմանատիպ հեռանկար էր հետապնդում նաև երիտթուրքերի և ՀՅԴ միջև Էրզրումի 1914 թ. համագումարը, որտեղ Հայ ազգային-դեմոկրատական կուսակցությունն ի վերջո ստիպված ընտրեց ռուսական կողմնորոշում:

Ըստ թուրք-վրացական համաձայնության՝ համատեղ գործող բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը պատկանելու էր Կովկասյան ռազմաճակատի թուրքական գլխավոր հրամանատարին: Փոխշահավետությունը կայանում էր հետևյալում. թուրքական կառավարությունը ստանում էր մի շարք իրավունքներ. ա) պատերազմի ողջ ընթացքում օգտվելու էր երկաթուղուց և հաղորդակցության այլ միջոցներից, բ) զինվորական կարիքների համար վրացական կառավարության օժանդակությամբ իրականացնելու էր բռնագրավումներ, գ) զինվորական օրենքների հրապարակումը պատկանելու էր Թուրքիային: Թուրքիան իր հերթին պարտավորվում էր՝ ա) ճանաչել Վրաստանի անկախությունը, նրա անվիճելի իրավունքները մի տարածքի վրա, որը 1. ներառում էր Սև ծովի ափը՝ Դակովսկից ուղիղ գծով մինչև Աբաշիր, այնտեղից՝ ուղիղ գծով մինչև Էլբրուս (որը գտնվելու էր Վրաստանի տիրապետության տակ), մինչև Բալթա ու Ասակով, այնտեղից էլ՝ Սալավաթ, մինչև Գեոքչա (Սևանա լիճ – Վ. Մ.), որի հյուսիսային մասը կպատկաներ Վրաստանին: Գեոքչայից սահմանն անցնում էր մինչև Բալվան և Արդանուճ, որը մտնում էր Վրաստանի կազմի մեջ, Արդանուճից 1913 թ. ռուս-թուրքական սահմանով անցնում էր մինչև Ճորոխ գետը: 2. Թուրքիան չպետք է ընդդիմանար, եթե Ճորոխի ձախ ափին (Լազիստանում – Վ. Մ.) ձևավորվեր վրացական ժամանակավոր կառավարություն և այլն:

«Վրաստանի փրկության կոմիտեն» պարտավորվում էր՝ ա) օժանդակել թուրքական զորքերին, բ) ընդդեմ Ռուսաստանի մղել թուրքական պրոպագանդա, գ) նպաստել Վրաստան մուտք գործող թուրքական զորքերի հանդեպ բարեկամական ընդունելությանը,

---

[182] Տե՛ս **Գեղամեանց Ե. Ա. քահ.**, Տաճիկները Կովկասում և Բագուի անկումը, պրակ առաջին, Բագու, 1919, էջ 22-23:

դ) ռուսական ռազմաճակատի իրադարձությունների վերաբերյալ թուրքական կողմին հետախուզական տեղեկություն հաղորդել[183]:

Երիտթուրքերը դեռ 1913 թ. Դերբենդում, Բաքվում, Գյոքչայում, Աղդաշում, Նուխիում և Քյուրդամիրում ստեղծել էին տեղական կուսակցական կոմիտեներ: Ինչ վերաբերում էր Կովկասյան թաթարներին, ապա նրանք իրենց «ազգային շարժման» կենտրոն էին հռչակել Ելիզավետպոլը, որտեղ իշխանությունն ամբողջությամբ գտնվում էր մահմեդական արմատական կազմակերպությունների ձեռքին: Այնտեղ գործում էին «Մուսուլմանական հասարակական կազմակերպությունների խորհուրդը»՝ Ալի Մուրադ-բեկ Թոփչիբաշիևի գլխավորությամբ, և նրա գործադիր կոմիտեն՝ Մամեդ Հասան Հաջինսկու ղեկավարությամբ: Գործադիր կոմիտեի կազմում էին Աղիլխան Ջիաթխանովը, Շաֆի բեկ Ռուստամբեկովը, Ասլան բեկ Սաֆիքյուրդսկին, Խուդաատ բեկ Ռաֆիբեկովը, Նասիբ բեկ Ուսուբբեկովը, Ալեսքյեր բեկ Խասամամեդովը, գնդ. Էֆենդիևը և ռոտմիստր (կապիտան) Ուլուբիևը[184]:

1916-1918 թթ. ընթացքում պանթուրքիզմը նոր զարգացումներ ապրեց:

1916 թ. Ռուսաստանի թաթար գործիչների մի խումբ Լոզանի «Ազգությունների խորհրդաժողովի» կողմից հաստատված ուղերձով դիմեց ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին, որտեղ ռուսական թաթարների, բաշկիրների, ղրղզների, սարտերի, խազարների, թուրքմենների և լեռնականների անունից՝ 25 մլն թվաքանակով, խնդրում էր «օգնության հասնել և փրկել այդ ժողովուրդներին վերջնական ոչնչացումից»: Այդ փաստաթուղթը ստորագրվել էր ռուսաստանյան պանթուրքիստների առաջնորդներ Ղազի Աբդուռաշիդ Իբրահիմի, Ահմեդ Աղաևի, Յուսուֆ-Ակչուրայի և Ալի Հուսեյնզադեի կողմից: Նույն Լոզանի խորհրդաժողովում ռուսաստանյան թուրք-թաթարների համար պահանջվում էր ինքնավարություն, իսկ Խիվայի ու Բուխարայի համար՝ անկախություն: Այնուհետև բոլոր պատգամավորները, մի քայլ էլ

[183] Տե՛ս **Գեղամեանց Ե. Ա. քահ.**, նշվ. աշխ., էջ 25-30:
[184] Տե՛ս **Շահումյան Ստ.,** ԵԼԺ, հ. 4, էջ 113-114:

առաջ գնալով, ցանկություն հայտնեցին դաշնային կապերով միավորվել Թուրքիայի հետ[185]:

1917 թ. ռուսաստանյան Փետրվարյան հեղափոխությունը այլ ազգերի շարքում նոր հեռանկարներ առաջադրեց նաև ռուսաստանում ապրող թուրք-թաթարներին: Այն հնարավորություն տվեց նրանց ազգային պահանջների ձևակերպման համար:

Կովկասի թաթար-մահմեդականների ազգային ինքնագիտակցության առաջացման վճռական շրջադարձը սկսվել էր Փետրվարյան հեղափոխությամբ: «Բալթիկի ափերից մինչև Արաքս և Ղրիմից մինչև հեռաւոր Սիբիր տարածուող մոտ 20 միլիոնանոց մահմեդականութիւնը սկսում է շարժել»[186],– գրում էր 1918 թ. առաջին համարում «Հորիզոնը»: Ստեղծվեց կուսակցությունների ու կազմակերպությունների համակարգող՝ «Մահմեդական հասարակական կազմակերպությունների խորհուրդը»՝ Ա. Թոփչիբաշիևի և Մ. Հաջինսկու գլխավորությամբ[187]: Թաթարական ազգայնականության տակ սկզբնական փուլում հասկացվում էր թյուրքիզմը, պանիսլամիզմը: Գաղափարական այդ հենքն էին կրում Մուսավաթը (Հավասարություն), Ապակենտրոնացում թյուրքական կուսակցությունը՝ ֆեդերալիստները և Անկախ դեմոկրատների խումբը (Ա. Թոփչիբաշև, Ֆ. Խան-Խոյսկի): Սոցիալիստական-բոլշևիկամետ հոսանքը ներկայացնում էին Ն. Նարիմանովի գլխավորած «Հումմեթը» (Եռանդ), Պարսկաստանից ներգաղթած գործիչների (Ա. Ղաֆարզադե, Բ. Աղազադե) հիմնած «Ադալաթ» կուսակցությունները: Հոգևորական-կալվածատիրական խավերը ներկայացնում էր 1917 թ. սեպտեմբերին Բաքվի «Մահմեդականները Ռուսաստանում» և Ելիզավետպոլի «Իսլամի միություն» կազմակերպությունների միաձուլմամբ ստեղծված Ռուսաստանի մահմեդականների «Իթթիհադ» (միություն) կուսակցությունը, Շամախիում գործող Միլլի (ժողովուրդ) կոմիտեն և այլն: «Իթ-

---

[185] Տե՛ս **Зареванд**, Турция и Пантуранизм Париж, 1930, с. 110.

[186] «Հորիզոն», 1918, 3 հունվարի, թիվ 1:

[187] Տե՛ս **Балаев А.,** Азербайджанское национально-демократическое движение в 1917-1920 гг., Баку, 1980, с. 5:

թիհադը» մերժում էր թյուրքիզմը, չէր ընդունում ադրբեջանականության գաղափարը:

Կովկասի թաթարների ազգային շարժման, այլ խոսքով՝ երկրամասի պանթյուրքիզմի կենտրոնն իրավամբ պետք է համարել Ելիզավետպոլը (Գանձակ), որտեղ իշխանությունն ամբողջությամբ գտնվում էր մահմեդական կազմակերպությունների ձեռքին: Այստեղ Փետրվարյան հեղափոխությունից հետո կազմակերպվեց ֆեդերալիստների կուսակցությունը՝ Ն. բեկ Ուսուբբեկովի ղեկավարությամբ: Նրանք առաջինն էին, որ կուսակցության ծրագրում օգտագործում էին «Ադրբեջան» հասկացությունը[188]:

1917 թ. ընթացքում կազմակերպված բազմաթիվ մահմեդական համագումարներում ընդունված բանաձևերը սկզբում չէին բարձրացնում Ռուսաստանից անհապաղ անջատման հիմնահարցը: Գ. Ռասուլ Զադեի պատկերավոր բնորոշմամբ թուրք-թաթարները ուզում են «համառուսական տան մեջ սեփական բնակարան»[189]:

1917 թ. ապրիլի 15-20-ը Բաքվում կայացած Կովկասի մահմեդականների համագումարում հայտարարվեց, թե «այլեւս ներհակութիւն կամ տարբերութիւն չկայ Սյունի եւ Շիա կրօնական հատուածների միջեւ, թե ամբողջ աշխարհի մահմեդականները մի մարմին եւ մի հոգի են»[190]:

Համաժողովը հավանություն չտվեց Կովկասի թաթարներին ինքնավար միավորի կարգավիճակ շնորհելու գաղափարին, ինչը պայմանավորված էր Ժամանակավոր կառավարության հետ հակասություններից խուսափելու և Ռուսաստանի մյուս մահմեդական ժողովուրդների հետ գործողությունների միասնական գիծ մշակելու անհրաժեշտությամբ[191]: Կովկասի թաթար միլիոնատեր Ա. Թաղիևը դեմ արտահատվեց համաժողովի ընդունած որոշման մեջ «Ադրբեջան» անվան ներառմանը՝ գտնելով, որ դա կառաջացներ Ժամանակավոր

---

[188] Տե՛ս **Կնյազյան Դ.,** Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008, էջ 7-9:
[189] Տե՛ս նույն տեղում, էջ 111:
[190] Տե՛ս **Գիլխանդանեան Ա.,** Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1941, ԺԹ տարի, հուլիս, N 9, էջ 97:
[191] Տե՛ս **Балаев А.,** նշվ. աշխ., էջ 103-104:

կառավարության անհանգստությունը: Նրա կարծիքն ընդունվեց, և «Ադրբեջան» եզրույթը հանվեց[192]:

1917 թ. մայիսի 1-ին Մոսկվայում կայացած համամահմեդական համագումարում նույն Գ. Ռասուլ Զադեն արդեն պահանջում էր յուրաքանչյուր թուրք-թաթարական էթնիկ խմբի համար ինքնավարություն՝ մեկ անգամ ևս միավորման գաղափարը թողնելով ապագային. «Յուրաքանչյուր ազգի գետ,– ասում էր նա,– իր հունով պետք է ընթանա: Բայց կգա օրը, երբ բոլոր թյուրքական գետերը կմիանան ընդհանուր՝ մեծ թյուրքական ծովի մեջ»[193]:

1917 թ. աշնանը Կազանում կայացած երկրորդ մահմեդական համագումարը, խախտելով ժամանակավոր կառավարության նկատմամբ չափավորության ու չեզոքության սահմանները, ընդունեց որոշում, ըստ որի՝ նախատեսվում էր չսպասել Սահմանադիր ժողովի հրավիրմանը և անհապաղ իրականացնել ազգերի ինքնորոշման իրավունքը: Համագումարը հանձնարարում էր զինվորական մահմեդական վեհաժողովին սկսել առանձին մահմեդական բանակի կազմակերպումը[194]: Ավելին, այն դեպքում, երբ ռուսական կառավարությունը խոչընդոտներ կհարուցեր այդ գործընթացին, համագումարը իրեն վերապահում էր «չենթարկվել և ծայրահեղ անհրաժեշտությունից ելնելով՝ ունենալ սեփական զինական ուժ»[195]:

1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումը թուրքական պաշտոնական հեռագիրը ներկայացնում էր, թե «բոլշևիկներն իրականացրին հեղաշրջում, զավթեցին իշխանությունը և սկսեցին պարել եկեղեցիներում»[196]: Ամբողջ հարցն այն էր, որ «մոսկովների սատանայությունները» համապատասխանում էին թուրքերի նպատակներին[197]: Դրանցից առաջնայինը Ռուսաստանից թուրք-թաթարական բնակ-

---

[192] Տե՛ս **Suny R. G.**, The Baku Commune 1917-1918, Class and nationality in the Russian revolution, 1972, Princeton, Newjersey, p. 86:
[193] Նույն տեղում:
[194] Տե՛ս նույն տեղում, նաև՝ **Մելիքյան Վ. Հ.,** 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997:
[195] Տե՛ս **Զարևանդ,** նշվ. աշխ., էջ 111:
[196] Տե՛ս նույն տեղում, էջ 112:
[197] Տե՛ս նույն տեղում:

չության ազատագրումն ու Թուրքիայի հետ միացումն էր: Ավելի ուշ Թուրքիան այդ գլխավոր շահին զոհաբերեց Գերմանիայի հետ դաշինքը և սկսեց դեպի Անդրկովկաս լայնածավալ արշավանք: Եվ այդ միլիոնավոր թուրք-թաթարական զանգվածի մեջ առաջինն իրենց դիմակը պատռեցին արևելակովկասյան թաթարները: 1917 թ. նոյեմբերի 9-12-ը Բաքվում ընթացավ Անդրկովկասի մահմեդական ազգային կոմիտեների խորհրդակցություն՝ Մուսավաթի գլխավորությամբ: Այստեղ որոշվեց անհապաղ հրավիրել ազգային Սահմանադիր ժողով՝ ինքնավար Ադրբեջան ստեղծելու նպատակով[198]: 1918 թ. թուրքական արշավանքի ազդեցությամբ Անդրկովկասի թաթարների վարքի ամենահետաքրքիր կողմը դարձավ այն, որ նրանք ղեկավարվում էին արդեն ոչ թե Ռուսաստանից անկախանալու, այլ իրենց ու ամբողջ Անդրկովկասը Թուրքիային հանձնելու ձգտումով: «Ադրբեջանը վերջապես հասավ իր նպատակին»,– 1918 թ. աշնանը Ելիզավետպոլի մզկիթում ասում էր կառավարության ղեկավար Ֆ. Խան-Խոյսկին՝ Բաքուն գրաված թուրքական զորքի հրամանատար Նուրի փաշային: Ուշադրության արժանի է նաև Զարևանդի (Զավեն Նալբանդյան) այն դիտարկումը, որ «թուրքիզմը հակակրոնական շարժում է, այն պայքարում է իսլամի դեմ՝ շրջելով թուրքին Մեքքայից դեպի Ալթայ»[199]:

Անդրկովկասի մահմեդականների շրջանում համաթուրանական գաղտնի աշխատանք տանելու նպատակով երիտթուրքերի նախաձեռնությամբ ստեղծվել էր «Կովկասյան հատուկ վարչություն» վերտառությամբ կազմակերպությունը՝ Հասան Ռուշենի ղեկավարությամբ: Վերջինս, 1918 թ. մարտի սկզբին ժամանելով Բաքու, ձևավորել էր գործակալական ցանց և կապ հաստատել Թուրքմենստանի, Արևելյան և Հյուսիսային Կովկասի թուրքամետ տարրերի հետ[200]:

---

[198] Տե՛ս **Рзаева Г.,** Революция в Закавказье (1917-1918 годы), Віче № 6, 2010:

[199] **Զարևանդ**, նշվ. աշխ., էջ 100:

[200] Տե՛ս **Swietochowski T.,** Russian-Azepbaijan. 1905-1920, Cambridje, 1985, pp. 119-120, ըստ՝ **Ստեփանյան Գ.,** Բաքու քաղաքի հայության պատմությունը, Երևան, 2011, էջ 349:

Ավելին, Իրանի վրայով Կովկաս անցած թուրքական բանակի գլխավոր շտաբի սպաների կողմից Բաքվում ծավալած պանթուրքիստական գործունեության մասին հայտնի է դառնում նաև Բաքվից Գերմանիա վերադարձած ռազմագերի ավագ լեյտենանտ Դեզիդոր Բրանդների՝ 1918 թ. հունվարի 24-ի զեկուցագրից, որում ասվում էր, որ «թուրքական սպաները մուսուլմանական ազգային կոմիտեի հետ աշխատում են Արևելյան Կովկասում մահմեդական պետականություն ստեղծելու ուղղությամբ»[201]:

1918 թ. սկզբին Էնվեր փաշան խիստ գաղտնիության պայմաններում սկսեց մշակել Բաքվի գրավման պլանը: Սկզբում նա այդ մտահղացման մասին հայտնել էր միայն Պետական խորհրդի նախագահ և արդարադատության նախարար Խալիլ Բեյին: Նրան անհնար էր անտեսել նաև այն պատճառով, որ վերջինիս թեկնածությունը՝ որպես ղեկավար, առաջադրվում էր Անդրկովկասի անկախ հանրապետության կառավարության հետ բանակցությունների համար:

Ավելի ուշ Էնվերը իր պլանը վստահեց նաև Մեծ վեզիր Թալեաթ փաշային, իսկ ծրագրի ռազմական կողմի մշակումը հանձնարարեց իր եղբայր Նուրի փաշային, որն էլ իր հերթին Խալիլի քեռին էր:

Այսպիսով՝ Բաքվի օպերացիան պետք է դառնար Էնվերի ու նրա ազգականների իր տեսակի մեջ «ընտանեկան» գործը:

Ծրագրի էությունը հետևյալն էր. Նուրի փաշան Ատրպատականի (Հարավային Ադրբեջան) վրայով պետք է հասներ Արևելյան Անդրկովկաս (այսպես կոչված՝ Հյուսիսային Ադրբեջան) և այնտեղ մուսավաթական ջոկատներից ու նախկին թուրքական ռազմագերիներից ձևավորեր Կովկասյան մահմեդական բանակ կամ էլ՝ Իսլամի կովկասյան բանակ: Միաժամանակ թուրքական կանոնավոր բանակը, շարունակելով Անդրկովկասի նվաճումը, Վրաստանի վրայով մտնելու էր «Ադրբեջան» և կապ հաստատեր թուրքական հետախուզական և Հյուսիսային Կովկասի մահմեդական ուժերի հետ:

Հասկանալի է, որ ծրագրի հիմնական բովանդակությունը պանթուրքիզմն էր, ըստ որի՝ թուրքերը նախատեսում էին գրավել ոչ միայն

[201] Տե՛ս **Ավետիսյան Հ.,** Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997, էջ 157:

Անդրկովկասը, այլև Հյուսիսային Կովկասը, Մերձկասպյան շրջանները, Պովոլժիեն և Միջին Ասիան:

Ծրագիրն իրականացնելու նպատակով Նուրի փաշան 1918 թ. մարտի 22-ին դուրս եկավ Ստամբուլից և Մոսուլ հասավ ապրիլի 12-ին, երբ Բաքվի մուսավաթական խռովությունն արդեն տապալվել էր[202]:

Ադրբեջանցի խորհրդային պատմաբան Գ. Ալիևը մանրամասնելով նշում է, որ Մոսուլում տեղակայված թուրքական 6-րդ բանակի շտաբից Նուրի փաշան տեղափոխվեց Հարավային Ադրբեջան: Այստեղ Նուրի և Խալիլ փաշաների ու մուսավաթականների միջև կայացավ համաձայնություն այն մասին, որ վերջիններս Բաքվում կապստամբեն՝ դրանով նաև աջակցելով թուրքերի կողմից Ադրբեջանի գրավմանը[203]:

Այս առումով ուշագրավ նյութ է տրամադրում Թիֆլիսի պարսկահայ խորհրդի գործադիր կոմիտեի ղեկավարությունը: Այսպես, 1918 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին պարզ դարձավ, որ Ջուլֆայում հայտնվել է ոմն «հրեա դուքս»՝ իբրև ծագումով չեչեն, որին հաջողվել է Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից ստանալ Ջուլֆայի կոմիսարի պաշտոնը: Նա ձևավորել է թուրքական կամավորական ջոկատ և Ջուլֆայի շրջանում փորձում է հրահրել հայ-թուրքական կոտորածներ, շարքից հանել երկաթուղագիծը, զինաթափել այդ երկաթուղով երթևեկող ռուս զինվորներին: Հանրահայտ Լոուրենս Արաբացուն հիշեցնող այդ գործչին Ջուլֆայից հեռացնելու նպատակով պարսկական կառավարությունը 200 հեծյալ ուղարկեց[204]:

Թիֆլիսի պարսկահայ խորհրդի Գործադիր կոմիտեի քարտուղար Վ. Մեհրաբյանը «Գործադիր մարմնի բացատրություններ» փաստաթղթում 1918 թ. փետրվարի 6-ին տեղեկացնում էր, որ պարս-

---

[202] Տե՛ս **Лудшувейт Е. Ф.**, Турция в годы Первой Мировой войны 1914-1918 гг., Москва, 1966, с. 174-175:

[203] Տե՛ս **Алиев Г. З.**, Турция в период правления младотурок (1908-1918 гг.), Москва, 1972, с. 319:

[204] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գործ 24, II մաս, թթ. 232-236:

կական դեմոկրատական «Ամրուն» կուսակցության պարագլուխները Կովկասից ուղարկված համիսլամական-պանթուրքիստական գործակալների ազդեցության ներքո «այնքան էլ անկեղծ չեն հայերի հանդեպ»[205]: Ավելին, Ատրպատականում իշխանության ղեկը գտնվում էր այդ կուսակցության ձեռքում, որը «այժմ համերաշխ է գործում Կովկասի մահմեդականների Մուսավաթ կուսակցության հետ: Իսկ այդ կուսակցության վերաբերմունքը դեպի հայերը,– եզրակացնում էր հայ գործիչը,– միանգամայն պարզ է»[206]:

Պանթուրքիստական ծրագրի բաղկացուցիչներից մեկը ևս բացահայտվում է այս փաստաթղթում: Պարզվում է, որ Մակվի սարդարը բանակցությունների մեջ էր մտել թուրքական կառավարության հետ և կայացրել էր նախնական համաձայնություն, այն է՝ սարդարը պետք է ապստամբեր պարսկական կառավարության դեմ, իրեն հայտարարեր Ատրպատականի միապետ՝ թուրքական գերիշխանության ներքո: Նրա 3000 զինյալներին միանալու էին ևս 5000 մարտիկներ:

Պարսկահայ խորհրդի հայ գործիչները առաջարկում էին Մակվի սարդարի դեմ պայքարի երեք հիմնական միջոցներ.

ա) պարսկական կառավարությանը բացատրել վերջինիս անջատողական ձգտումները և խանգարել նրան,

բ) համաձայնության գալ Նամո խանի հետ և աջակցել նրան սարդարին տապալելու, ապա և նրան հաջորդելու հարցում,

գ) առգրավել ռուսական պետական բանկի Երևանի բաժանմունքում սարդարի ունեցած միլիոնները, եթե նա այդ գումարներն արդեն իր բնակավայրը չի փոխադրել:

Բացի այդ՝ խորհուրդ էր տրվում, որ տեղի Հայ առաքելական եկեղեցու թեմի ներկայացուցիչ տեր Արսենը հրավիրվի Թիֆլիս և անձամբ զեկուցի Մակվի ներկա կացության մասին[207]:

Բաքվի Մարտյան իրադարձությունների համատեքստում կարևորում ենք նաև 1918 թ. մարտի 14-ին շտաբս-կապիտան Մատի-

---

[205] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գործ 24, II մաս, թթ. 237-238:
[206] Տե՛ս նույն տեղում:
[207] Տե՛ս նույն տեղում:

նյանին՝ «Ученик» կեղծանվամբ հեղինակված և Ատրպատականից ուղարկված զեկուցագիրը՝ «Ատրպատականի դեմոկրատիան» խորագրով[208]: Այս փաստաթուղթը, փաստորեն, 1905 թ. և 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունների արդյունքում Պարսկաստանում, մասնավորապես, Ատրպատականում, այսպես կոչված, ժողովրդավարության, իսկ իրականում՝ պանթուրքիզմի ակտիվացման մի էական վկայություն էր:

Մուսավաթի Ատրպատականի մասնաճյուղը նկարագրվում էր հետևյալ կերպ. ինչպես և Կովկասյան թաթարները, այնպես էլ Ատրպատականի նրանց ցեղակիցները, թաքնվելով դեմոկրատ անվան տակ, հիմնականում ցանկանում էին իրագործել համիսլամական ծրագիրը և ենթարկվում էին գերմանո-թուրքական ազդեցությանը: «Ռուս զորքերի Պարսկաստանից, մասնավորապես Ատրպատականից ետ քաշվելու շնորհիվ,– փաստում էր հեղինակը,– ընդարձակ ասպարեզ բացվեց գերման և թուրք ագիտատորների համար, որոնք սկսեցին անարգել վխտալ ամեն տեղ: Սրանց հետ միաժամանակ սկսեցին երևան գալ և այն փախստական դեմոկրատ և ոչ դեմոկրատները, որոնք ռուս զորքի Ատրպատական մտնելու ժամանակ ընդհարվել և խույս էին տվել Տաճկաստան»[209]:

Դրանց մեծ մասը խոշոր կալվածատիրության ներկայացուցիչներ էին: Դրանցից մեկը՝ բնիկ թավրիզցի Ալի Աղան, ստանձնել էր Ատրպատականի «դեմոկրատների շեֆի» պաշտոնը և գերմանո-թաթարական աջակցությամբ ձգտում էր Ատրպատականի նահանգը անջատել Պարսկաստանից, նրան միացնել կովկասյան թաթարաբնակ շրջանները և ստեղծել մեծ Ատրպատական՝ դնելով այն թուրքական գերիշխանության տակ:

1918 թ. փետրվարին Թիֆլիսում հայտնվեց Ալի Աղայի պատվիրակությունը՝ կազմված մի քանի հայտնի մուսավաթական գործիչներից ու պարսկական Ժանդարմերիայի սպաներից: Մեկ ամիս մնալով Թիֆլիսում՝ պատվիրակությունը բազմիցս տեսակցել էր Մուսավաթի

---

[208] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գործ 24, II մաս, թթ. 271-276:
[209] Տե՛ս նույն տեղում:

ղեկավարների հետ, այցելել Անդրկովկասյան կոմիսարիատ: Տեսակցությունների գլխավոր նպատակն էր՝ ստանալ Ատրպատականում ռուսական զորքի թողած հսկայական գույքին տիրանալու իրավունքը, ինչպես նաև պարզել, թե Ուրմիայի և Սալմաստի շրջաններում կազմված հայ-ասորական վաշտերը ճանաչվում են արդյոք որպես Կոմիսարիատին ենթակա զորամիավորումներ: Այդ բանակցությունների ուղիղ հետևանքը, մի կողմից, Ուրմիայի ասորիների կոտորածներն էին, մյուս կողմից՝ Շարաֆ-խանեյում ռուսների թողած գույքին տիրանալու փորձ, որը մասամբ հաջողվել էր իրականացնել:

«Դեմոկրատ» կոչեցյալները, ավելի վաղ ահաբեկելով Ատրպատականի նահանգապետ, ռուսոֆիլ Ռաշիդ ալ Մալիքին, սկզբում կարողացան փոխել նրա պաշտոնակատար, Թիֆլիսի պարսկական հյուպատոս Շերիֆ ալ Դովլեթին՝ նշանակելով ծագումով ֆարսի, խոշոր կալվածատեր Մոհթաշամ-ուս Ասլթանեյին: Վերջինս դեմոկրատների ձեռքին դարձել էր կույր գործիք և իրագործում էր մուսաֆաթական պանթուրքիստների ծրագրերը. ա) փոխել էր Ատրպատականի բոլոր խոշոր քաղաքների և բնակավայրերի կառավարիչներին՝ նշանակելով ցանկալի պաշտոնյաներ, բ) փակել էր Ջուլֆան Կովկասյան զինվորականության (բոլշևիկացած – Վ. Մ.) սպառնալիքից՝ հարուցելով լուրջ խոչընդոտներ և սպառնալով զենքով դիմադրել, բ) փակել էր Մակվի երկաթուղին և աշխատում էր վերահսկողություն հաստատել Ջուլֆա–Թավրիզ–Շարաֆխանա երկաթուղագծի, ինչպես նաև Ուրմիո լճի նավատորմի վրա, դ) աշխատում էր զանազան սպառնալիքներով զինաթափել տեղի քրիստոնյա ազգաբնակչությանը: Հեղինակը եզրափակում էր նրանով, որ «դեմոկրատների» ազդեցությունն այնքան էր աճել, որ «Մուսավաթ–դեմոկրատներին» սկսել էր ենթարկվել նաև պարսից թագաժառանգը[210]:

Մեր կարծիքով՝ Մուսավաթի տեղական մասնաճյուղի քաղաքականությամբ է մասնավորապես բացատրվում, օրինակ, Ղարաբաղի հայության նկատմամբ իրականացվող ցեղասպան քաղաքականությունը:

[210] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գործ 24, II մաս, թթ. 271-276:

Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոսը 1918 թ. հունվարի 13-ին Պարսից շահին հեռագրում էր Ղարադաղի հայոց 30 գյուղերի ծանր ու վտանգավոր վիճակի մասին. «Խաները կողոպտում, սպանում են իմ ժողովուրդը, հրդեհում նոցա ունեցվածքը»[211]:

Եպիսկոպոսին պատասխանում է Պարսկաստանի արտաքին գործերի նախարար Մուսավեր-ուլ Մամելիքը 1918 թ. փետրվարի 7-ին՝ նշելով, որ կայսերական կառավարությունը «միշտ էլ հոգածու է եղած իւր հպատակ հայերի ապահովութեան համար և ապագայում ևս նույնպէս չի դադարիլ նոյն հոգածութիւնը շարունակելու՝ նոցա իւր բարձր հովանաւորութիւնն ու իրական պաշտպանութիւնը շնորհելու»[212]:

Բաքվում իշխանության համար մղվող պայքարում Մուսավաթի համար քաղաքական լուրջ խոչընդոտներ էին ձևավորվում: Ըստ Բ. Իշխանյանի՝ «այդ խոչընդոտներից մեկն այն է, որ այսպէս կոչուած Սօվետական կամ Խորհրդային իշխանությունը հետզհետէ ուժեղանում և կառավարական ղեկավար ֆունկցիաներով օժտւում էր հէնց այն վայրում, ուր մուսուլմանութիւնը ամենից հարազատօրէն իր տանն է զգում»[213]: Հեղինակը հիմնավորում էր, որ Անդրկովկասի մահմեդականության շրջանում առևտրական և մասնավորապես արդյունաբերական բուրժուազիան դեռևս գտնվում էր զարգացման սաղմնային վիճակում: «Մուսուլման բուրժուազիայի միակ կենտրոնը Բագուն է,– գրում է նա,– ուր թուրքական կապիտալը արդիւնաբերական կեանքում նուազում է՝ զարգանալու փոխարէն, տեղի տալով իր դիրքը աւելի ուժեղ մրցակիցների»[214]: Իրավացի է Գ. Ստեփանյանը՝ եզրակացնելով, որ կովկասյան թաթարների ֆինանսական կապիտալը չէր վերածվում արդյունաբերական կապիտալի, ինչը վաղուց առկա էր Եվրոպայի ու հայ առևտրաարդյունաբերողների մոտ[215]:

---

[211] Տե՛ս «Արարատ», Ս. Էջմիածին, 1918, Յունուար-մարտ, թիվ Ա-Գ:
[212] Տե՛ս նույն տեղում:
[213] **Իշխանեան Բ.**, Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, Բագու, 1918, էջ 171:
[214] Նույն տեղում, էջ 177-178:
[215] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Բաքու քաղաքի հայության պատմությունը, էջ 348:

Համաշխարհային պատերազմի համատեքստում գերմանական ու երիտթուրքական ծրագրերը համընկան և Ռուսաստանի դեմ պայքարում օբյեկտիվորեն ուղղվեցին հայության դեմ: Պատերազմի նախօրեին Կովկասում Քառյակ միության երկրների և հատկապես երիտթուրքական կառավարության լրտեսական-հետախուզական ցանցի, ռազմական գործակալների վարած քայքայիչ գործողությունների, պանթուրքիզմի, պատերազմի նախապատրաստման վերաբերյալ տարաբնույթ խնդիրները պատշաճ կերպով լուսաբանվել են պատմաբանների լայն շրջանակի աշխատություններում, այդ թվում՝ և խորհրդահայ պատմաբանների ուսումնասիրություններում[216]:

2.2. ԲԱՔՎՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՈՒ ՄՈՒՍԱՎԱԹԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Կովկասյան բանակի երկրամասային երկրորդ համագումարի (Թիֆլիս, դեկտեմբերի 10-23) արդյունքում ընտրված բոլշևիկամետ խորհուրդը տեղափոխվեց Բաքու և դրանով իսկ ամրապնդեց Բաքվի խորհրդի դիրքերը: 1917 թ. դեկտեմբերի 15-ին Բաքվի քաղաքային դումայի դահլիճում կայացավ քաղաքային ձայնատուների արտակարգ նիստ, որը նախագահում էր էսէռ Սաքո Սահակյանը[217]: Օրակարգի գլխավոր հարցը տեղի զ. և բ. պատգամավորների խորհրդի

---

[216] Տե՛ս **Зареванд**, Турция и Пантуранизм, Париж, 1930, Ереван, 1991, **Лудшувейт Е. Ф.**, Турция в годы Первой мировой войны, 1914-1918 гг., Военно-политический очерк, Москва, 1966, Из истории иностранной интервенции в Армении в 1918 году, Ереван, 1970 (составитель **Бадалян Х. А.**), **Пипия Г. В.**, Политика Германии в Закавказье 1918 году, Сборник документов, Тбилиси, 1971, **Алиев Г. З.**, Турция в период правления младотурок (1908-1918 гг.), Москва, 1972, **Казинян А.**, Полигон «Азербайджан», Ереван, 2011, **Հարությունյան Ա. Հ.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, **Շահան Նաթալի,** Թուրքիզմը Անգորայեն Պաքու և թրքական օրիենթասիոն, Երևան, 1992, **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, **Կնյազյան Դ. Վ.**, Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008:

[217] Տե՛ս «Արև», 1917, 19 դեկտեմբերի, թիվ 259:

կողմից իշխանությունը գրավելու խնդիրն էր: Դա բացատրվում էր նաև քաղաքում ծավալվող անկարգությունների աննախադեպ ուժգնացմամբ, որի մասին նիստում փաստում էր նաև Բաքվի քաղաքագլուխ Իլյուշկինը: Նա գտնում էր, որ քաղաքում բարձրագույն իշխանության իրավունքը պետք է պատկաներ ժողովրդավարական հիմունքներով օժտված քաղաքային դումային, և եթե զ. և բ. պատգամավորների խորհուրդն իրեն համարում էր բարձրագույն ներկայացուցիչ, ապա այդ դեպքում վերջինիս պետք է վերապահվեր միմիայն վերահսկողության դեր, այլ ոչ թե քաղաքի ամբողջ իշխանությունը[218]: Իսկ Բաքվի խորհրդի կողմից հրապարակվող հրամաններն ու որոշումները ենթադրում էին հենց ամբողջ իշխանությունը գրավելու նպատակը: Ելույթով հանդես եկավ նաև Բաքվի միլիցիայի պետ և քաղաքային վարչության անդամ Վարշամյանը: «Единство» միության կողմից Ֆրոլովը հարց բարձրացրեց այն մասին, թե արդյոք քաղաքային դուման քաղաքի իշխանության միակ մարմինն է, և եթե զուգահեռաբար ընդունվում է Անդկովկասյան կոմիսարիատի իշխանությունը, ուրեմն նոր իշխանության մասին խոսելն ավելորդ է: Բաքվի՝ բոլշևիկների կողմից իշխանությունը գրավելու փորձը նա որակում էր որպես «երկիշխանություն» և դատապարտում այն: Բոլշևիկ Ա. Ջափարիձեն կուսակցության մարտավարությունը հիմնավորում էր նրանով, որ «մեծամասնականները ոչ այսօր և ոչ էլ էրէկ էր, որ պաշտպանում էին «ամբողջ իշխանութիւնը խորհրդներին» լօզունգը, բայց եթե գործնական քայլերի չէինք անցնում Բագում, դրա պատճառը միայն այն էր, որ հաշվի էինք առնում տեղական պայմանները և մեզ շրջապատող ռէալ ուժը»[219]: Ս-դ մենշևիկ Ա. Այոլլոն առաջարկում էր ձևավորել քաղաքի բոլոր հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունների միացյալ իշխանություն, ինչը հասկանալի է, հակասում էր բոլշևիկների ծրագրերին:

Անչափ ուշագրավ է դաշնակցական Ա. Չիլինգարյանի մոտեցումը, որը կենտրոնական ուժեղ կառավարության բացակայության

[218] Տե՛ս «Արև», 1917, 19 դեկտեմբերի, թիվ 259:
[219] Տե՛ս նույն տեղում:

պայմաններում առանց գ. և բ. պատգամավորների խորհուրդների լիարժեք աջակցության բացառում էր քաղաքային դումայի կենսագործունեությունը: Նա հավելում էր նաև «ռէալ ոյժ ներկայացնող ազգային խորհուրդների - հայ և մահմեդական ու տեղական այլ դեմոկրատական կազմակերպությունների» մասնակցության անհրաժեշտությունը[220]:

Իրադարձությունների զարգացմանն էր նվիրել իր հոդվածը Սարգիս Արարատյանը: Նա գտնում էր, որ նոր խորհրդի գերագույն պարտականությունը գոնե Անդրկովկասում պետք է դառնա հեղափոխական-սոցիալիստական տարրերի հարաբերությունների մեղմացումը ինչպես նաև սոցիալիստական ուժերի միջև մղվող քաղաքացիական պատեազմին վերջ դնելը[221]:

1918 թ. մարտի 2-ին Բաքվի խորհրդում Թիֆլիսից գաղտնի պայմաններում վերադարձած Ստ. Շահումյանը հանդես եկավ ելույթով և արժանացավ բուռն ընդունելության: Ընդունվեց համապատասխան բանաձև՝ Անդրկովկասյան Սեյմի գործունեության, մասնավորապես Ռուսաստանից անջատման վերջինիս որոշման դեմ: Միաժամանակ գործադիր կոմիտեին հանձնարարվում էր հրավիրել ամբողջ Անդրկովկասի խորհուրդների համագումար և ընդունել վճռական միջոցներ՝ հատկապես խորհրդային Կարմիր բանակի կազմակերպման վերաբերյալ: Բանաձևին կողմ են քվեարկել 121 բոլշևիկ, ձախ էսէռ և դաշնակցականներ՝ 16 դեմի և 32 ձեռնպահների դիմաց: Դեմ են քվեարկել գլխավորապես մենշևիկները, իսկ էսէռներն ու մուսավաթը խուսափել են քվեարկությունից[222]: Դեռ հունվարի 6-ին (19) Կոմիսարիատի նիստը լսել էր Կանտեմիրովի զեկույցը՝ Բաքվի խորհրդի առաջարկության մասին: Վերջինս միջնորդում էր, որ ռազմական խորհրդին տրվի կառավարական հաստատություններում սեփական կոմիսարների նշանակման իրավունք, ինչպես նաև զենք հատկացվի՝ Կարմիր գվարդիա կազմավորելու համար[223]:

---

[220] «Արև», 1917, 19 դեկտեմբերի, թիվ 259:
[221] Տե՛ս նույն տեղում, 22 դեկտեմբերի, թիվ 262:
[222] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 126:
[223] Տե՛ս ՀԱԳ, ֆ. 1, оп. 2, д. 12, л. 11:

Խնդրի բարդությունն այն էր, որ բացառապես ռուսներից ու հայերից համալրված զորամասերի ստեղծումը դժվարություններ կառաջացներ: Բոլշևիկները ձգտում էին ինտերնացիոնալ գնդերի կազմում ներգրավել թաթարներին և այլ ազգությունների: Մուսավաթի ազդեցությունը թաթարական-մահմեդական զանգվածների շրջանում խոչընդոտում էր այդ գործընթացին. միաժամանակ մահմեդականների զինումը տագնապ էր առաջացնում էսէռների ազդեցության տակ գտնվող բանվորների և զինվորների, այսինքն՝ մեծ մասամբ ռուս և հայ բնակչության միջավայրում: Իշխանության ամրապնդմանը զուգահեռ Բաքվի խորհուրդը լուծեց նաև միլիցիայի վերակառուցման խնդիրը: Փետրվարի 22-ի նիստում ձախ էսէռների ղեկավար Ի. Սուխարցևի և բոլշևիկ Ա. Ջափարիձեի ելույթների հիման վրա որոշվեց «միլիցիան ենթարկեցնել բացառապես խորհրդի տնօրինմանը»[224]:

Վրացական մենշևիկներն անմիջապես օգտագործում են Բաքվում առկա ազգային գործոնը և հասունացող առճակատումը ներկայացնում որպես հայ-թաթարական պատերազմ: Ն. Ժորդանիայի և Ի. Ծերեթելիի ստորագրություններով մենշևիկների կենտրոնական կոմիտեին ուղղված նամակում գտնում ենք հետևյալը. «Թուրքիայի դեմ պայքարում մեզ հատկապես զսպում է բոլշևիկների քաղաքականությունը Բաքվում: Իշխանությունը զավթելու համար բոլշևիկներն այստեղ օգտագործեցին ազգային հակամարտությունը: Ռուսաստանում բոլշևիկների վարած քաղաքացիական պատերազմը Բաքվում նրանց կողմից վերածվեց ազգամիջյան կոտորածի»[225]: Բոլշևիկների նպատակները պարզ էին ու հայտնի, սակայն իրապես բազմանշանակ էր մենշևիկների վարքագիծը:

1918 թ. ապրիլի 13-ին Ստ. Շահումյանը Ժողկոմխորհին ուղղված զեկուցագրում հետևյալ կերպ էր ներկայացնում Բաքվի ու մահմեդականության ակտիվացման հարցում վրացական մենշևիզմի դիրքորոշումը: «Բեկական, խանական ինտելիգենցիան, որն ամրացել է Ելիզավետպոլում, Թիֆլիսում, շնորհիվ մենշևիկների վախկոտ

---

[224] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 133-134:

[225] Ադրբեջանի հեղափոխության թանգարանի փաստաթղթեր՝ ըստ **Ռատգաուզեր Յա.**, նշվ. աշխ., էջ 134:

ու ստոր քաղաքականության, վերջերս Բաքվում շատ ագրեսիվ է դարձել: Եթե նրանք հաղթեին Բաքվում, ապա քաղաքը կհռչակվեր Ադրբեջանի մայրաքաղաք: Մահմեդական տարրերը ողջ Անդրկովկասում դրության տերը կդառնային: Եթե նկատի ունենանք նրանց քաղաքական նպատակը՝ Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և այն թուրքական պրոտեկտորատին ենթարկեցնելը, պարզ է, որ նրանց հաղթանակը Բաքվում կնշանակի Ռուսաստանի համար Անդրկովկասի կորուստ: Մենշևիկներն Անդրկովկասյան Սեյմում Մուսավաթին արդեն զիջումներ են արել և համաձայնել են Անդրկովկասն անկախ հայտարարելուն: Դա չբավարարեց Թուրքիային, որն այժմ արշավանքի է ելել Անդրկովկասի դեմ: Իսկ Թուրքիայի այդ հարձակումը անպայման պետք է կապվեր Անդրկովկասի ներսում մուսուլմանների ելույթների, Բաքվում իշխանության զավթման հետ և այլն»[226]:

Էսէռական կուսակցության Բաքվի կազմակերպության մարտի 4-ի նիստում անգամ էսէռ Ս. Սահակյանը ստիպված էր նշել, որ «Անդրկովկասի մենշևիկների քաղաքականությունը անընդունելի է սոցիալիստական կուսակցության համար»: Լ. Աթաբեկյանը, մենշևիկներին մեղադրելով Խորհրդային իշխանության հանդեպ հատուկ վերաբերմունքի մեջ, հայտարարում էր, որ «այս օրերին ես կրեցի ծանր պարտություն ոչ թե ձեզնից (էսէռներին նկատի ունի – Վ. Մ.), այլ իրականությունից: Խաղաղության մասին բոլոր խոսակցությունները, հայտարարությունները կեղծ պոլիտիկանություն դուրս եկան: Թուրքական զորքերը առաջ են շարժվում և ելք չկա: Եվ այժմ մեր վիճակն այսպիսին է. ***եթե Խորհրդային իշխանությունը ինչ-որ բան կարող է տալ – թախանձագին խնդրում ենք, համեցեք, ցանկանում ենք նրան հաջողություն»***[227] (ընդգծումը իմն է – Վ. Մ.): Նույնիսկ Բաքվի մենշևիկներից շատերի մոտ տարակուսանք էր առաջացրել Թիֆլիսի իրենց գործընկերների երկդիմի մարտավարությունը:

---

[226] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 228, թթ. 2-6:
[227] «Знамя Труда», Баку, № 20, 1918, ըստ՝ **Ռատգաուզեր Յա.**, նշվ. աշխ., էջ 135:

Իրականությամբ թելադրված Լ. Աթաբեկյանի պարտվողական խոստովանությունը ոչ միայն Բաքվում Մարտյան իրադարձությունների, այլև Անդրկովկասում խորհրդայնացման հիմնահարցի բովանդակությունն էր պարունակում: Ներկովկասյան խնդիրների բարդությունն ու հակասականությունը ինչ-որ առումով պարտադրում էին այդ օտար իշխանության ամրապնդումը և կայացումը: Այդ հակասությունների պղտոր ջրերում էին փորձում օգուտներ քաղել վրացական մենշևիկները:

«Քանի գնում ինքնասիրահարութեամբ յիմարացած և իր պատահական գերիշխող ու չեզոք դիրքով մեծամտած մենշևիզմը թեր է առնում, մոռանում ինքն իրեն և անհամեստ դառնում»[228],– արձանագրում էր Վ. Խորենին «Ինքնասիրահար մենշևիզմը» հոդվածում: Դաշնակցական գործիչն իրավամբ նկատում էր, որ վրացական սոցիալ-դեմոկրատիան իր քաղաքական դիմակախաղը շարունակում է՝ «սեփական ազգայնականութիւնը քօղարկելու և իր քաղաքական գերիշխանութիւնը փրկելու համար, որովհետև քաղաքական և աշխարհագրական արտաքին ու պատահական հանգամանքների շնորհիւ վրացական ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանը համեմատաբար «չեզոք երրորդի» դեր է վիճակվել հայ-թիւրքական դժբախտ յարաբերութիւնների մէջ, ուստի և շարունակում է իր մեֆիստոֆէլեան «չեզոքութեան դերը» փրկելու համար իր «սոցիալիստութիւնն» ու «ինտեռնացիոնալիզմը»: Ծպտեալ նացիոնալիստ ժորդանիաները և ոչ մի րոպէ չեն վարանում մեզ «ազգային»-ազգայնական կուսակցութիւն յայտարարելու»[229]:

Հատուկ ուզում ենք ընդգծել Վ. Խորենիի եզրահանգումը Անդրկովկասում իշխանության համար պայքարի հարցում: «Եւ այսպէս անվերջ ու ամեն դեպքում,– գրում էր հեղինակը,– և միմիայն նրա համար, որ մենք, մինչեւ այժմ ամեն կերպ – կամայ թե ակամայ գնացել ենք մենշևիզմի *հետ,* այո՛, դժբախտաբար նաև *յետեւից* և *նպաստել նրա քաղաքական գերիշխանութեանը նրա «յեղափոխական»*

[228] «Աշխատավոր», 1918, 21 մարտի, թիվ 29:
[229] Նույն տեղում:

դիկտատորական Անդրկովկասում... (ընդգծումն իմն է – Վ. Մ.): Մենշևիկեան նացիոնալ-դեմոկրատիզմը օգտագործում է մեր քաղաքական փափուկ ու ծանր կացութիւնը և շահագործում է մեր լռութիւնն ու համբերատարութիւնը»[230]:

Թուրքական արշավանքի համատեքստում Սեյմի վրացական մենշևիկների վարած բացահայտ հակահայկական ու հակադաշնակցական քաղաքականությունը 1918 թ. մարտին արդեն, ինչպես տեսնում ենք, ավելի բաց ու վճռական էին դարձնում ՀՅԴ գործիչների, տվյալ դեպքում՝ Վ. Խորենիի մոտեցումները: Դրանով իսկ մերժվում է, օրինակ, Ռ. Տեր-Մինասյանի կողմից առաջադրված և հետագայում բազմաթիվ դաշնակցական գործիչների ու նաև տարբեր հեղինակների կողմից ընդօրինակած «թիկունքային քաղաքականություն» հասկացությունը[*]: Այն ենթադրում էր ՀՅԴ և Բաքվի հայ բոլշևիկների միջև եղած իբր թե կայուն համագործակցության փաստը, այն էլ՝ ՀՅԴ կողմից նախաձեռնված: Ի դեմս Ստ. Շահումյանի՝ դեպի Բաքվի խորհրդային իշխանությունը Դաշնակցության մարտյան մերձեցումը պետք է բացատրել հենց Վ. Խորենիի խոստովանությամբ: Հետհոկտեմբերյան գրեթե բոլոր ռազմաքաղաքական ու կուսակցական պայքարի հարցերի շուրջ պարտություն ու անհաջողություններ կրելով՝ ՀՅԴ-ը գոնե վրացական-թաթարական դաշինքի դեմ ձևավորվող իրական, բայց ժամանակավոր գործոն էր սկսում ակնկալել Բաքվի հայամետ խորհրդային իշխանությունը. այն միաժամանակ գերմանո-թուրքական ագրեսիայի դեմ հնարավոր միակ ուժն էր ընկալվում:

Այս առումով Դաշնակցության և Բաքվի խորհրդի ժամանակավոր դաշինքը Թիֆլիսի գրավման Ստ. Շահումյանի ծրագրի անհաջողությունից հետո համագոր-ծակցության երկրորդ փորձն էր[*]: Այն

---

[230] «Աշխատավոր», 1918, 21 մարտի, թիվ 29:

[*] Տե՛ս **Խուրշուդյան Լ.,** Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977, **Փիրումյան Ռ.**, Հայաստանը ՀՅԴ - բոլշևիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Երևան, 1997, **Հովհաննիսյան Մ.**, ՀՅԴ բոլշևիկ հարաբերությունները Անդրկովկասում 1917-1918 թթ., ատենախոսության սեղմագիր, Երևան, 2009:

[*] Հանգամանորեն տե՛ս **Մելիքյան Վ.**, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, էջ 212-247:

փոխշահավետ, փոխլրացնող մի գործարք էր նախատեսում, որի առերես ազգային ու մարքս-լենինյան մարտավարությունների փոխլրացման արդյունքում Անդրկովկասում հաղթելու էր հայկական շահը: Այս առումով էլ հենց արհեստական և միակողմանի է «թիկունքային քաղաքականութունը»: Առկա էր երկու քաղաքական ուժերի կողմից սեփական շահը առաջնորդելու ճարահատյալ և թելադրված պահանջը: Ցավոք, բայց վերջինիս հետևողական կիրառումը, մեր կարծիքով, անպայման որոշակի հայամետ հետևանքներ կունենար:

Հիմնահարցի խորաթափանց և սթափ վերլուծությունն ենք գտնում նաև Դաշնակցության գլխավոր մրցակից՝ հայ էսէռական կազմակերպության անվանի գործիչներից մեկի՝ Արշամ Խոնդկարյանի մտորումներում: Նա գրում էր. «Անդրկովկասեան Կոմիսարիատում, յանձինս իր պատասխանատու ներկայացուցիչների (Բիւրոյի անդամներ), նա միացաւ մենշեւիկներին ու էսէռներին եւ վաւերացրեց Ստ. Շահումյանի ձերբակալման մասին տրուած հրամանը, իսկ իր մի քանի այլ պատասխանատու գործիչների ձեռքով (նոյնպես Բիւրոյի անդամ) նա կազմակերպեց նոյն Ստ. Շահումյանի անլեգալ բնակութիւնը Թիֆլիսում եւ ապա նրա ապահով փախուստը դէպի Բագու: Շատերը հակամէտ են այս գործելակերպի մէջ տեսնելու ինչոր «բարձր դիւանագիտութիւն»: ***Ես կարծում եմ աւելի ճիշտ կլինէր հետեւեալ պարզ բացատրութիւնը: Դաշնակցութիւնը չունեցաւ յստակ ու հաստատուն տեսակէտ այն մասին, թե ո՞րն էր աւելի ձեռնտու հայ ժողովրդի շահերի համար՝ Անդրկովկասի խորհրդայնացո՞ւմը (Բագուի օրինակով), թե՞ նրա ինքնորոշումը հայ-թաթարվրացական խառն իշխանութեան գլխաւորութեամբ: Չկարողանալով դուրս գալ այս երկընտրանքից՝ Դաշնակցութիւնը փորձեց իր նաւը մերթ մէկ եւ մերթ միւս ափը թեքելու, ի վերջոյ այն մենշեւիկեան նաւահանգիստը տանելու պայմանով»***[231] (ընդգծումն իմն է – Վ. Մ.):

[231] **Խոնդկարեան Ա.**, Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, «Վէմ», Փարիզ, 1933, թիվ Բ, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 73:

Մի կողմ դնելով կուսակցական տարաձայնությունները, տվյալ քաղաքական փուլում դրսևորվող անեզր անհանդուրժողականությունը՝ հայկական ազգային կուսակցությունը, փաստորեն, լուռ ընդունում էր Կոմիսարիատի հանցանքը, Ստ. Շահումյանի մերկացումները Շամխորի և Ելիզավետպոլի կապակցությամբ: Արևմտյան Հայաստանը պաշտպանող ռուս զինվորի հարցում կուսակցությունը դրսևորում էր, ցավոք, ոչ հարատև ու կայուն համերաշխություն: Դաշնակցությունը չէր կարող չընդունել Ստ. Շահումյանի հարցադրումը, թե «Անդրկովկասն իրավունք ունի ստանալու այդ զէնքի մի մասը ճակատը պաշտպանելու համար, բայց այդ զէնքը կարող է տրվել միմիայն կենտրոնական կառավարության համաձայնությամբ և չպիտի ընկնի ազգային խորհուրդների ձեռքը, ինչպէս է, օրինակ, Գանձակի բէկական մուսուլման ազգային կոմիտէն, կամ նրանց ղեկավարութեան տակ գտնուող ավազակային հրոսակախմբերի ձեռքը»[232]:

Կովկասյան բանակի զորամասերը զինաթափելու քաղաքականացված հարցում Դաշնակցությունը նույնիսկ 1918 թ. ապրիլին միասնական մոտեցում չէր ձևավորվել: Եթե 1917 թ. վերջին և 1918 թ. հունվար-փետրվար ամիսներին Կովկասյան ռազմաճակատի կազմալուծման և «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ասպարեզ գալու հակասական, սպասեցնող պայմաններում Դաշնակցությունը չէր կարողանում կողմնորոշվել, խուսափում էր վճռական գործողություններից, հատկապես Կոմիսարիատի հարցում, ապա 1918 թ. գարնանը, երբ թուրքերը, գրավելով Արևմտյան Հայաստանը, մտան Կարս, կուսակցության ղեկավարության մի մասը, մարտին բոլշևիկների հետ նախ փորձեց պաշտպանել Բաքուն, ապա և Ալեքսանդրապոլի խորհրդակցության ժամանակ փորձ արեց ետ բերելու կորցրածի գոնե մի չնչին մասը:

Այսպես, Պարսկաստանում գտնվող ռուսական էքսպեդիցիոն կորպուսի զինվորների վերջին ջոկատները 1918 թ. ապրիլի սկզբներին պետք է անցնեին Դավալու (Արարատ)–Ալեքսանդրապոլ գծով:

---

[232] Տե՛ս **Խոնդկարեան Ա.,** նշվ. աշխ., էջ 73:

Սեյմի ՀՅԴ անդամները Ալեքսանդրապոլի խորհրդակցության ժամանակ բարձրացրին ռուս զինվորների զինաթափ անելու պահանջը: Որոշվեց Ալեքսանդրապոլից դեպի Անի երկաթգծի մի հատվածում հանել երկաթգծերը և փակել էշելոնների առաջընթացի հնարավորությունը: Այդ մասին Ա. Խատիսյանը խորհրդակցության մասնակիցների ներկայությամբ տեղեկացրեց Անդրանիկին՝ խնդրելով, որ վերջինս հայտնի իր կարծիքը: Անդրանիկը, հավատարիմ իր հետևողական ռուսական կողմնորոշմանը, զայրույթով դեմ արտահայտվեց՝ նշելով, որ «հոն է մէր դարաւոր թշնամին (նկատի ունի Թուրքիան – Վ. Մ.), զայն զինաթափ ըրեք: Թաթարները Գանձակի առաջ տուն դարձող ռուս զինուորները կոտորէցին, մնացածն էլ դուք կուզեք լրացնել, քանի մը հրացաններու փոխարեն: Ռուսիան մեզ հսկա ռազմամթերք թողուց, մենք պէտք չունինք քանի մը հատ հրացաններու… (նկատի ունի Էրզրումի անկումը – Վ. Մ.), երանի թե հոս եկած չըլլայի և չլսեի այս տխուր որոշումը»[233]:

Նույն իրադարձությունների մեջ այլ ենթատեքստ էր փորձում տեսնել «Մշակը»՝ ի դեմս խմբագիր Հ. Առաքելյանի: «Պէտք է փարեմք պետական քաղաքականութեան» հոդվածում ռուսական էշելոնների զինաթափումը և զինվորների սպանդը նա նույնացնում էր Անդրկովկասում «ազգային կառավարությունների» ստեղծման ծրագրի հետ: Ազգային խորհուրդներին, որոնց նա միմիայն ներքին կառավարական իրավասություն էր թողնում, Հ. Առաքելյանը հակադրում էր «համապետական ուժեղ կառավարության» գաղափարը: Հայ ժողովրդին սպառնացող վտանգի պայմաններում «տեղին չէ մտածել ազգային կառավարութեան մասին»[234],– նշում էր հեղինակը:

Հայ ժողովրդական կուսակցության ղեկավարը ևս համոզված էր, որ «Թիֆլիս–Գանձակ–Եվլախ գծի վրա, երբ թուրքերի և վրացիների ձեռքով զինաթափ արվեցին ռուս էշելոնները, պէտք է այլևս համոզեն մեզ, որ ազգային կառավարութիւնների ծրագիրը գոնէ այժմ անտեղի է…, ռուս էշելոնները զինաթափ անելու ծրագիրը արտադ-

[233] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 213, թթ. 26-27:
[234] «Մշակ», 1918, 21 հունվարի, թիվ 14:

րեց աղէտալի հետևանք. հիմն դրեց մի սոսկալի կատաստրոֆայի: Այդ անօգուտ զոհերը վրէժխնդրութիւն են գոռալու սպանվածների մերձաւորների կողմից, և մենք գտնվում ենք աւելի արիւնահեղ դէպքերի տէրրօրի ներքոյ»[235]: Ինչպես տեսնում ենք, Դաշնակցության հանդեպ անզիջում կուսակցությունը, այս հարցում չգիտես ինչու չէր մեղադրում դաշնակցական գործիչներին: Կռահելով այդ դեպքերի հակահայկական ուղղվածությունը՝ Հ. Առաքելյանը միաժամանակ հակասության մեջ էր հայտնվում, երբ առաջարկում էր Անդրկովկասում ստեղծել «ընդհանուր, համապետական, ոյժեղ կառավարութիւն», ինչն էլ՝ հարկադրում էր «փարվել պետական քաղաքականության»:

Նույն «Մշակը» փետրվարի 1-ի «Ազգային խորհրդի ուշադրությունը» հոդվածում գրում էր բոլորովին հակառակը՝ այժմ էլ սոցիալիստներից պաշտպանելով ազգային խորհուրդները, մասնավորապես ազգամիջյան զինվորական խորհրդին, որի կազմ էր ներառվել նաև ՀԺԿ անդամ Մ. Պապաջանյանը (նաև՝ Մ. Արզումանյան (ՀՅԴ) և Ս. Փիրումյան (Ս.-դ. - մենշևիկ): Դաշնակցական Մ. Արզումանյանը, Մ. Պապաջանյանի փաստն ուռճացնելով, երկրամասային կենտրոնում հայտարարել էր, թե «իշխանութիւնը պէտք է պատկանի միայն յեղափոխական կենտրօններին, ազգային խորհուրդները հակայեղափոխական են և նրանց պէտք է ցրել»: «Մշակն» արդարացիորեն վրդովվում էր, թե ինչու է Մ. Արզումանյանն այդպես արտահայտվում, երբ Հայոց ազգային խորհրդի մեծամասնությունը կազմում էր Դաշնակցություն կուսակցությունը, ուստի և Ազգային խորհրդից բացատրություն էր պահանջում[236]:

Շամխորի դեպքերը, մահմեդական շարունակվող խռովությունները ոչ միայն Արևելյան Անդրկովկասում, այլև Երևանի նահանգում ահագնացող անիշխանությունը հայության այս հատվածին մղում էին համախմբվածության, կազմակերպման նոր աստիճանի:

---

[235] «Մշակ», 1918, 21 հունվարի, թիվ 14:
[236] Տե՛ս նույն տեղում, 1 փետրվարի, թիվ 23:

Ստեփան Շահումյան

Ռոստոմ
(Ստեփան Զորյան)

Հակոբ Բագրատունի

Համազասպ
(Սրվանձտյանց)

Գրիգոր Ղորղանյան

Կենտրոնում՝ Եղիշե Պահլավունի

Նստած՝ ձախից երկրորդը՝ Հ. Բագրատունի, Հ. Քաջազնունի և Անդրանիկ

Աբրահամ Գյուլխանդանյան

Թադևոս Ամիրյան

Սերգեյ Մելիք-Յոլչյան



Արամ Մանուկյան

«Վայրի դիվիզիա»



Դանուշ Շահվերդյան

Նաջիմուդդին Գոցինսկի

Լևան Մաղալով

Հաջի Զեյնալաբդին Թաղիև

Ֆ. Խան-Խոյսկի

Ա.-բ. Թոփչիբաշև

Ա.-բեկ Խասամամեդով

Ն. Ժորդանիա

Ե. Գեգեչկորի

Նոյ Ռամիշվիլի

Ա. Չխենկելի

Զավադ Բ. Ճիխլինսկի



Բաքու, 1918, մարտ

Այդպիսի նպատակ էր հետապնդում նաև փետրվարի 18-ին Բաքվում կայացած Գանձակի նահանգի և Բաքվի նահանգի երկու գավառների՝ Շամախիի և Գյոքչայի բաքվաբնակ հայերի գավառական կոմիտեների ընդհանուր ժողովը[237]: Հավաքի նպատակների մասին պարզաբանումներ էր տալիս Գանձակի նահանգի բաքվաբնակ հայերի նախկին գործադիր կոմիտեի նախագահ Սարգիս Արարատյանը: Փետրվարյան հեղափոխությամբ առաջադրված ժողովրդավարական ազգային մարմինը հայության առջև ծառացած դժվարին մարտահրավերների առկայության պայմաններում վերակազմության կարիք էր զգում: Բաքվի ազգային խորհրդի առաջարկով Գանձակի նահանգի գավառական ներկայացուցիչների փետրվարի 4-ի առաջին կազմակերպչական ժողովում որոշվել էր վերակազմել նախկին խորհրդի կազմը և նրա մեջ մտցնել Բաքվի երկու այլ գավառների՝ Շամախիի և Գյոքչայի հայության ներկայացուցիչներին: Այդ նպատակով կատարվել էին ընտրություններ, և ներկա ժողովում արդեն մասնակցում էին տասը գավառների պատգամավորները: Եվ քանի որ նոր խորհուրդը սահմանափակվում էր ոչ միայն Գանձակի նահանգով, ներառում էր առհասարակ Արևելյան Անդրկովկասի հայաբնակ վայրերը, ուստի և Ս. Արարատյանն առաջարկում էր նոր խորհուրդն անվանել «Արևելյան Անդրկովկասի բաքվաբնակ հայերի խորհուրդ[238]: Նա լուծարված էր համարում նախկին կազմակերպության գործադիր կոմիտեն և կոչ անում ձևավորել նորը: Կազմակերպության շարժառիթների մասին զեկուցում է նաև նախկին խորհրդի նախագահ, անվանի հասարակական-քաղաքական գործիչ, էսէռ Լևոն Աթաբեկյանը[239]: Այնուհետև ժողովի նախագահ է ընտրվում սպեցիֆիկ («Սոցիալ-դեմոկրատական հայկական բանվորական կազմակերպություն») Դ. Անանունը (Դավիթ Տեր-Դանիելյան)՝ առաջադրելով կազմակերպչական մի շարք խնդիրներ: Մինչ այդ խնդիրների քննարկումը ժողովը ցանկություն է հայտնում լսելու գավառից ժամանած ներկայացուցիչների զեկուցումները: Խոսք է վերց-

[237] Տե՛ս «Արև», 1918, 22 փետրվարի, թիվ 41:
[238] Տե՛ս նույն տեղում:
[239] Տե՛ս նույն տեղում:

նում Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանը՝ նշելով, որ Ղարաբաղի հայերի և թուրքերի բարիդրացիական հարաբերությունները «ոչ մի կերպ չեն խախտել»: Նա ընդգծում էր, որ «Շուշի–Եվլախ խճուղու խժդժութիւնները մի շարք չարագործ բանդաների գործն են և երբէք ժողովրդական բնոյթ չեն կրում», Շուշիի վրայով տուն վերադարձող ռուս զինվորներին անհրաժեշտ դրամական օգնություն էր ցույց տրվել, սակայն նրանց զինաթափ են արել Բարդա կայարանում[240]: Վերակազմված գործադիր կոմիտեի կազմը հաջորդ նիստերին համալրվել է տեղակալներով և գանձապահով: Երկու փոխնախագահներ են ընտրվել՝ Ա. Պարոնյանը և Ա. Առաքելյանը, գանձապահ՝ Հ. Տեր-Առաքելյանը: Ձևավորվել են նաև աշխատանքային խմբեր (ֆինանսական, ներքին կազմակերպչական), ինչպես նաև հինգ հոգուց բաղկացած ազգամիջյան հարաբերությունների սեկցիան: Նրա անմիջական պարտականությունն էր սերտ հարաբերությունների պահպանումը տեղում գործող մահմեդական կազմակերպության հետ: Չէր բացառվում նաև պարենային հարցում վերջինիս կողմից ակնկալվող աջակցությունը: Քանի որ Արևելյան Անդրկովկասի բաքվաբնակ հայերի կազմակերպության գործադիր կոմիտեի նախագահը Դ. Անանունն էր, ապա, նրա մարտավարությունից ելնելով, կայացվեց է որոշում, ըստ որի՝ բանվորությանը կոչ էր արվում մեծապես աջակցելու գավառական ազգային հայրենակցական կոմիտեներին՝ նրանց ֆինանսական միջոցները «լայն հայրենակցական հիմքի վրա դնելու» նպատակով: Ծախսերի և տուրքի չափը որոշելու հարցում գավառային կոմիտեներին տրվում էին ազատ գործելու հնարավորություններ[241]:

Ինչ վերաբերում է ***Բաքվի խորհրդի կազմում Մուսավաթի ներկայացուցիչների ներգրավմանը,*** ապա ավելի ուշ բոլշևիկ գործիչները խոստովանել են, որ Մուսավաթի ընդգրկումը սխալ էր, այն էլ այն պարագայում, որ, ի տարբերություն Բաքվի իշխանության, Սեյմում բացակայում էին մահմեդական բանվորների ներկայացուցիչները:

---

[240] Տե՛ս «Արև», 1918, 22 փետրվարի, թիվ 41:
[241] Տե՛ս նույն տեղում, 6 մարտի, թիվ 48:

Բաքվի մենշևիկների «ձախ» թևը ներկայացնող Ա. Այոլլոն կուսակցության Բաքվի կազմակերպության կոնֆերանսում կարծիք էր հայտնում, որ կառավարության կազմում Մուսավաթի մասնակցության թույլատրումը կարագացներ մահմեդականների միջավայրում տարանջատման ու շերտավորման գործընթացը[242]: Այլ խոսքով՝ մահմեդական զանգվածները Մուսավաթի ազդեցությունից դուրս բերելու լավագույն միջոց էր դիտարկվում նրանց երևացող տեղում՝ տվյալ դեպքում կառավարության մեջ պահելը: Դարձյալ անտեսվում էր այն կարևորագույն հանգամանքը, որ Անդրկովկասյան կառավարության մեջ տեղավորված «մահմեդական դեմոկրատիան» զանգվածային ու լայն հակապետական գործունեություն էր ծավալել Ելիզավետպոլի նահանգում և պատրաստվում էր Թուրքիայի աջակցությամբ վճռական հարված հասցնել Բաքվին: Երբ Բաքվի խորհրդային իշխանության ու Ելիզավետպոլի թաթար կալվածատերերի միջև բախումն ակնհայտ դարձավ, տեղի մենշևիկները լռելյայն համաձայնեցին և հավանություն տվեցին Խորհրդի ջախջախման փաստին:

Մարտյան իրադարձություններում Մուսավաթի դերակատարության էական նախադրյալներից է այն հանգամանքը, որ 1917 թ. վերջին այդ կուսակցության ունեցած անվիճելի ազդեցությունը Սեյմի կազմավորումից հետո իրապես տեղաշարժեր առաջացրեց մահմեդական հասարակության միջավայրում: Սկսվեց մի գործընթաց, երբ մահմեդական բոլշևիկները սկսեցին Բաքվի խորհրդից ետ կանչել մուսավաթական պատգամավորներին: Եթե 1917 թ. դեկտեմբերի վերջին Բաքվի խորհրդի 191 պատգամավորներից Մուսավաթն ուներ 21, ապա՝ 1918 թ. մարտի վերջին՝ 308 պատգամավորներից ընդամենը 22 մանդատ[243]: Ուժերի նման վերադասավորումը բացատրվում էր գլխավորապես ձախ էսէռների ու բոլշևիկների կատարած աշխատանքով, հատկապես կուսակցական մամուլի ներգործությամբ: Թուրքական աջակցության բացակայությունը սպառնում էր Կովկա-

[242] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 135:
[243] Տե՛ս նույն տեղում, էջ 138:

սի թաթարների ազգային համախմբման գաղափարին, առավել ևս, որ Մուսավաթը կուսակցական մրցակցության ասպարեզում պարտություն էր կրում էսէռներից ու բոլշևիկներից: Պետք է առանձնացնել նաև այն հանգամանքը, որ այդ ազդեցիկ կուսակցությունների ներսում էական դեր ունեին հայազգի գործիչները:

1918 թ. հունվարի 1-ին վերակազմավորված Բաքվի խորհրդի պատգամավորների թիվը հասնում էր մոտ 300-ի, որոնք բաշխվում էին հետևյալ հաջորդականությամբ՝ բոլշևիկներ՝ 60, դաշնակցականներ՝ 55, մուսավաթականներ՝ 52, ձախ էսէռներ՝ 50, աջ էսէռներ՝ 45, այլ կուսակցություններ՝ 12 հոգի: Խորհուրդն իր կողմից ընտրել էր 30 հոգուց բաղկացած գործադիր կոմիտե՝ հինգ խոշոր կուսակցությունների վեցական անդամներից: Ի դեմս տարբեր կուսակցությունների՝ հայ գործիչներին ներկայացնում էին Սարգսյանը (ձախ էսէռ), Ս. Սահակյանը, Վելունցը (աջ էսէռ), Ա. Առաքելյանը, Լ. Զառափյանը, Ս. Մելիք-Յոլչյանը, Ե. Միրաքյանը, Ավ. Նուրիջանյանը* (ՀՅԴ), Գրիգորյանը և ուրիշներ[244]: Գործադիր կոմիտեի հանձնաժողովներից կարևորագույն չորսը ղեկավարում էին հայերը՝ Ս. Մելիք-Յոլչյանը՝ ֆինանսատեխնիկական, Ս. Մարգարյանը՝ իրավական, Սարգսյանը՝ արտաքին հարաբերությունների, Ս. Սահակյանը՝ առևտրաարդյունաբերական: Քաղաքային դումայի փոխարեն ստեղծված քաղաքային տնտեսական խորհուրդը ղեկավարում էր Կ. Գրիգորյանը[245]:

Բաքվի մարտյան իրադարձությունների գլխավոր մասնակիցներից Սերգեյ (Սարգիս) Մելիք-Յոլչյանը վկայում էր ամենաէականը, որ ***«չնայած Մուսավաթ կուսակցութեան Խորհրդում մասնակցելուն, հէնց առաջին օրերից յայտնուեց, որ նա Խորհրդին հակառակ է գործում, դաւում է նրա դէմ եւ նպատակ ունի վերցնել իշխանութիւնը իր ձեռքը ու յայտարարել անկախ Ադրբէջան»***[246] (ընդ-

* Ավիս Նուրիջանյանը այդ շրջանում դաշնակցական էր:

[244] Տե՛ս **Մելիք-Եօլչեան Ս.**, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, թիվ 7, մայիս, էջ 108:

[245] Տե՛ս նույն տեղում, էջ 108-109:

[246] Նույն տեղում, էջ 109:

գծումն իմն է – Վ. Մ.): Այդ նպատակին հասնելու, մասնավորապես զենքը գրավելու համար Մուսավաթը կազմակերպված հարձակումներ էր գործում Խորիրդի գործադիր կոմիտեի զինապահեստի վրա, բայց ձախողվում է: Դրա հետևանքով գործադիր կոմիտեն թաթարական թաղամասից տեղափոխվեց հայկական թաղամաս[247]: Ու քանի որ իշխանական ու տնտեսական ճգնաժամից դուրս գալու միջոցը Մուսավաթը տեսնում էր իշխանությունը զինված ճանապարհով և թուրքական աջակցությամբ զավթելու մեջ, ուստի և 1917 թ. դեկտեմբերի վերջից ձեռնամուխ եղավ հայկական ու նաև ռուսների կոտորածների քաղաքականությանը, կողոպուտին, թալանին, ոչ մահմեդական բնակչության բռնի գաղթեցումներին: Սկզբում ռուսների, հրեաների կոտորածներ են տեղի ունենում Մուղանի տափաստանում, Լենքորանում, Սալիանում, Կուր գետի հոսանքի վրա հիմնված ռուսական գյուղաքաղաքներում՝ Պետրոպավլովկայում, Վորոնցովկայում, Դաշկովայում, Գոլիցինոյում, ինչպես նաև Շամախիում, Ղուբայում, Նուխիում, Դերբենդում: Միայն Մուղանի դաշտում թալանվում ու ավերվում է 30 հարուստ գյուղ[248]: Հայկական կոտորածների ալիքը տարածվում է հիմնականում Շամախիի, Ղուբայի, Սալիանի, Դերբենդի և Նուխիի շրջաններում[249]:

Այդ մտահոգությամբ 1918 թ. հունվարի 18-ին Հայոց ազգային խորհրդին ու Հատուկ կոմիտեին են դիմում Նուխիի գավառի Հայկական 4-րդ հրաձգային գնդի սպաներն ու զինվորները: «Գիտակցելով, որ մեր միակ փրկությունը, ի դեմս ազգային բանակի, հզոր ինքնակազմակերպումն է,– ասվում էր այնտեղ,– գտնում ենք, որ այդ հրատապ և կարևորագույն ազգային գործը կձախողվի, եթե միջոցներ ձեռք չառնվեն մեր հայրենակիցների փրկության համար, որոնք թաթար-ավազակների կողմից ենթարկվում են բռնությունների: Չենք կարող պատկերացնել, որ մենք կարող ենք մեկնել ռազմաճակատ (Կովկասյան ճակատ – Վ. Մ.) և պաշտպանել մեր ընդհանուր հայրե-

---

[247] Տե՛ս **Մելիք-Եոլչեան Ս.**, նույն տեղում, էջ 109:
[248] Տե՛ս **Байков Б.**, Воспоминания о революции вь Закавказьи (1917-1920 гг.), Архивь русской революции, изд. **Гессеномь И. В.**, т. IX, Берлин, 1923, с. 115:
[249] **Ստեփանյան Գ. Ս.**, նշվ. աշխ., էջ 343:

նիքը այն ժամանակ, երբ թիկունքը պաշտպանված չէ, երբ մեր հարազատներին անպատիժ կերպով սպանում են ու թալանում: Սպաների և զինվորների ժողովը պահանջում է արագորեն համարժեք ուժեր ուղարկել, ինչը հնարավոր կդարձնի հայ ազգաբնակչությանը ավելի ապահով գավառ տեղափոխվել»[250]:

Գնդի ընդհանուր ժողովի հունվարի 14-ի արձանագրությունը մակագրել էր հրամանատար, գնդապետ Օսեպյանը[251]:

2.3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ - ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐ - ՄՈՒՍԱՎԱԹ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Մուսավաթի գործունեության հիմնահարցին զուգահեռ Բաքվի իշխանության ու Ստ. Շահումյանի առաջիկա ծրագրերի իրականացման համատեքստում կարևորվում է Դաշնակցության հետ և նրա նկատմամբ մշակվող քաղաքականությունը: Այդ գործընթացը կարելի է տարանջատել մի քանի ուղղությունների, այդ թվում՝ Բաքվի հայոց ազգային խորհրդի, ՀՅԴ տեղական կոմիտեի, ինչպես և առանձին գործիչների նկատմամբ ունեցած վերաբերմունքի և իրականացվող քաղաքականության շրջանակներում: Խնդիրը համակողմանի լուսաբանելու նպատակով նախ անհրաժեշտ է պարզել Դաշնակցություն կուսակցության ունեցած դերը Բաքվի հասարակական-քաղաքական կյանքում, նահանգի ու քաղաքի հայ բնակչության միջավայրում: Այս առումով կարևորվում է Բաքվի հայոց ազգային խորհրդի ձևավորման գործընթացը:

1912 թ. պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Բաքու նահանգի և քաղաքի հայ բնակչութունը կազմում էր 116 հազար մարդ, որից 73.351-ը ապրում էին Բաքու քաղաքում և նավթաշխարհում[252]: Բաքվի հայ ազգաբնակչության թիվը 1916 թ. հունվարի 1-ի

---

[250] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թ. 182:
[251] Տե՛ս նույն տեղում:
[252] Տե՛ս **Գիլխանդանեան Ա.**, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1941, թիվ 9, հուլիս, էջ 93:

դրությամբ կազմում էր 77.166 հոգի[253]: Անդրկովկասի հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքում Բաքուն ունեցել է առաջնակարգ, վճռորոշ դեր[*]: Հայության ազգային-քաղաքական շահերի արտահայտիչը տեղի Ազգային բյուրոն էր, որն ընդհուպ մինչև Փետրվարյան հեղափոխության փուլը Թիֆլիսի հայոց ազգային բյուրոյի մասնաճյուղ էր, չուներ ինքնուրույն մարմնի բովանդակություն և իրավասություն: Բոլշևիկյան հեղաշրջումից հետո անհրաժեշտ դարձավ Բաքվի ազգային կենտրոնական մարմնի գոյության հարցը, որի կազմավորման ձևը ենթադրվում էր նմանեցնել Թիֆլիսի հայոց ազգային խորհրդին:

Այդ նպատակով 1917 թ. դեկտեմբերին Բաքվում կայացավ նախապատրաստական ժողովների շարք՝ բոլոր հոսանքների և կուսակցությունների մասնակցությամբ: Պարզվեց գլխավորը, այն է՝ ձևավորվող Ազգային խորհրդին կարող էին անդամակցել չորս հայկական կուսակցություններ՝ ՀՅԴ-ն, Սոցիալիստ-հեղափոխականները, Սոցիալ-դեմոկրատական կուսակցության հայկական երկու թևերը և ՀԺԿ-ն: Դաշնակցության անվիճելի ազդեցության պատճառով մյուս երեք կուսակցությունները պնդում էին, որ Ազգային խորհուրդը ձևավորվի 7 անդամներից, որոնցից 4-ը լինեին դաշնակցական, իսկ 3-ը ունենային մեկական ներկայացուցիչներ: Ա. Գյուլխանդանյանի վկայությամբ՝ «ՀՅԴ, նկատի ունենալով Բագուի ուրոյն պայմանները, հրաժարուեց յօժարակամ կերպով մի ձայնից, յօգուտ, այսպէս կոչուած, դրամատիրական խմբակի ներկայացուցչի»[254]: Նախ ի հայտ է գալիս ՀԺԿ-ի դեմ Դաշնակցության անզիջում պայքարի խնդիրը նաև Բաքվում, ապա և հարց է առաջանում, թե մնացած երեք հոսանքների մեջ սոցիալ-դեմոկրատների ո՞ր թևը՝ բոլշևիկնե՞ր, թե՞ մենշևիկներ, չէր ներգրավելու: Առնվազն տարօրինակ է, որ Դաշնակցության առաջատար գործիչներից մեկը Բաքվում իշխանության համար պայքարի պայմաններում չէր առանձնացնում ոչ միայն իրար

[253] Տե՛ս Кавказский Календарь на 1917 г., Тифлис, 1916, с. 183, 185:

[*] Հանգամանորեն տե՛ս **Դադայան Խ.**, Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920 թ.), Երևան, 2006, **Ստեփանյան Գ.**, նշվ. աշխ.:

[254] Տե՛ս **Գիւլխանդանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 99:

հակամետ մենշևիկ-բոլշևիկներին, այլև լիովին անտեսում էր դրանցից մեկին, մեր կարծիքով՝ բոլշևիկներին:

Կուսակցությունները նույն համամասնությամբ էին բաշխված նաև Ազգային ժողովում: Օրենսդիր բարձրագույն մարմինը, ինչ-որ առումով հայկական նախախորհրդարանը, որը բաղկացած էր 32 անդամներից և գերակայելու էր գործադիր մարմնի՝ Ազգային խորհրդի նկատմամբ, «Ժամանակի ընթացքին խորհրդակցական բնոյթ ստացաւ, մինչդեռ Ազգային Խորհուրդը աւելի ուժեղանալով դարձաւ Բագուի և Բագուի հետ կապուած ամբողջ հայութեան բերանը»[255]: Նույն երևույթը բնորոշ էր նաև Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի էվոլյուցիային, ինչը, մի կողմից, հայ հասարակության քաղաքական ինքնակազմակերպության ցածր մակարդակի հետևանքներից էր, իսկ մյուս կողմից՝ այդ հասարակության վրա ՀՅԴ մենաշնորհի հաստատման վճռական գործոնով էր պայմանավորված:

Բաքվի հայոց ազգային խորհրդի առաջին նիստը կայացավ 1917 թ. դեկտեմբերի 30-ին: Խորհրդի կազմում էին 7 հոգի՝ Աբր. Գյուլխանդանյանը, Խանասորի Վարդանը, (Սարգիս Մեհրաբյան), Կ. Պարունակյանը (ՀՅԴ), Լ. Աթաբեկյանը (էսէռ), Կ. Տեր-Ղազարյանը (ս.-դ. մենշևիկ), Հ. Տեր-Միքայելյանը և Ս. Տեր-Ղազարյանը (ՀԺԿ): Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) տվյալներով ստացվում է հետևյալ կազմը. ՀՅԴ-ից Ա. Գյուլխանդանյան (նախագահ), Ս. Մեհրաբյան (Խանասորի Վարդան), Ս. Արարատյան, սոցիալիստ-հեղափոխականներից՝ Լ. Աթաբեկյան, սոցիալ-դեմոկրատներից (մենշևիկ)՝ Ն. Տեր-Ղազարյան, ՀԺԿ-ից՝ Հ. Տեր-Միքայելյան և Ազգային ֆոնդի կողմից՝ Ս. Տեր-Ղազարյան (7 հոգի)[256]:

Խորհրդակցական ձայնի իրավունքով ընդգրկվում են նաև Ռուստոմը (Ստեփան Զորյան), Հ. Քաջազնունին և Տ. Իսախանյանը: Ավելի ուշ Անդրկասպյան երկիր մեկնած Կ. Պարունակյանին փո-

---

[255] Տե՛ս **Գիւլխանդանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 99:

[256] Տե՛ս **Ա-Դո** (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Հայության երկունքը, ձեռագիր, ՀՀ պատմության թանգարան, Նոր պատմության բաժին, օժանդակ ֆոնդ, թիվ 1590, թղթ. 839/1957, էջ 704: Առաջին անգամ մեր կողմից է դրվել գիտական շրջանառության մեջ – Վ. Մ., նաև նույնի՝ **Ա-Դո,** Հայության երկունքը, Երևան, 2015:

խարինեց Ս. Արարատյանը, Լ. Աթաբեկյանին՝ Հ. Տեր-Օհանյանը, իսկ փոխնախագահի պաշտոնում՝ Ն. Տեր-Ղազարյանը և Ա. Չիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան): Խորհրդի նախագահ ընտրվեց Աբրահամ Գյուլխանդանյանը, քարտուղար՝ Ա. Չիլինգարյանը: Արևմտահայերի կողմից Ազգային խորհրդի նիստերին հաջորդաբար մասնակցում էին Ռ. Քաջբերունին և Զ. Եսայանը[257]: Ս. Մելիք-Յոլչյանի վկայությամբ՝ Բաքվի ազգային մարմինն ուներ Մեծ և Փոքր խորհուրդներ, որոնցից առաջինը բաղկացած էր 70 անդամներից և հրավիրվում էր արտակարգ իրավիճակներում[258]: Նա նկատի ուներ Բաքվի ազգային ժողովն ու խորհուրդը՝ որպես օրենսդիր ու գործադիր մարմիններ:

Խ. Դաղայանը, իր «Հայերը և Բաքուն» աշխատության մեջ հենվելով Լ. Բաբայանի և Վ. Հակոբյանի «Հակոբ Մանանդյան» գրքի տեղեկության վրա, նշում է, թե Ազգային խորհրդի նախագահը Բաքվի հայտնի նավթարդյունաբերողների ընտանիքից Հակոբ Ղուկասյանն էր[259]:

Գործունեություն տարբեր փուլերում խորհրդի պատվավոր նախագահ է եղել Հայ առաքելական եկեղեցու Շամախու և Բաքվի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանը, գործերի կառավարիչ՝ պատմաբան Հակոբ Մանանդյանը, քարտուղար՝ Բախշի Իշխանյանը, միգուցե և կարճատև մի շրջանում՝ նաև Հակոբ Ղուկասյանը՝ որպես նախագահ, հնարավոր է նաև որպես Ազգային ժողովի նախագահ:

Բաքվի հայոց ազգային խորհուրդն ուներ իր զինված ուժերը՝ 2-րդ պահեստային հայկական հետևակային գունդը, մեկ հրետանային վաշտ և Համազասպ Սրվանձտյանի ջոկատը[260]:

Հայաստանի հատուկ կոմիտեի 1918 թ. փետրվարի 14-ի նիստի արձանագրությունից պարզվում է, որ Հ. Բեկզադյանը Վ. Տեր-Օհա-

---

[257] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 165, նաև՝ **Դարբինեան Ռ.**, Բագու, 1918, ըստ՝ **Ռոստոմ,** Մահուան վաքսունամեակի առթիւ, Պէյրութ, 1979, էջ 317:

[258] Տե՛ս **Մելիք-Եոլչեան Ս.**, Բագուի հերոսամարտը, էջ 115:

[259] Տե՛ս **Դաղայան Խ.**, Հայերը և Բաքուն, էջ 107:

[260] Տե՛ս նույն տեղում, էջ 107:

նյանի հետ միասին Բաքվի հայոց ազգային խորհրդում ներկայացրել են Թիֆլիսի հատուկ կոմիտեի մասնաճյուղը[261]:

Կազմակերպումից հետո Ազգային խորհուրդը կոչով դիմեց հայ հասարակությանը. 1. Բաքվի հայոց ազգային խորհուրդը կազմում է Թիֆլիսի ազգային խորհրդի բաժանմունքը, 2. ձգտում է Կովկասի բոլոր ժողովուրդների հետ համերաշխ գործելուն, 3. համերաշխ է լինելու հեղափոխական, պետական և ազգային բոլոր մարմինների հետ, 4. հանդիսանում է հայ ժողովրդի շահերի արտահայտիչը: Որպես սկզբունքներ՝ ընդունվեցին հետևյալ դրույթները. ա) որպես միջկուսակցական համաձայնությամբ ստեղծված մարմին՝ կարող է գոյություն ունենալ այնքան ժամանակ, որքան գործում է այդ համաձայնությունը, բ) մասնակից կուսակցությունները պետք է ներդնեն իրենց բարոյական և նյութական բոլոր միջոցները՝ Ազգային խորհրդի գործունեության ծավալման համար, գ) Ազգային խորհուրդը ոչ մի կապ չունի նախորդ նույնանման կազմակերպությունների հետ (ինչպես օրինակ՝ Հայոց ազգային բյուրոն), հետևապես չպետք է հետաքրքրվի նրանց ո՛չ դրամական և ո՛չ էլ քաղաքական գործունեությամբ, դ) բոլոր սկզբունքային խնդիրները պետք է լուծվեն ոչ թե ձայների մեծամասնությամբ, այլ միաձայնությամբ (կոնսենսուս): Ա. Գյուլխանդանյանի վկայությամբ՝ ազգային խորհուրդն աստիճանաբար ստացավ Բաքվի հայկական կառավարության բնույթ և ինչոր առումով «իրերի բերումով ստիպուած եղավ փոխարինել Թիֆլիսի Ազգային խորհուրդը»[262]:

Փետրվարի 19-ին ասպարեզ եկավ նաև Բաքվի ազգային խորհրդի շրջաբերականը՝ ուղղված Թուրքեստանի, Անդրկասպյան երկրի, Հյուսիսային Կովկասի, Բաքվի նահանգի և Դերբենդի շրջանի հայկական ազգային կոմիտեներին, որտեղ հիմնավորվում էր հենց այդ հանգամանքը, այն է՝ Բաքու–Թիֆլիս երկաթուղային հաղորդակցության դադարեցման պատճառով ժամանակավորապես Թիֆլիսի ազգային խորհրդից կտրված շրջանները կապ հաստատեն

[261] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թ. 246:
[262] Տե՛ս **Գիւլխանդանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 99-100:

Հայոց ազգային խորհրդի Բաքվի մասնաճյուղի հետ: Անհրաժեշտ էր համարվում նոր ազգային կոմիտեների ձևավորման հրատապ գործընթացը: Նրանք պետք է զբաղվեին երեք խնդիրներով՝ ա) դրամական, բ) ռազմական և գ) զենքի հայթայթման: Դրամական խնդիրը կազմակերպելու համար բոլոր հայերի համար մտցվում էր պարտադիր տուրք՝ առաջադիմական հարկ[263]: Այս ամենի շուրջ առավել նկատելի էր Ռոստոմի[*] գործունեությունը և պատահական չէր, որ Ա. Չիլինգարյանը նրան էր համարում որպես Բաքվի ազգային խորհրդի իրական ղեկավար[264]:

Որպես երկրորդ կարևորագույն հիմնահարց՝ պետք է առանձնացնել կուսակցական գործոնը՝ տվյալ դեպքում ՀՅԴ - բոլշևիկներ և ՀՅԴ - Մուսավաթ հարաբերությունների զարգացումը: Իրադարձությունների բովանդակության մեջ խորանալու դեպքում, մեր կարծիքով, առերես թվացյալ զուտ միջկուսակցական պայքարը և իշխանության ձգտումն անգամ երկրորդ պլան է մղվում Բաքվի բեկումնային իրադարձությունների բազմակողմանի քննարկման համատեքստում:

Որքան էլ պատճառներ փնտրենք, միևնույն է, բոլշևիկ-դաշնակցություն բացառիկ համագործակցության հիմքում դրվում էր գլխավոր նպատակը՝ ի վերջո կանխել, ձախողել թուրք-թաթարական կամ Մուսավաթ - երիտթուրքական ռազմաքաղաքական գերիշխանության հաղթանակը թե՛ Բաքվում և թե՛ Անդրկովկասում: Արդյունքում, թեև ժամանակավորապես, սակայն հենց դա էլ հաջողվեց: Հատկապես Դաշնակցության պարագայում ակնհայտ էր այն, որ հայ հասարակության մեջ գերիշխող դիրք գրավելու վերջինիս անթաքույց ձգտումը, միևնույն է, չէր ավարտվելու այդ կուսակցության կողմից երկրամասի իշխանությունը գրավելու փաստով. Դաշնակցությունը չուներ

---

[263] Տե՛ս **Գիլխանդանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 101:

[*] 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Ռոստոմը գտնվում էր հաջորդաբար Պետրոգրադում և Ստոկհոլմում: Ստոկհոլմում պետք է գումարվեր Սոցիալիստական ինտերնացիոնալի համագումարը, և Ռոստոմը ՀՅԴ կողմից մեկնել էր ներկայացնելու հայկական պահանջները: Այդ մասին նա դեկտեմբերի 2-ին տեղեկացրել է ՀՅԴ ԱՄՆ կենտրոնական կոմիտեին: «Վէմ», Փարիզ, 1938, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 91-92:

[264] Տե՛ս **Դարբինեան Ռ.**, Բագու, 1918, ըստ՝ **Ռոստոմ**, Մահուան վաթսունամեակի առթիվ, էջ 318:

այդպիսի նկրտումներ: Բոլշևիկների պարագայում դա լիովին իրատեսական ծրագիր էր, քանի որ նախ և առաջ պանթուրքիզմին դիմագրավելու, հայ ազգաբնակչության անվտանգությունն ապահովելու և ի վերջո Հայկական հարցի լուծման համատեքստում Դաշնակցությանն այլ ընտրություն չէր մնում, քան ապավինել Բաքվի խորհրդային իշխանությանը: Այս առումով հատկանշական է Բաքվի ռուսական ազգային խորհրդի անդամ, իրավաբան, կադետ Գ. Բայկովի գնահատականը, որը պետականամետ, ինչ-որ տեղ նաև ռուսական մեծապետականության դիրքերից էր փորձում բացատրել հայկական կողմնորոշման պատճառը: Նա նշում էր. «Որքան շատ էր դրսևորվում թաթարական անջատողականությունը, այնքան հայկական լայն շրջանակներում սկսում էր գերակշռել ռուսական կողմնորոշումը: Հայերի մոտ խոսում էր ինքնապաշտպանական բնազդը, որը հուշում էր նրանց, թե տարածքային մեկուսացվածությունը սպառնում է մահմեդական ցեղերի և թուրք եղբայրների մահացու վտանգավոր սպառնալիքով: Հայերի այս հոգեբանական վիճակն էլ բացատրում է նույնիսկ բոլշևիկների հետ գնալու նրանց հակումը: Հայերը բացահայտ ասում էին. «Մենք ռուսների հետ ենք՝ թեկուզ և բոլշևիկների»[265]:

Մարտի 20-ի Սեյմի 19-րդ նիստը նշանավորվեց հատկապես մահմեդական պատգամավորների ակտիվության դրսևորմամբ, ինչը մասնավորապես վերաբերում էր Բաքվի իրադարձություններում բոլշևիկների ու դաշնակցության համագործակցության հիմնահարցին:

Կիսում ենք Ա. Սաֆիքյուրդսկու մոտեցումն առ այն, որ նա ևս բոլշևիզմը դիտարկում էր ոչ թե որպես ինտերնացիոնալիստական, այլ բացառապես վելիկոռուսական երևույթ, ինչը նոր կերպարանքով փորձում էր վերականգնել Ռուսաստանի կայսերական տարածքային ամբողջականությունը և անգամ ետ բերել միապետությունը, հասկանալի է՝ միակուսակցական դիկտատուրայի ձևով: Միաժամանակ անհնար է համաձայնել վերջինիս եզրակացությանը, երբ որպես

[265] **Байков Б.**, նշվ. աշխ., էջ 116:

ասվածի ապացույց՝ նա պատճառաբանում է, թե այդպիսով իսկ բոլշևիկներն ու բոլոր ազգերը դուրս են եկել մահմեդականների դեմ, ուստի և անհապաղ անհրաժեշտ է իրականացնել մահմեդականների ինքնապաշտպանության գործը և, իհարկե, վերջ տալ բոլշևիզմին[266]:

Կեղծիքն առավել հստակ է հնչում Գ. Ռասուլ-Զադեի խոսքում: Իբր մտահոգված Բաքվում ազգամիջյան բախումների վերահաս վտանգով՝ նա հիմնավորում էր, թե իբր հենց այդ պատճառով է, որ Մուսավաթը խուսափում է խորհրդային իշխանության ու Բաքվի դեմ ելույթից[267]: Բաքվի վրա արշավանքի գլխավոր կազմակերպիչներից մեկը հատկապես մտահոգված էր բոլշևիկների ու Դաշնակցության համատեղ գործողությունների փաստով ու, ինչպես արդեն որոշված էր, միտումնավոր կերպով նույնացնում էր «հայություն» և «բոլշևիզմ» եզրույթները՝ դրանով իսկ հարվածելով և՛ Դաշնակցությանը, և՛ Ստ. Շահումյանին ու մյուսներին, մանավանդ Թիֆլիսի գրավման հնարավորության համատեքստում:

Առանցքային դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ դաշնակցական և բոլշևիկ մի շարք հայազգի ղեկավար գործիչների միջև առկա էր ընկերական, բարեկամական կայուն և անցյալով թրծված դաշինք: Ցավոք, դա ինքնաբուխ կերպով էր արտահայտվում հայության համար ճակատագրական, անցումային փուլերում և ընդգծված ժամանակավոր ու շահադիտական բնույթ էր կրում: Լավագույն օրինակը Ռոստոմի և Ստ. Շահումյանի կապն էր, որոնք, մեր կարծիքով, թե՛ իրենց գործընկերներից և թե՛ ժամանակից առաջ էին ընկել, ավելի հեռատես էին և այսպես նաև փորձում էին վեր կանգնել կուսակցական նեղ մոտեցումներից: Ստ. Շահումյանին պատմական այս փուլում վստահաբար պետք է համարել ազգային գործիչ: Այս ամենից է բխում նաև քաղաքական երկու ճամբարների կողմից Բաքվի դեպքերը համապատասխանաբար որակելու և անվանելու հանգամանքը: Բոլշևիկներն այն առավելապես դիտարկում էին որպես «քաղաքացիական պատերազմ», իսկ Դաշնակցությունը՝ «հայ-թուրքական

[266] Տե՛ս Закавказский Сейм, Стенографический отчет, засъ 19-ое, 20 марта, Тифлис, 1918 г., с. 34-35:
[267] Տե՛ս նույն տեղում, էջ 38-39:

ազգամիջյան ընդհարում», «հերոսամարտ»՝ վերջինիս հաղորդելով ազգային-ազատագրական շարժման նկարագիր:

Առավել համապարփակ և հիմնավոր հետևություններ կարվեն, իհարկե, Բաքվի իրադարձությունների ընթացքի, զարգացման վերլուծության արդյունքում: Առայժմ ներկայացնենք միայն Ա. Չիլինգարյանի կարծիքն այդ համագործակցության վերաբերյալ. «Ու թէեւ մենք՝ դաշնակցականներս մեր գաղափարներով եւ քաղաքական ձգտումներով հակառակ էինք Խորհրդային իշխանութեան, բայց գտնելով թրքական մահացու վտանգին ներքեւ՝ հարկադրուած էինք պայքար չմղել բոլշեւիկներուն դեմ, մանաւանդ որ Բագուի կամ կովկասեան Ատրպէյճանի մէջ հայութիւնը չէր կրնար հետապնդել ազգային ուրոյն քաղաքական յատուկ նպատակներ: Մենք հոն ունէինք միայն ինքնապաշտպանութեան խնդիրներ եւ այդ պատճառով ալ կ՚աշխատէինք չէզոքութիւն պահել բոլշեւիկներու եւ թրքական Մուսաւաթի հանդէպ, որոնք արդեն խուլ պայքարի մէջ էին իրարու հետ: Սակայն շուտով պարզուեցաւ, որ մենք չպիտի կարողանանք պահել մեր նախասիրած չէզոքութիւնը: Նախ որ՝ բոլշեւիկները շատ տկար էին Բագուի մէջ, եւ անխուսափելի պիտի ըլլար անոնց պարտութիւնը թրքական Մուսաւաթէն, որ լաւ զինուած զօրացած էր տաճիկ զինուորական գերիներու շնորհիւ: Երկրորդ՝ Բոլշեւիկներու պարտութենէն յետոյ, կասկած չկար, որ Մուսաւաթը պիտի հաշիւ մաքրէր հայերուս հետ: Եւ, վերջապէս, հայ զանգուածները չէին կարող բոլորովին անտարբեր մնալ այն կռուի հանդէպ, զոր սկսած էին բոլշեւիկները Մուսաւաթի դէմ, մանաւանդ, որ անոնք (բոլշեւիկները) ոչինչ կը խնայէին՝ իրենց կողմը քաշելու համար հայերը»[268]: Մի հարցում չենք կարող համաձայնել Ա. Չիլինգարյանի հետ, թե բոլշեւիկները թույլ էին Բաքվում, այն էլ՝ 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին:

Միաժամանակ չպետք է անտեսել Դաշնակցության և Բաքվի բոլշեւիկների զուտ կուսակցական, անզիջում հարաբերությունների փաստը: Դրանք դրսևորվում էին մասնավորապես Բաքվի խորհրդի և

---

[268] **Դարբինեան Ռ.**, Փոթորիկի օրերուն, «Հայրենիք», ԻԶ տարի, յունուար, թիւ 1(264), Պոսթըն, 1948, էջ 22:

գործադիր կոմիտեի կազմում զարգացող շփումների համատեքստում: Գործադիր կոմիտեի փետրվարի 6-ի (19) նիստում Դաշնակցության ներկայացուցիչները հանդես եկան բոլշևիկյան «Известия» թերթի դեմ բողոքով: Փետրվարի 22-ի նիստում Խորհրդի դաշնակցության խմբակցության ղեկավար Ս. Մելիք-Յոլչյանը նշում էր, որ «Известия»-ի խմբագիր Արտաշես Կարինյանը անթույլատրելի վարքագիծ է ցուցաբերում Դաշնակցության հանդեպ, մանավանդ որ ներկայացնում էր Բաքվի խորհրդի պաշտոնական օրգանը: Ա. Կարինյանի հիմնավորումից հետո, թե այդ վերաբերմունքը Բաքվի խորհրդի մեծամասնության կարծիքի արգասիքն է, և «իրեն լիազորել են պայքար մղել նացիոնալիզմի դեմ», Դաշնակցության և անգամ Մուսավաթի ներկայացուցիչները լքում են նիստերի դահլիճը[269]: Բոլշևիկյան պատմագիրներից Յա. Ռատգաուզերը, օրինակ, առանց աղբյուրագիտական հիմքերի պնդում էր, թե Մարտյան իրադարձությունների նախօրեին երկու ազգային խորհուրդների միջև ընթանում էին համատեղ գործողությունների վերաբերյալ բանակցություններ: Հարվածը, հասկանալի է, ուղղված էր Բաքվի խորհրդի դեմ: Այստեղ ուշագրավն այն հանգամանքն է, որ Խորհրդի դաշնակցական խմբակցությունը փաստում էր «Ազգային խորհրդի իրենց ընկերների հակահեղափոխականությունը», բայց միաժամանակ դա բացատրում էր նրանով, որ «խորհրդային» դաշնակցականները՝ որպես բանվորների ներկայացուցիչներ ավելի ձախ են կանգնած Ազգային խորհրդի իրենց կուսակցական գործընկերներից և իբր թե նրանց դեմ պայքար են մղում: Խորհրդի խմբակցության ղեկավարները անվիճելիորեն կապ էին պաշտպանում Հայոց ազգային խորհրդի հետ և նրա ղեկավարությամբ էին գործում: Այդ կապի մասին էին վկայում նաև Ս. Մելիք-Յոլչյանն ու էսէռների ղեկավար Ս. Սահակյանը: Վերջինս հավելում էր, որ Խորհրդի դաշնակցության խմբակցության անդամները Ազգային խորհրդում հանդես էին գալիս Բաքվի խորհրդի իշխանությունը ճանաչելու դեմ[270]: Նշենք նաև, որ Հայոց ազգային

[269] Տե՛ս **Раттаузер Я.**, նշվ. աշխ., էջ 139:
[270] Տե՛ս նույն տեղում, էջ 139-140:

խորհուրդն իր չեզոքությունը հայտարարեց այն պահին, երբ Մուսավաթը 1918 թ. մարտից խորհրդի դեմ սկսել էր լայնածավալ հարձակումը:

Փորձենք վեր հանել ***Մուսավաթի դերակատարությունը***, մասնավորապես բոլշևիկների նկատմամբ նրանց քաղաքականության փոխակերպումը, ինչը Մարտյան իրադարձությունների հանգուցային կողմերից է:

Ա. Ռանսկու վկայությամբ Մուսավաթ կուսակցությունը ձևավորվել է 1912 թ.՝ Մամեդ-Էմին Ռասուլ Զադեյի գլխավորությամբ: Հիմնադիրներից ոմանք 1905 թ. բոլշևիկյան կուսակցության անդամներ էին: Հայտնի է, որ բոլոր հալածված ազգերի կուսակցությունների գլխավոր խնդիրն ու պարտականությունը ցարիզմի դեմ պայքարն էր: Սակայն Մուսավաթը Ռուսաստանյան առաջին հեղափոխության ժամանակ արդեն հանդես եկավ իր անդամներին ուղղված «խստագույն ցուցումով». «Մուսավաթի Բաքվի բաժանմունքը ամենայն լրջությամբ արգելում է իր անդամներին, որպեսզի խուսափեն ռուսական կառավարության ու նրա ագենտների դեմ բաց քննադատությունից»[271]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այս նույն մարտավարությունը կուսակցությունը շարունակեց նաև Առաջին աշխարհամարտի ընթացքում՝ հմտորեն կարողանալով հիմնականում խուսափել պատերազմի անմիջական խնդիրներից ու հետևանքներից, ապա և 1917 թ. Փետրվարյան հեղափոխության ու հատկապես բոլշևիկյան հեղաշրջման համատեքստում: Հայտնի է նաև, որ 1921 թ. Ղարաբաղի հարցի լուծման կապակցությամբ Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը սպառնաց Լենինին ու Ստալինին, որ հայամետ լուծման դեպքում իր երկիրը կհրաժարվի խորհրդային իշխանությունից: Այս վերջին անսովոր համարձակությունն ու վստահությունը, քաղաքական շանտաժի դիմելու գործելաոճը թաթար-մուսավաթականները երբեմն էլ բոլշևիկ-մուսավաթականները ձեռք էին բերել՝ 1905 թ. հայ-թաթարական բախումներից սկսած և տարիների ընթացքում կատարելության էին հասցրել:

---

[271] Տե՛ս **Раевский**, Партия Мусават и ее контрреволюционная работа, Баку, 1929, с. 4, 6:

1917 թ. մայիսի սկզբին Բաքվում կայացած Ռուսաստանի «Համամուսուլմանական» համագումարում առաջին անգամ իր մասին հայտարարեց թյուրքական Մուսավաթ ազգայնական կուսակցությունը: Մուսավաթական հռետորների հայտարարություններում արդեն հնչում էին նպատակային ու հեռահար արտահայտություններ, այն է՝ չվստահել «դեմոկրատ կոչվող քաղաքական այն հոսանքներին, որոնք թաքնված իմպերալիզմի քողի տակ փորձում են խաթարել «եղբայրական» Թուրքիայի ամբողջականությունն ու բարօրությունը»: Լսվում էին նաև բացականչություններ. «Կորչե՛ն Միլյուկովը և կադետները»[272]: Թեպետ առաջին անգամ բացահայտ կերպով բարձրացվում էին նաև պանթուրքիստական ծրագրեր, ինչպես օրինակ՝ Ռուսաստանի բոլոր մահմեդականների (22-24 միլիոնից հասցրին 35-40 միլիոնի) քաղաքական ու տարածքային միավորումը Թուրքիայի, Պարսկաստանի և Հնդկաստանի մահմեդականների հետ:

Համագումարի նախագահ, երդվյալ ատենակալ, 1-ին Պետական դումայի անդամ Ալի Մարդաշ բեկ Թոփչիբաշևը, ներկաների կամքն արտահայտելով, սկիզբ դրեց նաև Ռուսաստանի մահմեդականների Ռուսաստանից հեռանալու-անջատողականության գաղափարին, ինչն իրականացվելու էր Թուրքիայի հետ միասին[273]:

1917 թ. հունիսին թուրք ֆեդերալիստների կուսակցության հետ միավորումից հետո Մուսավաթը (թուրք ֆեդերալիստ-դեցենտրալիստների կուսակցություն) 1918 թ. փետրվար-մարտին Անդրկովկասի իշխանության մարմիններում ձեռք բերեց այնպիսի ներկայացուցչություն, ինչպիսին չէր ունեցել ոչ մի մահմեդական կուսակցություն և ոչ մի հաստատության մեջ:

Անդրկովկասյան Սեյմում Մուսավաթի համախոհների թիվը հասնում էր 30-ի (ընդհանուր՝ 33 պատգամավորների թվից), Բաքվի քաղաքային դումայում՝ 13, իսկ Բաքվի խորհրդում՝ 16 պատգամավորների: Սպեցիֆիկ Բախշի Իշխանյանի գնահատմամբ՝ Մուսավա-

---

[272] Տե՛ս **Байков Б.**, նշվ. աշխ., էջ 103:
[273] Տե՛ս նույն տեղում:

թը ազգային-դեմոկրատական կուսակցություն էր, որն «իր դրօշակը չի զարդարում սօցիալիստական՝ մեր օրերում այնքան էժանացած մակագրով, նա չի անուանում իրան նոյնիսկ յեղափոխական»[274]:

Մուսավաթ-բոլշևիկ փոխհարաբերությունների հիմնահարցը լավագույնս ներկայացված է Բ. Իշխանյանի «Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում» աշխատության մեջ, որը լույս է տեսել Բաքվում 1918 թվականին: Նրա կարծիքով՝ հնարավոր չէր ցույց տալ մի հանգուցային հարց, որի նկատմամբ Մուսավաթը հակառակ հանդես գար բոլշևիկյան տեսակետին, բայց դրան զուգահեռ կային բազմաթիվ խնդիրներ, որոնց հանդեպ Մուսավաթի խմբակցությունը, Բաքվի խորհրդում պաշտպանելով բոլշևիկներին, պայքարել է մյուս խմբակցությունների՝ մենշևիկների, էսէռների և դաշնակցության դեմ: Այդ դրվագներից էր 1) 1917 թ. նոյեմբերին Բաքվում հակախորհրդային «Հասարակական անվտանգության հեղափոխական կոմիտեի» կազմավորման պահին Մուսավաթի հրաժարականը այդ կառույցին իր մասնակցությունից: 2) Հայտնի է նաև Մուսավաթի բանաձևը՝ հօգուտ բոլշևիկների, երբ աննպատակահարմար էր համարվում բոլշևիկներին կղզիացնելու դեմոկրատիայի մարտավարությունը: Նոյեմբերի 12-ին Բաքվի բ. և զ. պատգամավորների ընդլայնված խորհրդի նիստում ընդունված բանաձևը կազմալուծում էր Հասարակական անվտանգության կոմիտեն, որին ակտիվորեն աջակցել էին մուսավաթականները[275]: 3) 1918 թ. հունվարի 21-ին Բաքվի խորհրդի նիստում Մուսավաթը հավանություն էր տվել Ժողկոմխորհի կողմից Սահմանադիր ժողովը ցրելու քաղաքականությանը: 4) Մարտի 1-ին մուսավաթականների վճռական աջակցությամբ անցավ է նաև բոլշևիկների ու ձախ էսէռների առաջարկած բանաձևը՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վերաբերյալ[276]:

Ի՞նչ գաղափարական և ռազմական կապ կարող էր լինել բեկական-կալվածատիրական, ընդգծված ազգայնական կուսակցության և բոլշևիկյան պրոլետարական ինտերնացիոնալիզի միջև: Ինչո՞ւ

---

[274] Տե՛ս **Իշխանեան Բ.**, նշվ. աշխ., էջ 132:
[275] Տե՛ս Бакинский рабочий, Баку, 1917, 14 ноября, N 82:
[276] Տե՛ս **Իշխանեան Բ.**, նշվ. աշխ., էջ 139-141:

Մուսավաթը՝ իբրև բոլշևիկյան տեսանկյունից հակահեղափոխական կազմակերպություն, չմիացավ չափավոր մենշևիկներին և աջ էսէռներին, որպեսզի ճնշի ծայրահեղ հեղափոխական բոլշևիզմը: Նախ, Մուսավաթի համար՝ իբրև մահմեդական ազգայնականության, պանթուրքիզմի կրողի, ընդունելի և անգամ ողջունելի էր բոլշևիկների ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, քանի դեռ նրանք ընդդիմության ճամբարում էին: Այսպես, Ուկրաինայի Ռադայի անզիջում պայքարը Խորհրդային Ռուսաստանի դեմ, ինչպես նաև ֆիննական անջատողականությունը, որքան էլ որ զարմանալի է, ամենաջերմ պաշտպանություն էին գտնում բոլշևիկների կողմից, և բնական էր, որ բոլշևիկների այդ մարտավարությունը արժանանում էր ազգային բոլոր կենտրոնախույս ուժերի, այդ թվում՝ և Մուսավաթի խրախուսանքին: Այն չափով, որ Ժամանակավոր կառավարությունը չէր ընդառաջում մուսավաթականների ձգտումներին, այդ չափով էլ նա բացասական և մերժողական քննադատության էր արժանանում վերջինիս կողմից և մուսավաթականների աչքում զերծ չէր այն բոլոր թերություններից, որոնք բոլշևիկները վերագրում էին ժողովրդավարական իշխանությանը: «Թող կորչէ Կերենսկին»,– գրում էին յուզուած ու զայրացած մուսուլման նացիոնալիստները»[277]: 1917 թ. նոյեմբերի սկզբին «մուսավաթականներն այնքան հեռու էին գնացել իրենց «բոլշեւիկասէր» կասկածելի յայտարարութիւններով և «բոլշեւիկանման» տարօրինակ դատողութեամբ, որ հարկ են գտել «Баку» թերթի դէմ մղած պօլեմիկայի մէջ յայտնել ի միամտութիւն, որ իրանք «բոլշեւիզմի իդէօլօգներ չեն»[278]: «Ծաղր է, երկինք աղաղակող ծաղր,– տարակուսում էր Բ. Իշխանյանը,– թէ ով ում դէմ է պայքարում և ում հետ է դաշնակցում»[279]: Այս ամենի հիմքի վրա Բ. Իշխանյանը հանգում էր գլխավոր հետևությանը, այն է՝ «բոլշևիկների գործելակերպը գալիս է մուսուլման ագրեսիւ նացիոնալիստների ջրաղացին առատօրեն ջուր ածելու: Բոլշևիկների ներքին (յեղափոխական) և արտաքին (պատերազմական) քաղաքականութիւնը՝ իր բոլոր

[277] Տե՛ս **Իշխանեան Բ.**, նշվ. աշխ., էջ 148:
[278] Տե՛ս նույն տեղում, էջ 150:
[279] Նույն տեղում, էջ 151:

յայտնի բացասական հետևանքներով և անդրադարձումներով, կատարելապէս ձեռնտու էր մուսավաթիստների ներքին (հակայեղափոխական) շարժման և արտաքին (պանթիւրքիստական և պանիսլամիստական) տենդենցների տեսակէտից»[280]:

Ստացվում է, որ բոլշևիկյան իշխանության կայունացումն ի վերջո նպաստում էր ազգային անջատողականության միտումներին, ինչն Անդրկովկասում արտահայտվեց վրաց-թաթարական դաշինքի ձևով ու մասնավորապես Մուսավաթի ակտիվացող գործունեությամբ: Դրան նպաստեց նաև Վ. Լենինի տխրահռչակ դեկրետը՝ ուղղված «Ռուսաստանի և Արևելքի բոլոր մուսուլմաններին», ըստ որի՝ բոլշևիկյան իշխանությունը պահպանելու նպատակով Կովկասի մահմեդականներին շնորհվում էր ինքնորոշվելու իրավունք և այդպես հրահրում նրանց ապստամբության: Պատահական չէր, որ Մուսավաթի գաղափարախոսներն այն անվանեցին «հետաքրքրական և անսովոր փաստաթուղթ»: Այն, փաստորեն, ուղղորդեց և երաշխիքներ տվեց երկրամասի մահմեդականներին, որոնք արդեն 1917 թ. նոյեմբերին հրավիրեցին «Անդրկովկասի թուրքերի և Կովկասի միացեալ լեռնականների ազգային Հիմնադիր ժողով»: Ի տարբերություն հայկական ազգային համախոհրդակցության ու վրացական Ազգային համագումարների որոշումների, ըստ որոնց, գոնե ազգային կենտրոնական և առաջնահերթ հիմնահարցերի լուծումը կապվում էր Համառուսաստանյան սահմանադիր ժողովի հետ, Մուսավաթն իր ազգային ինքնորոշման խնդիրը ապավինում էր Ազգային-թաթարական սահմանադիր ժողովին, այլ խոսքով՝ հանդես գալով որպես հակապետական-հակառուսական կենտրոնաձիգ ուժ: Այն չկայացավ, սակայն, միանգամայն պարզ էր, որ հրավիրման դեպքում վերջինս դառնում էր մարտահրավեր Անդրկովկասյան իշխանությանը՝ Կոմիսարիատին ու Սեյմին, այսինքն, բացի հակառուսական դիրքից, ձեռք էր բերում ներքին անդրկովկասյան ընդդիմության կեցվածք: Միաժամանակ հարկ է նշել, որ նման վճռական հարված հասցնելու համար մահմեդական ղեկավար շրջաններն ու Մուսավաթը նաև չունեին

[280] Տե՛ս **Իշխանեան Բ.**, նշվ. աշխ., էջ 153:

համապատասխան ուժ, ուստի և, ինչպես Բաքվում հանդիպում էին ուժեղացող խորհրդային իշխանության հակազդեցությանը:

Որպես երկրորդ էական խոչընդոտ՝ հանդես էր գալիս Բաքվի և Բաքվի նահանգի հայկական գործոնը: Այն մահմեդական ազգայնականների համար կրկնակի իմաստ էր ստանում՝ տարածքային-էթնիկական և պետական-քաղաքական կողմնորոշման իմաստով: Եթե առաջին արգելքը տեսականորեն հնարավոր էր լուծել՝ Դաշնակցության համաձայնությունը տարածքային սահմանաբաժանումների հարցում ձեռք բերելու դեպքում, ապա երկրորդ խոչընդոտի խնդիրն ավելի բարդ էր: Միասնական դաշնային ռուսաստանյան պետության գաղափարը, հատկապես Արևմտյան Հայաստանի ինքնորոշման խնդրի համատեքստում, հայությանը կապում էր «ուժեղ Ռուսաստան» գաղափարին:

Չենք կարող համաձայնել Բ. Իշխանյանի այն տեսակետին, որը նույնացնում էր հայկական և վրացական մոտեցումները: Անվանի գործչի տեսակետը կարելի է արդարացնել այն հանգամանքով, որ գիրքը հրապարակվել է 1918 թվականին: Կարելի է ընդունել այն կռվանը, որ սպեցիֆիկ ազգային գործիչը Կովկասի մահմեդականության ծովում փորձում էր ապավինել հայ-վրացական համագործակցությանը: 1917 թ. հոկտեմբերի 26-ին՝ բոլշևիկյան հեղաշրջման օրը, Մուսավաթի համագումարում կուսակցության ԿԿ-ի նախագահ Մ. Է. Ռասուլ-Զադեն իր ճառում շեշտում էր, որ «թիւրքիզմի իդէան դա ազգի իդէայի պաշտպանութիւնն է արիւնածարաւ Եւրոպայի առաջ»[281]:

Այսպիսով՝ Մուսավաթի համար պարզ էր դառնում, որ Ադրբեջանի ստեղծումը հնարավոր էր իրականացնել միմիայն ուժի, այն էլ՝ Թուրքիայի ու պանթուրքիզմի աջակցությամբ: Դա էր վկայում Ստ. Շահումյանը՝ նշելով, թե ***«Մուսավաթ կուսակցությունը սովետական իշխանության դեմ ապստամբություն էր նախապատրաստել ոչ թե այն բանի համար, որ սովետական իշխանությունը ինքնուրույնության նրան հաճելի չէր, այլ այն բանի համար, որ մուսա-***

[281] Տե՛ս **Իշխանեան Բ.**, նշվ. աշխ., էջ 176:

վաթականները պլան ունեին Բաքուն հայտարարելու ինքնավար Ադրբեջանի մայրաքաղաք» (ընդգծումն իմն է – Վ. Մ.): Որպես ապացույց վկայակոչելով «Շամխորյան պատմությունը»՝ Ստ. Շահումյանը վստահ էր, որ թաթարները «ծրագրել էին Կովկասն անջատել Ռուսաստանից և հռչակել թուրքական պրոտեկտորատ. նրանք հայտարարում էին. «Տեսնենք, դուք հենվեցեք զորքի վրա, բայց զորքերը կգնան: Երբ կմեկնեն վերջին էշելոնները, ձեզ ոչ մի ուժ չի լինի: Քաղաքային դումայի անդամ Աշուրովն ինձ ասաց. «Ձեզ ուղղակի ասում եմ, որ առաջին հերթին Պարապետի վրա կկախենք ձեզ, պարոն Շահումյան»[282]: Այս առումով հակասական էր Բ. Իշխանյանի մոտեցումը, երբ նա մուսավաթականների հանդեպ Սեյմի պատասխանատվության հարցում մեղադրում էր միայն բոլշևիկներին: Նա, փաստորեն, նույնացնում էր Սեյմի ու Բաքվի խորհրդի քաղաքականությունն իրենց կազմերում մուսավաթականներին հանդուրժելու հարցում[283]:

Առավել հեշտ է, իսկապես, Մուսավաթի և բոլշևիկների համաձայնությունը տեսնել: 1918 թ. մարտի 19-ին Ստ. Շահումյանին և Ա. Ջափարիձեին ուղղված նամակում Վ. Լենինը նշում էր. «Մի բան անկասկած է, պետք է ամրացնել Բաքուն թե՛ ռազմական և թե՛ ֆինանսական տեսակետից: Եթե մահմեդականները պահանջում են ինքնավարություն, պետք է տալ դա նրանց՝ կորզելով նրանցից կենտրոնում և տեղերում Խորհրդային իշխանության անվերապահ ճանաչումը, Բաքվի խորհրդին անհրաժեշտ է հիմնել մահմեդականության բաժին, զարգացնել և տարածել մահմեդական գրականությունը… ձեզ երկու կողմից օգնություն է գալիս՝ Տաշքենդից և հյուսիսից, եթե ցանկանաք, կօգտագործեք այն»[284]:

Ինքնավարություն տրամադրելուն Բաքվի բոլշևիկները դեմ չէին, ավելին, Ստ. Շահումյանն իր ճառերում և հոդվածներում բազմիցս ընդգծում էր, որ խորհրդային իշխանությունը հավատարիմ է ազգերի

---

[282] Տե՛ս **Շահումյան Ստ.,** ԵԼԺ, հ. 4, էջ 263:
[283] Տե՛ս **Իշխանեան Բ.**, նշվ. աշխ., էջ 184:
[284] Азербайджанский музей Революции (разрозненные документы), ըստ՝ **Ռատգաուզեր Յա.**, նշվ. աշխ., էջ 176:

ինքնորոշման մասին իր կարգախոսին: Սակայն բոլշևիկյան տեսանկյունից քաղաքացիական պատերազմի ու ազգամիջյան լարվածության պայմաններում «ադրբեջանական թուրքերի համար ինքնավարության հռչակումը կնշանակեր իշխանության հանձնումը Մուսավաթին»[285]: Այսպիսին է բոլշևիկյան մեկնակետի անհերքելի ճշմարտացիությունը, այսպես էր կայանում բոլշևիկ-դաշնակցություն համաձայնությունը: Այս առումով հիմնահարցի ժամանակագիր Յա. Ռատգաուզերը ամենևին իզուր էր քննադատում Ա. Պոպովին, որը բոլշևիկների մարտավարության մեջ տեսել էր ազգային շրջանակների և հատկապես Դաշնակցության հետ տարվող մերձեցման քաղաքականությունը[286]:

«Այս էր պատճառը, որ մերոնք Բագւում աւելի ու աւելի տարւում էին բօլշեւիկեան հոսանքով ու մի տեսակ յենարան էին դառնում բօլշեւիկների համար,– փաստում էր իր հերթին Հ. Քաջազնունին,– ինչպէս Թիֆլիսում մենք ակամայից ընկել էինք վրացի մենշևիկների հեգեմօնիայի տակ, ճիշտ այնպէս էլ Բագւում ընկել էինք ռուս բօլշևիկների հեգեմօնիայի տակ: Երկու դէպքում էլ մեզ կաշկանդողը թուրք-թաթարական սպառնալիքն էր»[287]:

Այսպիսով՝ 1918 թ. մարտին թուրքական արշավանքի պայմաններում Բաքվում ծայրահեղ կերպով սրվեց և բյուրեղացավ իշխանության համար մղվող ներքին քաղաքական պայքարը: Առավել որոշակի դարձան հակամարտող ճամբարները, պարզ դարձան բոլշևիկ-մուսավաթ, բոլշևիկ-Դաշնակցություն, Մուսավաթ-Դաշնակցություն բանակցությունների և փոխգործակցության միտումները, մենշևիկների ու այդ կուսակցության վրացական գործիչների մարտավարության առանձնահատկությունները:

1918 թ. մարտի 6-ին Արամը, Երևանից դիմելով Վանի ընկերներին, նշում էր, որ «Բագւում եւ Շուշու կողմերը դրութիւնը ծանր է, դեռ

---

[285] Азербайджанский музей Революции (разрозненные документы), **Ռատգաուզեր Յա.**, նշվ. աշխ., էջ 176:
[286] Տե՛ս **Ратгаузер Я.,** նշվ. աշխ., էջ 141:
[287] Տե՛ս **Քաջազնունի Յ.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, էջ 20:

ընդհարումներ չկան, բայց օրէ օր սպասում են. մերոնք լաւ կազմակերպւած են»[288]:

1918 թ. մարտի կեսերին պարզ դարձավ, որ Բաքվում սպասվում էր վճռական պայքար ու բախում:

Կովկասյան բանակի գեներալ Ա. Կուլեբյակինը «Բաքվի դեպքերը» զեկուցագրում ներկայացնում էր հայամետ ռուս գործչի մեկնակետը մահմեդականների նպատակների վերաբերյալ. «Թուրքիան լարեց իր բոլոր ուժերը Կովկասում պանիսլամիզմի պրոպագանդան խորացնելու համար և այդ նպատակով ձեռնարկեց Կովկասի մահմեդականների զինումը՝ հնարավոր քաղաքական պայքարի հեռանկարի իմաստով: Թուրքական էմիսարները և զգեստավորված սպաները անդուլ կերպով աշխատում էին Կովկասի լեռնականների, ռուսական Ադրբեջանի շրջաններում և հատկապես Երևանում, Ելիզավետպոլում և Բաքվում: Մահմեդականների կողմից զենքի գնումը, հայթայթումը ընթանում է տենդային տեմպերով և 1918 թ. հունվարին արդեն հասավ կատարյալ մոլուցքի»[289]: Գեներալը այդ գործընթացի հետ էր կապում նաև Թիֆլիս–Բաքու երկաթուղու շրջանում և Շամխորի մոտ տեղի ունեցած հայտնի արյունոտ դեպքերը: Թաթարների ատելությունը ռուսների, քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ առավել ուռճացնում էին թուրքական ամեն կարգի գործակալները, որոնք գործուղվում էին՝ կազմակերպելու անդրկովկասյան մահմեդականների ապստամբությունը[290]: Նա գտնում էր, որ Շամխորից հետո կորավ հավասարակշռության վերջին հույսը մահմեդական ու քրիստոնյա կուսակցությունների միջև, որոնք բացահայտորեն դրոշ պարզեցին՝ տեղական իշխանությանը տիրելու նպատակով: Առկա էր նաև Անդրկովկասյան կոմիսարիատի և բ. զ. պատգամավորների երկրամասային կենտրոնի վարած անկարող, երկդիմի և թույլ քաղաքականության վնասակար նշանակությունը: «Շամխորի դեպքերը,– գրում էր նա,– ավելի ճիշտ՝ հարձակվող կողմի նկատմամբ դրա ան-

---

[288] Տե՛ս **Մանուկեան Հ.**, Դէպքերը Վասպուրականում, «Վէմ», 1937, ապրիլ-հունիս, էջ 77:
[289] ՀԱԱ, ֆ. 121. ց.1, գ. 29, թ. 3:
[290] Տե՛ս նույն տեղում, թ. 6:

պատժելիության հանգամանքը, զինված մահմեդականությանը ապացուցեցին վերջինիս ազգային համախմբվածության և ուժի առավելությունը»[291]:

Բաքվի իրադարձությունների արագացուցիչ պետք է նկատել նաև այն հանգամանքը, որ 1918 թ. հունվարի վերջին Բաղդադից Հյուսիսային Պարսկաստան ուղղվեց գեներալ Դենստերվիլի անգլիական ջոկատը: Այդ զինուժի վրա, որը անգլիացիները կոչում էին «Դենստեն ֆորս» («Դենստերվիլ Ֆորսեզ» – Դենստերվիլի զորքեր) խնդիր էր դրված՝ գրավելու Բաքուն: Արդեն փետրվարին Դենստերվիլի շտաբը տեղակայվեց Ղազվինում, որտեղ կենտրոնանում էին այլ ենթակա զորամասեր[292]:

1918 թ. փետրվարի կեսերին, երբ սկսվեց թուրքական զորքերի առաջխաղացումը Տրապիզոն–Բաքում և Էրզրում–Ալեքսանդրապոլ ուղղություններով, 4-րդ բանակային կորպուսը ստացավ առաջադրանք՝ սեղմելով ռուսական Կովկասյան բանակի ձախ թևը՝ գրավել Վան-Բայազետ շրջանը, դուրս գալ ռուս-պարսկական սահման, գրավել Գիլյանը՝ Էնզելիի նավահանգստով, և հարձակվել Բաքվի վրա[293]:

Մուսավաթի համար առաջնահերթություն դարձավ թուրքական արշավանքի դեմ ձևավորվող հայկական զորակազմի դիմադրության չեզոքացումը, ինչպես նաև Ռուսաստանից Անդրկովկաս շտապող հայկական զորամասերի մուտքը երկրամաս խանգարելու խնդիրը: Դա ընդհանուր առմամբ աջակցություն էր ստանում Կովկասյան բանակի հրամանատարության կողմից, քանի որ Կովկասյան ռազմաճակատում հայկական զինուժի կենտրոնացումը նպաստելու էր ռազմաճակատի պաշտպանությանը ու, այդպիսով, նաև ռուսական ներկայության ապահովմանը: Դրան ճարահատյալ նպաստում էր և անդրկովկասյան իշխանությունը:

Թուրքական արշավանքի պայմաններում, հատկապես Էրզրումի անկումից հետո, Սեյմի հրամանով վերացվեցին բոլոր բանա-

---

[291] ՀԱԱ, ֆ. 121. ց.1, գ. 29, թ. 10:
[292] Տե՛ս **Токаржевский Е. А.**, նշվ. աշխ., էջ 43:
[293] Տե՛ս **Лудшувейт Е. Ф.**, նշվ. աշխ., էջ 193-194:

կային կոմիտեները, և սահմանափակ իշխանությունը փոխանցվեց հրամանատարական կազմին, վերականգնվեց ցարական վարչակարգի կարգապահությունը, անգամ մահապատիժը: Ամբողջ իշխանությունն Անդրկովկասում հանձնվեց Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին[294]: Անդրկովկասյան կոմիսարիատն իր հերթին մարտի 21-ին որոշեց Բաքու ուղարկվող ջոկատի կոմիսար նշանակելու խնդիրը: Ներքին գործերի նախարարության գծով կոմիսար Ն. Ռամիշվիլին զեկուցեց է արագաշարժ ջոկատների կազմավորման անհրաժեշտության մասին[295]:

Կուսակցական շրջանակներում ***Կարմիր գվարդիայի ձևավորման գործընթացը*** սկիզբ է առել Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Թիֆլիսի բ. և զ. պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեն ձեռնարկեց այդ գործը: Վերջինիս նպատակներն էին՝ ա) ռուսական (Փետրվարյան – Վ. Մ.) հեղափոխության պաշտպանությունը, բ) ժողովրդական ինքնապաշտպանությունը, գ) պայքարը հակահեղափոխության դեմ: Նախաձեռնությունը պատկանում էր ս.-դ. մենշևիկներին ու սոցիալիստ-հեղափոխականներին[296]: Դեպքերի զարգացումը վկայում է, որ ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում այդ գվարդիաները չկարողացան դիմագրավել բոլշևիզմին, պարտվեցին: Բոլշևիկյան հեղաշրջումից հետո՝ 1917 թ. դեկտեմբերին, ՀՅԴ կենտրոնական և տեղական կոմիտեների միասնական ժողովն անհրաժեշտություն գտավ վերոհիշյալ նպատակների իրագործման համար կազմակերպելու նմանատիպ կառույց:

Դեկտեմբերի 17-ին ՀՅԴ մարմինները գործադիր կոմիտեի հետ բանակցելու գործընթաց սկսեցին և այդ նպատակի համար լիազորեցին գործադիր կոմիտեի անդամ Արամ Նալչաջյանին: Սակայն գործադիր կոմիտեի կազմում գործող Կարմիր գվարդիայի հանձնաժողովը միայն չորս լսումներից հետո Դաշնակցությանը թույլատրեց ստեղծել ինքնուրույն Կարմիր գվարդիա՝ հետևյալ պայմաններով. ա) վերջինս պատասխանատու լինի Թիֆլիսի գործադիր կոմիտեին, բ) Գվարդիայի անդամները ստանան զենք կրելու և պահելու իրա-

[294] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 916, թ. 1-2:
[295] Տե՛ս НАГ, ф. 1, оп. 2, д. 13, л. 194:
[296] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 124, թ. 1:

վունք, գ) Գվարդիայի դաշնակցական ներկայացուցիչները հրահանգներ ստանան գործադիր կոմիտեից: Ղեկավար մարմինը բաղկացած էր հինգ հոգուց, Գվարդիան գործելու էր Թիֆլիս քաղաքի 7 շրջանում: Այս փուլում դաշնակցության գվարդիան մեծապես աջակցել էր թաղային կոմիսարներին խուզարկությունների, գիշերապահության, քաղաքի կարգապահության գործերում, զորահավաքի ժամանակ: Աստիճանական քայքայման և լուծարման գործընթացը սկսվեց 1918 թ. մայիսից, իսկ հուլիսից այն անցավ Վրաստանի պետության իրավասության ներքո՝ կրկին Ա. Նալչաջյանի ղեկավարությամբ[297]:

[297] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 124, թթ. 1-3:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԲԱՔՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ԲԱՔՎՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Բաքվի շուրջ դեպքերի զարգացման շրջանակներում հայկական զինուժի կազմակերպման և Բաքվի հերոսամարտի կազմակերպման գործում որպես կաղրային զինվորականներ աչքի ընկան գեներալ-մայոր Հակոբ Բագրատունին*, գեներալներ Գրիգոր Ղորղանյանը (Կորգանով) և Իվան (Հովհաննես) Սերգեյի Բաղրամյանը (Բաղրամով), գնդապետներ Ավետիսովը, Կազարովը փոխգնդապետներ Սրապիոն Եղիազարյանը, Հարությունովը և ուրիշներ[298]:

Գ. Ղորղանյանը* 1917 թ. դեկտեմբերի 2-ին Ստ. Շահումյանի առաջարկով Կովկասյան ռազմաճակատից վերադարձավ Բաքու և նշանակվեց խորհրդային իշխանության զորքի կոմիսար և կովկասյան Կարմիր բանակի հրամանատար[299]:

---

* 1917 թ. օգոստոսի 30-ից գեներալ-մայոր: Մայիսի 15-ին գործուղվել է Ռուսաստանի ռազմական նախարարի, իսկ հունիսի 23-ին՝ ՌՄ կաբինետի ենթակայության տակ, հուլիսի 7-ին նշանակվել է Պետրոգրադի ռազմական օկրուգի շտաբի պետի պաշտոնակատար, օգոստոսի 27-ին՝ Պետրոգրադի և շրջանի զինվորական ռազմական նահանգապետի շտաբի պետ, սեպտեմբերի 5-ին նշանակվել է Պետրոգրադի ռազմական օկրուգի շտաբի պետ, հոկտեմբերի 25-ին նրա վրա են դրվել Պետրոգրադի ռազմական օկրուգի զորքերի գլխավոր հրամանատարի պարտականությունները, հոկտեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 15-ը կալանված է եղել Պետրոպավլովյան ամրոցում, դեկտեմբերին ազատվել է Պետրոգրադի ռազմական օկրուգի շտաբի պետի պաշտոնից՝ անցնելով գլխավոր շտաբի պետի տրամադրության տակ:

[298] Տե՛ս Армяне в Первой мировой войне (1914-1918 гг.), Москва, 2014, с. 432:

* Նիկոլայ Ադամի Ղորղանյանը (1878-1921): 1917 թ. գլխավորել է Առաջին հայկական հեծյալ բրիգադը, 1918 թ. ղեկավարել է Ղարաքիլիսայի հերոսամարտը: 1921 թ. փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը սպանվել է Երևանի բանտում բոլշևիկների կողմից:

[299] Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գ. Լևոնյանի ֆոնդ, թղթ. թիվ 66/417:

Հայկական զինվորական միության գործադիր կոմիտեի 1917 թ. դեկտեմբերի 5-ի նիստի արձանագրությունը որոշեց Բաքվի հայկական գնդի հրամանատար նշանակել փոխգնդապետ Ս. Եղիազարյանին՝ վերջինիս հանձնարարելով Միության Բաքվի բաժանմունքի հետ աշխատել համաձայնեցված կարգով, միաժամանակ խնդրելով Բաքվի հայոց ազգային խորհրդին աջակցել փոխգնդապետ Ս. Եղիազարյանին[300]: Ս. Եղիազարյանը Թիֆլիսի ազգային խորհրդի կարգադրությամբ և Անդրկովկասյան կոմիսարիատի որոշմամբ Թիֆլիսից ժամանել էր Բաքու: Նա նպատակ ուներ համախմբել Բաքվում գտնվող տարբեր զորամասերում ծառայող հայ զինվորներին, ստանալ Բաքվի 279-րդ պահակազորի ռազմական գույքը և ձևավորել Հայկական երկրորդ պահեստային գունդը: Սկսել էին համաձայնեցված գործել Բաքվի և Թիֆլիսի զինվորական մարմինները: Բաքվի զինվորական խորհուրդը ղեկավարում էր նախկին զինվորական բժիշկ Թադևոս Զաքարյանը, իսկ շտաբը՝ Խանասորի Վարդանը[301]: Բաքվի ազգային խորհրդի ձևավորումից հետո աշխատանքներն ավելի աշխուժացան, Ս. Եղիազարյանը բարեփոխեց Զինվորական մարմինը և ձեռնամուխ եղավ 279-րդ գնդի զենք ու զինամթերքի յուրացման աշխատանքներին: Երբ սպառվեցին բոլոր օրինական միջոցները, Ազգային խորհրդի հրահանգով Թադևոս Ամիրյանը 20 դաշնակցական մարտիկների հետ շրջապատեց 279-րդ գնդի զորանոցը և ՀՅԴ անունից պահանջ անմիջապես հանձնել զենքերն ու պահեստի բանալիները: Դասալքող ու բարոյազրկված ռուս զինվորները սարսափահար կատարեցին պահանջը: Այս վճռական գործողությամբ, փաստորեն, հիմք դրվեց Բաքվի առաջին հայկական զորամասին: Այդ գնդի կազմի մեջ մտավ նաև Արևմտյան ռազմաճակատից վերադարձած հայ զինվորների մի հատվածը, զորամասի թիվը հասավ շուրջ 1000-ի[302]:

Կովկասում հայկական զինուժի կուտակման մասին է վկայում հետևյալ կարևորագույն փաստը: 1917 թ. հոկտեմբերի 10-ին Կովկա-

---

[300] Տե՛ս Армяне в Первой мировой войне, с. 148:
[301] Տե՛ս **Մելիք-Եօլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 116:
[302] Տե՛ս **Գիլխանդանեան Ա.**, Բագուի հերոսամարտը, էջ 102-103:

սյան բանակի գերագույն գլխավոր հրամանատարին առընթեր բրիտանական ռազմական առաքելության պետ, գեներալ-լեյտենանտ Չ. Բարտերը ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետ Ն. Դուխոնինին հայտնում էր հետևյալը. «Գեներալ Ռոբերտսոնը տեղյակ է, որ ներկա պահին շուրջ 150.000 հայեր գտնվում են ռուսական բանակում, որից 35.000-ը՝ Կովկասյան ճակատում: Նա առաջարկում է, որպեսզի հայ զինվորները տեղափոխվեն միայն Կովկասյան ռազմաճակատ՝ փոխարինելով սկզբում ռուսական հետևակին Հյուսիսային Պարսկաստանում, հետո էլ՝ Հայկական հարցի հետ կապված»[303]:

Հայտնի է, որ հայկական կամավորական ջոկատներ և Հայկական կորպուսի զորամասեր կազմակերպելու և դրանք Արևմտյան Հայաստան ուղղելու նպատակով տարբեր ռազմաճակատներ և խոշոր հայաբնակ շրջաններ գործուղվեցին Հայոց ազգային խորհրդի լիազորներ: Նոր Նախիջևանից (Դոնի Ռոստով) Բաքու գործուղվեց Խնուսի ջոկատի նախկին հրամանատար, կամավորական 3-րդ ջոկատի հրամանատար Համազասպ Սրվանձտյանը, որը կարճ ժամանակահատվածում Ղարաբաղի և Զանգեզուրի զինվորներից հավաքագրեց 3000 կամավոր, և ձևավորված զորամասը բաժանվեց 3-ական հազարյակների[304]:

Դեռ 1917 թ. նոյեմբերի 22-ին Եկատերինոդարի հայոց գիմնազիայի շենքում տեղի ունեցած բազմամարդ ժողովում Համազասպ Սրվանձտյանը կոչ արեց «վերջին ճիգը թափելու և աջակցելու նոր կազմակերպված Հայկական կորպուսին՝ Հայաստանի սահմանները պաշտպանելու համար»: Հայտնի դարձավ նաև այն փաստը, որ հայկական միլիցիան ուժեղացնելու նպատակով Եկատերինոդարում հանգանակություն էր կազմակերպվել, և հավաքվել էր 60.000 ռուբլի[305]:

---

[303] РГИА, Российский государственный исторический архив, ф. 2003, оп. 1, д. 1246, 32 и об., ըստ՝ Армяне в Первой мировой войне, с. 127-128:
[304] Տե՛ս **Մելիք-Եոլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 116:
[305] Տե՛ս «Հորիզոն», 1917, 13 դեկտեմբերի, թիվ 281:

Գ. Ղորղանյանի վկայությամբ դեռ Բաքու–Թիֆլիս երկաթուղային հաղորդակցության խզման ժամանակ, այսինքն՝ 1917 թ. դեկտեմբեր-1918 թ. հունվար ժամանակահատվածում Բաքվում էին գտնվում հետևյալ հայկական զինյալ խմբերը՝ հայկական 2-րդ պահեստի գունդը (700 հոգի), Համազասպի կամավորական առանձին վաշտը (800 հոգի), ՀՅԴ խումբը (50 հոգի), երկու թնդանոթ և 5 գնդացիր[306]: Մի հեծյալ հարյուրյակ էլ գլխավորում էր Իսահակյանը: Ի վերջո հայկական կողմը Բաքվում իր զինված ուժերի թվաքանակը հասցրեց մինչև 4000-ի՝ չհաշված քաղաքում կուտակված ևս 8000-10.000 հայ զինվորներին, որոնց մեծ մասին, ցավոք, չհաջողվեց մասնակից դարձնել մարտերին: Բաքվում կուտակված բազմահազար հայ զինվորներին կերակրելու և օթևան տալու հիմնահարցը լուրջ բարդություններ էր առաջացնում Ազգային խորհրդի և «Մարդասիրական ընկերության» շրջանում: Հակառակը՝ Բաքվի խորհուրդը համեմատաբար բարձր աշխատավարձ նշանակելով (ամսական 800 ռուբլի՝ գումարած 75-ական ռուբլի՝ ընտանիքի ամեն անդամի համար, ապահովում էին պարենով)՝ սկսեց հայ զինվորներին հավաքագրել Բաքվի Կարմիր բանակի շարքերը[307]:

Բաքվի ազգային խորհրդի առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ նաև Անդրկասպյան երկրամասի ու Պարսկաստանի ռուսական զորամասերի թողած զինամթերքին տեր դառնալը: Անդրկասպյան երկրի դաշնակցական գործիչները ամիսներ առաջ տեղեկացնում էին Ոսկանապատի (Բաքվի) ՀՅԴ կենտրոնական կոմիտեին եղած զինամթերքը Բաքու տեղափոխելու հնարավորությունների մասին: Այդ նպատակով գործուղվեց Ազգային խորհրդի անդամ Կարապետ Պարունակյանը: Ոչ ամբողջությամբ, բայց նրա խմբին ի վերջո հաջողվեց կատարել հանձնարարությունը, որի արդյունքում զինվեցին թե՛ 279-րդ գնդի և թե՛ Համազասպի գնդի մեծ մասը: Բաքվի խորհրդի, Ստ. Շահումյանի գործուն միջամտությամբ Էնզելիի և

---

[306] Տե՛ս **Ղորղանեան Գ.**, Հայերու մասնակցութիւնը Համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմաճակատի վրայ, «Հայրենիք», Պոսթըն, 1928, ապրիլ, թիվ 6, էջ 112:

[307] Տե՛ս **Գեղամեանց Ե. Ա. քահ.,** նշվ. աշխ., էջ 115:

Ռեշտ-Ղազվինի ճանապարհով Թեհրանում, Համադանում, Քերմանշահում և այլ վայրերում տեղակայված գեներալ Բարաթովի իրավասության տակ եղած ռուսական զենքը տեղափոխվեց Բաքու: Էական էր նաև դաշնակցական Ներսես Ջաղեթյանի և այլ հայ սպաների դերակատարությունը: Շուտով փակվեց Բաքու–Պետրովսկ–Արմավիր երկաթուղագիծը, ինչը վերջնականապես ձախողեց Բաքվում կուտակված հայկական զորաջոկատների տեղափոխման գործը դեպի Արևմտյան Հայաստան[308]: Տարօրինակ է, որ Բաքվի հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Գյուլխանդանյանն իր «Բաքվի հերոսամարտը» հուշագրության էջերում ամենևին չի հիշատակում հայկական զորակազմի ձևավորման գործընթացի գլխավոր դերակատարին՝ Հակոբ Բագրատունուն:

Անվանի գործչի անցած ուղին հանգամանորեն և ըստ պատշաճի ներկայացրել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը[309]: 1917 թ. հոկտեմբերի 23-ին պաշտոնից հեռացվել է Գ. Պոլկովնիկովը և Պետրոգրադի ռազմական օկրուգի գլխավոր հրամանատար է նշանակվել Հ. Բագրատունին, իսկ դեկտեմբերի սկզբին նա ձերբակալվել է՝ Վ. Անտոնով-Օվսեենկոյի հրամանի համաձայն[310]:

Ըստ բոլշևիկյան «Известия» լրագրի հաղորդագրության՝ Պետրոգրադի հայկական համայնքը, ՀՅԴ կուսակցությունը դիմում են ՌՀԿ-ին և խնդրում, որ ազատ արձակվի գեներալ Հ. Բագրատունին՝ որպես Թիֆլիսի հայոց ազգային համագումարի կողմից հայկական զինուժը կազմակերպելու նպատակով ընտրված կոմիսար: Պատվիրակությունն ընդգծում էր, որ Հ. Բագրատունին ձերբակալվել է ոչ թե իբրև հայազգի կոմիսար, այլ որպես ռուսական ծառայության գեներալ, իբրև շտաբի պետ ու Պետրոգրադի զինվորական պարետ, որին Ժամանակավոր կառավարության կողմից հանձնարարվել էր Սմոլնիում տեղակայված բոլշևիկյան կենտրոնի դեմ հարձակման ծրագրի մշակումը: Թերթը հետևություն էր անում, ըստ որի՝ գեներալ

---

[308] Տե՛ս **Գիւլխանդանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 105, նաև՝ **Վրացյան Ս.,** նշվ. աշխ., էջ 166:
[309] Տե՛ս **Ավետիսյան Հ. Ա.**, Գեներալ Հակոբ Բագրատունի (1879-1943), ՊԲՀ, Երևան, 1997, թիվ 1(145), էջ 41-56 (ռուսերեն):
[310] Տե՛ս նույն տեղում, էջ 46-47:

Հ. Բագրատունին պատերազմական գերի է, և քանի որ սկսվել է քաղաքացիական պատերազմ, ուստի և պատերազմական գերին, այն էլ յունկերների և հարվածող զորքերը գլխավորող ու խորհուրդների դեմ գործող մարդը չի կարող ազատություն ստանալ: Բոլշևիկները գտնում էին, որ ազատ արձակման երաշխիք կարող է ծառայել գեներալի գրավոր հավաստիքն այն մասին, որ վերջինս ճանաչում է խորհրդային իշխանությունը և նրա դեմ ոչ մի քայլի չի մասնակցի: Նկատի ունենալով, որ միջնորդող հայկական կազմակերպությունները ևս չեն կարող երաշխավորողի կարգավիճակում հանդես գալ, ուստի և «գեն. Հ. Բագրատունին չի ազատուի»[311]:

1917 թ. դեկտեմբերի 15-ին Հ. Բագրատունին գերությունից ազատվեց է և մի քանի օր անց ստանձնեց հայկական զինվորական կոմիսարի պաշտոնը: Հ. Բագրատունու ազգանպաստ գործունեությունը սկիզբ էր առնում Փետրվարյան հեղափոխության իրականությունից:

Ժամանակավոր կառավարությունը, մի կողմից, Կովկասյան ճակատը պաշտպանելու, մյուս կողմից՝ բոլշևիզմի դեմ պայքարելու նպատակով 1917 թ. գարնանից ձեռնամուխ եղավ ազգային զորամասերի ստեղծման գործընթացին: Հատկապես կարևորվում էր հայկական զինուժի շուտափույթ ձևավորումը, քանի որ ինչպես ավանդաբար, այնպես էլ իրավիճակից բխող զարգացումների համատեքստում հայկական զորամասերն էին, որ վստահություն և մարտունակություն էին հաղորդում ռազմաճակատի պաշտպանության հարցում:

Եվ ահա Ժամանակավոր կառավարության նախագահ Ա. Կերենսկին առաջարկում էր գեներալ Հ. Բագրատունուն իր վրա վերցնել նաև Արևելյան ճակատի պաշտպանությունը և մասնավորապես ռուսական զորքերում եղած հայ զինվորներից ու սպաներից կազմավորել հայկական կորպուս:

Հավաքված տեղեկություններից պարզ դարձավ, որ այդ կորպուսի թիվը 80 հազարից ավելի զինվորի կհասներ: Ա. Կերենսկին և

[311] Տե՛ս «Հորիզոն», 1917, 24 նոյեմբերի, թիվ 251:

Հ. Բագրատունին որոշեցին նաև, որ հայկական կորպուս ձևավորելու գաղափարը չբխի կառավարությունից, այլ հայ ժողովրդի անունից: Հ. Բագրատունուն հանձնարարվեց մասնավոր նամակ գրել Օզակոմի հայ անդամ Մ. Պապաջանյանին: Նա ստացավ նաև այլ հայ ղեկավար գործիչների համաձայնությունը[312]:

1918 թ. փետրվարի 6-ին գերագույն շտաբից Բաքու ժամանեցին գեներալ-մայոր Ի. Բաղրամովը, մարտի 7-ին (20)՝ Ռոստոմ Զորյանի հետ նաև Հ. Բագրատունին[313]: Վ. Լենինի հրամանով Հ. Բագրատունուն տրամադրվեց զրահագնացք, որով նա նախ անցնում է Անդրկասպյան երկրամաս, ապա և Ռոստոմի հետ վերադառնում Բաքու[314]: Եղիշե Ա. Գեղամյանցի կարծիքով՝ դրան (Լենինի բարեհաճությանը – Վ. Մ.) նպաստել էր նաև թուրքերի կողմից Էրզրումի գրավումը[315]:

Հայկական զինվորական կոմիսարի պաշտոնում Հ. Բագրատունուն հաջողվեց իր գործընկերների հետ միասին Կովկաս ուղարկել 30-40 հազար հայ զինվորներ (ինչի մասին և փաստում էր անգլիական հրամանատարությունը – Վ. Մ.), սպաներ, մի քանի զրահապատ գնացքներ, ավտոմոբիլներ, տասնյակ միլիոնների արժեք ունեցող տեխնիկական ապրանքներ և այդ բոլորը՝ բացառապես Հայկական կորպուսի կարիքների համար: Գլխավոր նպատակն էր այդ բարդ իրադրության պայմաններում ճանապարհ բացել դեպի Երևանի նահանգ, այնտեղից էլ՝ Արևմտյան Հայաստան: Ծրագրվում էր ապրիլի սկզբներին գրավել Բաքու–Ելիզավետպոլ գիծը:

Վերադառնալով Անդրկովկաս՝ Հ. Բագրատունին ձեռնամուխ եղավ երկաթուղագծերի բացման ծրագրին: Նա այդ գործը ավարտեց 1918 թ. մարտի 14-ին, բայց իր պատվին Հայոց ազգային խորհրդի և ՀՅԴ ղեկավար գործիչների կողմից տրվող ճաշկերույթի պատճառով մեկ օրով հետաձգեց բացումը: Ճաշկերույթը տեղի ունեցավ մարտի 15-ին Հ. Սրվանձտյանի բնակարանում: Երեկոյան ժա-

---

[312] Տե՛ս **Գեղամեանց Ե. Ա. քահ.**, նշվ. աշխ., էջ 12-13:
[313] Տե՛ս **Ավետիսյան Հ. Ա.**, նույն տեղում, էջ 47:
[314] Տե՛ս **Գեղամեանց Ե. Ա. քահ.**, նշվ. աշխ., էջ 36-37:
[315] Տե՛ս նույն տեղում:

մը 21-ին Բաքվի երկաթուղային կայարանում իր կացարան-վագոն վերադարձի ճանապարհին նա ենթարկվեց ահաբեկչության[316]:

Հ. Բագրատունին ծանր վիրավորվեց երեք թուրք դարանակալ գործակալների կողմից, կորցրեց ոտքը, որով և ճախողվեց Երևանյան բանակի հետ միավորվելու բախտորոշ ծրագիրը[317]: Սակայն անկողնում գամված գեներալն իր խորհուրդներով և ցուցումներով գործուն մասնակցություն ունեցավ Բաքվի պաշտպանությանը:

Հ. Բագրատունին Բաքվի հայաշատ հատվածները բաժանեց տեղամասերի, դրանց պետեր նշանակեց, սահմանեց հավաքակետեր տեղամասի հայ զինվորների համար, քաղաքի արվարձաններում զորամասերի ու հրետանու համար ընտրեց հատուկ մարտավարությամբ դիրքեր, որպեսզի ընդհարման դեպքում ռմբակոծվեին շրջակա թաթարական գյուղերից քաղաք տանող ճանապարհները, և կագնեցվեր մահմեդականների մուտքը Բաքու[318]:

Մուսավաթի կարգադրությամբ թաթարական ազգային խորհուրդը ևս Բաքվում փորձում էր կազմակերպել «թուրքական գունդ»: Մուսավաթի առաջնորդ Մ. Ռասուլ Զադեն Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեից պահանջում էր թաթարներին հանձնել Սալյանի գնդի զենք ու զինամթերքի մի մասը: Նա հենվում էր Սեյմի կարգադրությունների վրա՝ զուգահեռ անցկացնելով այդ ուղղությամբ հայկական կազմակերպությունների իրականացրած աշխատանքների հետ[319]: Բաքվում բացվեց սպայական վարժարան, որտեղ թաթարները ռուսական բանակի թաթար և վարձկան ռուս սպաների ղեկավարությամբ սովորեցին ռազմական գործը:

Արևմտյան ռազմաճակատից վերադարձած մահմեդական կամավորական գունդը, որը կոչվում էր «Վայրի դիվիզիա», դարձավ թաթարական ապագա զորամասերի կորիզը: Այն տեղաբաշխվեց Բաքվում, Գանձակում և Լենքորանում:

---

[316] Տե՛ս **Գեղամեանց Ե. Ա. քահ.**, նշվ. աշխ., էջ 37:

[317] ՀԺԿ «Ժողովուրդ» թերթը նշում է մարտի 18-ը, տե՛ս «Ժողովուրդ», Երևան, 1918, 18 դեկտեմբերի, թիվ 46:

[318] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 260-263:

[319] Տե՛ս **Մելիք-Եօլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 117:

Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեն, որը սոցիալիստական կուսակցությունների կոալիցիա էր, Մուսավաթի գործունեության մեջ մեծ վտանգ ու աղետ էր տեսնում: Ս. Մելիք-Յոլչյանն այդ վտանգը գնահատում էր հետևյալ կերպ. «Կը տեսնէր Մուսավաթի քրիստոնէաջինջ աշխատանքները Ատրբէջանի սահմաններում, նրա «մաքրումի» (էթնիկ զտումներ – Վ. Մ.) գործունէութիւնը, նրա յամառ ցանկութիւնը գրավելու իշխանութիւնը, չեզոքացնելու այդ կուսակցութիւնները (դաշնակցություն, բոլշևիկներ, ձախ էսեռներ – Վ. Մ.), մահացու հարուած հասցնելու յեղափոխութեան (փետրվարյանը – Վ. Մ.), քշելու այլազգիներին Բագուից, անջատուելու յեղափոխական Ռուսաստանից եւ, միանալով Տաճկաստանին, գործիք դառնալ նրա ձեռքին: ***Գործադիր կոմիտէն կը նախապատեսնէր ապագայ ընդհարումները, եթէ թուրքերը եւս կազմակերպէին իրենց սեփական զօրամասերը*** (ընդգծումը մերն է - Վ. Մ.): Ուստի նա որոշեց մերժել թիւրքերի խնդիրքը եւ ամէն կերպ համոզել այդ ազգային զորամասերի գոյութեան վնասներն ու սպասուելիք չարիքները ժողովուրդների անդորրութեան և համերաշխութեան տեսակետից, մանաւանդ Բագուի պէս միջազգայնական քաղաքում»[320]: Եվ ընդհակառակը, նույն գործադիր կոմիտեն ոչ միայն բարյացակամությամբ էր տրամադրված հայկական զորամասերի ստեղծման ծրագրին, այլև նրանց նկատելի օգնություն էր ցուցաբերում: Փաստելով այս երևույթը՝ Ս. Մելիք-Յոլչյանը միաժամանակ հակասության մեջ էր հայտնվում, երբ մեղադրում էր Ստ. Շահումյանին, թե նրա «Բագու գալուց եւ շատ ուժեղ հակազգայնական քաղաքականութեան պայքարի շնորհիւ առաջ եկաւ թշնամական վերաբերմունքը եւ ձգտումը քայքայել հայկական զորամասերը»[321]: Դեպքերի մասնակից դաշնակցական Ս. Մելիք-Յոլչյանը չափազանցնում էր իրականությունը: Հայկական ազգային զորամասերը քայքայելու միտում և ծրագիր Ստ. Շահումյանը չի ունեցել, որի լավագույն ապացույցը մինչև ապրիլի կեսերը Բաքվի նահանգի մի շարք հատվածներում, հատկապես Գանձակում ու Շամա-

[320] **Մելիք-Եօլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 117:
[321] Տե՛ս նույն տեղում, էջ 116:

խիում այդ զորամասերի և հայ ազգային ու բոլշևիկ գործիչների միջև համագործակցության փաստն է:

Խնդիրը վերաբերում էր հայկական ազգային զորամասերը Բաքվի խորհրդին ենթարկելու հարցին: «Ինչ վերաբերում է դաշնակներին տրվելիք զենքին,– մարտի 16-ին Ի. Ստալինին գրում էր Ստ. Շահումյանը,– խնդրում եմ գործն այնպես ձևակերպել, որպեսզի վերջնական լուծումն այստեղ կախված լինի ինձնից: Ես փոփոխություն չեմ սպասում նրանց քաղաքականության մեջ, բայց լավ կլինի, եթե նրանք տեղում ավելի շատ կախված լինեն մեզնից»[322]: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է տխրահռչակ փոխվստահության խնդրին, և Բաքվի խորհրդային իշխանության ղեկավարը նախ և առաջ առաջնորդվում էր բոլշևիկյան ռազմավարությամբ: Սակայն Անդրկովկասյան Սեյմի հետևողական քաղաքականությունը, որը տանում էր Ռուսաստանից երկրամասի անջատմանը, այդպես և հայկական տարրի թուլացմանն ու կործանմանը, նրան ու մի քանի այլ ազգային գործիչներին Բաքվում ստիպում էր ավելի ուժեղացնել տեղի հայամետ խորհրդային իշխանությունը:

Դեկտեմբերի 14-ի նիստում գեներալ Թ. Նազարբեկյանը հայտնում էր գործադիր կոմիտեին, որ Ելիզավետպոլում գնդի ձևավորումը չի թույլատրվում, փոխարենը համաձայնում են ստեղծել մեկ վաշտ[323]: Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ-մայոր Ե. Լեբեդինսկու 1918 թ. հունվարի 10-ի հրամանի համաձայն՝ Ելիզավետպոլում տեղակայված Հայկական 2-րդ հետևակային գնդի վաշտը վերանվանվեց որպես Առանձին հետևակային պահեստային վաշտ[324]:

Հ. Զավրիյանի և Էրզրումի կոմիսարության ներկայացուցիչների միջև հեռախոսազրույցից պարզվեց, որ Կովկասյան ճակատ Բաքվից շտապող 300 հոգուց բաղկացած հայկական ջոկատը շուրջ 10 օր

---

[322] **Շահումյան Ստ.**, ԵԼԺ, հ. 4, էջ 175:
[323] Տե՛ս Армяне в Первой мировой войне, с. 154:
[324] Տե՛ս նույն տեղում, էջ 219:

Շամխորի դեպքերի պատճառով չի կարողացել օգտվել շրջափակված երկաթուղուց[325]:

1918 թ. փետրվարի 20-ին Ստ. Շահումյանը Թիֆլիսից ժամանել է Բաքու[*]: Մարտի 2-ին նա զեկուցել է «Գործերի դրությունը Կովկասում» թեմայով, բնութագրել է ստեղծված իրավիճակը՝ կանխազգալով, որ «մեզ գուցե և վիճակվի նույնիսկ ընկնել իբրև հակահեղափոխության զոհեր»[326]:

Սեյմի վրաց-թաթարական պատգամավորները կոչ էին անում գրավել Բաքուն և ոչնչացնել բոլշևիկներին[327]: Անհրաժեշտ էր հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ Բաքվի խորհրդի զինված ուժերի կազմակերպման ղեկավարությունը ևս հայ գործիչ էր գլխավորում: Փետրվարին դրանց թիվը հասավ 3500-4000 մարդու: Բաքվի Կարմիր բանակի ղեկավար միջուկը դարձավ Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեն՝ Գ. Ղորղանյանի գլխավորությամբ: Բաքվի հայոց ազգային խորհուրդը 1918 թ. մարտի 5-ին ձևավորեց նաև գերագույն զինվորական մարմին՝ Պաշտպանության հայկական շտաբ, որի ղեկավարներ նշանակվեցին Վարդանը և ցարական բանակի սպաներ Ս. Ղազարյանն ու Բախտամյանը[328]:

1918 թ. մարտի կեսերին Բաքվի խորհրդի ռազմական ուժերի թիվը հասավ 6000-ի[329]: Բաքվի բոլշևիկները հասկանում էին, որ սպասվող զինված ընդհարման դեպքում մեծ դեր կարող է խաղալ նաև Կասպիական ռազմական նավատորմը: Դրա համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ Ստ. Շահումյանի նախագահությամբ, որը վճռեց ոչ թե լուծարել, այլ վերակազմավորել այն: Կասպիական ռազմական նավատորմի նավաստիները մարտի 11-ի ընդհանուր ժողո-

---

[325] Տե՛ս Армяне в Первой мировой войне, с. 233:

[*] Կիրառվում է նաև մարտի 5-ին ժամանելու փաստը՝ տե՛ս **Шаумян С. Г.,** Политические деятели России, 1917, Биографический словарь, Москва, 1993, с. 358:

[326] Տե՛ս **Բարսեղյան Խ. Հ.,** Ստեփան Շահումյան, էջ 474, 485-486:

[327] Տե՛ս **Գիլխանդանեան Ա.,** Անդրկովկասը եւ Բագուի դէպքերը, «Հայրենիք», Պոսթըն, 1967, թիվ 1, հունուար, էջ 47:

[328] Տե՛ս **Դարբինեան Ռ.,** Կեանքիս գրքէն, Երկեր, Հ. Ա., Պէյրութ, 1972, էջ 236:

[329] Տե՛ս **Искендеров М. С.,** նշվ. աշխ., էջ 194:

վում որոշեցին աջակցել Բաքվի խորհրդին՝ «ընդդեմ Սեյմի ու նրան աջակցող թուրք փաշաների»[330]:

3.2. ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ. ՄԱՐՏԵՐ ԲԱՔՎԻ ՀԱՄԱՐ

Բաքվի մեծ բախման նախերգանք պետք է համարել Պետրովսկի իրադաձությունները: «Պետրովսկի դեպքերը մեզ հանեցին թվացյալ պասիվ վիճակից»,– փաստում էր Ա. Ջափարիձեն մարտի 13-ին[331]: Խնդիրն այն էր, որ Պետրովսկը, որտեղ իշխանությունը սոցիալիստական կուսակցությունների խմբավորումն էր ղեկավարում, զավթել էր Դաղստանի ***իմամ Նաջիմուդդին Գոցինսկին***: Վերջինիս հարձակումը թելադրված էր Ելիզավետպոլից ու Թիֆլիսից և նպատակ ուներ Բաքուն շրջապատելու, կտրելու Հյուսիսային Կովկասից, այլ խոսքով՝ խորհրդային կենտրոնական իշխանության անմիջական աջակցությունից: Ա. Խատիսյանի օրագրից ևս պարզ է դառնում, որ մարտի 21-ին՝ Տրապիզոնի բանակցությունների ժամանակ, գլխավոր շտաբի սպա Գոտովցևը հայտնում է, որ բոլշևիկյան զորամասերը (Ա. Խատիսյանը «բոլշևիկյան զորամասեր» ասելով՝ նկատի է ունեցել սոցիալիստական կուսակցությունների բլոկը – Վ. Մ.) Պետրովսկից Բաքվի վրա են շարժվում, և նրանց դեմ Թիֆլիսից Սեյմին ենթակա զորքեր են ուղարկվում[332]: Այս քայլը պետք է դիտարկել Բաքու–Թիֆլիս երկաթուղու և Ելիզավետպոլի իրադարձությունների համատեքստում, որոնց վերջնական նպատակը թուրքական արշավանքին նպաստելն էր և Բաքվի խորհրդային իշխանության տապալումը:

Այսպիսով՝ Մուսավաթը նախապատրաստվում էր Բաքվի գրավմանը:

---

[330] Տե՛ս **Токаржевский Е. А.**, Бакинские большевики-организаторы борьбы против германо-турецких интервентов в Азербайджане в 1918 году, с. 47:
[331] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 141:
[332] Տե՛ս **Խաչատրյան Ա.**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, էջ 147:

Բացի կարևորագույն կազմակերպչական խնդիրներից՝ այդ մասին են վկայում նաև կուսակցության մամուլում թուրքերենով տպագրված հրապարակումները: Ասվածը միաժամանակ չի լուծում այն խնդիրը, թե հակամարտող կողմերը պատրա՞ստ էին արդյոք ռազմական գործողությունները սկսել մարտի 18-ին: Յա. Ռատգաուզերը գտնում էր, որ մարտի 18-ի դեպքերը վաղաժամ էին երկու կողմերի համար էլ և նույնիսկ անսպասելի ինչպես Բաքվի խորհրդի, այնպես էլ՝ Մուսավաթի համար[333]: Հարկ ենք համարում ընդգծել մի կարևոր հանգամանք. աղբյուրագիտական նշանակություն ունեցող ոչ հայկական բոլշևիկյան գրականության մեջ (Յա. Ռատգաուզեր, Ե. Տոկարժևսկի) հիմնականում բացառվում է Խորհրդի կողմից քաղաքում գտնվող Դաշնակցության ենթակա ազգային զորամասերի հետ համագործակցության կամ անգամ դրանց օգտագործման փաստը: Հիմնավորումը, մեր կարծիքով, բավական պարզունակ է. էսէռների ու դաշնակցականների դեմ մղած բոլշևիկների պայքարը ասվածի լավագույն ապացույցն է: Եվ հակառակը, այդ նույն հեղինակներն ամեն գնով փորձում են հիմնավորել Բաքվի խորհրդի դեմ ուղղված Դաշնակցություն-Մուսավաթ բանակցությունների և նույնիսկ համաձայնության փաստը[334]: Որպես հիմք է հիշատակվում Բաքվի հայոց ազգային խորհրդի կողմից Թիֆլիս ուղարկված հայտնի հեռագիրը՝ Թիֆլիս–Բաքու երկաթուղու երկայնքով հայության հանդեպ իրականացվող բռնությունների մասին: Յա. Ռատգաուզերը չգիտես ինչու վստահ էր, որ «այն փաստը, որ այդ հեռագիրը հրապարակվել է թերթերում, հիմք է տալիս ենթադրելու, որ դա մահմեդական ազգային խորհրդի հետ բանակցությունների արդյունք է»: Անհնար է ենթադրել, որ մարտի 13-ին՝ Մուսավաթի հարձակումից 5 օր առաջ, Հայկական ազգային խորհուրդը չկասկածեր և չմիջնորդեր հայկական զորամասերը հեռացնելու վերաբերյալ: Ազգային խորհրդի այս քայլը խելամիտ կարող է համարվել միայն այն դեպքում, եթե մահմեդական խորհրդի հետ կայացած լիներ համապատասխան համաձայնությու-

---

[333] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 144:
[334] Տե՛ս նույն տեղում, էջ 142, նաև՝ **Токаржевский Е.**, նշվ. աշխ., էջ 46:

նը: Հայկական ազգային խորհրդի կողմից չեզոքության մասին արված հայտարարությունը, առավել քան հաստատում է մեր ենթադրությունը»[335],– գտնում էր հեղինակը: Ավելացնենք, որ նույն Յա. Ռատգաուզերը խոստովանում էր, որ «ցավոք սրտի, մեր տրամադրության տակ չունենք ոչ Հայկական ազգային խորհրդի ու մահմեդական ազգային կոմիտեի, ոչ էլ Մուսավաթի արխիվներն ու բանաձևերը»[336]: Ավելին, մեջբերելով մուսավաթական թերթի հրապարակումը՝ ուղղված Սեյմի կապակցությամբ Ստ. Շահումյանի ելույթի դեմ, բոլշևիկ հեղինակն ինքն է հայտնվում հակասության մեջ և Մուսավաթի բերանով փաստում Դաշնակցության և մյուս հակաթուրքական ուժերի հետ համագործակցելու երևույթը: «Բոլշևիկները,– գրում էր «Աչըք Սըզ» թերթը,– որոնք մեկ տարի մենշևիկների հետ խեղդում էին միմյանց, այդ նույն բոլշևիկները այսօր հանձնվում են կադետներին, դաշնակցականներին և այլոց, կապիտուլյացիայի են ենթարկվում: Մենք եզրակացնում ենք, որ միավորվել կադետների հետ բոլշևիկները կարող են միայն երկու կետի շուրջ, առաջինը՝ «պատերազմ մինչև հաղթական ավարտը» կարգախոսն է, երկրորդը՝ ազգային պայքարը: Հաշտության փոխարեն կադետների հետ քվեարկել պատերազմի շարունակման կարգախոսի օգտին և դասակարգային պայքարի փոխարեն գովերգել ազգամիջյան բախումների երգը – դա դեմոկրատիայի ողբերգական նահանջ է»[337]: Այս անուղղակի, բայց շատ կարևոր վկայությունը մեկ անգամ ևս հիմնավորում մեր այն թեզը, որ Ստ. Շահումյանի կողմից գլխավորվող Մուսավաթի դեմ պայքարը Մարտյան իրադարձությունների ժամանակ առավելապես ստանում էր ազգային և նույնիսկ ազատագրական պայքարի բովանդակություն:

Չենք կարող անտեսել, որ բացի բոլշևիկ հեղինակներից՝ Բաքվի ազգային խորհրդի և Մահմեդական ընկերությունների խորհրդի միջև կայացած համաձայնության մասին է վկայում Ստ. Շահումյանի որդին՝ Սուրեն Շահումյանը, «Բաքվի կոմունան» աշխատության

---

[335] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 142:
[336] Նույն տեղում, էջ 139:
[337] Նույն տեղում, էջ 143:

մեջ[338]: Առաջին կրակոցներից հետո Հայոց ազգային խորհուրդը մամուլում հայտարարեց, որ իրեն ենթակա զորամասերը մարտերին չեն մասնակցում: Ըստ Սուրեն Շահումյանի՝ հետագայում պարզվում է, որ Ազգային խորհուրդը Մահմեդական ընկերությունների խորհրդին բոլշևիկների դեմ պայքարում աջակցություն է խոստացել և, փաստորեն, սադրել վերջինիս հակախորհրդային ելույթի. միաժամանակ Հայոց ազգային խորհուրդը հայտարարում էր իր «չեզոքության» մասին: Սուրեն Շահումյանը համոզված էր, որ Մահմեդական ազգային խորհուրդը զենքի չէր դիմի, եթե «դաշնակցի» հովանավորությունը չլիներ, ավելին, նրա կարծիքով, միայն մարտերի երկրորդ օրվա վերջում դաշնակցական զորամասերը միջամտեցին արդեն հաղթողի՝ Բաքվի խորհրդի կողմից և այն դեպքում, երբ այդ միջամտությունը հիմնականում նշանավորվեց ջարդերով ու հրդեհների կազմակերպումով: «Դաշնակցական զորամասերը,– գրում է նա,– համարյա թե փչացրին գործը»[339]: Այս բոլոր վկայություններում ընդգծվում է մի հանգամանք, որ անգամ համաձայնության եկած դաշնակցական ու բոլշևիկյան ուժերը, միևնույն է, չէին վստահում միմյանց: Ինչ վերաբերում է Սուրեն Շահումյանի նկատառումներին, ապա դրանք, մեր համոզմամբ, սուբյեկտիվ են, անձնականացված և չեն բխում իրադարձությունների իրական զարգացումների տրամաբանությունից:

Վերլուծության և եզրակացությունների ամբողջական և համեմատաբար իրական պատկեր ստանալու նպատակով համառոտ անդրադառնանք Մարտյան իրադարձությունների ժամանակագրությանը:

1918 թ. փետրվարի 24-ին Գանձակից Բաքու մտավ Մահմեդական դիվիզիայի շտաբը՝ «Վայրի դիվիզիայի» հրամանատար գեներալ-մայոր Միր Քյազիմ բեկ Թալիշինսկու և գեներալ-լեյտենանտ Ալի-աղա Շիխլինսկու գլխավորությամբ, որը Շամախինկա թաղամասում անցկացնում էր ցուցադրական զորավարժություններ: Պետք է նշել, որ բացի գեներալից՝ այդ շտաբում այլ մահմեդական չկար:

---

[338] Տե՛ս **Шаумян Сур.**, Бакинская Коммуна, Баку, 1927:
[339] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեի կարգադրությամբ շտաբն ամբողջ կազմով ձերբակալվեց կայարանում: Այդպես բռնկվեցին առաջին կրքերը մահմեդականների միջավայրում, որն այդ հրամանի մեջ տեսավ մահմեդականների իրավունքների ոտնահարում: Պարզ էր, որ Բաքվում գեներալ Թալիշինսկու ներկայությունն իսկ վտանգ էր ներկայացնում Խորհրդի համար: Չնայած դրան՝ գործադիր կոմիտեն համաձայնվեց ազատ արձակել գեներալին՝ ունենալով էսէռ Վեզիրովի և «Հումմեթի» անդամ Ն. Նարիմանովի միջնորդությունը[340]: Ակամայից պատմական զուգահեռներ կարելի է անցկացնել վրացական բոլշևիկների վարքագծի հետ, որոնք երկրամասային կոմիտեի կազմում արգելեցին իրենց կուսակից Ստ. Շահումյանի կողմից Կոմիսարիատի տապալումը Թիֆլիսում:

Յա. Ռատգաուզերը փորձում էր հիմնավորել, որ Մարտյան իրադարձությունները կրում էին տարերային բնույթ: Սա ինքնին հակասություն է պարունակում, քանի որ նույն հեղինակը գլխավոր թեզ ունի, այն է՝ հիմնավորել, որ Բաքվում մղվում էր քաղաքացիական պատերազմ, որի վերջնական նպատակը իշխանության գրավումն էր: Այնուամենայնիվ, բոլշևիկ ժամանակագիրը գտնում էր, որ բախման սկզբում, երբ Բաքվի մզկիթներում կայացած զանգվածային հանրահավաքներում հարձակման կոչ էր արվում, Ստ. Շահումյանը խոստանում էր բոլոր ուժերը ներդնել և խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով: «Ոչ մի հիմք չկա ենթադրել, որ Շահումյանի հայտարարությունը սոսկ մանևր էր,– գրում է նա,– քանի որ Շահումյանի ողջ գործունեությունը առանձնանում էր երբեմն ծայրահեղության հասնող ուղղամտությամբ»[341]:

Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեի և Մուսավաթի փոխհարաբերությունները հասել էին լարվածության գագաթնակետին: Ակնհայտ էր, որ թաթար ազգայնականները պատրաստվում էին հարձակվել զինապահեստի վրա: Գործադիր կոմիտեն ՌՀԿ-ի նախագահ Ի. Սուխարցևին հանձնարարել է խոչընդոտել թուրքական

[340] Տե՛ս **Раттаузер Я.**, նշվ. աշխ., էջ 145:
[341] Տե՛ս նույն տեղում:

գնդի կազմակերպման աշխատանքներին՝ առաջարկելով այդ գործընթացը տեղափոխել Լենքորան: Ս. Մելիք-Յոլչյանը վկայում է, որ այս փուլում հայկական ազգային զորամասերին ևս երաշխիքներ տրվեցին այն հարցում, որ երբ «Մուսավաթը ու թուրքաց Ազգային Խորհուրդը կը բանան ճանապարհը, հայոց գունդը և զօրամասերը պիտի երթային Հայաստան»[342] (Արևմտյան – Վ. Մ.): «Սակայն, չնախատեսելով իւր ապագայ շահերը,– եզրակացնում էր հեղինակը,– Մուսավաթը, հաշուի առաւ միայն տաճիկների առաջխաղացումը դէպի Անդրկովկաս: Ուստի նա հակառակեցաւ, որ հայկական ոյժերը նրանց դէմ գնան: Նա կ'երեւակայէր, թէ մի գեղեցիկ օր պիտի կարողանայ գրաւել հայկական զէնքերն ու ռազմամթերքը: Ահա թէ ինչու նա բաց չարաւ ճանապարհը եւ միշտ առարկեց, որ ինքը անզօր է այդ ուղղութեամբ մի որևէ բան անելու»[343]: Ս. Մելիք-Յոլչյանի եզրահանգումը իրադարձությունների զարգացման սթափ գնահատական պետք է որակվի: Միաժամանակ տողերի արանքում նկատվում է այն հանգամանքը, որ, իրոք, որոշակի հույսեր էին փայփայվում ՀՅԴ-Մուսավաթ համաձայնության հարցում, ուստի այս ենթատեքստում միանգամայն ավելորդ է դաշնակցական գործչի զարմանքը և Մուսավաթին անհեռատեսության մեջ մեղադրելու հարցը:

ՀՅԴ կենտրոնական կոմիտեն որպես դեպքերի զարգացման կանխարգելիչ միջոց մարտի կեսերին Բաքվի խորհրդի թույլտվությամբ ու նրա ներկայացուցիչների մասնակցությամբ Բաքվից դուրս՝ Հայկավանի դաշտում, կազմակերպեց զորահանդես, որին մասնակցում էին Համազասպի գումարտակները և Դաշնակցության մարտական խմբերը: Մուսավաթը, տվյալ դեպքում՝ Մ. Ռասուլ Զադեն, բողոք ներկայացրին գործադիր կոմիտեին և պահանջեցին ցրել հայկական զորամասերը, իսկ զենքի մի մասը հանձնել իրենց: Հակառակ դեպքում նա սպառնում էր, որ «ինքը՝ թրքութիւնը սեփական ոյժերով կ'իրագործի իր ցանկութիւնը եւ այն ժամանակ անխուսափելի կը լինին եւ «ոչ ցանկալի կոտորածները, որոնց պատասխանատուութիւնը

[342] Տե՛ս **Մելիք-Եօլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 117:
[343] Տե՛ս նույն տեղում:

կ՚ընկնի Գործադիր կոմիտէի վրայ»[344]: «Գործադիր կոմիտէն,– գտնում էր Ռասուլ Զադեն,– յանձինս բոլշեւիկ ղեկավարներին, գլխաւորապէս Շահումեանի, վարում է միակողմանի քաղաքականութիւն, անում է կողմնապահութիւն և պաշտպանում է հայերին ի վնաս թուրքերին»[345]: Այս սադրիչ ելույթին անմիջապես հետևեցին Ստ. Շահումյանի և Ի. Սուխարցևի պատասխանները: «Վաղուց Գործադիր կոմիտէն սպասում էր այդ յայտարարութեան,– նշում էր Ի. Սուխարցևը,– շրջանների անպատիժ գործողութիւնները հանգիստ չեն տալիս եւ քաղաքի (Բաքվի – Վ. Մ.) մուսավաթականներին: Նրանք ուզում են Բագուայ աշխատաւորութեան ոչնչացումը ու կոտորածը, որի համար Ռասուլ Զադէն վերջապէս ձգում է իւր ձեռնոցները: Հասել է ժամը ուրեմն չափուելու ուժերով: Բայց պէտք է իմանաք, որ գալիք սարսափների ամբողջ պատասխանատուութիւնը կ՚ընկնի սկսողների վրայ»[346]: Մուսավաթականները լքեցին գործադիր կոմիտեի նիստը, ավելի ուշ Ռասուլ Զադեն և Քյազիմ Զադեն դուրս եկան գործադիր կոմիտեի կազմից, նրանց փոխարինեցին ուրիշները, որոնք Ս. Մելիք-Յոլչյանի վկայությամբ ներդրվեցին ոչ թե կառուցողական գործունեության, այլ լրտեսության նպատակով[347]:

Մինչդեռ խորհրդի և Մուսավաթի միջև բանակցությունների վերջնաժամկետ էր նշանակված մարտի 17-ի երեկոյան ժամը 18-ը: Սակայն չսպասելով այդ ժամկետի ավարտին՝ ժամը 17-ին թաթարմահմեդականները, որոնց շարքերում կային ի դեպ Նարգեն կղզու գերությունից փախած գերմանացի և թուրք սպաներ ու ասկյարներ, նախահարձակ եղան ու սկսեցին ծավալուն ռազմական գործողություններ[348]:

Մարտի 17-ին թաթարական զորքերի հրամանատար Ի.-խ. Զիաթխանովը Բաքվից 100 կմ հեռավորության վրա գտնվող Քյուրդամիր կայարանից հեռագրում էր Կոմիսարիատի թաթար կո-

---

[344] Տե՛ս **Մելիք-Եոլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 118:
[345] Նույն տեղում:
[346] Նույն տեղում:
[347] Տե՛ս նույն տեղում, էջ 118:
[348] Տե՛ս Հայերի կոտորածները …, էջ 260-263:

միսար Ի.-բ. Հայդարովին. «Մինչև օրս ձեզանից ոչ մի տեղեկություն ու կարգադրություն չստացա ուղարկվելիք զինական ուժերի մասին: Գանձակից եկող էշելոնները, որ ուղարկվում են Բաքու, արգելակվում են (նկատի ունի Բաքվի խորհրդի ուժերը – Վ. Մ.): Ինչո՞ւ կոմիսարիատը ոչ մի ուժ չի ուղարկում: Խոսեցեք այս մասին Կոմիսարիատի հետ: Ասում են, որ Եվլախում կան երկու հարյուրական էշելոններ, որոնք Թիֆլիսից օգնություն են սպասում, կարգադրեցեք, որ հրետանի ուղարկեն: Մինչև օրս վրաց գունդը չկա: Կարգադրեցեք, որ Թիֆլիսից Քյուրդամիր ուղարկեն 200.000 փամփուշտ գերմանական երեքգծանի մաուզերների համար: Բաքվի վրա կշարժվեն 5.000-ից ոչ պակաս մարդով, թող ուղարկեն 50.000 փամփուշտ տաճկական մաուզերների համար… հավանաբար վաղը Շամախիում կարգը կվերականգնվի և իշխանությունը բոլշևիկներից կխլվի. Զիաթխանով»[349]: Այս հեռագիրը ևս մեկ անգամ վկայում է Բաքվի վրա արշավանքի թաթար-մահմեդական խռովության կազմակերպման հանգամանքի մասին: Մինչ Ի.-խ. Զիաթխանովն իր ուժերն էր դասավորում, մուսավաթականները Բաքվում ինչ-որ տեղ շտապողականությամբ սկսեցին խռովությունը[350]:

* * *

Բախման առիթ դարձավ հայտնի թաթար նավթարդյունաբերող Հաջի Զեյնալ-Աբդին Թաղիևի 23-ամյա որդու սպանությունը Լենքորանում և վերջինիս դիակը «Էվելինա» շոգենավով* 48 հոգուց բաղկացած թաթարական զինված պահակախմբի ուղեկցությամբ մարտի 29-ին Բաքու տեղափոխելը[351]: Նույն օրը գործադիր կոմիտեին հայտնի դարձավ, որ «Էվելինա» շոգենավի վրա հավաքվել են զինված թաթարական խմբեր՝ թաթար սպա Ասադուլաևի գլխավորությամբ, հիմնականում «Վայրի դիվիզիայի» զորակազմից: Թաղումից

---

[349] Տե՛ս **Ա-Դ**, նշվ. աշխ., էջ 709:
[350] Տե՛ս նույն տեղում:
* «Էվելինա» շոգենավը պատկանում էր Ավետյան եղբայրներին, տե՛ս **Դադայան Խ.**, Հայերը և Բաքուն, էջ 109:
[351] Տե՛ս **Искендеров М. С.**, նշվ. աշխ., էջ 196:

հետո, երբ թաթարները վերադարձան շոգենավ՝ Լենքորան մեկնելու նպատակով[352], ՌՀԿ-ի նախագահ Ի. Սուխարցևի կարգադրությամբ նավահանգիստը շրջապատվեց, շոգենավը կանգնեցվեց և այնտեղ ուղարկվեց Թադևոս Ամիրյանի բոլշևիկյան զորախումբը, որը Հանձնաժողովի վրա կրակ բացելու և զոհերի պատճառով զինաթափեց թաթարական պահակախումբը[353]: Զինաթափումն իրականացվեց Մահմեդական և Հայկական ազգային խորհուրդների պատվիրակության միջնորդությամբ[354]: Պետք է նշել, որ Զ. Թաղիևի որդու թաղման ժամանակ արտասանված ճառերում մուսավաթականները կոչ էին անում վերջ տալ Բաքվի իշխանությանը[355]:

Պարզ է, որ միջադեպը հուզումներ առաջացրեց թաթարական շրջաններում: Նրանք որոշեցին պահանջել զենքերը և հասնել թաթարական ուժերի ազատ կազմակերպմանն ու գործունեությանը Բաքվում:

Մարտի 29-30-ին գործադիր կոմիտեին դիմեցին 25 ներկայացուցիչներ, որոնց թվում Ղազին, 3-4 մոլլաներ, Ա. Մարդան-բեկ Թոփչիբաշևը, Բեհբութ աղա Ջևանշիրը, Մ. Հասան-Հաջինսկին, քաղաքագլխի տեղակալ թրքասեր Ջուշուզ Հարությունյանը և էսէռ Լևոն Աթաբեկյանը: Իրենց պահանջներն ուժեղացնելու նպատակով թաթարները կարգադրել էին, որ տասնյակ զինված խմբեր մահմեդականների ցույցեր կազմակերպեն[356]:

Մարտի 31-ի ամբողջ օրը Բաքվի տարբեր մասերում իրականացվեցին այդ հանրահավաքները: Ցերեկվա ժամը 16-ին գործադիր կոմիտե ներկայացավ վերոհիշյալ պատվիրակությունը. նրանց լսելով՝ գործադիր կոմիտեի նախագահ Ա. Ջափարիձեն պատասխանել է, որ ինքը կաշխատի ՌՀԿ-ից ետ ստանալ այդ զենքը: 17 անց 15 րոպեին նա ժամանել է ՌՀԿ, սակայն քննարկման ժամանակ բոլորը տեղեկացել են, որ Շեմախինկայում և Թաթարական փողոցում մահ-

---

[352] Տե՛ս **Ղորղանեան Գ.**, նշվ. աշխ., էջ 113:
[353] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 147:
[354] Տե՛ս **Մելիք-Եօլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 119:
[355] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 147:
[356] Տե՛ս **Մելիք-Եօլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 119:

մեղականները կրակ են բաց արել խորհրդային զորքերի վրա: ՌՀԿ-ն նման պայմաններում ավելորդ համարեց Ա. Ջափարիձեի զեկույցը: Նույն օրը գիշերը Սուրախանում զինաթափվեց է նաև Կարմիր գվարդիան, որը փոխարինվեց է մուսավաթական զորամասերով: Ադրբեջանցի հեղինակ Մ. Իսկենդերովի վկայությամբ՝ ստեղծված իրավիճակում Ն. Նարիմանովի բնակարանում մարտի 18-ին կայացավ «Հումմեթ» կոմունիստական կազմակերպության* ընդլայնված նիստ՝ Ստ. Շահումյանի մասնակցությամբ: Թուրք-թաթարական գործելակերպին հատուկ ձեռագրով Ն. Նարիմանովը, նույն հարթության վրա ներկայացնելով մուսավաթականների ու Դաշնակցության վարքագիծը և նրանց մեղսակցությունը ազգամիջյան կոտորածների սանձազերծման գործում, առաջարկում էր խաղաղ ճանապարհով կարգավորել կոնֆլիկտը: Գլխավոր մեղքը բարդվում էր «Վայրի դիվիզիայի» իբր թե կամայականությունների վրա: Նույն օրը հրավիրվեց նաև Կովկասյան բանակի ՌՀԿ-ի նիստ, որին մասնակցում էին ինչպես բոլշևիկներ Ստ. Շահումյանը, Պ. Ջափարիձեն, Գ. Ղորղանյանը և ուրիշներ, այնպես էլ Մուսավաթի ղեկավար Մահմեդ Էմին Ռասուլ-զադեն: Որոշվեց «Հումմեթի» միջոցով վերադարձնել Լենքորան ուղևորվող մուսավաթականների էշելոնի զենքը: Սակայն, չնայած դրան էլ, հենց նիստի ժամանակ մուսավաթականները Բաքվում խռովություն բարձրացրին[357]:

Ստեղծվեց է Բաքվի և շրջանների հեղափոխության պաշտպանության կոմիտե (ՀՊԿ)՝ հետևյալ կազմով՝ ***Ստ. Շահումյան*** – ԺԿԽ Կովկասի արտակարգ կոմիսար (պարենավորման գործեր), ***Գ. Ղորղանյան*** – Կովկասյան բանակի ՌՀԿ նախագահ (ռազմածովային բաժին), ***Պ. Ջափարիձե*** – Բաքվի բ.զ. և ն. պատգ. խորհրդի նախագահ (միջազգային գործեր, հաղորդակցություն, քաղաքային և բժշկասանիտարական գործեր), ***Ի. Սուխարցև*** – Բաքվի ՌՀԿ նա-

---

* «Հումմեթ» – թաթար-բոլշևիկների ոչ ազդեցիկ փոքրաթիվ կուսակցություն, որը չձուլվեց բոլշևիկներին՝ մարտավարական նկատառումներից ելնելով, քանի որ թաթարական զանգվածներին կոմունիզմի ուղու վրա կարող էին կանգնեցնել միայն բոլշևիկ-մահմեդականները:

[357] Տե՛ս **Искендеров М. С.**, նշվ. աշխ., էջ 197-198:

խագահ (արդարադատություն և քաղաքի պաշտպանություն): Հրավիրյալ անդամներն էին աջ էսէռ Ս. Սահակյանը, բժ. Ն. Նարիմանովը և ՀՅԴ անդամ Ս. Մելիք-Յոլչյանը: Ազգային կազմակերպությունների ներկայացուցչությունը թեև մերժվում է, սակայն հիշարժան է Ս. Մելիք-Յոլչյանի ներկայության փաստը, ինչը Ստ. Շահումյանի և Գ. Ղորղանյանի նախաձեռնությունն էր: ՀՊԿ-ի քարտուղարն էր Ն. Կուզնեցովը[358]: Մարտի 31-ին Հեղափոխության պաշտպանության կոմիտեն որոշեց հրետանային կրակ բացել, ներգրավվեցին նաև երեք նավեր: Քաղաքում սկսվեց աննախադեպ խուճապ. «Ամբողջ քաղաքը ստացաւ կատարեալ պատերազմական բնոյթ: Փողոցների մէջ դիրքեր բարձրացան, մօտակայ տների կտուրները եւ լուսամուտները դարձան բերդեր, եւ գիշեր-ցերեկ, երեք օր անընդհատ արիւնալի կռիւներ տեղի ունեցան քաղաքում»,– վկայում էր Ա. Գյուլխանդանյանը[359]: Ժամանակի մամուլի մեկնաբանմամբ՝ «Մարտի 18-ի պատերազմը» հետևյալ պատկերն էր ներկայացնում: Բաքվում և քաղաքի արվարձաններում՝ Սև քաղաքում, Բալաջարում, Բիբի-Հեյբաթ, Սաբունչի, Սուրախանի կայարաններում, տեղի ունեցան արյունալի բախումներ, այրվեցին շուկաներն ու նավթահանքերի մի մասը, հարյուրավոր տներ: Հակամարտող կողմերի թիվը հաշվվում էր շուրջ 20 հազար մարդ, զոհերը՝ 3000[360]:

Գ. Ղորղանյանի վկայությամբ՝ հայկական զորամասերը կորցրին 6 սպա և 60 զինվոր՝ սպանված և վիրավոր[361]:

Մուսավաթական խռովությունը սկսվեց մարտի 30-ին, երբ թաթարական զորամասերը կրակ բացեցին Շամախու և Թաթարական փողոցներում: Հակամարտող կողմերի ճակատի գիծը անցնում էր Ստանիսլավսկու, Հայկական, Բալախանի փողոցներով, Պարապետի հրապարակով մինչև Պրիմորսկի փողոցը: Փողոցներում փորվել էին խրամատներ, ընթանում էր ինտենսիվ գնդացրային կրակ, կրակում էին պատուհաններից, տների, շենքերի տանիքներից:

---

[358] Տե՛ս «Աշխատավոր», 1918, 6 ապրիլի, թիվ 36:
[359] Տե՛ս **Գիւլխանդանեան Ա.,** Անդրկովկասը և Բագուի դեպքերը, էջ 47:
[360] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4007, ց. 1, գ. 228, թ.1-2:
[361] Տե՛ս **Ղորղանեան Գ.**, նշվ. աշխ., էջ 113:

Միաժամանակ մուսավաթական խոշոր ուժերը սկսում են Բաիլով-Բիբիհեյբաթի բանվորական թաղամասի գրոհը՝ նպատակ ունենալով տիրել ռազմածովային նավահանգստին, սակայն հանդիպում են Բաքվի խորհրդի Կարմիր բանակի հուժկու դիմադրությանը ու ետ շպրտվում:

Մարտի 31-ին բոլշևիկյան ուժերը Կասպիական նավատորմի հրետանային կրակի աջակցությամբ անցան վճռական գրոհի ամբողջ ճակատի երկայնքով, գրավելով բազմաթիվ փողոցներ՝ մոտեցան քաղաքային ամրոցին, սկսեցին գնդակոծել «Իսմայիլյե» շենքը, որտեղ տեղակայված էր «Վայրի դիվիզիայի» շտաբը ու ծանր մարտից հետո գրավեցին այն[362]:

Ախալցխայի ՀՅԴ օրգան «Շարժում» թերթը վկայում էր, որ «բոլշևիկների կողմն են բոլոր ազգութիւնները, բացառութեամբ թուրքերի. տեղիս ամբողջ զօրքը բոլշևիկների կողմն է: Ոչ մի տեղից բոլշևիկներին օգնութիւն չեկաւ: Թիւրքերը խիստ աւերուած են: Նրանք դիմադրել չեն կարող: Փողոցներից ֆուրկոններով հաւաքում են դիակները: Ասում են՝ սպանուածները հազարից աւելի են»[363]:

Մուսաֆաթական խռովությունը հիմնականում գլխավորում էր Սաֆար Ալիևը, Գլխավոր շտաբը գտնվում էր «Իսմայիլիե» տանը: Գլխավոր դեպքերը զարգանում էին «Բազարնայա», «Նիկոլաևսկայա» փողոցների, Ամրոցի, Աշխատանքի պալատի շրջանում[364]: Մարտի 21-ին «Кавказское слово» թերթը ուղիղ հեռախոսակապով հաղորդում էր ընթերցողին, որ «այս պահին բոլշևիկները զինաթափ են անում երկաթուղային միլիցիան, վառվել է ամբողջ շուկան, «Նիկոլաևսկայա» փողոցը վերածվել է քարակույտի, այրվել է հսկայական «Իսլամիե» տունը, «Կասպի» թերթի խմբագրատունը: Բացի «Նիկոլաևսկայա» փողոցից՝ խիստ վնասվել էին նաև «Սուրախանսկայա», «Չաղրովայա», «Բոնդարնայա», «Արմյանսկայա» փողոցները: Ղշլաղում և Բյուլբյուլիում 4 հազար թաթար-մահմեդականներ փորձեցին դիմադրություն ցույց տալ: Նրանց դեմ ուղարկվեցին զրահա-

---

[362] Տե՛ս **Токаржевский Е. А.**, նշվ. աշխ.,
[363] «Շարժում», 1918, 29 մարտի, թիվ 20:
[364] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 149:

պատ մեքենա, և հիդրոպլանի ու ռումբերի միջոցով ցրեցին բազմությունը»[365]:

Հեղափոխության պաշտպանության կոմիտեն իր վերջնագրում պահանջում էր. 1. Բաքվի խորհրդի իշխանության անվերապահ ճանաչում և ենթարկում նրա կարգադրություններին, 2. «Վայրի դիվիզիան», ինչպես մյուս մահմեդական ու հայկական զորամիավորումները, պետք է հեռացվեն Բաքվի սահմաններից կամ էլ ենթարկվեն Խորհրդին և 3. անհապաղ բացել Բաքու–Թիֆլիս և Բաքու–Պետրովսկ երկաթուղագծերը[366]: Ու եթե ապրիլի 1-ի ցերեկվա ժամը 15-ի սահմաններում չստացվեր Մուսավաթի համաձայնությունը, Հեղափոխության պաշտպանության կոմիտեն դա կընդուներ որպես պատերազմական վիճակ, որը սկսվել էր մուսավաթականների կողմից, ուստի նրա վրա էլ կդրվեր բոլոր հետևանքների պատասխանատվությունը: Ներկայացված վերջնագիրը ընդունվեց մահմեդական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից, սակայն Մուսավաթի բարձրացրած խռովության անկազմակերպ բնույթի պատճառով կրակոցները քաղաքում դեռ չէին դադարում: Մարտի 20-ին (ապրիլի 2) ձեռնարկվեցին բոլոր հնարավոր միջոցները՝ ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով: Բանակցությունների ընթացքում Ա. Ջափարիձեն բացահայտեց Մուսավաթի դերը և նախաձեռնությունը խռովության կազմակերպման գործում: Էսէռ Ս. Սահակյանը հայտարարեց, որ թեև իր կուսակցությունը բազմաթիվ սկզբունքային հարցերում չի ընդունել բոլշևիկների տեսակետները, սակայն, երբ «խոսք է գնում Բաքվի խորհրդի պաշտպանության մասին, ապա այստեղ ողջ դեմոկրատիան միակամ է»[367]: Բաքվի մահմեդականության ներկայացուցիչները, այդ թվում՝ և Մուսավաթը, հնազանդություն են հայտնում Հեղափոխության պաշտպանության կոմիտեին:

Միաժամանակ հարկ ենք համարում հիշատակել Բ. Բայկովի վկայությունն այն մասին, որ կրակը դադարեցնելու բոլշևիկների

---

[365] «Кавказское слово», 1918, 24 марта, № 67.
[366] Տե՛ս «Շարժում», 1918, 29 մարտի, թիվ 20:
[367] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 147-148:

որոշման վրա մեծապես ազդել էր նաև երկու ռուսական հետևակային գնդերի դիմումը: Նրանք հայտարարել էին, որ «եթե բոլշևիկները չդադարեցնեն հետագա արյունահեղությունը», ապա այդ գնդերը իրենք հանդես կգան բոլշևիկների դեմ: Այդ սպառնալիքը միանգամայն իրական էր, քանի որ այդ երկու գունդն ուներ 8.000 ռազմիկ[368]:

Այսպիսով, մարտի 30-ապրիլի 1-ը Բաքվում և արդյունաբերական թաղամասերում տեղի ունեցան դաժան մարտեր, որոնց բոլշևիկյան պատմագրությունը որակում է որպես քաղաքացիական պատերազմ (հեղափոխության և հակահեղափոխության ուժերի միջև): Ակնհայտ է նաև, որ հակախորհրդային խռովության միջոցով մահմեդականները փորձում էին սաղրել նաև ազգամիջյան թշնամանք հայերի և ադրբեջանցիների միջև[369]: Հակամարտող «երկու կողմ» ձևակերպման մեջ ադրբեջանական կողմը ամեն կերպ արհեստականորեն տեղավորում է Կարմիր գվարդիան ու «Վայրի դիվիզիան»[370], այսինքն՝ լիովին անտեսվում էր հայկական ազգային զորամասերի մասնակցությունը և, ամենակարևորը, այն, որ այդ զորամասերը համագործակցում էին Բաքվի խորհրդի հետ:

3.3. ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԲԱՔՎՈՒՄ

Բաքվի իշխանությունը հայկական ազգային զորամասերի մասնակցությունն առաջին անգամ պաշտոնապես արձանագրեց մարտի 21-ին: Հեղափոխական պաշտպանության կոմիտեի «Բյուլետենի» թիվ 1 համարում հրապարակվեց Ստ. Շահումյանի և կոմիտեի մյուս անդամների կողմից ստորագրված կոչը՝ Բաքվում խորհրդային իշխանությունը Մուսավաթի հարձակումներից պաշտպանելու մասին. «Մենք կոչ ենք անում,– ասվում էր այնտեղ,– հայ և թուրք դեմոկրա-

[368] Տե՛ս **Байков Б.**, նշվ. աշխ., էջ 121:
[369] Տե՛ս **Искендеров М. С.**, նշվ. աշխ., էջ 199:
[370] Նույն տեղում, էջ 201:

տիային ներկայ վճռական դրպէին բացարձակ և անվախ, զենքը ձէռքին մտնել յեղափ. պաշտ. կոմիտէի դրօշակի տակ»[371]:

Մարտի 24-ին Տրապիզոն ժամանեց Գ. Ռասուլ Զադեն և Սեյմի պատվիրակությանը մանրամասներ ներկայացրեց Բաքվի իրադարձությունների մասին: Նա առանձնապես ընդգծում էր, որ «Բաքվում դաշնակցականները ինչ-որ կապեր են պաշտպանում բոլշևիկների հետ»[372]:

Ելնելով հասունացող տագնապալի իրավիճակից՝ Ռոստոմը Բաքվի ազգային խորհրդի մարտի 28-ի նիստում բարձրացրել էր հետևյալ հրատապ խնդիրները. «1. ընդհանուր զօրակոչի ենթարկել մինչև 45 տարեկան հասակ ունեցողները, 2. խիստ և կտրուկ միջոցներով ապահովել պէտք եղած դրամը, 3. ճակատ ուղարկել մեր զինուած ուժերի մեծագոյն մասը, որովհետեւ ինքնապաշտպանութեան լաւագոյն ձեւը ճակատի պաշտպանութիւնն է, 4. թիկունքը պահել կարողանալու համար՝ ամէն կերպ աշխատել դրութեան տէրը դառնալու Բագուում եւ Գանձակում, որոնք թիկունքի բանալիներ են եւ թշնամու ամենակարեւոր դիրքերը»[373]:

Ազգային խորհուրդը համաձայնություն տվեց Ռոստոմի առաջարկներին և որոշեց հայկական զորակոչ հայտարարել, ռազմաճակատ ուղարկել Բաքվում գտնվող հայկական զորամասերի մեծ մասը (ծրագիրն իրականացվում էր Հ. Բագրատունու հետ համատեղ – Վ. Մ.), Հյուսիսային Կովկասի հայ գործակալների միջոցով շահագրգռել կազակներին՝ ռազմաճակատի պաշտպանության և առհասարակ Բաքվի անկման կործանարար հետևանքների հարցերում: Որոշվեց ինքնապաշտպանության կազմակերպիչ ղեկավարներ ուղարկել Գանձակ, ինչպես նաև դիմել Բաքվի խորհրդին՝ «Հայրենիքի եւ Յեղափոխութեան թշնամիներուն դէմ եւ կոչ մըն ալ հրատարակել այդ իմաստով»[374]: Մարտի 30-ի նիստում Ազգային խորհուրդը

---

[371] «Աշխատավոր», 1918, 25 մարտի, թիվ 31:

[372] Տե՛ս **Խաչատրյան Ա.**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010:

[373] Տե՛ս **Ռոստոմ**, Մահուան վաթսունամեակին առթիւ, Վկայութիւններ, Դարբինեան Ռ., Բաքու, 1918, էջ 318:

[374] Տե՛ս նույն տեղում, էջ 318-319:

որոշեց ձևավորել Գերագույն զինվորական մարմին՝ Պաշտպանության հայկական շտաբ, որը գլխավորում էին Խանասորի Վարդանը, ռուսական բանակի գնդապետներ Բախտամյանը և Ղազարյանը[375]: Քաղաքի պաշտպանության ղեկավարումը հանձնվում էր փոխգնդապետ Հարությունովին[376]:

Ինչ վերաբերում է Ռոստոմի դերին, ապա հայկական ազգային շրջանակները նրան էին ընդունում որպես դիմադրության իրական ղեկավար: Արամ Ալչուջյանի կարծիքով՝ Ստ. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Լ. Աթաբեկյանը և մյուս հակառակորդ կուսակցությունների ղեկավարները հիացմունքով էին խոսում նրա մասին և հաճախ նրա հետ խորհրդակցելու էին գալիս[377]:

Ս. Վրացյանի համար ևս անվիճելի էր, որ «վրացիներն ու թուրքերը Թիֆլիսում (Կոմիսարիատ, Սեյմ – Վ. Մ.) գործում են համերաշխ և հակաբոլշևիկյան պայքարի անունից, նեղ ազգային շահեր էին հետապնդում: Այս հաստատում էր և մուսավաթականների գործունեությունը Բաքվում ու գավառներում, որ մի կողմից նրանք ձգտում էին գրավել իշխանությունը, մյուս կողմից՝ քարուքանդ անել հայկական շրջանները»[378]:

Բաքվի ազգային խորհրդի գործունեությունը դրսևորվեց մի քանի առանցքային դրվագներում:

Մարտի 29-ի երեկոյան, երբ սկսվեց հրացանաձգություն «Վայրի դիվիզիայի» և Կարմիր գվարդիայի միջև, այդ առթիվ Ազգային խորհուրդն իր արտակարգ նիստը հրավիրեց և որոշեց արյունահեղությունը դադարեցնելու նպատակով միջամտել իրադարձություններին: Էսէռ Լ. Աթաբեկյանին հանձնարարվեց այդ մասին, ինչպես նաև Ազգային խորհրդի չեզոքության վերաբերյալ կայացրած որոշումը հայտնել ՌՀԿ-ին: Ամերիկահայ պատմաբան Ռոնալդ Սյունիի համոզմամբ «բացահայտ է, որ այն կողմը, որը ձեռք բերեր հայերի

---

[375] Տե՛ս **Ռոստոմ,** նշվ. աշխ., էջ 318-319:
[376] Տե՛ս ՀԱԱ ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 12:
[377] Տե՛ս **Ալչուջեան Ա.**, Ռոստոմը Բագուում, «Հայրենիք», Դ տարի, թիւ 7, (365), հուլիս, 1956, էջ 2-3:
[378] Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 169:

աջակցությունը, կունենար առավելություն և միանշանակ հաղթանակ»[379]:

Ազգային խորհրդի «չեզոքության» հանդեպ առավել անհանդուրժող և արմատական վերաբերմունք է դրսևորել հատկապես Սուրեն Շահումյանը: Նրա կարծիքով՝ Հայոց ազգային խորհուրդը բոլշևիկների դեմ պայքարում իր աջակցությունն էր խոստացել մահմեդական հասարակական կազմակերպությունների խորհրդին և իբր թե նրանց սադրելով ելույթի՝ հայտարարել էր իր «չեզոքության» մասին: Հեղինակը պնդում էր, որ Մահմեդական ազգային խորհուրդը զենքի չէր դիմի, եթե վստահ չլիներ դաշնակցի հարցում: Նա վստահ էր նաև, որ դաշնակցական զորամասերը մարտերին միջամտեցին հաղթողի՝ Բաքվի խորհրդի կողմից: Նա անգամ ծայրահեղության է հասնում՝ նշելով, որ «դաշնակցական զորամասերի խուլիգանության պատճառով լուրջ վտանգ ստեղծվեց, որ ընդհարումները կստանան ազգամիջյան կոտորածների բնույթ»[380]: Բոլշևիկյան մերկապարանոց գնահատական է տրվում նաև այն հարցում, որ եթե իրականացվեր մահմեդական կողմի մասնակի զինաթափում, ապա դա կնշանակեր ընդգծել խորհրդային իշխանության «հայկական» բնույթը, մի բան, ինչը Սուրեն Շահումյանի կարծիքով չկար[381]: Միանգամից նշենք, որ Բաքվի մահմեդական քաղաքական ուժերը միանգամայն հակառակ տեսակետն ունեին:

Գտնում ենք, որ Բաքվի կոմունայի գլխավոր զոհի՝ Ստեփան Շահումյանի որդին, սուբյեկտիվ-հոգեբանական տեսանկյունից ելնելով, դեպքերից 9 տարի հետո պետք է մեղադրեր հենց «ազգայնամոլ» դաշնակցականներին՝ ծայրահեղության հասցնելով անգամ անվանի հոր մոտեցումները Հայ ազգային դեմոկրատական կուսակցության հանդեպ: Տարօրինակ է, որ նրան հայտնի չէր, կամ մոռացության էր պարզապես տրվում Դաշնակցության և Բաքվի խորհրդի կարճատև համագործակցության փաստը:

---

[379] Տե՛ս **Suny R. G.**, The Baku Commune 1917-1918, Class and nationality in the Russian revolution, 1972, Princeton, Newjersey, p. 218:
[380] Տե՛ս **Шаумян Сур.**, Бакинская Коммуна, էջ 15:
[381] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

Մարտի 31-ին Ազգային խորհրդի նիստում որոշվեց ձեռնարկել հայ ազգաբնակչության ինքնապաշտպանության միջոցներ: Նախագահ Ա. Գյուլխանդանյանին, ինչպես նաև Ս. Արարատյանին, Ն. Տեր-Ղազարյանին հանձնարարվեց բախումների դադարեցման առաջարկով բանակցել ՌՀԿ-ի, իսկ Լ. Աթաբեկյանին, Տ. Իսախանյանին, Հ. Տեր-Միքայելյանին ու Ա. Չիլինգարյանին՝ թաթարական կոմիտեի հետ: Մարտի 20-ի նիստում զեկուցվում էր այդ առաքելության անհաջողության մասին, և վերահաստատվում այն մոտեցումը, որ «Ազգային խորհրդին ենթակա ոչ մի հայ զինվոր չպետք է մասնակցի մարտերին և հայկական զորամասերը պետք է մնան ինքնապաշտպանողական դերի մեջ»[382]:

Ավելացնենք, որ եթե Ս. Վրացյանը չեզոքության մասին որոշման օր էր համարում մարտի 29-ը, ապա Ս. Մելիք-Յոլչյանը հիշատակում էր մարտի 30-ը: Գտնում ենք, որ երեքօրյա սրընթաց իրադարձությունների համատեքստում կարևորվում էր անգամ այս նրբությունը, քանի որ դրա հետ է կապվում Բաքվի խորհրդին ցույց տրված հայկական ազգային զինուժի աջակցության խնդիրը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մի կողմից Համազասպի 2-րդ գնդին տրվում էր չմիջամտելու հրահանգ, միաժամանակ Բաքվի խորհրդի նիստին մասնակից Ս. Արարատյանը, Ս. Մելիք-Յոլչյանը, Լ. Աթաբեկյանը և Ս. Սահակյանը հայտնում էին, որ հայ ազգաբնակչության ապահովությանը սպառնացող վտանգի դեպքում «նրանք կկատարեն իրենց պարտքը»[383]: Իսկապես, Դաշնակցության զորամասերն անմիջապես դիրքավորվեցին ծովափից մինչև Հայկական: Ավելին, Ս. Մելիք-Յոլչյանը վկայում էր, որ Բաքվի խորհրդի նույն օրվա որոշմամբ իշխանության համալիր ուժերը դիրքեր էին գրավում, որոնց հանձնարարվում էր «չսկսել ոչ մի գործողություն, մինչեւ որ տեղի չունենայ թուրքերի գրոհը հայկական մասի վրա»[384]: Իրադարձությունների մասնակից - ժամանակակիցներից, ի դեպ, միայն Ս. Մելիք-Յոլչյանն է, որ մարտի 31-ի թուրքական հար-

---

[382] Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 172:
[383] Տե՛ս **Մելիք-Եոլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 120:
[384] Տե՛ս նույն տեղում, էջ 121:

ձակումը կապում է Բաքվի հայկական թաղամասի վրա իրականացված գրոհի հետ: Հարձակմանը մասնակցում էին 20-25 հազար մահմեդական-թաթարական ուժեր ինչպես քաղաքից, այնպես էլ հարևան շրջաններից, սակայն «ինչպէս ծովի ալիքները զարնւում են մերոնց ժայռանման կուրծքերին, փշուր-փշուր լինում եւ յէտ հոսում». «կռիւը ընդունում է հրէշային բնոյթ»[385]:

Այդ էր վկայում և Բ. Բայկովը. նրա կարծիքով, եթե Հայոց ազգային խորհուրդը ամեն կերպ փորձում էր հայկական զանգվածներին հեռու պահել ընդհարումներից, ապա Դաշնակցության կոմիտեն որոշեց ակտիվ մասնակցություն ունենալ: Նրանց այս պահին միացան նաև քաղաքում հավաքված 8.000 հայ զինվորները: Սկզբում թաթարները հաջողություն ունեին, սակայն երկրորդ օրն իսկ պարզ դարձավ, որ նրանք պարտվում են, ավելին, նրանք սկսեցին զանգվածաբար լքել քաղաքը[386]:

Պաշտպանության հայկական շտաբը ղեկավարում էին գեներալ Ի. Բաղրամովը և գեներալ մայոր Հ. Բագրատունին, փոխգնդապետ Հարությունովը նշանակվել էր Բաքվի պաշտպանության պետ, շտաբի պետն էր շտաբս-կապիտան Սարգիս Մուսայելյանը (1920 թ. մայիսյան բոլշևիկյան ապստամբության ղեկավարներից – Վ. Մ.): Հերոսամարտի հայկական ուժերը կազմում էին Հայկական 2-րդ պահեստային գունդը (700 հոգի), Համազասպի 1-ին պարտիզանական ջոկատը (800 հոգի)*, ՀՅԴ վաշտը (500 հոգի), 4 թնդանոթ, 5 գնդացիր՝ Եղիշե Պահլավունու և Իսրայել Տեր-Ղազարյանի ղեկավարությամբ:

Քաղաքը բաժանվեց պաշտպանական վեց տեղամասի, որոնց ղեկավարներն էին շտաբս կապիտաններ Արամ Դովլաթյանը, Լալանը, Ամիրջանովը (Ամիրջան Նուխեցի – Վ. Մ.), պորուչիկ Կրիկորյանը, Սերգո Մանուչարյանը (Համազասպի օգնականը), Գրիգորյանցը:

---

[385] Տե՛ս **Մելիք-Եօլչեան Ս.**, նշվ. աշխ., էջ 121:
[386] Տե՛ս **Байков Б.**, նշվ. աշխ., էջ 121:
* Ա-Դոն նշում է 200 հոգի, 2 թնդանոթ, 5 գնդացիր, տե՛ս **Ա-Դո,** նշվ. աշխ., էջ 706:

Արդյունքում 3-օրյա մարտերում Բաքվի խորհրդի և Հայոց ազգային խորհրդի համագործակցության միջոցով մուսավաթական խռովությունը ջախջախվեց: Սպանված թաթար-մահմեդականների թիվը հասնում էր 2000-ի[*], խորհրդային-հայկական ուժերի զոհերը կազմեցին մի քանի հարյուր մարդ: Ա. Գյուլխանդանյանի հանձնարարությամբ Բաքվի հայոց եկեղեցիների ծխատեր քահանաների միջոցով կատարած հաշվառումներից պարզվեց, որ սպանվածներն ու վիրավորվածները հիմնականում Գանձակի, Շուշիի, Զանգեզուրի, Նուխիի, Գյոքչայի և Շամախու գավառներից էին[387]: Հաշտության առաքելության ժամանակ դավադրաբար սպանվեց Լևոն Աթաբեկյանը[388]: Մուսավաթականների մեծ մասը փախավ Բաքվից, խորհրդի կազմում մնացին մոտ 10 թաթարներ՝ բոլշևիկ, մենշևիկ[389]:

Անդրկովկասյան Սեյմի մարտի ապրիլի 6-ի նիստին էսէռ Լորդկիպանիձեն հայտնում էր իր կուսակից Լևոն Աթաբեկյանի մահվան մասին, և նախագահի առաջարկով մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցվեց Սեյմի զոհված անդամին[390]: Երևանից Լ. Աթաբեկյանի մահն էին սգում դաշնակցական Վահան Նավասարդյանը, մի խումբ երիտասարդ դաշնակցականներ[391]:

Մարտյան դեպքերի առթիվ Հայոց ազգային խորհուրդը հրապարակեց ընդարձակ հաղորդագրություն, որի մեջ տրվում էր ընդհարումների մանրամասն նկարագրությունը: Այդ փաստաթղթից, ինչպես նաև Բաքվի պարսից հյուպատոսարանի նյութերից պարզվում էր նաև, որ Ազգային խորհրդի հանձնարարությամբ փրկվել են շուրջ 14000 թաթարներ, պարսիկներ, լեռնականներ: Սպեցիֆիկ Դավիթ Անանունն այդ նպատակով նշանակվեց ընդհանուր հոգաբարձու,

---

[*] Բ. Բայկովի վկայությամբ՝ վախի մթնոլորտում թաթարներն այդ թիվը հասցնում էին 6000-ի, ավելի ուշ՝ 15, 20 հազարի, ինչը, նրա համոզմամբ, բացահայտ ֆանտաստիկ էր (**Байков Б.,** նշվ. աշխ., էջ 121):

[387] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 330, թթ. 1-9, ըստ՝ **Ստեփանյան Գ.**, Համազասպ Սրվանձտյանց, էջ 432-433:

[388] Տե՛ս **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թ., էջ 166:

[389] Տե՛ս **Գիլխանդանեան Ա.**, Անդրկովկասը և Բագուի դեպքերը, էջ 48:

[390] Տե՛ս Закавказский сейм, Стенографический отчет, заседание 20-е, 24 марта, Тифлис, 1918, с. 4:

[391] Տե՛ս «Աշխատավոր», 1918, թիվ 36, 6 ապրիլի:

նրան տրվել է լիազորություն՝ տեղերում ապահով հավաքելու մահմեդականներին: Նրանք տեղավորվել էին Մայիլյանների (3500 հոգի), Ռեկորդ (2690), Ռամզեյ (579) թատրոններում, Եֆիմովի կրկես-թատրոնում (800) և հասարակական ու հանրային բազմաթիվ այլ շենքերում, Հայկավանում, ընդամենը՝ 11.726 հոգի: Մոտ 1500 մարդ էլ ապաստանել էր հայերի մասնավոր տներում[392]: Ռոստոմը օրվա ընթացքում մի քանի անգամ այցելում էր գերիների հանրակացարաններ: «Հարիւրաւոր գերիներ բռնում էին Ռոստոմի, Աբրահամի (Գյուլխանդանյան – Վ. Մ.) եւ մեր ձեռները եւ համբուրում»[393]:

Ուշագրավ է ՀՅԴ կողմից հաշտության առաքելություն իրականացնող Մ. Շաքիրյանի վկայությունը, ըստ որի՝ այդ օգնության դիմաց հնարավոր եղավ այդ օրերին պահպանելու Շամախիի, Նուխիի, Լենքորանի, Ղուբայի և Դերբենդի հայերի կյանքը: Միակ իրազեկ անձնավորությունը՝ պարսից հյուպատոսը, ի պատասխան իր զեկուցմանը, պարսից Շահից ստացել էր գոհունակության հեռագիր և հավաստիացման երաշխիքներ, որ պարսկահայերը ապահով և անվտանգ կմնան[394]:

Բանակցությունն առանձին ուշադրություն էր դարձրել այն խնդրին, որ որոշ ազդեցիկ թաթար գործիչների և նրանց ընտանիքների կյանքին վտանգ չսպառնար: Դրանցից էին Հաջի Զեյնալ Աբդին Թաղիևը, Մուսա Նագիևը, Իշխան Կաջարը, Միրզա Ասադուլլաևը և ուրիշներ, որոնք էլ հեռագրելով հորդորում էին իրենց արյունակիցներին լավ վերաբերվել հայերի նկատմամբ[395]:

Հաշտարար պատվիրակությունը (Հ. Տեր-Միքայելյան, Մ. Շաքիրյան) թաթար ներկայացուցիչներին է հաղորդել Ազգային խորհրդի երեք առաջարկները՝ հայության անվտանգությունը ապահովելու ուղղությամբ: «Գնդապետ Իշխան Կաջարը,– նշում էր Մ. Շաքիրյանը,– արտասանքը աչքերին զգացուած շնորհակալու-

---

[392] Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 172, նաև՝ Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, էջ 26-28:
[393] Տե՛ս **Ալչուջեան Ա.**, նշվ. աշխ., էջ 4:
[394] Տե՛ս **Շաքիրեան Մ.**, Էջ մը հայ-թրքական կռիւներէն, «Հայրենիք», 1923, սեպտեմբեր, թիվ 11, էջ 97:
[395] Նույն տեղում:

թիւն յայտնեց իրանց ազատելու եւ խնամելու համար եւ հանդիսաւոր կերպով խօսք տուեց բոլորի կողմից, որ Հ.Յ. Դաշնակցութեան յանձնարարութիւնը նրանք սրբութեամբ կը կատարեն[396]: Թաքար գործիչը ոճրագործությունները վերագրում էր ավազակային խմբերին, ինչի դեմ «գրգռուած յարձակուեց Թեմուր բէգ Աշուրբէգովը. ***«Այդ բոլորը սո՛ւտ է, ոչ մի աւազակային խումբ էլ չկայ: Վերջին ամսուայ ընթացքում ես երեք անգամ գնացել եկել եմ Գանձակ եւ հեպս միշտ մեծ գումարներ են եղել եւ ոչ ոք ինձ չէ կողոպտել, չէ վիրավորել, իսկ ամէն անգամ իմ աչքի առաջ դուրս էին բերում վագոնից մի քանի խեղճ ու կրակ հայերի եւ բոլորի՝ թուրքերի, ռուսների ու վրացիների ներկայությամբ հէնց կայարանում մորթոտում էին նրանց. սրանք կազմակերպուած քաղաքական աւազակներ են: Մենք արդարանալու ոչ մի իրաւունք չունինք: Գոնէ այժմ, երբ այս մարդիկ մեր կեանքը փրկած, եկել են բարի երթ մաղթելու մեզ, անկեղծ լինենք եւ խոստովանենք մեր մեղքը»***[397] (ընդգծումը իմն է – Վ. Մ.): Անգամ այն բանից հետո, երբ գործադիր կոմիտեի հանձնարարությամբ բոլշևիկները շրջապատել էին «Դաշնակցական տունը» և պահանջում էին հանձնել «բուրժուա թուրքերին», Ազգային խորհուրդը հասավ նրան, որ ապաստանյալները ազատվեն[398]:

Հարկ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ, ի դեմս Մ. Շաթիրյանի զգացմունքային նկարագրությունների, դրսևորվում էր խորքային մարտավարական դիրքորոշումը, մասնավորապես հակաբոլշևիկյան ուղղվածությունը և ինչ-որ տեղ անհիմն վստահությունը թաթար գործիչների նկատմամբ: Այդ նույն բարի ու անկեղծ թաթարները նույն 1918 թ. սեպտեմբերին Բաքվում բնաջնջեցին 30 հազարից ավել հայերի՝ ավարտին հասցնելով Բաքվի մարտյան դեպքերի նպատակները և մասնավորապես հայկական գործոնի վերացումը: Նույն վրդովմունքն էր հայտնում և Բորիս Բայկովը 1923 թվականին: Նա գրում էր. «Հայերի կողմից փրկված թաթարների մեջ կային բուրժուազիայի և հասարակական գործիչների ներկայացու-

[396] **Շաթիրեան Մ.**, նույն տեղում, էջ 99:
[397] Տե՛ս նույն տեղում, էջ 97:
[398] Տե՛ս նույն տեղում:

ցիչներ և նույնիսկ այնպիսի բացահայտ հայատյաց, ինչպիսին էր ինժեներ Բեյբութ-Խան Ջևանշիրը՝ հայերի նույն թվականի սեպտեմբերյան զանգվածային ջարդերի կազմակերպիչն ու ղեկավարը, երբ Բաքուն գրավվեց թուրքերի ու ադրբեջանցիների կողմից»[399]: Նա վկայում էր նաև, որ հետագայում բազմիցս լսել է կարծիքներ այն մասին, թե 1918 թ. «մարտյան օրերին» «հայերը անխնա կոտորել են թաթարներին»: «Ճշմարտությունը ստիպում է ինձ ասել, որ դա սուտ է»[400],– փաստում էր նույն ռուս գործիչը:

Իր նշանավոր՝ «Очерки русской смуты» հուշապատումի էջերում Բաքվի մարտյան դեպքերին է անդրադարձել նաև Ա. Դենիկինը: Սպիտակ շարժման գլխավոր առաջնորդներից մեկը՝ գեներալ Ա. Դենիկինը, հասկանալի է, որ հակաբոլշևիզմի մեկնակետից էր փորձում գնահատել իրադարձությունների ընթացքը: Նա գտնում էր, որ «Բաքվում ընթանում էր մրցություն՝ թուրքական ֆանատիզմի, բոլշևիկյան պրոպագանդայի, անգլիական ֆունտի ու գերմանական մարկի միջև: Բաքվում, ինչպես և ամենուր, հնուց ի վեր թաթարական, և հայկական բնակչության միջև գոյություն ուներ խորը թշնամանք, որը բոլշևիկյան հեղաշրջումից հետո ավելի ահագնացավ. այն ստացավ պայքարի արտաքին ձևեր մի կողմից՝ խորհրդային իշխանության, որի կողմն անցան դաշնակցականներն ու ռուս պրոլետարիատը և մյուս կողմից՝ թուրք-թաթարական ուժերի միջև, որին էլ ինքնապահպանման զգացմունքից ելնելով՝ հարեց ռուսական մտավորականությունը»[401]:

Բաքվի դեպքերը որակելով որպես հեղաշրջում (և դա լիովին հասկանալի ու ընդունելի է Պետրոգրադի զինված ապստամբության համատեքստում)՝ Ա. Դենիկինը, այնուամենայնիվ, իրադարձությունները լուսաբանում էր ազգամիջյան բախման շրջանակներում և հենվելով ավելի ուշ ստեղծված ադրբեջանական կառավարության պաշտոնական տվյալների վրա՝ եզրակացնում էր, որ «քաղաքում կոտորվել է ամբողջ մի մուսուլմանական թաղամաս»: Միաժամանակ նա

[399] Տե՛ս **Байков Б.**, նշվ. աշխ., էջ 122:
[400] Տե՛ս նույն տեղում:
[401] **Деникин А. И.**, Очерки русской смуты, Москва, 1991, с. 143.

ընդգծում էր, որ զոհերի թիվը չէր գրանցվել ու նաև այն, որ այդ տվյալները «հավանաբար չափազանցված էին»[402]:

Հայկական հումանիզմի առիթով Հ. Թաղիևը մամուլի միջոցով ապրիլի 10-ին (նոր տոմարով) հայերին շնորհակալություն էր հայտնում: Նա Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորիին և Անդրկովկասի ազգային խորհուրդներին ուղղված հեռագրում գրում էր, որ «Բաքվի իրադարձությունները հայ-թաթարական բախումների բնույթ չեն կրել, կռիվների ամբողջ ընթացքում թուրքերը ձեռք չէին տալիս թրքական թաղամասերում և տներում ապրող հայերին: Իսկ հայկական զորամասերը փրկեցին և ապաստան տվին ավելի քան 14.000 մահմեդականների, որոնց հետ վերադարձրին պարսից հյուպատոսի միջոցով»[403]:

3.4. ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ՆՈՐ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՄԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1918 Թ. ԱՊՐԻԼԻՆ

«Մուսավաթի ողնաշարը ջարդելուց հետո,– գրում էր Ս. Վրացյանը,– Բանվորական խորհուրդը ձեռք առավ և գավառի թուրք-մուսավաթական դավերի սանձահարման գործը»[404]: Խնդիրն այն էր, որ Մուսավաթի ղեկավարները Գանձակում Լենքորանում, Ղուբայում և Թիֆլիսում սկսեցին կազմավորվել մահմեդական նոր զորամասեր՝ Բաքվի վրա վճռական հարձակում իրականացնելու նպատակով[405]: Այս անգամ Բաքվի խորհրդի դեմ գրոհը ղեկավարում էր նաև Սեյմի վրացական մենշևիկների խմբակցության և, մասնավորապես, անդրկովկասյան երկաթուղու խռովությունների գլխավոր սանձազերծող Ն. Ռամիշվիլին: Նա «Բաքվի հարցում կառավարության

---

[402] Տե՛ս **Деникин А. И.**, նշվ. աշխ., էջ 143:
[403] «Հորիզոն», 1918, 29 մարտի, թիվ 66, նաև՝ Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 21:
[404] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 174:
[405] Տե՛ս **Искендеров М. С.**, նշվ. աշխ., էջ 203:

քայլերն էր ձեռնարկելու», այլ խոսքով՝ ամեն գնով փորձելու էր տապալել Բաքվի իշխանությունը:

Ապրիլի 7, 8-ին Սեյմի նախագահ Ա. Չխեիձեին հաջորդաբար հեռագրեր են հղել Բաքվի ս.-դ. Մենշևիկյան կուսակցության ԿԿ-ի նախագահ Այոլլոն, Սեյմի հայազգի պատգամավոր Ղ. Տեր-Ղազարյանը և Բաքվի ՌՀԿ-ն:

Բաքվի մենշևիկների կազմակերպությունը, անկախ Բաքվի խորհրդի բոլշևիկյան մեծամասնության նկատմամբ ունեցած տակտիկական վերաբերմունքից, Սեյմի նախագահին հայտնում էր, որ իր պարտականությունն էր համարում ակտիվ աջակցություն ցույց տալ Խորհրդին և հակահեղափոխականության դեմ վերջինիս պայքարին: «Դաղստանցիների առաջխաղացումը,– նշում էր Այոլլոն,– մենք համարում ենք հակայեղափոխական գործ և խնդրում ենք Սէյմին՝ օգնել Բագուի Խորհրդին՝ առաջխաղացող դաղստանցիների դէմ կռուելու գործում: Այդ առաջխաղացումը Բագուի բազմացեղ ազգաբնակչութեանը սպառնում է անթիւ աղէտներ»[406]:

Ն. Ժորդանիային, Ա. Չխեիձեին, Ե. Գեգեչկորիին և Ն. Ռամիշվիլուն ուղղված Ղ. Տեր-Ղազարյանի հեռագրում շեշտվում էր այն հանգամանքը, որ ապրիլի 1-ից Բաքվում տիրող հարաբերական հանգստությունը կարող է վտանգվել միաժամանակ Դաղստանից, Թիֆլիսից ու Գանձակից քաղաքի վրա շարժվող զորամասերի ու նոր ռազմական գործողությունների պատճառով: Նա վրացական մենշևիկների առաջնորդներին վստահեցնում էր, որ Բաքվի խորհուրդը տիրապետում է բավարար ուժերի և ռազմական միջոցների՝ ոչ միայն դիմագրավելու, այլև հակահարված տալու համար, որ Բաքվի խորհրդին են միացել սոցիալիստական, դեմոկրատական ու հեղափոխական բոլոր կուսակցությունները: Ղ. Տեր-Ղազարյանը հորդորում էր մենշևիկներին «առանց աւելորդ կռուի և անխուսափելի զոհերի գործը հաշտությամբ հարթելու», ուստի և առաջարկում էր անմիջապես կանգնեցնել Թիֆլիսից շարժվող զորամասերը և հետ կանչել զրահապատը: «Սէյմի անդամների հանդէս գալը ոչ մի դէպքում թոյ-

[406] Տե՛ս «Վան-Տոսպ», 1918, 1 ապրիլի, թիվ 10:

լատրելի չէ, այլապէս հետևանքները կործանարար կը լինեն ամբողջ Անդրկովկասի համար: Նախազգուշացնում եմ, որ մուսուլմանական կուսակցութիւնները՝ մուսուլման ժողովրդի և ամբողջ Անդրկովկասի շահը ի նկատի առած՝ չպէտք է տարուեն խորհրդի և Բագուի յեղ. կազմակերպութիւնների ուժերը ջլատելու մտքով: Վերջինները ամեն ջանք պիտի թափեն Բագուի վրայ եկող զօրամասերի առաջն առնելու: Սպասում ենք ձեր կառավարութեան պատասխանին: Եթէ հնար լիներ ամբողջ Սէյմը գար այստեղ խաղաղութիւն հաստատելու, այդ բանը միանգամայն ուրախալի կը լինէր, ի նկատի առնելով դրութեան լրջութիւնը»[407]:

Եվ վերջապես, ապրիլի 2-ին Սեյմի նախագահին է դիմում Բաքվի ՌՀԿ-ն՝ ի դեմս խորհրդի նախագահ Ա. Ջափարիձեի, տեղի բոլշևիկների նախագահ Նանեյշվիլու և ձախ էսէռների կուսակցության նախագահ Ի. Սուխարցևի:

Նշված հեռագրի բովանդակությունը հարկ ենք համարում ներկայացնել ամբողջությամբ. «Քաղաքում զինված հանդէս եկան վայրի դիւիզիան, հրոսակախմբեր և ուրիշ հակայեղափոխական օֆիցերներից՝ խորհուրդների իշխանութեան դէմ: Խորհուրդների միացյալ զինուած ուժերով և Բագում գտնուող զօրամասերով հակայեղափոխական ցոյցը ճնշուեց: Շարժումը քաղաքացիական կռուի շրջանակից դէնը չանցաւ: Արդիւնաբերական շրջանի կեանքը չխախտուեց: Քաղաքում այժմ անդորրութիւն է տիրում: Մուսուլման ազգաբնակութիւնը, բացի նրա բարձր դասից, համախմբուում և կազմակերպւում է խորհուրդի շուրջը, որին կից հիմնուած է մի բիւրօ՝ մուսուլմանական սոցիալիստական կուսակցութիւնների ներկայացուցիչներից: Մօտակայ գիւղերում հանգստութիւն է տիրում: Խաղաղութեանը վտանգ է սպառնում միայն Դաղստանի գունդը, որ գտնուում է Խուրդալանում, և որը հակառակ տեղական մուսուլման ազգաբնակութեան ցանկութեան և դիմումին, հրաժարուեց հեռանալ և այսօր սկսեց ռազմական գործողութիւն: Մեր տեղեկութիւնների համաձայն՝ Սէյմը կամենում է կանգնել խորհուրդների թշնամիների կողմը:

---

[407] Տե՛ս «Վան-Տոսպ», 1918, 1 ապրիլի, թիվ 10:

Բագուի բանուորների կողմից, առանց ազգերի և կուսակցութիւնների խտրութեան, նախազգուշացնում ենք ձեզ, որ դուք այդ յանցանքը չգործէք»[408]:

Ստորագրող ղեկավար գործիչների կազմում էր նաև Ա. Գյուլխանդանյանը[409]: Ապրիլի 13-ին Սեյմի և անդրկովկասյան կառավարության ղեկավարությանն են դիմել Սեյմի անդամներ Ս. Տիգրանյանը և Ղ. Տեր-Ղազարյանը՝ «յետ կասեցնելու Շամախու և Բագուի շրջաններում զինուած ընդհարումները[410]: Նրանք հորդորում էին Թիֆլիսից անհապաղ պատվիրակություն ուղարկել Բաքու և վերջ տալ պատերազմական գործողություններին:

Թիֆլիսի բ. և զ. պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեի ապրիլի 4-ի նիստում Բաքվի իրադարձություններին անդրադարձան Ֆ. Մախարաձեն և Զոհրաբյանը:

Անդրկովկասյան կառավարության որդեգրած դիրքի մասին բոլշևիկ Ֆ. Մախարաձեն գտնում էր, որ ենթադրելով, որ Բաքվում ազգամիջյան պատերազմ է ընթանում, Սեյմը վճռել էր խառը զորամաս ուղարկել: Ֆ. Մախարաձեի ելույթից պարզվեց նաև այն կարևոր մանրամասը, որ Սեյմը, Բաքվից նոր տեղեկություններ ստանալով, ճանապարհից իբր թե ետ կանչեց «Մաղալովի «Վայրի դիվիզիայի» հետ պատահաբար գնացած խառը զորամասը»[411]:

Զոհրաբյանն իր հերթին հերքում էր Բաքվի դեպքերը իբրև ազգամիջյան թշնամանքի դրսևորում ներկայացնելու պնդումները և գտնում էր, որ դրանք պետք է ներկայացվեն որպես «բոլշևիկների սովորական գործունեության հետևանք»[412]: Ըստ նրա՝ դրությունը Բաքվում բարդանում էր նրանով, որ այստեղ բոլշևիկների հետ ընդհարվում էին ոչ թե դեմոկրատական, ինչպես դա տեղի էր ունենում ամենուր, այլ հետադիմական ուժերը, տվյալ դեպքում՝ Մուսավաթը: Մուսավաթի պաշտպան զորամասերը,– ասում էր նա,– Դաղստանի

---

[408] Տե՛ս «Վան-Տոսպ», 1918, 1 ապրիլի, թիվ 10:
[409] Տե՛ս «Աշխատավոր», 1918, 6 ապրիլի, թիվ 36:
[410] Նույն տեղում:
[411] Տե՛ս «Հորիզոն», 1918, 20 (7) ապրիլի, թիվ 74:
[412] Տե՛ս նույն տեղում:

գնդերը, Թիֆլիսից ուղարկված մուսուլմանական զորամասը ռեակցիոն ուժեր են, որոնք իրենց նպատակն են դրել բոլշևիկներին արտաքսելու Բաքվից և իրենց իշխանությունը հաստատելու այնտեղ: Նկատի ունենալով այս, Բաքվի բոլոր հեղափոխական ուժերը միացել են խորհրդի շուրջը: Այսպիսով, կռիվը պրոլետարիատի և ռեակցիոն տարրերի մեջ է»[413]:

Ասվածը լրացնում էր ՀՅԴ Բաքվի ԿԿ-ի նախագահ Ա. Գյուլխանդանյանը: Ապրիլի 4-ին նա հեռագրել է Սեյմին այն մասին, որ Բաքու ուղղվող զինված ուժերի մեջ կան զրահապատ և Սեյմին ենթակա մի քանի զորամասեր: Նա վստահ էր, որ Բաքվի դեմ իրականացվող արշավանքին Սեյմի այս կամ այն կերպ մասնակցությունը սպառնում էր այն վերածել ազգամիջյան հրդեհի, ուստի և ԿԿ-ի անունից պահանջում էր, որպեսզի ուղարկված զորամասերը անմիջապես ետ կանչվեն, և Սեյմը հրաժարվի ընդհանրապես Բաքու զինված ուժեր ուղարկելու գաղափարից: Նա հավելում էր նաև, որ «մահմեդական զորամասերը ավերել են Շամախի գավառի բոլոր հայկական գյուղերը և ռուսական գյուղերի մեծ մասը, և որ փախստական հայերի և ռուսների 30.000-անոց հեղեղը դեպի Բաքու է ուղղվել»[414]:

Մեր կարծիքով՝ ստեղծված իրավիճակում, երբ սկսվել էր Բաքվի դիմադրությունը, նման առաջարկը ամենևին չէր կարող բխել հայկականության շահերից: Այս մոտեցումն առավելապես թելադրված էր Տրապիզոնի բանակցությունների գործընթացով, այսինքն՝ թուրքերի հետ միմիայն բանակցելուն նախապատվությունը տալու արատավոր գործելակերպով:

Սեյմի ապրիլի 2-ի նիստում հայտնի դարձավ, որ կառավարության որոշմամբ ձևավորվել է պատվիրակություն՝ Հայդարով, Տիգրանյան, Օնիաշվիլի, Մահմուդով, Մելիք-Եգանով կազմով[415], որը նպատակ ուներ քննելու և պարզելու Բաքվի դեպքերի մանրամասները և կանխելու «եղբայրասպան պատերազմը»: Բաքվի հեղափոխու-

---

[413] Տե՛ս «Հորիզոն», 1918, 20 (7) ապրիլի, թիվ 74:
[414] «Հորիզոն», 1918, 19 (6) ապրիլի, թիվ 73:
[415] Տե՛ս Закавказский сейм, Сессия первая, заседание девятнадцатое, 20 марта, 1918, с. 61:

թյան պաշտպանության կոմիտեն, Սեյմի անդամ Իսիդոր Ռամիշվիլիին պատասխանելով, մերժեց պատվիրակության այցի անհրաժեշտությունը և խնդրեց «չանհանգստանալ»[416]: Ապրիլի 6-ի նիստում էսէռ Լորդկիպանիձեն Լ. Աթաբեկյանի և Դենեժկինի եղերական մահվան կապակցությամբ անդրադարձավ է Բաքվի իրադարձություններին: Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության դիրքերից, բայց ոչ Բաքվի խորհրդի էսէռական խմբակցության կարծիքը հաշվի առնելով՝ նա «բոլշևիկների ելույթը որակում է սադրիչ». նույնացնելով նրանց վարքագիծն ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Բաքվում՝ նա եզրակացնում է, որ զոհերի մեծ մասը կազմում են բանվորներն ու մահմեդականները[417]:

Մեկ անգամ ևս դրսևորվում է վրաց-թաթարական դաշինքը՝ անկախ կուսակցական և ազգային պատկանելիությունից: Հարցի նրբությունն այն էր, որ անդրկովկասյան դեմոկրատիայի հակաբոլշևիկյան դիրքորոշումը տվյալ դեպքում հարվածում էր Բաքվի ու այդպիսով նաև երկրամասում առկա հայկական շահերին: Մյուս կողմից, շեշտելով միայն մահմեդական «անմեղ» զոհերի փաստը՝ Սեյմի վրացի անդամն ինքն էր սադրում և բացահայտորեն հանդես գալիս մուսավաթական-թաթարական պատգամավորների և այդպես նաև՝ պանթուրքիզմի օգտին:

Ելնելով նիստի հարցադրման տրամաբանությունից՝ Բաքվի վրա արշավող ընդհանուր զորախմբի հրամանատար է նշանակվել թուրքական բանակի գնդապետ Զեքի բեյը: Հայկական ինքնապաշտպանության անվանի մասնակից Եղիշե Պահլավունու կարծիքով՝ արշավանքը գլխավորել է ոչ թե Լևան Մաղալովը (Մաղալաշվիլի), ինչպես ընդունված է նաև պատմագրության մեջ[*], այլ թուրք հրամանատարը[418]:

---

[416] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 35-36:
[417] Տե՛ս Закавказский сейм. заседание девятнадцатое, 24 марта, с. 4:
[*] Տե՛ս **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թ., էջ 168:
[418] Տե՛ս **Պահլաւունի Ե.**, Յուշամատեան, Երեւան, 2006, էջ 99:

Ընդհանուր թշնամու՝ Բաքվի իշխանության և հայկական մարտական ուժերի դեմ միավորվում էին երկրամասի բոլոր հնարավոր պանթուրքիստական ուժերը: Ադրբեջանցի հեղինակ Մ. Իսքենդերովը վկայում է, որ «ադրբեջանական բեկերի ու խաների թիկունքին կանգնած էին թուրքերը և գերմանացիները»[419]:

Այդ է հաստատում ավելի ուշ 1918 թ. ապրիլի 27-ին Կ. Պոլսում կնքված թուրք-գերմանական գաղտնի պայմանագիրը, որը կոչված էր Անդրկովկասը բաժանել գերմանական և թուրքական գոտիների: Ըստ այդմ՝ Թուրքիային էին անցնելու Անդրկովկասում, փաստորեն, հայկական բոլոր տարածքները, ինչպես նաև Կարս–Ալեքսանդրապոլ–Ջուլֆա երկաթուղին: Անդրկովկասի մնացած տարածքները դառնում էին Գերմանիայի ազդեցության գոտի: Դրան հաջորդեց թուրք-մուսավաթական գաղտնի պայմանագրի ստորագրումը, որով բացվում էր Թուրքիայի ճանապարհը դեպի ապագա Ադրբեջան ու Բաքու[420]:

Կովկասյան հարցի շուրջ գերմանո-թուրքական հակամարտությունը սպառնում էր վերածվել իսկական պատերազմի «զենքի եղբայրների» միջև, սակայն գերմանացիները չգնացին այդ քայլին. նրանք որոշեցին կարգավորել հակամարտությունը: Այդ նպատակով Ֆոն Կրեսս Ֆոն Կրեսսենշտեյնը 1918 թ. հունիսի 17-ին Ստամբուլում համաձայնության եկավ գերմանական գլխավոր հրամանատրության հետ՝ Սանահին–Ղարաքիլիսա հատվածում երկու կողմի երկաթուղային պահակազորի միջև դեմարկացիոն (սահմանաբաժանման) հաստատման վերաբերյալ: Այդ ճանապարհով գերմանական դիվանագետները դուրս էին բերում Բաքուն թուրքական օկուպացիայի գոտուց[421]: Անգամ այս քայլից հետո փոխադարձ անվստահությունը դեռևս մնում էր, մանավանդ, որ Ֆոն Կրեսսենշտեյնի ու թուրքական ներկայացուցիչների միջև պահպանվում էին լարված հարաբերու-

---

[419] Տե՛ս **Искендеров М. С.**, նշվ. աշխ., էջ 203, նաև՝ **Սիմոնյան Հ.**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 299-300:
[420] Տե՛ս **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 9:
[421] Տե՛ս **Авилов З.,** Независимость Грузии в международной политике, 1918-1921 гг., Воспоминания, очерки, Париж, 1924, էջ 113:

թյունները: Միաժամանակ, չնայած առկա տարաձայնություններին, գերմանո-թուրքական խմբավորման ներսում տիրում էր լիակատար փոխըմբռնում, երբ խոսքը վերաբերում էր Անդրկովկասում, մասնավորապես Բաքվում խորհրդային իշխանության դեմ պայքարին: Գերմանիայի կողմից Վրաստանում վերասկողության սահմանումը և Բաքվի գրավման նպատակը Էնվեր փաշայի ու նրա շրջապատի մոտ առաջ էին բերում ծայրահեղ լարում: Էնվերը որոշում է գործել ինքնուրույն, արագ, որպեսզի կանխի նաև գերմանացիների ծրագրերը: Թուրքական գլխավոր հրամանատարությունը նպատակադրվել էր 1918 թ. մայիսի վերջին նախաձեռնել արշավանք Բաքվի վրա: Այդ նպատակով ձևավորվել էին նոր զորախմբեր ինչպես Թավրիզում, այնպես էլ Ջուլֆայում, Ելիզավետպոլում և Բաթումում: Բացի Բաքվից, նախատեսվում էր գրավել նաև Կասպից ծովի առափնյա շրջանը՝ Աստարայից մինչև Պետրովսկ (Մախաչկալա – Վ. Մ.), այսինքն՝ Դաղստանի մի մասը ու Վլադեկավկազը: Ինչպես 1918 թ. մայիսի 25-ին նշում էր Ֆոն Լոսսովը, «թուրքերի հայացքն ուղղված է բացառապես Բաքվին ու Վլադիկավկազին»[422]: Պաշտոնապես Բաքվի և Վլադիկավկազի վրա արշավանքը հիմնավորվում էր անատոլիական թուրքերի բարոյական պարտքի զգացումով՝ «օգնել մեզ հետ հարևանությամբ ապրող եղբայրներին», բացի այդ՝ «ընդհանուր կրոնի և ռասսայի»: Էնվեր փաշան, հենվելով բոլշևիզմի տարածման և Անդրկովկասում մահմեդականների հանդեպ «հայկական վայրագությունների» սպառնալիքի վրա, գերմանական գլխավոր հրամանատարության հայտարարում էր, որ Թուրքիան «չի կարող այսուհետև անհաղորդ հանդիսատես մնալ»[423]:

Բաքվի եռօրյա մարտերից հետո անմիջապես այստեղ ուղղվեցին նաև մուսավաթականների հետ ակտիվ համագործակցող Դաղստանի լեռնականների զորամասերը՝ իմամ Ն. Գոցինսկու գլխավորությամբ, որոնք ապրիլի 3-ին հասան Բալաջարի: Վայրի դիվիզիայի» դաղստանյան մասնաճյուղ-հեծյալ գնդի (գնդապետ

---

[422] Տե՛ս **Лудшувейт Е. Ф.,** նշվ. աշխ., էջ 207-208:
[423] Տե՛ս նույն տեղում:

Տարկովսկու հրամանատարությամբ) ռազմական ոգին բարձրացնելու նպատակով, Ն. Գոցինսկին Ղազավաթ (սրբազան պատերազմ) հայտարարեց[424]: Պետրովսկից ուղարկված հեռագրում նա սպառնում էր պատժել հայերին[425]:

Բնութագրական է, որ Բաքվի վրա նոր արշավանքի նախօրեին, թաթար մեծահարուստներ Թաղիևից ու Ասադուլաևից նա ստացավ նամակ՝ օգնության խնդրանքով[426]:

Ն. Գոցինսկու ավազակախմբերը՝ գնդապետ Ջաֆարովի հրամանատարությամբ, հասան Խուրդալան կայարան՝ Բաքվից ընդամենը 10 կիլոմետր հեռավորության վրա: Միաժամանակ թաթար-մահմեդական ուժերը սկսեցին կուտակվել Բաքվից հարավ՝ Սալյանում, որտեղ և ժամանեցին «Վայրի դիվիզիայի»՝ Լենքորանում տեղակայված զորամասերը: Միաժամանակ 3 հազար մուսավաթականները՝ կալվածատեր Ի.-խան Ջիաթխանովի ղեկավարությամբ, հարձակվեցին Շամախու վրա, ու, փաստորեն, «նավթի քաղաքը» հայտնվեց շրջափակման մեջ:

Ե. Տոկարժևսկին Լ. Մաղալովի, Ն. Գոցինսկու և մյուսների հարձակողական գործողությունները չէր դիտարկում որպես մեկուսացված ու առանձին քայլեր: Նա դրանց մեջ տեսնում էր Բաքվի իշխանության դեմ իրականացվող գործողությունների միասնական, կազմակերպված շղթա, որի վերջնական գերնպատակը թուրք-գերմանական նվաճողների կողմից Բաքվի գրավման նախապատրաստումն էր[427]:

Հայտնի էր, որ Ն. Գոցինսկին մինչև ցարիզմի անկումը, սերտ կապեր ուներ Թուրքիայի իշխանությունների, երիտթուրքերի հետ և համարվում էր Դաղստանում նրանց գործակալը: Թուրքիայի հովանավորությամբ նա ձգտում էր իշխանության հասնել Դաղստանում, իսկ Էնվեր փաշան նպատակ էր դրել օգտագործելու Ն. Գոցինսկուն

---

[424] Տե՛ս **Шаумян Сур.**, նշվ. աշխ., էջ 16:
[425] Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 174:
[426] Տե՛ս **Разгон И.**, **Мельчин А.**, Борьба за власть Советов в Дагестане (1917-1921 гг.), Махачкала, 1945, с. 26, ըստ՝ **Токаржевский Е. А.**, նշվ. աշխ., էջ 55:
[427] Տե՛ս **Токаржевский Е. А.**, նշվ. աշխ., էջ 56:

ու նաև մեկ այլ հոգևորական-կալվածատեր Տարկովսկուն՝ Դաղստանը Թուրքիայի ազդեցության տակ ներքաշելու, այլ խոսքով՝ պանթուրքիզմ իրականացնելու համար:

Բաքվի հեղափոխական պաշտպանության կոմիտեն ուղղակիորեն նշում էր, թե «Գոցինսկու բանդաները գործում են ֆեոդալական Թուրքիայի ցուցումով»[428]: Ն. Գոցինսկու շտաբի հրամանատարական կազմում կային «Իթթիհադ վե թերաքքը» (Միություն և առաջադիմություն – Վ. Մ.) կուսակցության ԿԿ-ի անդամ, Օսմանյան կայսրության զինվորական նախարար և զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Իսմայիլ Էնվեր փաշայի կողմից ուղարկված ոչ քիչ թվով թուրք սպաներ: Ե. Գոցինսկին սերտ կապեր էր հաստատել նաև բոլշևիկյան ճնշման տակ Վլադիկավկազից նահանջած և Սամուրում կենտրոնացած սպիտակ-գվարդիական կորպուսի գեներալների հետ: Այն գլխավորում էր գեներալ-մայոր Ֆեյզի Միրզա Ղաջարը[429]:

1918 թ. ապրիլի 10-ին Ն. Գոցինսկու դաղստանյան երկու հեծյալ գնդերը և 500 հոգուց բաղկացած զորաջոկատը գրավեցին Պետրովսկը (Մախաչկալա): Մեկ շաբաթ տևող թալանն ուղեկցվում էր նաև հայ ազգաբնակչության ջարդերով: Պետրովսկի գրավումով Բաքուն կտրվեց Հյուսիսային Կովկասի հացառատ շրջաններից: Նա գեներալ-մայոր Ք. Թալիշինսկու հրամանատարությամբ ապրիլի սկզբներին Պետրովսկից և Թեմիր-Խան-Շուրայից (Բույնակսկ) Բաքվի խորհրդի դեմ ուղարկեց նախկին «Վայրի դիվիզիայի» կազմից ձևավորված Դաղստանի հեծյալ գունդը: Ճանապարհին միացան են նաև Ղոբացի թաթար խոշոր պանթուրքիստ կալվածատերեր Ալի-բեկ Ջիզիկսկիի և Համդուլլա Էֆենդի Էֆենդիզադեի ջոկատները և համատեղ շարունակեցին արշավանքը[430]:

Ն. Գոցինսկու ուժերը հաշվվում էին 1500 հոգի, մի քանի հրանոթներ: Ապրիլի 8-10-ը Խուրդալանի մոտ տեղի ունեցան ահեղ մարտեր, Ն. Գոցինսկին պարտություն կրեց, երկաթուղին մինչև Յալամա կայարանը անցավ խորհրդային բանակի ուժերին, և այդպիսով հյու-

---

[428] Տե՛ս **Токаржевский Е. А.**, նշվ. աշխ., էջ 56:
[429] **Ստեփանյան Գ.**, Համազասպ Սրվանձտյանց, Երևան, 2016, էջ 440-441:
[430] Տե՛ս նույն տեղում:

սիսից Բաքվին սպառնացող վտանգը կանխվեց: Դաղստանցիների մնացորդները Սումգայիթում խուճապահար լցվեցին վագոններն ու վերադարձան Պետրովսկ[431]:

Ուշագրավ է, որ ապրիլի 7-ին նրան ընդառաջ եկավ Բաքվի մահմեդականության պատվիրակությունը և խնդրեց արյունահեղությունից խուսափելու համար հեռանալ, սակայն լեռնականները հրետանային կրակ բացեցին Բաքվի խորհրդի զրահամեքենայի վրա[432]: Բաքվի պատվիրակության «խաղաղասիրությունը», ինչն առավելապես վախի դրսևորում էր, պետք է բացատրել հենց հայկական զինուժի կազմակերպվածությամբ և արդեն տարած հաղթանակով:

«Գայլի դարպասների» (Գայլի դրունք), Խուրդալան և Սումգայիթ կայարանների ուղղությամբ շարժվեցին Թ. Ամիրյանի, Ս. Ղազարյանի, Ա. Ղահրամանյանի (300 զինվոր) Կարմիր գվարդիայի ջոկատները[433]: Մուսավաթական պատգամավորները Սեյմից պահանջեցին ռազմական աջակցություն:

Ապրիլի 2-ի նիստում Գանձակի կալվածատեր Ա. Սաֆիքյուրդսկին անհապաղ միջոցներ պահանջեց՝ Բաքվի իշխանությունը վերացնելու համար: Որոշվեց գրավել Բաքուն և այնտեղ վերականգնել Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանությունը: Միացյալ թուրքվրացական արշավանքի համար Սեյմն առանձնացրեց 5 հազար ռուբլի, հատուկ զորամասեր, 2 աէրոպլան, զրահագնացք, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Թալիշխանովի (Թալիշինսկի) դիվիզիան և Սեյմի զրահագնացքը՝ Լ. Մաղալովի հրամանատարությամբ, Եվլախ–Քյուրդամիր երկաթուղով ուղղվեցին Բաքու[434]: Նրանց տրամադրության տակ էր շուրջ 5000 հոգուց բաղկացած «Վայրի դիվիզիան» և վրացական հեծելազորը (նաև վրացի 800 զինվոր ու թուրքական 2 գունդ)[435]:

---

[431] Տե՛ս **Шаумян Сур.**, նշվ. աշխ., էջ 17:
[432] Տե՛ս **Искендеров М. С.**, նշվ. աշխ., էջ 204:
[433] Տե՛ս **Шаумян Сур.**, նշվ. աշխ., էջ 17:
[434] Տե՛ս **Искендеров М. С.**, նշվ. աշխ., էջ 204:
[435] Տե՛ս նույն տեղում:

Մարտի վերջին այդ զորամասերը՝ կադետ Իսմայիլ Խան Ջիաթ-խանովի գլխավորությամբ, Գանձակից հասան Հաջի Կաբուլ[436]: Սեյ-մի մահմեդական-վրացական միացյալ զինված ուժերին դիմակայե-լու նպատակով Բաքվի հայոց ազգային խորհրդին կից ձևավորվեց պաշտպանության շտաբ՝ փոխգնդապետ Հարությունովի գլխավո-րությամբ: Պաշտպանության պլանի հեղինակները կրկին գեներալ-ներ Հ. Բաղրամյանն ու Հ. Բագրատունին էին: Թշնամուն դիմադրու-թյուն ցույց տվեցին Բաքվում հավաքագրված հայկական ջոկատնե-րը՝ մոտ 3000 հոգի, որոնց թվում էին Համազասպի 2-րդ կամավորա-կան գումարտակը և շտաբս-կապիտան Ս. Մուսայելյանի ղեկավա-րած թիվ 2 զրահագնացքը:

Գ. Ղորղանյանի վկայությամբ՝ Հաջիկաբուլի ուղղությամբ ուժե-րի ոչ բավարար քանակի պատճառով ուղարկվեցին միայն Համա-զասպի կամավորները՝ շուրջ 500 զինվոր, 2 գնդացիր, մեկ թնդանոթ և «զրահապատ կառաշար» (զրահագնացք – Վ. Մ.): Իջնելով Դուվան-նի կայարանը և անցնելով հարձակման՝ հայ զինվորները 8-ժամյա ճակատամարտից հետո գրավեցին հակառակորդի դիրքերը՝ Հաջի-կաբուլը ետ գրավելու նպատակով: Հայերն ամրացան այստեղ, որը Բաքվի պաշտպանության գլխավոր հենակետերից մեկն էր: Այս ընդ-հարումների ընթացքում հայկական կողմը կորցրեց ընդամենը 7 հոգի և 22 վիրավոր, թշնամուց խլվեցին մի քանի տասնյակ շոգեքարշեր, հարյուրավոր վագոններ:

Գ. Ղորղանյանը վստահ էր, որ Խաչմաս և Հաջիկաբուլ կայա-բանների ուղղությամբ (առաջինը՝ Բաքվից 160, երկրորդը՝ 100 կիլո-մետր հեռավորության վրա) իրականացված այս հաջող գործողու-թյունները վերացրին Բաքվին սպառնացող անմիջական վտանգը: Այս հաղթանակները նկատելիորեն ամրապնդեցին Բաքվի խորհրդի ուժն ու ազդեցությունը: Դրանից հետո էր, որ Կասպիական նավա-տորմն անցավ բոլշևիկների կողմը[437]:

---

[436] Տե՛ս **Байков Б.**, նշվ. աշխ., էջ 127:
[437] Տե՛ս **Ղորղանեան Գ.**, նշվ. աշխ., էջ 113-114:

Ապրիլի 7-ին Թալիշինսկու զորախումբը մոտեցավ Խուրդալան կայարանին, սակայն գնդապետ Նազարյանի ջոկատը, նրանց ջախջախելով, քշեց լեռները և առաջանալով գրավեց անգամ Գուդերմես (Վլադիկավկազի երկաթուղու վրա) կայարանը[438]:

Ապրիլի 10-20-ի ընթացքում մարտերն ընթանում էին Հաջիկաբուլի ուղղությամբ: Ալյաթիում դիրքավորված հակամահմեդական խորհրդային ուժերը հակահարված տվեցին թաթար-մենշևիկյան զորամասերին (2000 զինվոր, 4 հրանոթ, զրահագնացք) և ապրիլի 20-ին, չորսժամյա մարտերից հետո գրավելով Հաջիկաբուլը, Լ. Մաղալովին ետ շպրտեցին դեպի Քյուրդամիր[439]: Ապրիլի 1-8-ը տևած կատաղի մարտերն ավարտվեցին հայկական զորախմբի հաղթանակով[440]:

Հաջողությունը ոգևորում էր հայկական ուժերին և Ռոստոմը, Ա. Գյուլխանդանյանը, Մ. Շաթիրյանը Բաքվի հարավային թաղամասի պաշտպանության ղեկավար Ե. Պահլավունիին (մերժելով Համազասպի թեկնածությունը) ու Լ. Զառաֆյանին հանձնարարում են 1500 հոգուց բաղկացած ընտիր գնդով ճեղքել ճակատը և հասնել Ղարաբաղ: Ենթադրվում էր, որ նրանք տեղում պետք է վարեին ռազմավարչական իշխանությունը: Նաև այդ նպատակով Ազգային խորհուրդը որոշեց միավորել հայկական զորամասերը և ենթարկել միասնական հրամանատարության. դրա համար բանակցություններ սկսվեցին ՌՀԿ-ի հետ: Այստեղ դրսևորվեց փոխադարձ անվստահությունը՝ Հայկական ազգային մարմնի ու Բաքվի խորհրդային իշխանության միջև: Ի պատասխան Հայոց ազգային խորհրդի դիմումի՝ ապրիլի 8-ին ՌՀԿ ազգային զորամասերն ու ազգային խորհուրդը լուծարված հայտարարեց[441]: Վերջինս մերժեց ենթարկվել այդ կարգադրությանը, բայց ստիպված տեղի տվեց: Ինչո՞ւ. նաև նրա համար, որ ապրիլի 9-ին Բաքվի ՀՅԴ բյուրո այցելեց Ստ. Շահումյանը և հիմ-

---

[438] Տե՛ս **Ղորղանեան Գ.,** նշվ. աշխ., էջ 113:
[439] Տե՛ս Бюллетень Комитета Революционной обороны г. Баку и его районов, № 5 от 8 апреля, 1918 г., ըստ՝ **Токаржевский Е. А.**, նշվ. աշխ., էջ 56:
[440] Տե՛ս **Ավետիսյան Հ.,** նշվ. աշխ., էջ 169:
[441] Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 175-176:

նավորելով դարաբաղյան ծրագրի անհուսալիությունը՝ մուսավաթականների խռովությունը ճնշելու, ինչպես նաև Նուրի և Մյուրսել փաշաների արշավանքը կանխելու համար առաջարկեց է ուժեղացված զորաբաժին ուղարկել Շամախի (500 ռուս զինվոր, 120 հեծյալ՝ Ամիրյանի գլխավորությամբ): Ապրիլի 10-ին համաձայնության կայացմամբ ոգեշնչված Ստ. Շահումյանը կարևոր լուրը հայտնեց է Գ. Ղորղանյանին և Ա. Ջափարիձեին[442]: Բաքվի խորհուրդն այդ գավառների լիազոր-հրամանատար նշանակեց Ե. Պահլավունուն: Դեպքերի հաջող ընթացքի դեպքում նա իրականացնելու էր նաև Ռոստոմի դարաբաղյան ծրագիրը:

Ապրիլի 13-ին Բաքվի պաշտպանության հեղափոխական կոմիտեն և Ազգային խորհուրդը համատեղ նիստում վճռեցին հայկական զորամասերը վերակազմավորել և ներառել ձևավորվող Կարմիր բանակի զորակազմի մեջ: Հաջորդ օրը՝ ապրիլի 14-ին, այդ մարմինների միջև (Ստ. Շահումյան, Գ. Ղորղանյան, Ա. Գյուլխանդանյան, Ի. Տեր-Օհանյան և Ս. Տեր-Ղազարյան) ստորագրվեց համաձայնություն[443], որով «1. Հայկական 2-րդ գունդը և Համազասպի գումարտակը կազմալուծվեցին. նրանց մի մասը մտավ Համազասպի Անդրկովկասյան հրաձգային բրիգադի կազմի մեջ, իսկ մնացածը՝ Խորհրդի կարմիր գումարտակների մեջ. 2. Համազասպի գումարտակները վերակազմավորվում են՝ ամբողջովին ենթարկվելով Խորհրդի իշխանությանը և մտնում են Կարմիր Բանակի կազմի մեջ «16-րդ և 17-րդ գումարտակներ» անվան տակ, 3. 16-րդ և 17-րդ գումարտակների գլխավոր հրամանատար է նշանակվում Համազասպը, 16-րդ վաշտի հրամանատար՝ Սերգո Մանուչարյանը, 17-րդ վաշտի հրամանատար՝ Չիլինգարյանը: 4. Համազասպի գումարտակները նպատակ ունեին մոտիկ ապագայում գործողություններ սկսելու արևմտյան ուղղությամբ»[444], այսինքն՝ դեպի Գանձակ–Երևան: Ինչ-

---

[442] Տե՛ս **Պահլաւունի Ե.**, նշվ. աշխ., էջ 99:

[443] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14: Փոխգնդապետ Հարությունովը փաստում էր, որ նիստի արձանագրության պատճեն՝ բաղկացած 4 կետից, գտնվում էր իր մոտ:

[444] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14 նաև՝ **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 175, նաև՝ **Шаумян Сур.**, Бакинская Коммуна, էջ 86, նաև՝ **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 716:

պես նշում է Սիմոն Վրացյանը, «հայկական զորամասերն անցան բոլշևիկների ձեռքը»: Նրանց թիվը հասնում էր 10000-12000-ի՝ 50-ի չափ թնդանոթներով: Նրանց մեջ էին հաշվվում և Հ. Յ. Դաշնակցության ու սոց.-հեղափոխականների մարտական խմբերը, որոնք, փաստորեն, գտնվում էին այդ կուսակցությունների ղեկավար մարմինների ձեռքին: Դաշնակցական զորամասերը բաղկացած էին 600-700 ընտիր մարտիկներից՝ Գ. Բալայանի ընդհանուր հրամանատարությամբ[445]: «Միայն դրոշակն էր բոլշևիկյան,– գրում էր փոխգնդապետ Հարությունովը,– իրականում զինվորների 95 տոկոսը և սպաների գրեթե 100 տոկոսը հայեր էին: Եվ քանի որ մեր նպատակները համընկնում էին բոլշևիկների հետ, ընդդեմ ընդհանուր թշնամու, մենք բոլորս հաճույքով գնացինք նրանց մոտ ծառայության: Նրանք մեզ ապահովեցին հրացաններով, գնդացիրներով, զենքի, զինամթերքի բոլոր տեսակներով, որ ստանում էին Աստրախանից»[446]: Հայկական երեք վաշտերը մտան մեկ կորպուսի կազմի մեջ, Համազասպի 3-րդ վաշտն ուներ 6000 զինվոր, փոխգնդապետ Բեկ Զուրաբովի 1-ին վաշտը՝ 4000, գնդապետ Հարությունովի 4-րդը՝ 5000 զինվոր, ընդամենը՝ 15.000: Կորպուսի ընդհանուր հրամանատարը գնդապետ Ն. Կազարովն (Ղազարյան) էր, շտաբի պետը՝ գնդապետ Ավետիսովը[447]: Փոխգնդապետ Հարությունովի վկայությամբ՝ հայկական զորամասեր կային նաև Եվլախից հարավ, և այդ կապակցությամբ Ռոստոմը Ստ. Շահումյանին առաջարկում էր Գանձակի ուղղությամբ ձևավորել մի լուրջ հայկական զորամաս[448]:

Բաքվի խորհրդային կառավարությունը համաձայնում է՝ գտնելով, որ «անհրաժեշտ է ջախջախել հակահեղափոխական թուրքերին, որոնց էմիսարները Ելիզավետպոլում կրկին ոտքի են հանում թաթարներին ու շարժվում դեպի Բաքու: Այժմ նրանց շարքերում կային ռուսներ, վրացի սպաներ և վրացական առանձին զորամա-

[445] Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 175:
[446] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14-14ա:
[447] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 23:
[448] Տե՛ս նույն տեղում, թ. 14:

սեր[449]: Այդ մասին էր վկայում ավելի ուշ գերեվարվածների էթնիկ կազմը:

Զորախումբը պետք է շարժվեր դեպի Գանձակ Զատկի երկրորդ օրը, սակայն այդ ծրագիրը չիրականացավ. Դերբենդի շրջանում լեզգիների ու չեչենների հետ տեղի ունեցած բախումների պատճառով զորամասը մեծ կորուստներ կրեց և ուղարկվեց Պետրովսկ[450]:

Հետագայում Կորպուսը վերանվանվեց Կովկասյան բանակի, որը բաժանված էր երկու ջոկատների՝ ձախ և աջ: Ձախը գլխավորում էր փոխգնդապետ Հարությունովը, աջը՝ գնդապետ Կազարովը: Սկզբում բանակի հրամանատարը գնդապետ Բիչերախովն էր, հետագայում՝ գնդապետ Ավետիսովը, ավելի ուշ՝ հոկտեմբերին՝ Բաքու քաղաքի և շրջանի զորքերի ու նավատորմի հրամանատար գեներալ Դոկուչաևը[451]:

Այս ամենի հետ մեկտեղ Ս. Վրացյանի գնահատականն այն է, որ «մարտի հաջողություններից արբեցած՝ բոլշևիկներն արդեն այնքան էին երես առել, որ մտածում էին Ազգային խորհուրդն ու ՀՀ Դաշնակցությունն էլ մեջտեղից հանելու մասին»[452]: Հիմնականում այդպես էլ կա. խնդիրը պարզեցնում էր դեպքերի անմիջական մասնակից փոխգնդապետ Հարությունովի զեկույցը՝ ըստ «Համազասպի անդրկովկասյան հրաձգային բրիգադի պատմությունը» արխիվային նյութի:

Նրա վկայությամբ՝ Բաքվի հայոց ազգային խորհուրդը տատանվում էր հրավիրված նիստում: Հատկապես դժգոհում էր գեներալ Հ. Բաղրամովը՝ հիմնավորելով, որ «թույլը չի կարող ենթարկել ուժեղին», որովհետև, ըստ նրա, «եթե ուզենք մեկ օրում կարող ենք վերջ տալ բոլշևիկներին՝ Բաքվի խորհրդի գլխավորությամբ»[453]: Այդ մասին են խոսում նաև Ստ. Շահումյանի գրառումները, որոնց մենք ստորև կանդրադառնանք: Սակայն այստեղ դարձյալ առկա է հակա-

---

[449] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14:
[450] Տե՛ս նույն տեղում, թ. 104-105:
[451] Տե՛ս նույն տեղում, թ. 56-61:
[452] Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 174:
[453] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14:

սություն, որի մեջ հենց Ս. Վրացյանն է հայտնվում: Խոսքը դաշնակցական զորամասերը Բաքվի խորհրդին ենթարկեցնելու մասին է, որտեղ Ստ. Շահումյանի դիրքորոշումը միանգամայն ուղիղ էր և բաց, մյուս կողմից՝ համաձայնագրի բովանդակությունը, այն է՝ զորամասերի հրամանատարների պաշտոնում դաշնակցականներ Համազասպի, Ս. Մանուչարյանի և մյուսների պահպանումը և հատկապես դեպի Երևան ու Արևմտյան Հայաստան միասնաբար առաջանալու համատեղ պլանը վկայում են, որ ռազմավարությունն ազգային-հայկական էր: Խնդիրը ղեկավարման առաջնայնության հարցի պնդումն էր, ինչը երկրամասի իշխանության գրավման համատեքստում բոլշևիկ հայ գործիչներին թույլ չէր տալիս զիջել, մանավանդ, որ նրանց ուժերն այս ժամանակահատվածում գերակշռում էին հայկական ազգային ուժերին: Այդ է վկայում և Բաքվի ազգային խորհուրդը, որը լուծարման մասին որոշման առթիվ նկատում էր, որ «Հայոց ազգային խորհրդի Բաքվի բաժանմունքը կյանքի էր կոչվել հիմնականում ռազմաճակատի պաշտպանության գործի համար: Այն չի հանդիսանում իշխանության մարմին և չունի նման հավակնություններ»[454]: Անհրաժեշտ է ընդգծել նաև այն հանգամանքը, որ ապրիլի 13-ի համաձայնագիրը ստորագրել էին բացառապես հայ գործիչներ:

Բաքվի Կոմունայի ձևավորումից հետո Ս. Վրացյանն ինքն է խոստովանում, որ «անուղղակի կերպով Հայոց ազգային խորհուրդը շարունակում է ազդեցություն ունենալ գործերի և հայկական զորամասերի վրա»: Առհասարակ, զորքի կազմն ու ղեկավարությունը հիմնական փոփոխության չենթարկվեց. զինվորական գործավար և ընդհանուր հրամանատարն էր բոլշևիկ Ղորղանյանը, նրա սպայակույտի պետ՝ գնդ. Ավետիսյանը, հայկական զորամասերի պետ՝ Համազասպը, ճակատի հրամանատար՝ գնդ. Ն. Կազարովը, բանակի մատակարարման մասի վարիչ՝ Մ. Տեր-Պողոսյանը և այլն»[455]:

Արդյունքում համաձայնությունը կայանում է, և ապրիլի 15-ին հիշյալ ուժերը ժամանում են Շամախի: Ապրիլի 18-ին սկսվում են

---

[454] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918 -1920 թթ., էջ 36:
[455] Տե՛ս **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 175:

ռազմական գործողությունները, այդ թվում՝ Աղսու գետակի երկայնքով ձգվող երկաթուղու Քյուրդամիր, Հաջիկաբուլ կայարանների պաշտպանությունը: Նույն օրը Բաքվի ՀՅԴ կոմիտեի նախագահ Ա. Գյուլխանդանյանը Սեյմի նախագահին և ՀՅԴ Թիֆլիսի բյուրոյին հեռագրում էր Բաքվի ուղղությամբ Սեյմին ենթակա մահմեդական զորամասերի անհապաղ հետ կանչելու մասին: Հատուկ ընդգծվում էր այն հանգամանքը, որ դրանք Շամախիի գավառում ավերել են բոլոր հայկական ու ռուսական գյուղերը, որոնց 30.000-ի հասնող բնակչությունը շարժվում էր դեպի Բաքու[456]:

Պարտություն կրելով Բաքվում՝ Մուսավաթը կոտորածներ, խժդժություններ կազմակերպելու նպատակով սկսեց գործել գավառներում: 1918 թ. գարնանը թաթար-մահմեդականների իրականացրած կողոպուտից, ավերածություններից մեծապես տուժեցին Ղուբայի գավառի հայկական Խաչմասը, ռուսական Միխայլովկա, Ելենովկա, Ալեքսանդրովկա, Ալեքսեևկա, Տիրիվանովկա, Պավլովկա գյուղերը[457]:

Թաթարական ավազակախմբերը, Ղուբայի գավառից բացի, ռուս բնակչության կոտորածներ կազմակերպեցին նաև Ջավաթի և Լենքորանի գավառներում՝ կողոպտելով ավերվելով 25 գյուղեր:

Շամախի և Ղուբա գավառների հայերի, ռուսների և հրեաների կոտորածների փաստին անդրադարձել են նաև ռուս հեղինակները: Ա. Բեզուգոլնին գրում էր. «Շամախիի և Ղուբայի գավառներում ռուսների, հայերի և լեռնային հրեաների զանգվածային կոտորածներ են տեղի ունեցել 1918 թ. գարնանը»[458]: Ապրիլի 4-7-ը իրականացվեցին Դերբենդի հայ բնակչության, Դերբենտ–Պետրովսկ–Բաքու երկաթուղային ճանապարհի հայ և այլազգի ուղևորների թալան և կոտորածներ, ապրիլ-մայիսին Ղուբայի հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացվեցին վայրագություններ[459]:

---

[456] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918 -1920 թթ., էջ 33:
[457] Տե՛ս «Արև», Բաքու, 1918, 13 ապրիլի, թիվ 76:
[458] **Безугольный А.,** Генерал Бичерахов и его Кавказская армия (1917-1919), Москва, 2011, с. 51, ըստ՝ **Ստեփանյան Գ.,** Համազասպ Սրվանձտյանց, էջ 464:
[459] Հանգամանորեն տե՛ս **Ստեփանյան Գ.,** նշվ. աշխ., էջ 468-493:

Ապրիլի 27-ին տեղի ունեցավ մեծ ճակատամարտ, մի կողմից, հայկական և մյուս կողմից՝ Քյուրդամիր արշավող Նազմի բեյի ու Լ. Մաղալովի զորամասերի միջև: Վերջինիս ջոկատը (800 հոգի) գլխովին ջախջախվեց, և հակառակորդը փախավ Գանձակ: Ավելի ուշ՝ մայիսի 28-ին, մարտը կրկնվեց, հակառակորդը պարտվեց, իսկ Լ. Մաղալովը վերջնականապես քաշվեց Վրաստան: Հետագա ռազմական գործողություններին մասնակցում էին նաև Ռոստոմը, Համազասպը, Թ. Ամիրյանը*, Ն. Ղազարյանը, Պավլի բեկը (Նիկոլ Դումանի եղբայրը), Տեր-Զաքարը, Մկրտիչը և շատ ուրիշներ[460]: Ռոստոմի՝ համաճարակից ապաքինվելու առթիվ կազմակերպված «ճաշկերույթով մենք վերջացրինք մեր լավ սկսած գործը Շամախիի ընդարձակ գավառում և մյուս շրջաններում, սակայն տխուր վախճանականով փակեցինք, շնորհիվ նախանձի, պառակտման, դավաղրության և զինվորական հեղինակության, ընդհանուր հրամանատարի չգոյության: Երևակայում եմ՝ ինչեր պիտի կատարվեին, եթե Ռոստոմն այդ շրջանում լիներ»[461]:

Ապրիլի 12-ին (25) Բաքվում կազմավորվեց Ժողկոմխորհը՝ Բաքվի կոմունան՝ Ստ. Շահումյանի նախագահությամբ: «Բոլշևիկները ամրապնդեցին իրենց իշխանությունը, երբ ակնհայտ դարձավ կոշտ ու ամուր պետական մարմնի անհրաժեշտությունը»[462],– գրում էր գեներալ Հ. Բագրատունին: Մուսավաթը և մահմեդական կազմակերպությունները, իհարկե, «բոլոր մեղքերի մեջ» մեղադրեցին հայերին՝ Բաքվի իրենց սանձազերծած խռովությունը որակելով «հայ դաշնակցականների գործ», իբրև դաշնակցական ներկայացնելով բոլշևիկներ Ս. Շահումյանին, Գ. Ղորղանյանին, Ա. Ավագյանին, էսէռներ Ս. Սահակյանին, Լ. Աթաբեկյանին: Ավելին, բոլշևիզմը Անդրկովկասում ներկայացվում էր որպես «հայկական երևույթ» և հակաթուրքական շարժում: Այս հարցում թաթար-մահմեդական կող-

---

* ***Թադևոս Ամիրյանը,*** որը գրեթե բոլոր գործիչների, այդ թվում՝ և Ստ. Շահումյանի հետ կոնֆլիկտներ էր ունենում, Ռոստոմի կողմից ետ ուղարկվեց Բաքու: Հիշարժան է, որ այս օրերին Ե. Պահլավունին Ռոստոմին անձամբ բուժեց համաճարակից:

[460] Տե՛ս **Պահլաւունի Ե.**, նշվ. աշխ., էջ 99-158:

[461] Նույն տեղում, էջ 141:

[462] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 105:

մը չէր սխալվում, ու, ցավոք, պետք է նշել, որ այդ հանգամանքը թեկուզև ժամանակավորապես, գրեթե չօգտագործվեց Անդրկովկասի կոմիսարիատի և Սեյմի հայկական խմբակցությունների, Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի կողմից: Ոչ միայն աջակցության բացակայությունը, այլև անդրկովկասյան իշխանությունների կազմում Բաքվի խորհրդային իշխանության դեմ իրականացվող նրանց նեղ ու ոչ հեռատես քաղաքականությունը՝ անկախ Անդրկովկասի գաղափարի համատեքստում, Բաքվում հասունացող համազգային ծրագրի ձախողման պատճառներից մեկը պետք է համարել:

3.5. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԲԱՔՎԻ ԴԵՊՔԵՐԻՆ ԵՎ ՀՅԴ - ԲՈԼՇԵՎԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Հարկ ենք համարում անդրադառնալ այս հարցում հայկական մյուս կուսակցությունների և ազգային գործիչների գնահատականների, վերաբերմունքի խնդրին:

Առաջին հերթին հիշատակելի է Զապել Եսայանի՝ 1918 թ. մայիսի 5-ին Թեհրանում գրված նամակը արևմտահայ ռամկավարներից Արշակ Չոպանյանին: Նամակի բովանդակությունից նախ պարզվում էր, որ անվանի հայ մտավորական ու հասարակական-քաղաքական գործիչ Զ. Եսայանը մարտյան հերոսամարտի ժամանակ Բաքվում էր գտնվում և ակտիվորեն մասնակցում էր հերոսամարտի ընթացքին: Բնութագրական է նրա այն ձևակերպումը, ըստ որի՝ Բաքվի կռիվները ներկայացվում են որպես համազգային գործ ու հաղթանակ. «Չեք կարող երեւակայել,– գրում էր նա Ա. Չոպանյանին,– այն ոգեւորութիւնը, քաջութիւնը, որով արագ կերպով հաջողեցանք ջախջախել թշնամին»[463]: Ուշագրավ է, որ արևմտահայ գործիչը «թիկունքի խառնակութիւնների» հետ էր նաև կապում Հայկական հարցի լուծումը և այդ մասին տեղեկացնում իր գործընկերներին,

[463] Տե՛ս Ե. Չարենցի անվ. ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, թղթապանակ թիվ 1778:

մասնավորապես Պողոս Նուբարին: Ընդհանուր ոգևորության ալիքի տրամադրությամբ նա եզրակացնում էր, որ «հիմա հետզհետէ Կովկասի մահմեդականները կը զսպվեն շնորհիվ բալշեւիկներու եւ հայերու: Բալշեւիկներու մասին մեր վերաբերմունքը սկսած է փոխվել: ***Գոնե Կովկասի մէջ բալշեւիկները այն չեն, ինչ որ են Ռուսաստանի մէջ և միայն այն հանգամանքը, թե որքերիմ թշնամի են թուրքերուն (թե ներսի եւ թե դուրսի) մեզ մոտեց աջակցելու իրենց*** (ընդգծումը մերն է - Վ.Մ.): Մեզ համար հարկ եղավ ընտրել թուրքերու և բալշեւիկներու միջեւ, եւ բնական է, որ վերջիններու ճամբով պիտի երթայինք: Ինչ-որ ալ ըլլար Ռուսաստանին, վերջապես և հնարաւորութիւնը ընծայեցին մեզ թուրքերու զազրելի տիրապետութիւնէն ազատվել նոյն ինքը Կովկասի մէջ»[464]:

Իրադարձությունների անմիջական մասնակից Բ. Բայկովը կադետական կուսակցության դիրքերից ուշագրավ կերպով է մեկնաբանում հայկական և մասնավորապես կուսակից ՀԺԿ-ի դիրքորոշումը: Նրա կարծիքով՝ Մուսավաթը Բաքուն համարում էր իր ազգային ոտչինան (մինչև 1918 թ. անկախացումը), ուստի և ձգտում էր այնտեղ իշխող դիրք գրավել: Դրան էին ձգտում նաև բոլշևիկները: Հայերն իրենց մեծամասնությամբ հակված էին դեպի Ռուսաստանը:

«Բնութագրական է,– նշում էր նա,– որ նույնիսկ մեզ մոտ՝ կադետական կոմիտեում ուղղափառ հայ կադետները կանգնած էին այն տեսակետի վրա, որ ***Կովկասում բոլշևիկներին իրականացնում են «ռուսական գործ»***[465] (ընդգծումը – Վ. Մ.):

Ստ. Շահումյանի վստահելի զինակից Գ. Ղորղանյանը լիովին համակարծիք էր ֆրանսիացի հեղինակ Պ. Լա Շեսնային: Վերջինիս տեսակետն իր բովանդակությամբ ամփոփիչ նկարագիր ունի, ինչպես նաև հայացք է դրսից, ուստի վերջինիս մտորումները հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ: «Խորհրդային ռեժիմը,– գրում էր նա,– հաստատուած էր տարօրինակ, բայց ճակատագրական զիջումի մը վրայ. արդարեւ, մէկ կողմէն այլեւս կը մերժուէր տիրապե-

---

[464] Տե՛ս Ե. Չարենցի անվ. ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, թղթապանակ թիվ 1778:
[465] Տե՛ս **Байков Б.**, նշվ. աշխ., էջ 122:

տութիւնը չափաւոր ռուսերուն (նկատի ունի էսէռներին ու մենշևիկներին – Վ. Մ.), որոնց կը դաշնակցէին հայերը (դաշնակցությունը – Վ. Մ.), իսկ միւս կողմէն անընդունելի կը նկատուէր տիրապետութիւնը թաթարներուն, վասնզի ատիկա պիտի նշանակէր Բագուի մուտքը Անդրկովկասեան Հանրապետութեան մէջ, որը այն պահուն կազմելու վրայ էր: Իրաւ է, հայ բոլշեւիկ Շահումեանն էր նախագահը Խորհուրդին:

Սակայն դժուար է երեւակայել հաստատութիւն մը՝ աւելի հակադիր, իր էութեանը մէջ, բոլշեւիկեան քաղաքականութեան, որի սկզբունքն է չընդունիլ ոչ մէկ շեղում իշխանութեան օրգաններու կազմութեան նկատմամբ: ***Բագուի խորհուրդը բոլշեւիկեան էր միայն անունով*** (ընդգծումը մերն է – Վ. Մ.), վասնզի իրապէս անոր մէջ ներկայացուած էին բոլոր տիրող կարծիքները: Բոլշեւիկ ուղղութիւնը անվիճելիօրէն զօրեղ էր, բայց չկարեցաւ բացարձակ իշխանութիւն մը հաստատել»[466]:

Գ. Ղորղանյանը հավելում էր, որ «հայերը, չունենալով երկիր գրաւելու ձգտումներ, կը ջանային պահել Բագուի շրջանը, վասնզի անոր գրաւումը թուրք-թաթարներու կողմէն անխուսափելի կորստեան պիտի մատնէր քանի մը տասնեակ հազար խաղաղ հայեր: Ասկէ զատ, Բագուի պաշտպանութիւնը զբաղեցնելով թշնամիի մէկ մասը, կը դիւրացնէր վիճակը Հայաստանի, որը ուժասպառ եղած էր ինքը շրջապատող թշնամիներու դէմ ամիսներէ ի վեր մղուող անհաւասար պայքարին մէջ: Միայն բոլշևիկներն էին, որ, իրենց հրամանին տակ ունենալով Կասպից ծովի նաւատորմիղը եւ կռուան մը Հաշտարխանի մէջ, կարող էին մատակարարել հայերուն պարէն, զէնք ու զինամթերք, որոնք այնքա՜ն անհրաժեշտ էին նոր մասեր կազմելու եւ պայքարը շարունակել կարենալու համար»[467]:

«Մշակում» ՀԺԿ-ի դիրքորոշումն էր արտահայտում կուսակցության անդամ Ի. Ամիրյանը: Ռուսաստանի կենտրոնում բոլշևիզմն անվերապահորեն ընդունելով որպես բացարձակ «կազմալուծող

[466] **La Chesnais P.G.**, Lespenples de la Transcaucasie pendant la guerre et devant la paix, էջ 80, ըստ՝ **Ղորղանեան Գ.,** նշվ. աշխ., էջ 114-115:
[467] Տե՛ս նույն տեղում, էջ 115:

ոյժ», մասնավորապես ազգամիջյան հարաբերությունների հարցում՝ Ի. Ամիրյանը անթաքույց հիացմունք է արտահայտում այն երևույթի նկատմամբ, որ «բոլշեւիկների հետ միացել են բոլոր յեղափոխական տարրերը»: Նրա կարծիքով՝ «դա արժանի է մեր ամենախոր և լուրջ ուշադրութեանը»[468]: «Եւ իսկապէս Բագւում ինչ որ կատարվել է, այն անկարելի է, մի ցնորք է մինչեւ այժմ էլ ամբողջ Ռուսաստանի համար: Յեղափոխութեան առաջին օրվանից բոլշեւիկների հետ կռվում էին բոլոր սօցիալիստները, իսկ հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ այդ կողմերի մէջ շարունակւում է ամենախիստ և արիւնահեղ քաղաքացիական կռիւ, իսկ Բագւում ստեղծվել է կօալիցիա ոչ միայն բոլոր սօցիալիստների, այլ և բոլոր սօցիալիստների ու դեմօկրատների միջեւ: ***Պարզ է, որ Բագուի շարժումը ստանում է ժողովրդական բնոյթ»*** (ընդգծումը մերն է – Վ. Մ.)[469]: Իրապես անսպասելի և համարձակ եզրահանգման է գալիս «Մշակը»՝ ի դեմս Ի. Ամիրյանի. «Գուցե մենք դեռ վկայ պիտի լինենք և այն երեւույթին, որ մեր իշխանութիւնը (Սեյմը նկատի ունի – Վ. Մ.) Բագուի ազդեցութեան տակ պիտի վերջապէս դառնայ միատարր և ամուր, միատար ոչ այն մտքով, որ նա պիտի լինի կամ սօցիալիստական կամ ոչ սօցիալիստական, այլ այն մտքով, որ նա պլատֆորման պիտի դառնայ երկրի պաշտպանութիւնը արտաքին թշնամու և անարխիայի դէմ[470]: Ինչպես տեսնում ենք, այս եզրակացության հիմքում ևս դրվում է համահայկականության բովանդակություն, որի վերջնական նպատակը «երկրի», այսինքն՝ ոչ միայն արևելահայության, այլև Արևմտյան Հայաստանի պաշտպանության խնդիրն էր: Հայ ժողովրդական կուսակցությունը Բաքվի հայ գործիչների ղեկավարած իշխանությանն ու հակաթուրքական պայքարին էին անուղղակիորեն վերապահում համազգային խնդրի լուծումը: Ընդգծենք, որ այս պարագայում մշակական հայ գործիչներին ամենևին չէր մտահոգում իրենց քաղաքական հակառակորդ Դաշնակցության ակտիվ դերակատարության խնդիրը, էլ չենք խոսում բոլշևիկների մասին:

---

[468] Տե՛ս «Մշակ», 1918, 30 մարտի, թիվ 67:
[469] Տե՛ս նույն տեղում:
[470] Տե՛ս նույն տեղում:

Սպեցիֆիկների տեսակետն էր զարգացնում ևս մի հակաբոլշևիկ ու Դաշնակցության հանդեպ ընդդիմադիր Դավիթ Անանունը: Նա խնդրի վերջնական լուծման միակ տարբերակ էր առաջարկում քաղաքական փոխզիջումը, ազգային տարբեր մարմինների համերաշխության և համագործակցության գործոնը: «Եթե Բագուի բանուորութեան սկսածն արձագանք գտնէր Թիֆլիսում, այդ տեղից ձեռք մեկնվեր Բագուին, ապա Ազէրբայջանից կքաշուեր Մուսափաթը և այսպիսով կսղոցուէր Թուրքիայի սուր ժանիքը (ինչպես նկատում ենք նա ընդգծում էր Մուսավաթի, այլ ոչ թե տեղի թաթար բնակչության վճռորոշ գործոնը – Վ. Մ.): Բայց իրերն այս ընթացքը չընդունեցին: Թիֆլիսն առ առաւելն չէզոք դիրք բռնեց Բագուի նկատմամբ»[471],– վրդովվում էր Դ. Անանունը: Շեշտելով Թիֆլիսի դերակատարության խնդիրը՝ նա նկատի ուներ միաժամանակ թե՛ հեղափոխական երկրամասային կենտրոնի և թե՛ Անդրկովկասյան Սեյմի քաղաքականությունը և, իհարկե, Սեյմի հայկական խմբակցության դիրքորոշումը: Թերևս ամենասուր քաղաքական հարցն էր բարձրացնում սպեցիֆիկ գործիչը. նա անուղղակի կերպով, փաստորեն, հավանություն էր տալիս Ստ. Շահումյանի ծրագրին, այսինքն՝ Թիֆլիսի և Բաքվի հեղափոխական-սոցիալիստական կազմակերպությունների միավորման ճանապարհով երկրամասի խորհրդայնացմանը և անգամ իր կուսակցության տեսանկյունից լուծում էր իշխանության խնդիրը, այդպիսով նաև համազգային խնդիրը: Այլապես ի՞նչ էր նշանակում Դ. Անանունի «Թիֆլիսից ձեռք մեկնվեր Բաքվին» արտահայտությունը: Ամբողջ հարցն այն էր, որ Ստ. Շահումյանի՝ Թիֆլիսի գրավման ծրագրի կապակցությամբ նրա դեմ համերաշխորեն դուրս եկան ինչպես անդրկովկասյան իշխանությունը, այնպես էլ երկրամասային մենշևիկյան կենտրոնն ու անգամ նրա բոլշևիկ գործիչները:

Բաքվի իրադարձությունների առիթով այժմ նրանց ավելացել էր նաև Սեյմի դաշնակցական խմբակցությունը, որը, քողարկվելով «թիկունքային քաղաքականությամբ», հանդես էր գալիս իր իսկ կուսակ-

---

[471] **Անանուն Դ.**, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3 (1901-1918), Վենետիկ, 1926, էջ 670:

ցության վճռական մարտավարության դեմ: Մարտի 24-ին Տրապիզոնի բանակցություններում Սեյմի պատվիրակության մուսավաթական առաջնորդ Ռասուլզադեն բացահայտում էր որոշ մանրամասներ և հատկապես այն, որ «Բաքվում դաշնակցականները ինչ-որ կապ են պաշտպանում բոլշևիկների հետ»[472]: Այս կապակցությամբ հատկանշական է նաև Լեոյի վերաբերմունքը, ինչը մի կողմից բացահայտում է ՀՅԴ ղեկավար մի հատվածի դիրքորոշումը Բաքվի հերոսամարտի նկատմամբ, մյուս կողմից էլ պարզում այն ոչ իրատեսական ու կանխակալ մտայնությունը, թե բոլոր դեպքերում անիմաստ ու վնասակար է Բաքվում դուրս գալ Մուսավաթի և թուրքիզմի դեմ: «Մենք ամբողջ սրտով ցանկանում էինք,– գրում է նա որպես Տրապիզոնի բանակցությունների մասնակից,– որ երկու դաշնակցական պատվիրակները հերքեին զեկուցողի խոսքերը, ապացուցեին, որ Դաշնակցությունն անմասն է կամ գոնե շատ քիչ մաս ունի այդ արյունոտ անցքերի մեջ: Եվ ի՜նչ կարող էին ասել, եթե ոչինչ չգիտեին: Հետո ինչ հանգամանք ուզում է թող պարզվի, ինչ գույն ուզում են, թող ստանան դեպքերը: Ի՞նչ օգուտ: Բանն այն է, որ արդեն տրամադրություն ստեղծվել է, որ ամենքը գիտեն, թե Բաքվում հայերը կոտորել են թուրքերին: Ճաշի ժամանակ մուսավաթական Մ. Հաջինսկին ասաց դառնությամբ. «Ես վեց երեխա ունեմ Բաքվում, թող ամենքն էլ կոտորված լինեն, բայց Բաքվի մեջ մի հատ հայ էլ չի մնա: Կարող եմ ասել, որ այստեղ Տրապիզոնում էր, որ վճռվեց Բաքվի հայերի սեպտեմբերյան ահռելի կոտորածը»[473]: Նախ պարզվում է, որ Լեոն իր հերթին տեղյակ չէր Բաքվի զարգացումներից, այն, որ նա էլ միակողմանի էր վերաբերվում դաշնակցություն-բոլշևիկ համագործակցությանը, լիովին կրում էր Սեյմի վրացական-թաթարական կոալիցիայի իշխող ազդեցության կնիքը, այն է՝ Թուրքիայի բոլոր պահանջների անվերապահ կատարումը:

Լեոյից ամենևին չէր տարբերվում հայ մենշևիկների առաջնորդ Գ. Ղարաջյանի (Ս. Արկոմեդ) դիրքորոշումը: Նա կարծում էր, թե որ-

---

[472] Տե՛ս **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 148:
[473] **Լեո**, Անցյալից, Երևան, 2009, էջ 351-352:

քան էլ Բաքվի բոլշևիկների գործողությունները նկատի ունենան հեղափոխության վսեմ նպատակը, ստեղծված իրավիճակում պայքարի ընտրված ձևերը և միջոցները կարող են ծառայել ոչ թե հեղափոխությանը, այլ հակահեղափոխությանը՝ «մեր երկրի ներքին և արտաքին թշնամիներին»: «Եթէ ճշմարիտ է, որ բոլշևիզմը և դաշնակցութիւնը ձեռք ձեռքի տուած են գործում Բագուում ընդդեմ թուրքերի, այդ դէպքում դժուար չէ հասկանալ թէ ինչ է սպասում ամբողջ երկրին»[474]: Հենց մենշևիկ հայ գործչի տարակուսանքը վկայում է այդ կայացած դաշինքի մասին, ինչը, հասկանալի է, սարսափեցնում էր անգամ հայ գործչին և ապացուցում ի դեմս նրա մտահոգության, որ վրացական մենշևիզմը չէր կարող հանդուրժել նման համագործակցություն: Իր կարծիքով՝ գտնելով այս հարցում բոլշևիկների թույլ տեղը՝ «քաղաքացիական պատերազմի» գործոնը՝ Ս. Արկոմեդն ինքն էր հայտնվում հակասության մեջ. «Ստացուած տեղեկութիւնների համաձայն, բոլշևիկները և դաշնակցականները միացած են գործում. հետաքրքրական է իմանալ՝ դաշնակցական ազգային զորքերը» ի՞նչ դեր են խաղում բոլշևիկական «քաղաքական կռի ժամանակ»[475]: Մենշևիկ Արկոմեդին անհանգստացնում էր իրապես մեկ գերհարց, և դա, իհարկե, արդարացված է հեղաշրջման բովանդակության համատեքստում: Դա այն էր, որ «եթէ ճշմարիտ է, որ բոլշևիզմը և դաշնակցութիւնը ուզում են գրավել Անդրկովկասը և հաստատել այստեղ էլ խորհուրդների իշխանութիւնը, Լենին-Տրոցկու տխրահռչակ ռեժիմը, որից հիւծուում և հեծում է այսօր ամբողջ Ռուսաստանը, մեր Անդրկովկասի վզին են ուզում փաթաթել այսօր այդ հրէշը»[476]:

Զավեշտ է, բայց տվյալ դեպքում հայ մենշևիկ գործիչն էր հանդես գալիս որպես արմատական պահպանողական, անգամ դաշնակցական և իր տեսական ժողովրդավարության մեջ չէր փորձում անգամ իր համար անսպասելի ու անհասկանալի համագործակցության մեջ տեսնել համազգային շահ. մի բան, որ շատ լավ էր ստացվում վրացի մենշևիկների և թաթար մուսավաթականների մոտ: Առավել

[474] Տե՛ս «Պայքար», Թիֆլիս, 1918, 24 մարտի, թիվ 62:
[475] Նույն տեղում:
[476] Տե՛ս նույն տեղում:

տարօրինակ է այն հանգամանքը, որ ս.-դ. մենշևիկյան կուսակցության Բաքվի կոմիտեի նախագահ Գ. Այոլլոն ավելի սթափ էր մոտենում իրադարձությունների զարգացմանը և «հակահեղափոխության» դեմ Բաքվի բոլշևիկների մղած պայքարը ընդունում էր որպես հակաթուրքական պայքար: Ապրիլի 7-ին Սեյմի նախագահ Չխեիձեին նա հեռագրում էր հետևյալը. ***«Բագուի ս.-դ. (մենշևիկ) կազմակերպությունը, անկախ իր վերաբերմունքից դէպի Բագուի խորհուրդների մեծամասնութեան պակտիկան*** (ընդգծումը մերն է – Վ. Մ.), համարել է և համարում է իր պարտքը ակտիւ աջակցութիւն ցոյց տալ խորհուրդներին, նրանց հակայեղափոխութեան դէմ մղած կռւում: Դաղստանցիների յարձակումը մենք համարում ենք հակայեղափոխական և խնդրում ենք Սէյմին օգնել Բագուի խորհուրդներին»[477]: Ինչպես հայտնի է, Սեյմի աջակցությունը Բաքվի խորհրդի դեմ հենց թաթարական-վրացական զորամասերի զինումն ու վճռական գործողությունների մղումն էին, այն էլ՝ պանթուրքիզմի դրոշի ներքո:

Էսէռական կուսակցության Թիֆլիսի կազմակերպության արձագանքը Բաքվի դեպքերին հետևյալն էր. «Մենք չենք վախենում անդամագրվել բոլշևիզմի շարքերը և բաց հայտարարում ենք, որ այդ պայքարում մենք հետադիմական պանիսլամիզմի դեմ ենք, մենք դեմ ենք Մուսավաթին, արևելյան ոճի սոցիալիստների հետ մեր ճանապարհները տարբեր են»[478]: Պետք է նկատի ունենալ, իհարկե, որ, ի դեմս Բաքվի խորհրդի, տեղի ոչ մահմեդական տարրերը դեռևս տեսնում էին ռուսական պետականության ներկայություն, հատկապես հակաթուրքական պայքարում:

Դաշնակցություն-բոլշևիզմ հարաբերություններին այդ օրերին անդրադարձավ նաև Թիֆլիսի Դաշնակցության օրգան «Աշխատավոր» թերթն իր «Դաշնակցութիւնը եւ բոլշեւիզմը» խմբագրականում: Հասկանալով Բաքվի իրադարձությունների լրջությունը՝ հեղինակն այս հոդվածում ամեն կերպ փորձում էր արդարացնել Դաշնակցության վարքագիծը, քանի որ մենշևիկյան «Борьба» և «Известия» թեր-

---

[477] «Պայքար», 1918, 29 մարտի, թիվ 66:
[478] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 152:

թերը «շանթեր են թափում «հակայեղափոխական» բոլշևիզմի և նրա «դաշնակից» Դաշնակցութեան դէմ»[479]: Առաջին մեծ զիջումն այն էր, որ մենշևիզմը որակվում էր «նացիոնալիստական», իսկ բոլշևիզմը՝ «ինտերնացիոնալիստական», ինչն ուրախալի էր այն առումով, որ դաշնակցական գործիչը վերջապես ընդունում էր վրացական մենշևիզմի ազգային բնույթը՝ սխալմամբ տարածելով այդ մոտեցումն ամբողջ մենշևիզմի վրա: Քննադատելով բոլշևիզմի իդեալիզմը, ուտոպիզմը, սոցիալիստական հեղափոխության ցնորապաշտությունը, չներելով նրանց Սահմանադիր ժողովը ցրելու և հաշտության հարցերում՝ հեղինակը նահանջում էր նաև այն հարցում, թե «երբե՛ք չենք կասկածել նրանց ազնուութիւնն ու յեղափոխականութիւնը[480]: Ընտրություն կատարելով մենշևիզմի ու բոլշևիզմի միջև՝ հոդվածագիրը իր համակրանքն էր հայտնում բոլշևիկների նկատմամբ. «Մենշևիզմի նկատմամբ մենք նախատեսել ենք բոլշևիզմը»[481]:

Այսքանով ասված է գլխավորը. ի դեմս «Աշխատավոր» թերթի՝ ՀՅԴ-ի մի հատված գոնե հանդես էր գալիս Բաքվում այդ համագործակցության օգտին ու բացի այդ՝ Բաքվի բոլշևիկների հաղթանակի մեջ էր տեսնում տվյալ դեպքում թշնամի մենշևիզմի դեմ պայքարի լուրջ գրավականը:

1918 թ. մայիսի 12-ին, կրկին անհանգստացած Բաքվի ճակատագրով, «Հորիզոն» թերթի խմբագրականը թուրքական ներխուժման իրական վտանգի սպառնալիքի ազդեցությամբ պաշտպանում էր տեղական բոլշևիզմը: «Անդրկովկասի դեմոկրատիան չպիտի հանդուրժի, որ մի արտաքին ուժ, թուրքական զորքը, Բաքուն ազատելը պատրվակելով, մտնի երկրի սիրտը, կարգավորի մեր ներքին գործերը և փորձ անի մեզ ստրկացնելու,– գրում էր թերթը: Բաքուն և նրա ասենք, ըմբոստ վարքը, բնավ երբեք ամբողջ երկրի համար չեն ստեղծել այդ անել դրությունը կամ իրական համատարած կործանարար սպառնալիքը: Այլ բան է, եթե բոլշևիզմը իր սև թևերը տարա-

[479] Տե՛ս «Աշխատավոր», 1918, 25 մարտի, թիվ 31:
[480] Տե՛ս նույն տեղում:
[481] Նույն տեղում:

ծած լիներ Կովկասյան լեռնաշղթայից մինչև ծովերն ու մյուս սահմանները»[482]:

1918 թ. մայիսի կեսերին, խոսելով Թուրքիայի դեմ Անդրկովկասի դեմոկրատիայի միավորման, այլ խոսքով՝ անկախություն հռչակելու տրամադրությունների մասին, Ռոստոմը Բաքվից հեռագրում էր Խ. Կարճիկյանին: Նա հույս էր հայտնում, որ Խ. Կարճիկյանի գլխավորած պատվիրակությունը հայերի համար կվերականգներ երկաթուղային հաղորդակցությունը: Առավելապես կարևորվում էր այն փաստը, որ «խորհրդային բանակների կողմից գրավվել են Ղուբան, Դերբենդը, Պետրովսկը, Թեմիրխան-Շուրան, Լենքորանը և Սալյանը: Հույս կա, որ հյուսիսի հետ շուտով երկաթուղային կապը կվերականգնվի»[483]:

Կարելի է եզրակացնել, որ գոնե մինչև 1918 թ. մայիսի կեսերը Դաշնակցությունը և ի դեմս Ստ. Շահումյանի՝ Բաքվի կոմունան համատեղ էին գործում, այլ խոսքով՝ Ռոստոմը շարունակում էր խորհրդային զորամասերի հաղթանակների հետ կապել հայության հակաթուրքական պայքարի հաջողությունը:

Անգամ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համատեքստում, երբ Արևմտյան Հայաստանի կորուստն ակնայտ էր, Հ. Զավրիյանը համարձակվում էր հայտարարել. «Ես միայն աղոթում եմ այն օրվա համար, երբ բոլշևիկները Կովկասում այնքան կամրապնդվեն, որ մենք հնարավորություն կստանանք դուրս գալու Մուսավաթի և մենշևիկների նվագի տակ պարելու մեր ստորացուցիչ վիճակից, ազատ ծավալելու մեր ֆիզիկական հզորությունը և գործունեության ծրագիրը, ազատ և համարձակ անցնելով Ռուսական կենտրոնական կառավարության կողմը»[484]: Հ. Զավրիյանի մոտեցման մեջ գերիշխում է, իհարկե, խորհրդային իշխանության և գործիչների նկատմամբ վստահության գերագնահատումը, ինչպես նաև բոլշևիզմը սխալմամբ ռուսական պետական շահերի հետ նույնացնելու միտումը: Դա բխում է նաև նրանից, որ Հ. Զավրիյանն ինքը ռուսական պետակա-

---

[482] «Հորիզոն», 1918, 12 մայիսի, թիվ 87:
[483] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 124:
[484] Տե՛ս **Խուրշուդյան Լ. Ա.**, նշվ. աշխ., էջ 65:

նամետ գործիչ էր և Ա. Կերենսկիի հետ ունեցած իր մտերիմ փոխհարաբերությունները փորձում էր ճարահատյալ տարածել նաև բոլշևիկ գործիչների վրա, ինչը միանգամայն անհամատեղելի և անհամեմատելի հարցեր էին:

«Հորիզոնի» խմբագրականը «անհավանական ու անհասկանալի» ոչինչ չէր տեսնում այն հարցում, որ Բաքվում բոլշևիկների դրոշի տակ են մտել քաղաքի ազգաբնակչության բոլոր հատվածները, բոլոր հեղափոխական կուսակցությունները: «Միայն կույրը, թեթևամիտը և դավադիր չարակամը,– նշվում էր այնտեղ,– կարող է անվերապահ կերպով պնդել, թե Բաքվում հայ-թուրքական ընդհարում է եղել և կամ թե առհասարակ, կատարվածը բոլշևիկների ղեկավարությամբ սկսված լոկ մի ազգամիջյան կռիվ է»[485]:

Բաքվի իրադարձությունների համատեքստում վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների ազգայնական «Սախալխո-Սաքմե» լրագրում հրապարակված «Դաշնակցականներն ու բոլշևիկները» հոդվածի (թիվ 201) հարցադրումներն ինչ-որ առումով շարժառիթ դարձան, որ ՀՅԴ կուսակցության գաղափարախոսներից Վ. Խորենին առավել բաց տեքստով հանդես գար կուսակցական մամուլում:

«Սախալխո Սաքմեի» պնդումները հիմնականում իրականությունից կտրված և ազգամիջյան առճակատմամբ շնչող եզրակացություններ պետք է համարել, որոնք, մի կողմից, սադրիչ թուրքամետ նպատակներ ունեին, մյուս կողմից՝ փորձում էին վարկաբեկել թե՛ Դաշնակցությանը, թե՛ Ստ. Շահումյանին:

Այսպես, թերթը միանշանակ կերպով փաստում էր, թե «ինչպես հայ դաշնակցականները հայերի կուսակցությունն է, այնպես էլ բոլշևիկները կազմում են վելիկոռուսների, Ռուսաստանի կուսակցությունը: Ապագայում, եթե բոլշևիկյան պրակտիկային վերջ չտրվի, հայերը բոլշևիկներին սաստիկ կսիրեն: Կսիրեն հատկապես այն պատճառով, որ բոլշևիզմը էապես հակաթուրքական և հակավրացական ուղղության է հետևում: Ով որ բոլշևիզմի կողմն է, սիրում է Ռու-

[485] «Հորիզոն», 1918, 27 մարտի, թիվ 64:

սաստանը… Անդրկովկասում բոլշևիկյան քաղաքականությունն այժմ հայկական քաղաքականություն է»[486]:

«Ինչ է կատարվում» հոդվածում Վ. Խորենին արժեքավոր եզրահանգումների է գալիս և մի կողմից ինչ-որ առումով բացահայտում Դաշնակցության մի հատվածի մոտեցումները, մյուս կողմից՝ պարզում նաև հայկական ազգային կուսակցության որոշակի մոլորությունները և քաղաքական պահի ազդեցությամբ արված հապճեպ, ոչ երկարաժամկետ հետևությունները: Կարևորագույն այդ նյութը՝ որոշ կրճատումներով, հարկ ենք համարում ներկայացնել: «Բաքվի դեպքերը,– գրում էր Վ. Խորենին,– մեզ համար չափազանց մեծ նշանակություն են ստանում: Այնտեղ իրերը այնպիսի ընթացք են ընդունում, որ կարող է մեզ համար ճակատագրական նշանակություն ունենալ: Բաքուն կարող է կամ մեր ազատության հանգրվանը կամ գերեզմանը դառնալ: Կարելի է ավելի համարձակ ասել, որ Բաքուն պետք է որոշէ մեր լինել-չլինելու հարցը: Մի րոպե եթե ընդունենք, որ հակահեղափոխությունը (նկատի ունի թուրք-թաթարական դաշինքը – Վ. Մ.) հաղթանակում է Բաքվում – անմիջապես հակահեղափոխության ու նացիոնալիզմի ալիքը հաղթականորեն կծավալվի Գանձակի վրայով մինչև Բաթում ու Երևան: Բաքվի հաղթանակը հեղափոխության ու ազատության հաղթանակն է նշանակում: Ահա այս ճշգրիտ ու պարզ գիտակցությամբ պետք է վերջ տալ անտեղի մտավախությունների ու կուսակցական կեղծ ինքնասիրությունների և պետք է տեսնել Բաքվի իրերը իրենց իսկական գույնով ու մեծությամբ: Արդեն պարզ է, որ այդ շարժումը ոչ զուտ բոլշևիկյան, ոչ էլ ազգային-շովինիստական է, այլ ընդհանուր դեմոկրատական և գերազանցորեն հեղափոխական: Արդեն մենշևիկների համար պարզ է, որ շարժմանը մասնակցում են «անխտիր», «առանց բացառության բոլոր հեղափոխական ու սոցիալիստական կուսակցությունները»:

Իրենց կանխակալ հակաբոլշևիկյան ու հակադաշնակցական վեաբերմունքը դեպի Բաքուն որոշակի փոխել են էսէռները: Մենշևիզմը պետք է ընդունի իր սխալը և զգաստանա: Բաքվի հեղափոխական

[486] «Հորիզոն», 1918, 28 մարտի, թիվ 65:

պրոլետարիատի շարժումը չպետք է ճնշել հենց անդրկովկասյան շահերի տեսակետից: Ինչ կարծիք էլ ունենանք բոլշևիզմի մասին, որքան էլ խիստ քննադատենք բոլշևիկյան տակտիկայի թերությունները, բայց դեմոկրատիայի մի հատվածը մյուս հատվածի դեմ զինել և արձակել չի կարելի: Բաքվի շաժումը սովորական «բոլշևիկյան» շարժում չէ: ***Դա տրաձկական օրիենտացիայով առաջնորդվող հակահեղափոխական Դաղստանի ու Գանձակի «վանդեան» է, որ կամենում է անդրկովկասյան հեղափոխության միակ օջախը հրդեհել ու ավերել*** (ընդգծումը մերն է – Վ. Մ.): Դա զուտ Կովկասյան հեղափոխական առողջ շարժում է: Չէ՞ որ Կովկասը հեղափոխություն դեռ չի արել… Լսենք հեղափոխական Բաքվի ձայնը, իրատես լինենք և սթափվենք՝ քանի ուշ չէ»[487]:

Հնչակյան կուսակցության գործունեությունը Բաքվում ինչ-որ առումով լուսաբանում են Գրիգոր Եղիկյանի հուշերը: Հնչակյանների հետ Ստ. Շահումյանի բանակցությունների արդյունքում կողմերը համաձայնության եկան հետևյալ կետերի շուրջը. ա) կուսակցության մասնաճյուղը պահպանելու էր իր անկախ գոյությունը, բ) համերաշխ աշխատելու էր բոլշևիկների հետ և գ) բոլշևիկներն էլ իրենց հերթին աջակցելու էին կազմակերպության ամրապնդմանը և նյութապես օգնելու էին մամուլի օրգան ունենալու հարցում: Գ. Եղիկյանը վկայում է, որ 1918 թ. մարտյան դեպքերից հետո հնչակյաններն իրենց ավելի պաշտպանված զգացին, սկսեց հրատարակվել «Մեր օրեր» թերթը՝ Սահակ Մուրադյանի խմբագրապետությամբ:

Ստ. Շահումյանը Գ. Եղիկյանին նույնիսկ առաջարկում էր Պարսկաստանում Բաքվի կոմունայի ներկայացուցչի պաշտոնը: Վերջինս մերժում է՝ պատճառաբանելով, որ «իրենց կուսակցության (բոլշևիկների – Վ. Մ.) արածները ինձ դուր չեն գալիս, հետեւաբար չեմ կամենում որեւէ մասնակցութիւն ունենալ մի գործի մէջ, որ ամբողջովին վնասակար եւ հակաընկերվարական եմ համարում»[488]:

---

[487] «Հորիզոն», 1918, 31 մարտի, թիվ 68:

[488] Տե՛ս **Եղիկյան Գ.**, Իմ հիշողություններից, Հնչակյանները և նրանց բոլշևիկների հետ միանալու փորձերը, «Հայրենիք», Բոստոն, 1939, հունվար, թիվ 3, էջ 163-164:

Մեր կարծիքով՝ անչափ ուշագրավ և արդիական է Ստ. Շահումյանի պատասխանը, որն առաջին անգամ շրջանառության մեջ դնելով՝ ցանկանում ենք այն ներկայացնել հանրությանը:

«Բոլշևիկ լինելով հանդերձ ես հայ եմ,– ասում էր նա,– մարքսիստ համարուածներդ, որ պարծենում եք, թէ տարիներով ընչազուրկների համար էք աշխատել, խուսափում էք այժմ աշխատելու ի նպաստ նոյն ընչազուրկների ազատագրութեան, թէեւ աւելի լայն ասպարէզ ունէք շնորհիւ նրան, որ կառավարութիւնը Ռուսաստանում մեծ մասամբ մեր ձեռքն է գտնուում: Եւ այդ բաւական չէ, քննադատում էք մեզ, մեղադրում հազար տեսակ սխալների մէջ, ասում էք, որ մեզ շրջապատել ենք բախտախնդիրներով: Մոռանում էք, որ մի ընդարձակ երկիր կառավարելու եւ հեղափոխական պայքարը միջազգային հզօր դրամատիրութեան դէմ մղելու համար մեզ մարդիկ են հարկաւոր: ***Ձեզ նմանները չեն գալիս, մենք էլ տեղ էնք տալիս եկողներին առանց ընտրութեան, որովհետեւ ժամանակ չունինք ընտրելու: Ժամանակին, երբ մեր իշխանութիւնը կամրանայ, ամենախիստ ընտրութիւնը կը կատարենք եւ մեր շարքերը կը մաքրենք անբաղձալի տարրերից... մեզ շրջապատում են շատ բախտախնդիրներ, գուցէ եւ պարզ ոճրագործներ. նրանք կիսում են մեր իշխանութիւնը եւ յաճախ վատ ազդեցութիւն անում բանւորների վրայ եւ նրանց ստիպում են մեզանից անտեղի պահանջներ անելու եւ մենք պարտաւորւում ենք նրանց պահանջները բաւարարել: Այո՛, երբեմն մեզ մղում է ամբոխը այնտեղ, ուր մենք չենք կամենում, բայց պարտաւոր ենք գնալ»***[489] (ընդգծումը մերն է – Վ. Մ.):

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ նախորդ չափազանց կոշտ երկխոսությունից հետո անգամ հնչակյան Գ. Եղիկյանը, ի պատիվ իրեն, համոզված էր, որ Ստ. Շահումյանը, «բոլշևիկ լինելով հանդերձ, լաւ հայ էր, և նրա արածների մէջ որոշ ճշմարտութիւն կար»[490]: Եզրակացությունը մեկն է՝ բոլշևիկ Ստ. Շահումյանը փորձում էր բոլշևիզմը ծառայեցնել հայության շահերին:

---

[489] **Եղիկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 164-165:
[490] Տե՛ս նույն տեղում:

Այսպիսով՝ հայկական քաղաքական դաշտի գլխավոր ժողովրդավարական ուժերը, բացի հայ մենշևիկներից, թերևս առաջին անգամ իրենց կուսակցական գործունեության մեջ մեծ նվաճում ու հաղթանակ որակեցին հայկական-ազգային քաղաքական կոալիցիայի ձևավորումը Բաքվում՝ չքննադատելով այդ համագործակցության մեջ ՀՅԴ-բոլշևիկներ համատեղ հանդես գալու փաստը: Բաքվում սկիզբ էր դրվում այն համազգային քաղաքական տանդեմին՝ ի դեմս մեծ հաշվով Ստ. Շահումյան-Ռոստոմ-Հ. Բագրատունի եռյակի, որն իսկապես Անդրկովկասի հայությանը կարող էր դուրս բերել պարտվողի, զիջողի կարգավիճակից և հեռանկարում լուծեր Հայկական հարցը:

Կանգ առնենք նաև ***Բաքվում «քաղաքացիական պատերազմի» խնդրին,*** ինչը ուղղակիորեն առնչվում է իշխանության հարցին:

Սպեցիֆիկ Բ. Իշխանյանը տարբերակում էր «Ռուսաստանի ընդհանրացված քաղաքացիական պատերազմ» հասկացությունը Բաքվի իրադարձություններից: Նա այդ երևույթը անվանում էր ոչ թե քաղաքացիական, այլ հակապետական անջատողական շարժում կամ էլ հակահեղափոխական հետադիմական ապստամբություն: Նրա կարծիքով՝ շարժումը հակապետական էր, քանի որ ուղղված էր ռուսական պետական հիմքերի դեմ և հենվում էր օտար ուժի՝ Թուրքիայի աջակցության վրա: Հակահեղափոխական էր, որովհետև ուղղված էր հեղափոխության նվաճումների պահապանի՝ հեղափոխական իշխանության դեմ: Հատկանշական էր, որ անվանի սպեցիֆիկ գործիչը, որը հայտնի էր իր հակաբոլշևիկյան դիրքորոշմամբ, Բաքվի խորհուրդը որակում էր որպես հեղափոխական իշխանության մարմին անգամ այն դեպքում, երբ հաղթանակից հետո այն վերածվեց Կոմունայի, այսինքն՝ միատարր բոլշևիկյան կառավարության: Բ. Իշխանյանը համոզված էր, որ շարժման հակապետական բովանդակությունից ելնելով՝ Բաքվի դեպքերը չի կարելի քաղաքացիական պատերազմ համարել: «Մուսուլման պանթիւրքիստ-նացիոնալիստների կռիւը ուրիշ բնոյթ ունի. վերջինս ուղղուած է ոչ միայն տուեալ իրաւակարգի դեմ, այլ առհասարակ ռուսական էլեմենտի պետական տիրապետութեան դէմ մեր ծայրերկրում՝ առաջնորդուե-

լով իր ինքնորոշման սկզբունքով և օտար պետութեան օրիենտացիայով»[491]: Ավելացնենք, որ այն միտված էր և հայկական տարրի դեմ: «Ահա ինչու Բագուի անցքերը,– գրում էր Բ. Իշխանյանը,– իրանց նախերգանքներով ու արձագանքներով, չի կարելի անուանել քաղաքացիական պատերազմ՝ գաղափարի սովորական իմաստով»: Նա սկզբունքորեն դեմ էր նաև այդ իրադարձություններին «հայ-թուրքական ազգային ընդհարումների կամ կռուի բնոյթ»[492] հաղորդելու հանգամանքին և այս հարցում լիովին համերաշխ էր Ստ. Շահումյանի տեսակետներին:

1919 թ. մայիսին Բ. Իշխանյանը[*], նկատի ունենալով սեպտեմբերյան իրադարձությունները, դրանք իրավացիորեն բնութագրեց արդեն որպես հայկական ինքնապաշտպանական մարտեր՝ ընդդեմ թուրքական ինտերվենցիայի[493]:

Դժվար է հերքել Ստ. Շահումյանին այն հարցում, թե «ի՞նչ կլիներ եթե իշխանությունը պատկաներ մենշևիկներին: Մեր բոլորին կկոտորեին»[494]: Մենշևիկյան հակահայկական քաղաքականության կապակցությամբ նա համոզված էր. «Ոչ ոքի համար անսպասելի չպետք է լինի, եթե ասեմ, որ հայ մասսաները կենսականորեն շահագրգռված են այն բանում, որպեսզի քաղաքականությունն արմատապես փոխվի (նկատի ունի Սեյմին), որովհետև, եթե այդ քաղաքականությունը շարունակվի, ապա հայ բնակչության գլխովին ոչնչացում է սպառնում, որը վիճակվեց նրան Թուրքահայաստանում»[495]:

Կարևորվում է հատկապես ***Դաշնակցության նկատմամբ Սպ. Շահումյանի և Բաքվի Խորհրդի քաղաքականությունը:***

Առաջին հայացքից ստեղծվում է տպավորություն, թե այդ ողջ գործընթացի ժամանակ տիրում էր փոխադարձ անվստահության մթնոլորտ: Այդ մասին են վկայում հատկապես Ստ. Շահումյանի նա-

---

[491] Տե՛ս **Իշխանյան Բ.**, նշվ. աշխ., էջ 205-206:
[492] Նույն տեղում, էջ 206-207:
[*] Այս շրջանում նա Բաքվի հայոց ազգային խորհրդի Անկետային հանձնաժողովի նախագահն էր:
[493] Տե՛ս **Իշխանյան Բ.**, Բաքվի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920:
[494] **Շահումյան Ստ.**, ԵԼԺ, հ. 4, էջ 264:
[495] Տե՛ս նույն տեղում, հ. 5, էջ 19:

մակները՝ հասցեագրված Ի. Ստալինին և Ժողկոմխորհին: Առաջին նամակում՝ գրված մարտի 16-ին, նա գրում էր. «Ինչ վերաբերում է դաշնակներին տրվելիք զենքին, խնդրում եմ գործն այնպես ձևակերպել, որպեսզի վերջնական լուծումն այստեղ կախված լինի ինձնից: Կոնյուկտուրայից ելնելով՝ մենք կվճռենք այստեղ: Ես փոփոխություն չեմ սպասում նրանց քաղաքականության մեջ, բայց լավ կլինի, եթե նրանք տեղում ավելի շատ կախված լինեն մեզնից»[496]: Նույն տրամադրությունն էր իշխում նաև ապրիլի 13-ի նամակում. «Դաշնակցություն կուսակցությանը», թեև նա մեզ առայժմ պաշտպանում էլ է, առայժմ ոչինչ մի խոստացեք և ոչինչ մի տվեք: Նրանց ուժեղացնել այլևս պետք չէ»[497]: «Бакинский рабочий» թերթը հավելում էր, որ «հակահեղափոխության դեմ պայքարում չմերժելով Դաշնակցության օգնությունը՝ այս պահին մեզ համար շատ արժեքավոր, մենք այնուամենայնիվ չպետք է աչքաթող անենք պատմական հեռանկարը, չմոռանանք այդ կուսակցության նացիոնալիստական էությունը»[498]:

Միևնույն ժամանակ արատավոր, բայց և օրինաչափ քաղաքական անվստահությամբ էր ներարկված նաև ՀՅԴ-ի մի հատվածը. «Մեր վերաբերմունքը դէպի ստեղծուած կացութիւնը շատ պարզ է, շատ որոշ, մենք չէինք հաւատում ոչ «հակայեղափոխական Շահումեան-Ջափարիձէների «սովետական» բարիքներին,– մայիսին գրում էր «Աշխատավորը»,– և ոչ էլ Ռասուլ-Զադէների, կամ տաճիկ ժանդարմների հաստատած «յեղափոխական» կարգերին»[499]: Անհնար է անտեսել, իհարկե, այն իրողությունը, որ Դաշնակցությանը ենթակա Բաքվի հայկական զորամասերը մուսավաթական խռովության դեմ Խորհրդի պայքարի մեջ ներմուծեցին ազգային նկարագիր: Թեև բոլշևիկ գործիչները, հետո էլ պատմաբանները հերքում են մարտի 18-ի պատերազմի ազգային բնույթը և այն դիտարկում որպես իշխանության համար մղվող քաղաքացիական պատերազմ, այնուամե-

---

[496] Տե՛ս **Շահումյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 174:
[497] Նույն տեղում, էջ 204:
[498] Տե՛ս **Раттаузер Я.**, նշվ. աշխ., էջ 151:
[499] «Աշխատավոր», 1918, 14 մայիսի, թիվ 43:

նայնիվ վերջինս խորքային բովանդակությունը ազգային էր: Դրա լավագույն արտացոլումներից էր Թիֆլիսի իշխանությունների ցուցաբերած վերաբերմունքը Բաքվի խորհրդին: Անդրկովկասյան կառավարության ապրիլի 16-ի նիստում քննարկվեց «Բաքվի հարցը»: Նախագահն ընթերցում է Ելիզավետպոլից ստացված Խասմամեդովի և Ջաֆարովի ուղարկած հեռագիրը, որտեղից հայտնի է դառնում, որ մահմեդականների շրջանում կառավարության դեմ ակտիվ ագիտացիա էր տարվում, և որը մեղադրվում էր Բաքվի բոլշևիկների դեմ բռնություններ չկիրառելու մեջ: Վրացական-մուսավաթական կառավարությունը չհապաղեց և որոշում կայացրեց. ա) ռազմական և ներքին գործերի նախարարներին առաջարկել, որպեսզի ձեռնարկվեն բոլոր միջոցները՝ Բաքվի իրադարձություններին վերջ տալու համար՝ Բաքուն գրավելու նպատակով, բ) ուղարկել անհրաժեշտ օգնություն: Երկու օր անց, վերադառնալով «Բաքվի հարցի» քննարկմանը, պարզ է դառնում, որ հենվելով Ելիզավետպոլի նահանգի տարբեր շրջանների ընդունած բանաձևերի վրա՝ անհրաժեշտ էր համարվում աջակցել թուրքական զորքերի առաջխաղացմանը դեպի Բաքու: Խան-Խոյսկին արդեն հռչակված Ադրբեջանի հանրապետության կյանքի և մահու խնդիր էր համարում Բաքվի հարցը»[500]:

1919 թ., երբ Մուսավաթը Ադրբեջանում իշխանություն էր ներկայացնում, կառավարությունը ձևավորեց Մարտյան իրադարձությունները հետաքննող հանձնաժողով: Բազմաթիվ վկայություններն այն աստիճանի անհիմն էին, որ անգամ մուսավաթականները չհամարձակվեցին հրապարակել այդ նյութերը: Շամախիի դեպքերի առթիվ մուսավաթականները Ստ. Շահումյանին, Լ. Ա. Ավագյանին անվանեցին «իսկական դաշնակներ»[501]:

---

[500] Տե՛ս **Ратгаузер Я.**, նշվ. աշխ., էջ 155:
[501] Տե՛ս նույն տեղում, էջ 157:

ՎԵՐՋԱԲԱՆ

Բաքվի 1918 թ. մարտյան դեպքերը ինչպես իր ժամանակի, այնպես էլ ժամանակակից գիտաքաղաքական մեկնաբանման տեսանկյունից կարող են հակասություններ, տարակարծություններ առաջացնել, հատկապես արտաքին նկարագրի ընկալման առումով: Եթե խնդրին մոտենանք մարտյան կռիվների ժամանակ ազգային ուժերի ներգրավվածության և մասնակցության տեսանկյունից, ապա ակնհայտ է, որ մի կողմից մարտնչում էին ռուսներն ու հայերը, մյուս կողմից՝ թուրքերը: Ապաքաղաքական մակարդակով տեղի էր ունենում հայ-թաթարական ընդհարում: Եթե ընդունենք, որ Բաքվի բոլշևիկները, ի դեմս Ստ. Շահումյանի, ներկայացվում էին որպես հայամետ ուժեր: Ինչպես վկայում են փաստերը, հարցն այդ ոգով էլ ներկայացվում էր Սեյմում:

Միակողմանի և մակերեսային էր նույնպես և բոլշևիկյան մոտեցումը, որը դեպքերը որակում էր որպես դասակարգային պայքարի արդյունքում առաջացած քաղաքացիական պատերազմ: Այն քաղաքացիական չէր, քանի որ պայքարն առավելապես ընթանում էր ոչ այնքան անմիջապես իշխանությանը տիրելու, այլ հենց Բաքուն գրավելու համար: Թեև Բաքվի խորհրդի դեմ պայքարն ուղղորդվում էր Սեյմից, այսինքն՝ խորհրդին հակառակորդ քաղաքական իշխանության կողմից, սակայն Բաքվի դեմ արշավանքին տոն տվողները, այնուամենայնիվ, Մուսավաթը, մահմեդական կազմակերպություններն ու Թուրքիան էին:

Բաքվի բոլշևիկների տեսանկյունից, հատկապես Սուրեն Շահումյանի կարծիքով, Մարտյան իրադարձություններով ավարտվեց «անիշխանության» փուլը[502], այն իմաստով, որ ապրիլին ձևավորված նոր կառավարության մեջ մտան արդեն միմիայն բոլշևիկներ: 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերից մինչև 1918 թ. փետրվար-մարտ ամիսներն ընթացող թուրք-թաթարական տարաբնույթ և համաձայնեցված գործողությունները Արևելյան Անդրկովկասում, Թիֆլիս–Բա-

[502] Տե՛ս **Шаумян Сур.**, նշվ. աշխ., էջ 20:

քու երկաթուղու շրջանում, Երևանի նահանգում հանգեցրին այս փուլի գլխավոր հանգուցակետին՝ Բաքվի գրավման ծրագրին: Ձևավորվեցին երկու հակամարտող ճամբարները՝ թուրք-թաթարական և հայ-ռուսական, այն էլ՝ առանց ռուսական պետության ուղղակի միջամտության: Այս առճակատումն ընդգրկեց, մի կողմից, ազգամիջյան բախման, մյուս կողմից՝ իշխանության հիմնահարցերը: Այս ընդհարումները Բաքվի նահանգի և Բաքու քաղաքի հայ ազգաբնակչության համար վերածվեցին ընդգծված ինքնապաշտպանության, ազգապահպանման գործընթացի: Ավելին, Բաքվի դեպքերը, մեր կարծիքով, անհրաժեշտ է քննարկել նաև Հայկական հարցի համատեքստում այն առումով, որ Բաքվի հայկական զինուժը, բացի Բաքվից, ուներ մեկ այլ, առավել կենսական գերնպատակ՝ աջակցել Արևմտյան Հայաստանի ինքնապաշտպանութանը, դրանով նաև կանգնեցնել թուրքական արշավանքը ինչպես Արևելյան Հայաստան, այնպես էլ՝ Բաքու:

Թե՛ 1918 թ. մարտ-ապրիլին և թե՛ հունիս-սեպտեմբերին Բաքվի համար մղվում էր աշխարհաքաղաքական պայքար, որի գլխավոր մասնակիցներն էին սկզբում Խորհրդային Ռուսաստանը, Գերմանիան, Թուրքիան, ապա՝ և Անգլիան: Բաքվի համար պայքարի մեջ ներգրավված մյուս դերակատարները՝ հայերը, թաթարները, լեռնականներն ու ռուսական զորամասերը, առավելապես սպասարկող դեր էին իրականացնում: Դա բխում էր նաև այդ բեկումնային իրադարձությունների պատճառների միջազգային զարգացումներից: Բրեստի հաշտությունը գերմանական խմբավորման ու Թուրքիայի համար հնարավորություն էր ստեղծել դեպի Արևելք արշավանքի համար: Իրական կերպարանք էր ստացել պանթուրքիզմը: Այդ գործոնն ուղղակիորեն կապվում էր Բաքվի զարգացումների հետ այն առումով, որ տեղական թաթարական-մահմեդական ուժերը միայնակ, առանց Թուրքիայի ու Հյուսիսային Կովկասի լեռնականների աջակցության չէին կարող հաղթել Բաքվի իշխանությանը: Նորույթը թերևս այն էր, որ պանթուրքիստական ուժերին էին միացել նաև վրացիները, ինչը ոչ թե պատահական ու մասնակի համագործակցության դրվագ էր, այլ հետևողական վրացական-թաթարական և վրացական-թուրքական

համագործակցության արդյունք, որոնք Բաքվի դեմ մղվող արշավանքին աջակցում էին Անդրկովկասի իշխանության՝ Սեյմի ու Կոմիսարիատի մակարդակով:

Վերջին հաշվով այդ դաշինքը տվեց իր պտուղները, և Բաքվի կոմունան ընկավ: Սակայն 1918 թ. մարտ-ապրիլ ամիսների այս փուլում հաղթանակը բացահայտ էր. որպես կարևոր արդյունք՝ պետք է նշել այն, որ Մուսավաթը վտարվեց Բաքվից: Դրա հետ միասին գագաթնակետին հասավ երկրամասում իշխանության համար պայքարի գործընթացը, որը հետհոկտեմբերյան փուլում մղվում էր Թիֆլիսի ու Բաքվի միջև: Այն ժամանակավոր ազգային նկարագիրը, որը ստացավ Բաքվի համար պայքարը 1918 թ. մարտյան օրերին, կրկին վերադարձավ իր նախնական ու առաջնային խնդրի իրականացմանը՝ իշխանության գրավման հիմնահարցին: Ավելի ուշ այն ստացավ խորհրդային իշխանության դեմ ինտերվենցիայի նկարագիր, եթե նկատի ունենանք նաև բոլշևիկյան կենտրոնական իշխանության, մասնավորապես Վ. Լենինի ու Ի. Ստալինի տարօրինակ պասիվ մասնակցության հիմնահարցը, ինչը առանձին ուսումնասիրության խնդիր է: Բաքվի 1918 թ. մարտյան առճակատման մարտավարությունը վկայում է, որ Ստ. Շահումյանն ու իր մերձավոր շրջապատը, այդ թվում՝ և հայկական ազգային շրջանակները, համեմատաբար ինքնուրույն քաղաքական գիծ էին տանում: Առաջին հայացքից թեև այն նպատակ ուներ նպաստելու երկրամասի խորհրդայնացման գործընթացին, և այս առումով օգտագործվում էր սոսկ հայության աջակցությունը, սակայն փաստ է նաև այն, որ Ստ. Շահումյանը, Գ. Ղորղանյանը և մյուսները որոշակիորեն հեռացել էին Պետրոգրադի միակողմանի և ապազգային մարտավարությունից: Այդ էր վկայում նաև Ռ. Սյունին՝ նշելով, որ «Շահումյանի հաշվարկները մարտյան օրերից հետո բավական ճիշտ էին»[503]: Այս թեզը հիմնավորող բազմաթիվ փաստարկներից վկայակոչենք մեկը. մայիսին Վ. Լենինին ուղղված մի հեռագրում Ստ. Շահումյանը ընդգծում էր, որ «ցուցումների եմ սպասում Պարսկաստանի ուժերի վերաբերյալ: ***Չպրա-***

[503] Տե՛ս **Suny R. G.**, նշվ. աշխ., էջ 232-233:

նամ ժամանակին այդ ցուցումները, կգործեմ իմ հայեցողությամբ (ընդգծումը մերն է – Վ. Մ.)[504]:

Ստ. Շահումյանի ինքնուրույն քաղաքականության հակասական դրսևորումների փաստը նաև Դ. Անանունն է արձանագրել. «Հաճախ էր պատահում, որ նա ջանքեր էր թափում ինքնուրույն լինել և իր մտածածի կերպ շարժվել, սակայն գալիս էր Լենինի հրահանգը, և նա իսկույն գլուխ էր խոնարհում կուսակցական պետի առաջ»[505]: Միաժամանակ Բաքվի խորհրդային իշխանության և Ստ. Շահումյանի գործունեության մեջ սպեցիֆիկ Դ. Անանունը ազգային նկարագիր էր տեսնում: Վստահ լինելով, որ բոլշևիկյան իշխանությունը Բաքվում Ռուսաստանի համար է աշխատում, նա գրում էր. «Առանց Բաքվի Ռուսաստանը մի մեծ գյուղ կդառնա»,– այդպես էր գրել Լենինը Շահումյանին: Վերջինս շատ անգամ է հայտարարել Բանվորական խորհրդի նախագահին, որ «մի ազգության շահ» (ակնարկը ուղղված էր հայերին), չի զբաղեցնում բոլշևիկներին: Սակայն Բաքվի ինքնապաշտպանությունն իմ խորին համոզմունքով անուղղակի կերպով շատ բան է փրկել Անդրկովկասի հայերի համար: Եվ որովհետև այդ ինքնապաշտպանության կարևոր դեմքերից մեկը Ս. Շահումյանն էր,– ասել է, որ ***նրա քաղաքականությունը որոշ պայմաններում համապատասխանում էր թե՛ Ռուսաստանի և թե՛ հայերի շահերին*** (ընդգծումը մերն է – Վ. Մ.): Այսպիսով, ինտերնացիոնալիզմը մեզ կորստի խորխորատը չի տանում, այլ և փրկում է մեզ: Ինտերնացիոնալիստ Ս. Շահումյանը կամենում էր բոլորին երջանկացնել, որ երջանկացած լինի և նրան ծնող հարազատ ժողովուրդը: Թող այդ ժողովրդի նահատակ զավակների շարքում իր անմոռաց անունն ու հիշատակը ունենա նաև նա»[506]:

1918 թ. հուլիսի 30-ին Բաքվի խորհրդի վերջին նիստում Ստ. Շահումյանը հրապարակում է իր արտահայտությամբ պատմական մի փաստաթուղթ. «Փաստաթուղթը ստորագրել էր թուրքական բանակի գլխավոր հրամանատար Շեֆքեթ փաշան,– նշում էր նա,–

---

[504] Տե՛ս **Շահումյան Ստ.**, հ. 4, էջ 291:
[505] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 45, 54:
[506] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 54:

դրան կցված են Խորհրդի գործադիր կոմիտեին և Բաքվի հայոց Ազգային խորհրդին ուղղված պատճենները: Փաթեթը հասցեագրված է գավառական կոմիսար Մեշադի բեկ Ազիզբեկովին. «Ընկերներ, Աստծո կամոք, մենք, կանոնավոր թուրքական բանակները առանց ազգային խտրականության՝ բոլոր ժողովուրդների միավորման նպատակով, պայքարելով բարբարոսների դեմ, մոտեցել ենք Բաքու քաղաքին»[507]:

Ավելի վաղ՝ հունիսի 23-ին, Ստ. Շահումյանը գրում էր Վ. Լենինին. «Գերմանացիների հետ կապված կան հակասական տեղեկություններ: Դուք անկասկած ավելի լավ եք տեղեկացված Արևմտյան Անդրկովկասի իրավիճակի և գերմանացիների ծրագրերի մասին: Մենք նախ գիտենք, որ նրանք Անդրկովկասի հանդեպ ունեն հատուկ՝ թուրքականից տարբերվող պլաններ: Իմանալով նրանց ընդհանուր քաղաքականությունը՝ կարծում ենք, որ նրանք անպայման կգնան Բաքվի վրա, բայց հաշվի ենք առնում նաև իրենց սպասվող որոշ դժվարությունները: Եթե գերմանացիների 217-րդ դիվիզիայի հայտնվելը Բաքումում ճիշտ է, ապա կասկած անգամ չի կարող լինել Բաքու շարժվելու նրանց ցանկության վերաբերյալ»[508]:

Այս տրամաբանությունն է արտացոլված նաև Շահան Նաբալիի իրատես գնահատականի մեջ. «Գիտէին անոնք (հայերը – Վ. Մ.),– ամբողջ եղերերգութիւնը, որ կատարուեր էր սահմանի միւս կողմը. ծանօթ էին մեկ միլիոն հայերու կոտորածին եւ Էրզրումի ողբերգութեան: Գիտէին նաեւ, որ Էնվերը կու գայ դէպի Պաքու, վերջնական հաշուեյարդարն ընելու համար ողջ հայութեան հետ»[509]:

Մոտենում էր Բաքվի նոր արհավիրքը…

---

[507] ՀԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 252, թ. 1-2:

[508] **Пипия Г. В.**, Политика Германии в Закавказье 1918 году, Сборник документов, Тбилиси, 1971, с. 46.

[509] **Շահան Նաբալի**, նշվ. աշխ., էջ 65:

ՀԱՎԵԼՎԱԾ

2016 թ. հրապարակվեց մեծանուն գրող Դերենիկ Դեմիրճյանի ծննդյան 140-ամյակին նվիրված մի ժողովածու, որտեղ գրողի տունթանգարանի տնօրեն Կարինե Ռաֆայելյանի աշխատասիրությամբ առաջին անգամ ընթերցողին ներկայացվեց հեղինակի «Դատողություններ Ղարաբաղի և Նախիջևանի հարցի շուրջ» վերլուծական նյութը[510]: Այն գրվել է 1954 թվականին՝ Ի. Ստալինի մահից հետո, երբ Խորհրդային Միությունում լայնորեն նշվում էր Ուկրաինայի՝ Ռուսաստանի հետ միավորման 300-ամյակը:

Այս հոդվածը նախ առանձնանում է նրանով, որ վերջինս իր տեսակի մեջ այդ ժամանակաշրջանի հայ մտավորականության շրջանակներում առայժմ միակ հայտնի, արդեն հրապարակված նյութն է:

Դ. Դեմիրճյանը, ով իր հայեցի ու քաղաքացիական ակտիվ կեցվածքով հանդես էր եկել 1918 թ. մայիսի 21-ի Երևանի հանրահավաքում (Արամի հետ – Վ. Մ.), Սարդարապատից մեկ օր առաջ այժմ էլ իր խորաթափանց, գիտական ու հեռատես դատողություններն էր գրառում՝ դրանց անպատճառ գործնական կիրառություն տալու նկատառումներից ելնելով: 1954 թ. մարտի 12-ին նա հանդիպում է Ա. Միկոյանի հետ: «Միտք տվի,– գրում էր Դ. Դեմիրճյանը,– Անդրկովկասյան պատմությունը, 15-21 թիվը, ***Բաքվի դեպքերը*** (ընդգծումը մերն է – Վ. Մ.):

Ղարաբաղի հարցի առնչությամբ նա բազմիցս անդրադառնում է Բաքվի դեպքերին, որոնցից մի քանիսը հարկ ենք համարում մեջբերել: Նկատի ունենալով, որ Դ. Դեմիրճյանի գրառումներն ավարտուն, մշակված տեսք չունեն, ավելի շատ թեզիսների բնույթ են կրում, ուստի մենք էլ, ըստ տրամաբանական հաջորդականության, կներկայացնենք գրողի կարևորագույն եզրահանգումները.

ա. «Ղեկավարությունը (Բաքվի կոմունայի – Վ. Մ.) Բաքվում ստեղծեց այնպիսի տրադիցիա, որ Բաքուն դարձրեց բոլշևիզմի միջնաբերդը Անդրկովկասում: Եվ թեպետ վեցամսյա հերոսական դի-

[510] Տե՛ս Դերենիկ Դեմիրճյանի հարկի ներքո, Երևան, 2016, էջ 180-191:

մաղրության վերջում հիմք դարձավ Հյուսիսային Կովկասից Բաքու արշավող բոլշևիկյան զորամասերի համար՝ մտնելու Բաքու և ստիպելու մուսաֆաթական զորքին չդիմադրել»[511]:

բ. «Թուրքերը հարձակվեցին Անդրկովկասի վրա: Ծրագիրն էր տիրել այն մինչև Բաքու–Դերբենտ և իրենց ենթարկել Անդրկովկասի ժողովուրդներին: Նրանք հարվածի օբյեկտ ընտրեցին հայ ժողովրդին, որի բնաջնջումը սկսված էր Թուրքիայում և ծրագրավորում էր ավարտել Անդրկովկասում: Հարվածը տրվեց Հայաստանի գծով՝ Լենինական–Կիրովական–Դիլիջան–Աղստաֆա: Թուրքերին դիմադրեց հայ ժողովուրդը: Նրան օգնության չհասան մենշևիկները և Մուսաֆաթը, և հայ ժողովուրդը սրանց, ***հասկանալիորեն,*** չի մեջբերում: Քանի որ հայ ժողովրդի թշնամիների մեջ էին և՛ մենշևիզմը, և՛ Մուսաֆաթը: Սրանք բարեկամ չէին նաև դաշնակցության»[512]:

գ. «1918-1921-ի դեպքերի ծավալը չէ, որ մեծ է: Նրանք ծավալուն են իրենց քաղաքական նշանակությամբ: Դրա զոհը եղավ (և կլինի ավելի չարաբախտորեն) հայ ժողովուրդը, որը ***միայնակ կանգնեց տաճկական զորքերի դեմ Էրզրումից մինչև Բաքու***»[513]**:**

դ. «Վերջին հարյուր տարվա մեջ միայն հայերն են, որ տաճիկների դեմ կռվել են՝ Զեյթունից, Սասունից, Էրզրումից սկսած մինչև Բաքու»[514]:

ե. «Նկատելի է, որ Թիֆլիսը ճնշեց և խեղդեց բոլշևիկների ելույթներն ու ապստամբության փորձը, իսկ Բաքուն չկարողացավ:

«Կարողանալու», «չկարողանալու» փաստերը ես դնում եմ խիստ կարևորությամբ: Դա ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար 1918-1920 թվերին և խիստ կարևորություն է ներկայացնում նաև այժմ…, քանի որ բոլշևիզմի ներկայությունն ու բացակայությունը Անդրկովկասում ունեցան և ունեն ճակատագրական նշանակություն հայ ժողովրդի համար: «Ամենևին մտադիր չլի-

---

[511] Դատողություններ Ղարաբաղի և Նախիջևանի հարցի շուրջ, Դերենիկ Դեմիրճյանի հարկի ներքո, էջ 181:
[512] Նույն տեղում, էջ 183:
[513] Նույն տեղում, էջ 185:
[514] Նույն տեղում, էջ 186:

նելով տենդենցիոզ ու անճիշտ գաղափար կազմել տալ վրացի ու ադրբեջանցի ժողովուրդների՝ դեպի բոլշևիզմը տածած համակրանքի հարցում՝ ես հարուցում եմ ժողովուրդների օրիենտացիայի ուժի կարողության հարցը: Որքա՞ն կարող էին և կարողացան ադրբեջանական և վրացական ժողովուրդները պահել բոլշևիզմը Անդրկովկասում: Նրանք ***չկարողացան,*** թեև, սրանք, ***կամեցան:***

Հայ ժողովուրդը միայն կամեցավ և որոշ չափով կարողացավ: Կարողացավ՝ Բաքվում կազմելով զգալի ուժ, կարողացավ ռուս (թուլացած) բոլշևիկների և ադրբեջանական (նույնպես թույլ) բոլշևիկների գլուխ անցած պաշտպանել Բաքուն տաճիկների հարձակումից վեց ամիս»[515]:

[515] Դատողություններ Ղարաբաղի և Նախիջևանի հարցի շուրջ, Դերենիկ Դեմիրճյանի հարկի ներքո, էջ 188:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արխիվներ

1. Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Հայության երկունքը, ձեռագիր, ՀՀ պատմության թանգարան, Նոր պատմության բաժին, օժանդակ ֆոնդ, թիվ 1590, թղթ. 839/1957:
2. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան:
ա) Գ. Լևոնյանի ֆոնդ, թղթ. թիվ 66/417,
բ) Ա. Չոպանյանի ֆոնդ, թղթ. թիվ 1778:
3. ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 49:
4. ՀԱԱ, ֆ. 121. ց.1, գ. 29, թ. 3:
5. ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 124:
6. ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թ. 246:
7. ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թթ. 237-238:
8. ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, II մաս, թթ. 271-276:
9. ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գործ 24, II մաս, թթ. 182, 232-236:
10. ՀԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 252, թ. 1-2:
11. ՀԱԱ, ֆ. 4007, ց. 1, գ. 228, թ.1-2:
12. ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 916, թ. 1-2:
13. ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 124, թթ. 1-3:
14. ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 213, թթ. 26-27:
15. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թ. 45, 54:
16. ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 119, թթ. 1-2, 18, 23, 26, 31:
17. ՀԱԱ ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 12:
18. ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 113, թթ. 1-3, 12, 16, 66, 71, 72, 117:
19. ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 113, թթ. 1-3, 12:
20. ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 29, թ. 6:
21. ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 105:
22. ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 14:
23. НАГ, ф. 1831, оп. 1, д. 1, л. 40:
24. НАГ, ф. 1844, оп. 2, д. 67, л. 155.
25. НАГ, ф. 1861, оп. 2, д. 1, л. 487:
26. НАГ, ф. 1, оп. 2, д. 13, л. 194:
27. НАГ, ф. 1, оп. 2, д. 12, л. 11:
28. НАГ, ф. 1818, оп. 2, д. 12, л. 51.
29. НАГ, ф. 1838, оп. 2, д. 68, л. 108.
30. РГВИА, ф. 2100, оп. 1, д. 1127, л. 39:
31. РГВИА, ф. 2168, ց. 1, գ. 485, թ. 112:

2. Մամուլ

1. «Աշխատավոր», Թիֆլիս, 1918:

2. «Արարատ», Ս. Էջմիածին, 1918, Յունուար-մարտ, թիվ Ա-Գ:
3. «Արև», Բաքու, 1918:
4. «Ժողովուրդ», Երևան, 1918:
5. «Հորիզոն», Թիֆլիս, 1917:
6. «Հորիզոն», Թիֆլիս, 1918:
7. «Մշակ», Թիֆլիս, 1918:
8. «Շարժում», Ախալցխա, 1918:
9. «Պայքար», Թիֆլիս, 1918:
10. «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1918:
11. «Бакинский рабочий», Баку, 1917.
12. «Знамя Труда», Баку, 1918.
13. «Известия совета рабочих и солдатских депутатов гор. Тифлиса», Тифлис, 1917.
14. «Кавказский рабочий», Тифлис, 1917.
15. «Кавказское Слово», Тифлис, 1918.
16. «Новое Время», Ереван, 2011.

3. Փաստաթղթերի ժողովածուներ

1. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2000:
2. Армяне в Первой мировой войне. (1914-1918 гг.), Москва, 2014.
3. Беленький С., Манвелов А., Революция 1917 г. в Азербайджане (Хроника событий), Баку, 1927.
4. Борьба за победу советской власти в Грузии, Документы и материалы (1917-1921 гг.), Тбилиси, 1958.
5. Германские оккупанты в Грузии в 1918 г. (Сборник документов и материалов), Тбилиси, 1992.
6. Закавказский Сейм, Стенографический отчет, Тифлис, 1918.
7. Из истории иностранной интервенции в Армении в 1918 году, (составитель Х. А. Бадалян), Ереван, 1970.
8. Пипия Г. В., Политика Германии в Закавказье 1918 году, Сборник документов, Тбилиси, 1971.

4. Գրականություն
Մենագրություններ և համացանցային կայքեր

1.Ա-Դո, Հայության երկունքը, Երևան, 2015:
2.Ալչուջեան Ա., Ռոստոմը Բագում, Հայրենիք, Դ տարի, թիւ 7, (365), հուլիս, 1956:
3.Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, (1901-1918), Վենետիկ, 1926:
4.Խաչատրյան Ա., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010:

5.Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997:
6.Ավետիսյան Հ. Ա., Գեներալ Հակոբ Բագրատունի (1879-1943), ՊԲՀ, Երևան, 1997, թիվ 1(145):
7.Արամը, Հայրենիք, Բոստոն, թիվ 2, 1951:
8.Արզումանյան Մ. Վ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973:
9.Բարսեղյան Խ., Ստ. Շահումյան, Երևան, 1968:
10. Գեղամեանց Ե. Ա. քահ., Տաճիկները Կովկասում և Բագուի անկումը, պրակ առաջին, Բագու, 1919:
11. Գիւլխանդանեան Ա., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսթըն, 1941, թիվ 9, հուլիս:
12. Գիւլխանդանեան Ա., Անդրկովկասը եւ Բագուի դէպքերը, «Հայրենիք», Պոսթըն, 1967, թիվ 1, հունուար:
13. Դաղայան Խ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ. – 1920 թ.), Երևան, 2006:
14. Դարբինեան Ռ., Փոթորիկի օրերուն, «Հայրենիք», ԻԶ տարի, յունուար, թիւ 1(264), Պոսթըն, 1948:
15. Եղիկյան Գ., Իմ հիշողություններից, Հնչակյանները և նրանց բոլշևիկների հետ միանալու փորձերը, «Հայրենիք», Բոստոն, 1939, հունվար, թիվ 3:
16. Եղիշէ Պահլաւունի, Յուշամատեան, Երեւան, 2006:
17. Զարեվանդ, Թուրքիան և պանթուրանիզմը, Փարիզ, 1930:
18. Զոհրաբյան Է. Ա., Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000:
19. Էմին-Տերյան Գ., Վահան Տերյան, Անտիպ և անհայտ էջեր, Երևան, 2014:
20. Էջ մը հայ-թրքական կռիւներէն, «Հայրենիք», Պոսթըն, 1923, սեպտեմբեր, թիվ 11:
21. Թոմաս դե Վաալ, Սև այգի, Երևան, 2007:
22. Թուրշյան Հ. Գ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1965:
23. Իշխանեան Բ., Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, Բագու, 1918:
24. Լեո, Անցյալից, Երեւան, 2009:
25. Խոնդկարեան Ա., Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, «Վէմ», Փարիզ, 1933, թիվ Բ, նոյեմբեր-դեկտեմբեր:
26. Խուրշուդյան Լ. Ա., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977:
27. Կնյազյան Դ. Վ., Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008:
28. Հարությունյան Ա. Հ., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:
29. Հովհաննիսյան Մ. Ս., ՀՅԴ-բոլշևիկ հարաբերությունները Անդրկովկասում 1917-1918 թթ., թեկն. ատենախոսության սեղմագիր, Երևան, 2009:
30. Ղորղանեան Գ., Հայերու մասնակցութիւնը Համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմաճակատի վրայ, «Հայրենիք», Պոսթըն, 1928, ապրիլ, թիվ 6:

31. Մանուկեան Հ., Դէպքերը Վասպուրականում, «Վէմ», 1937, ապրիլ-հունիս:
32. Մելիք-Եօլչեան Ս., Բագուի հերոսամարտը, «Հայրենիք», Պոսքրն, 1925, Գ տարի, թիվ 7, մայիս:
33. Մելիքյան Հ. Ս., Հոկտեմբերյան հեղափոխությունը և կովկասյան բանակը, Երևան, 1970:
34. Մելիքյան Վ. Հ., 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997:
35. Մելիքյան Վ. Հ., Իշխանության հիմնահարցն Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. փետրվար), Երևան, 2010:
36. Նաջարյան Ա., Հայկական զորամասերի ձևավորումը (1914-1918), Երևան, 1949:
37. Շաթիրեան Մ., Դրուագներ մօտիկ անցեալից, «Հայրենիք», Պոսքրն, 1923, թիվ 7, մայիս:
38. Շահան Նաթալի, Թուրքիզմը Անգորայեն Պաքու և թրքական օրիենթասիոն, Երևան, 1992:
39. Շահումյան Ստ., ԵԼԺ, հ. 4, Երևան, 1978:
40. Ռոստոմ, Մահուան վաքսունամեակին առթիւ, Վկայութիւններ, Ռուբէն Դարբինեան, Բաքու, 1918:
41. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է. հատոր, Թեհրան, 1982:
42. Սարգսեան Ե., Երեւանը 1917 թուականին, «Հայրենիք», Պոսքրն, 1950, թիւ 9, սեպտեմբեր:
43. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
44. Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը, Երևան, 2011:
45. Ստեփանյան Գ., Համազասպ Սրվանձտյանց, Երևան, 2016:
46. Վրացյան Սիմոն, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
47. Փիրումյան Ռ., Հայաստանը ՀՅԴ - բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Երևան, 1997:
48. Քաջազնունի Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923:
49. Алиев Г. З., Турция в период правления младотурок (1908-1918 гг.), Москва, 1972.
50. Байков Б., Воспоминания о революции вь Закавказьи (1917-1920 гг.), Архивь русской революции, изд. И. В. Гессеномь, т. IX, Берлин, 1923.
51. Деникин А. И., Очерки русской смуты, Москва, 1991.
52. Дубинский-Мухадзе И., Шаумян, Москва, 1965.
53. Жордания Н. Н., За два года, Доклады и речи, Тифлис, 1919.
54. Зареванд, Турция и Пантуранизм Париж, 1930, Ереван, 1991.
55. Искендеров М. С., Из истории борьбы коммунистической партии Азербайджана за победу советской власти, Баку, 1958.

56. Исмаилов Э., Как Шаумян преднамеренно вводил Ленина в заблуждение, http://regnum.ru/news/fd-abroad/armenia/1447229.html# ixzz1ZF69ayGO.

57. Казинян А., Полигон “Азербайджан”, Ереван, 2011.

58. Кариби, Красная книга, Тифлис, 1920.

59. Лудшувейт Е. Ф., Турция в годы Первой Мировой войны 1914-1918 гг., Военно-политический очерк, Москва, 1966.

60. Меликян В. Г., Грузино-татарские антироссийские мятежи в районе Закавказской железной дороги и армянская позиция (ноябрь 1917 - март 1918), «Историческое пространство», № 1, Москва, 2010:

61. Раевский, Партия Мусават и ее контрреволюционная работа, Баку, 1929.

62. Разгон И., Мельчин А., Борьба за власть Советов в Дагестане (1917-1921 гг.), Махачкала, 1945.

63. Ратгаузер Я., Революция и гражданская война в Баку, ч. I, 1917-1918 гг., Баку, 1927,

64. Рзаева Г., Революция в Закавказье (1917-1918 годы), Віче № 6, 2010.

65. Сеф С. Е., Революция 1917 г. в Закавказье (Документы и материалы), Тифлис, 1927.

66. Сургуладзе А. Н., Закавказье в борьбе за победу социалистической революции, Тбилиси, 1971.

67. Токаржевский Е. А., Бакинские большевики в борьбе против германо-турецких интервентов в Азербайджане в 1918 году, Труды, IV, Баку, 1947.

68. Токаржевский Е. А., Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1927.

69. Хачапуридзе Г. В., Борьба за пролетарскую революцию в Грузии, Очерки, 1917-1921, Тбилиси, 1936.

70. Церцвадзе М. В., Революционное движение в Грузии в 1914-1917 гг. часть II (1917 г.) Тбилиси, 1960.

71. Шаумян С. Г., Политические деятели России, 1917, Биографический словарь, Москва, 1993.

72. Шаумян Сур., Бакинская Коммуна, Баку, 1927.

73. Alizade Zakhida, Politikal realations between Azerbaijan and Armenia in 1917-1918, unt́u http://www.ca-c.org/c-g/2008/journal_ eng/c-g-2/14.shtml.

74. Ronald G. S., The Baku Commune 1917-1918, Class and nationality in the Russian revolution, 1972, Princeton, New Jersey.

75. Hovhannisian R. G., Armenia on the Road to independence, 1918, Los Angeles 1967, pp. 147-149.

76. Swietochowski T., Russian-Azepbaijan. 1905-1920. Cambridje, 1985.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՀԱՆ ՀԵՆՐԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ԲԱՔՎԻ ՀԱՄԱՐ
(1917 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ – 1918 Թ. ԱՊՐԻԼ)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի

Տպագրված է «Վարդան Մկրտչյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 15.11.2018:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 14 + 8 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՎԱՀԱՆ ՀԵՆՐԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆ

Վահան Հենրիկի Մելիքյանը ծնվել է 1961 թ. Երևանում: Նախնիները սերում են Մամիկոնյան նախարարական տոհմից, որի շառավիղներից մեկը 1830 թ. Խնուսի Խոզլի գյուղից վերաբնակվել է Մարալիկ քաղաքում: Մոր պապը Դերենիկ Դեմիրճյանի եղբայր Գևորգ Դեմիրճյանն է՝ 1921թ. Երևանի բանտի զոհերից մեկը:

Վ. Մելիքյանը պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր է, հեղինակել է 7 մենագրություն, 80-ից ավելի գիտական հոդվածներ, փաստաթղթերի ժողովածուներ և այլն: Նա ներկայացնում է քաղաքական հայագիտության ուղղությունը, գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց պատմության 1914-1921 թթ. ժամանակաշրջանը, մասնավորապես 1917 թթ. ռուսաստանյան երկու հեղաշրջումների ժամանակաշրջանը, կուսակցությունների, Հայկական հարցի, Անդրկովկասի ու Հայաստանի քաղաքական ու քաղաքացիական պատմության, արևմտահայության հիմնահարցերի պատմության հարցերը:

2002 թ. նա հիմնադրել է ու մինչև 2013 թ. ղեկավարել Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնը, 2010-2012 թթ. զբաղեցրել է ՀՌՀ քաղաքագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնը: 2013 թ. առ այսօր ղեկավարում է Մ. Հերացու անվան ԵՊԲՀ հասարակական գիտությունների ամբիոնը:

Վ. Մելիքյանը «Արևմտահայերի ազգային համագումար» (Փարիզ) միջազգային կազմակերպության ու Արևմտահայ ազգային խորհրդի հիմնադիր անդամ է, բանաստեղծությունների երկու ժողովածուների հեղինակ: Ամուսնացած է, ունի երկու որդի:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018
publishing.ysu.am